

## Գ. Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

### ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՒԱՆ - 1997թ.

Տպագրվում է սահմանադրական իրավունքի կենտրոնի խորհրդի որոշմամբ:

Պատ. խմբագիր՝ իրավաբանական գիտ. թեկնածու, Ռուսաստանի Դաշնության էկոնոմիկայի, ֆինանսների և իրավունքի ակադեմիայի իսկական անդամ  
**Յ. Ս. Խաչատրյան**

**Հարությունյան Գ.Գ.**

**Սահմանադրական վերահսկողություն (համեմատական վերլուծություն), Երեւան, 1997, 197էջ:**

Ուսումնասիրությունը նվիրված է պետական իշխանության ժողովրդավարական գործառույթների առանցքային բնագավառներից մեկին՝ սահմանադրական վերահսկողությանը, որը կոչված է կարելու որ ներխառնվող հասարակության զարգացմանը դիմամիզմ ու ներդաշնակություն հաղորդելու գործում:

Չորս տասնյակից ավելի երկրների փորձի հիման վրա վերլուծվել են սահմանադրական արդարադատության հիմնահարցերը, սահմանադրական վերահսկողության համակարգերը, դրանց առանձնահատկությունները, զարգացման էվոլյուցիան: Հատուկ ուշադրություն է դարձվում համակարգային վերափոխումների փուլում սահմանադրական վերահսկողության խնդրին, Հայաստանի Հանրապետությունում այս համակարգի հետագա բարելավման հարցերին:

Գիրքը հետաքրքրություն կարող է ներկայացնել իրավագիտության, քաղաքագիտության, տնտեսագիտության հարցերով զբաղվող հետազոտողների և այդ ոլորտներին առնչվող լայն հասարակայնության համար:

## ՆԱԽԱԲԱՆ

Հասարակության բնականոն ու ներդաշնակ զարգացման համար բացառիկ կարեւորության խնդիր է օրենսդիր, գործադիր ու դատական իշխանության մարմինների փոխհամաձայնեցված գործունեության ապահովումը, նրանց լիազորությունների սահմանադրորեն հստակ կանոնակարգումը եւ դրանց իրականացման վերահսկումը:

Իշխանությունների տարանջատումը, առանց որի աներեւակայելի է ժողովրդավարական պետության եւ քաղաքացիական հասարակության գոյությունը, միաժամանակ խնդիր է առաջադրում՝ անհրաժեշտ զսպումների ու հակակշիռների մեխանիզմի գործադրմամբ եւ իշխանության տարբեր մարմինների սահմանադրությամբ ամրագրված փոխհարաբերությունների հաշվեկշռի պահպանմամբ, ապահովել պետության եւ հասարակության դինամիկ ու կայուն առաջընթաց: Գործնական կյանքում այս խնդիրը լուծելի է միայն սահմանադրական վերահսկողության ամբողջական, լիարժեք համակարգի առկայության պայմաններում: Դրանում այսօրվա զարգացած պետականություն ունեցող ու զարգացման ուղին բռնած շատ երկրներ համոզվել են վաղուց:

Սահմանադրական վերահսկողությունն ունի դարավոր պատմություն: Դրա բնույթը, իրականացման փիլիսոփայությունը, ձեւերն ու եղանակները, կազմակերպական համակարգերը լուրջ վերափոխումներ են ապրել եւ այսօր էլ գտնվում են ակտիվ կատարելագործման փուլում:

Հայաստանի՝ որպես նորանկախ պետության համար, չափազանց կարեւոր է հաշվի առնել այս բնագավառում միջազգային փորձը եւ դրա իմացությամբ կազմավորել ու զարգացնել իր հասարակական հարաբերություններին բնորոշ, պետության եւ ազգի շահերից բխող սահմանադրական վերահսկողության համակարգ:

Ներկայացվող աշխատանքը նպատակ ունի համեմատության մեջ վերլուծել սահմանադրական արդարադատության հիմնահարցերը, բացահայտել սահմանադրական վերահսկողության, այն իրագործող համակարգերի ձեւավորման, առանձին երկրներում Սահմանադրության գերակայության ապահովման առանձնահատկությունները :

Հատուկ ուշադրություն է դարձվել սահմանադրական վերահսկողության կոնկրետ ու բնորոշ առանձնահատկություններին ու իշխանության տարբեր մարմինների առնչություններին՝ ոչ միայն զարգացած ու արդեն իսկ դասական համակարգեր ունեցող երկրներում, այլեւ ներկայացված են բազմաթիվ նորանկախ երկրներում պետական իշխանության այս կարեւոր ինստիտուտի կազմավորման առանձնահատկությունները: Բանն այն է, որ շատ հիմնախնդիրներ անցման փուլում գտնվող երկրներում դժվար են հաղթահարվում նաեւ այն պատճառով, որ, հստակ իմանալով թե ինչ է չեն ուզում եւ ինչից են ցանկանում հրաժարվել, նույն հստակությամբ որոշարկված չի լինում, թե ի՞նչ է ցանկացածը եւ ինչպե՞ս պետք է դրան հասնել: Բացի դրանից, անցման փուլին բնորոշ ճգնաժամային իրավիճակը ոչ միայն ստեղծում է հասարակական ստրեսներ, որոնք հաղթահարման հատուկ մոտեցում են պահանջում, այլեւ թելադրում են հասարակության դինամիկ հավասարակշռության պահպանման յուրահատուկ մոտեցում: Նման պայմաններում, սահմանադրական վերահսկողությունը, որպես հասարակական իմունոհամակարգի կարեւորագույն բաղկացուցիչ, պետք է ձեւավորվի ու գործի հաշվի առնելով այս հանգամանքը:

Նպատակ ենք հետապնդել նաեւ շեշտը դնել սահմանադրական վերահսկողության՝ որպես համակարգի ձեւավորման ու գործունեության ներքին տրամաբանության բացահայտման վրա՝ այն դիտարկելով իբրեւ պետական իշխանության ամբողջական համակարգի անքակտելի մաս:

Մի շարք երկրների կոնկրետ առանձնահատկությունները եւ սահմանադրական վերահսկողության համակարգերը ներկայացված են առավել մանրամասն՝ երկու նկատառումով, նախ. դրանք եվրոպական այն երկրներն են, որոնք արդեն իսկ ունեն սահմանադրական վերահսկողության դասական համակարգեր ( Ավստրիա, Գերմանիա, Ֆրանսիա, Իտալիա, Իսպանիա ): Երկրորդ՝ կան երկրներ, որտեղ ուշագրավ առանձնահատկություններ գոյություն ունեն, եւ փորձ է արվել շեշտը դնել հատկապես այդ հանգամանքի վրա ( Պորտուգալիա, Յունաստան, Թուրքիա եւ այլն ):

Ուշադրության կենտրոնում է եղել նաեւ զարգացման նոր ուղի բռնած եվրոպական երկրների ու նորանկախ մյուս պետությունների սահմանադրական վերահսկողության ինստիտուտների ձեւավորման փորձը՝ նպատակ ունենալով լուսաբանել դրանց բնորոշ առանձնահատկությունները:

Առանձնացվել են նաեւ սահմանադրական վերահսկողության հետ առնչվող՝ դեռեւս գիտական բանավեճի առարկա հանդիսացող մի շարք հիմնահարցեր, որոնց վերաբերյալ, մեր մոտեցումներից

ելնելով, արվում են առաջարկություններ Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական վերահսկողության համակարգի հետագա կատարելագործման ուղղությամբ:

Ուսումնասիրությունը կատարվել է ըստ հիմնահարցերի եւ ըստ երկրներ: Նման մոտեցումը հնարավորություն է տվել առավել խորությամբ հաշվի առնել սահմանադրական արդարադատության նրբերանգները եւ կոնկրետ վերաբերմունք արտահայտել դրանց նկատմամբ:

Հեղինակն իր շնորհակալությունն է հայտնում մեծագրության խմբագիր

Յ. Խաչատրյանին եւ երախտագիտության խոսքն է հղում ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Գ. Բրուտյանին, իրավագիտության դոկտորներ Վ. Ստեփանյանին եւ Վ. Նազարյանին,

իրավագիտության թեկնածուներ Տ. Բարսեղյանին եւ Վ. Հովհաննիսյանին՝ աշխատանքին ծանոթանալու եւ օգտակար խորհուրդների համար:

## **I. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ: ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՀԱՄԱԿԱՐԳ**

Սահմանադրական վերահսկողություն հասկացությունն անմիջականորեն առնչվում է Սահմանադրության առկայության եւ սահմանադրորեն ամրագրված նորմերի ու սկզբունքների պահպանման, այդ հարցում պետական իշխանության տարբեր մարմինների լիազորությունների սահմանված հաշվեկշռի ապահովման, ինչպես նաեւ մարդու եւ քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանության սահմանադրական երաշխիքների ապահովման խնդրի հետ: Այլ կերպ, սահմանադրական վերահսկողության գլխավոր առաքելությունն է՝ ապահովել Սահմանադրության գերակայությունն ու կայունությունը, պահպանել իշխանությունների տարանջատման սահմանադրական հաշվեկշիռը եւ երաշխավորել մարդու սահմանադրորեն ամրագրված իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը:

Հարց է առաջանում, ի՞նչ բնույթ է ունեցել հասարակական վարքի հիմնական կանոնների պահպանման վերահսկողությունը, երբ բացակայել է Սահմանադրությունը: Հաճախ բերվում է Անգլիայի օրինակը, որտեղ ձեւական առումով չկա սահմանադրական վերահսկողության ինստիտուցիոնալ համակարգ: Սակայն արդյո՞ք դա նշանակում է, որ ընդհանրապես բացակայում է վերահսկողությունը՝ որպես հասարակական հարաբերությունների կանոնակարգված հաշվեկշռի պահպանման միջոց: Այս հարցերին պատասխանելու համար նախ պետք է որոշակի համակարգված, կազմակերպական ձեւի մեջ դրված վերահսկողությունն առանձնացնել չհամակարգված կամ, այսպես կոչված, իրավաբանորեն ֆունկցիոնալ չկանոնակարգված վերահսկողությունից: Օրինակ, ինչպես արդարացիորեն նշում է Հունգարիայի սահմանադրական դատարանի խորհրդական Ագնես Նենեթը, Քրիստոնեության վաղ շրջանում եկեղեցու պարտականությունների մեջ էր մտնում իշխանությունների նկատմամբ հսկողությունը, որն ավելի շատ բարոյական հսկողություն էր: Արեւմտյան Եվրոպայում, շարունակում է նա, ռեֆորմացիայի տեւական ժամանակահատվածը հանգեցրեց այն բանին, որ պարզ դարձավ՝ անհրաժեշտ է ոչ թե բարոյական վերահսկողություն, այլ ինչ-որ ուրիշ մի բան: Երկար մտորումների արդյունքում մշակվեց տեխնիկա, որն անվանվում էր իշխանությունների նկատմամբ վերահսկողության իրավաբանական տեխնիկա<sup>1</sup>:

Մեր ժողովրդի պատմությունը նույնպես լավագույնս վկայում է այդ ճշմարտությունը: Ք. ա. 28-27-րդ դարերում Հայկական լեռնաշխարհի Արատտա երկիրը Հարավային Միջագետքի հնագույն ժողովրդին՝ շումերներին հայտնի էր որպես «սուրբ օրենքների երկիր» անունով: Ըստ սեպագիր ամենաինքն արձանագրությունների՝ շումերական վիպերգերի, Արատտայում ղեկավարումն իրականացնում էին «էն» (գերագույն քուրմ) տիտղոսը կրող կառավարիչները<sup>2</sup>: Առավել կարեւոր պետական հարցերը՝ պատերազմ հայտարարել, հաշտություն կնքել եւ այլն, Արատտայի գերագույն քուրմը որոշում էր ավագների ժողովի հետ խորհրդակցելով:

Շումերական վիպերգերում աղոտ հիշատակություն կա նաեւ այն մասին, որ այդ օրենքները գրի են առնված եղել պատկերագրերի տեսքով: Այսօր դժվար է ասել, թե այդ ինչ «սուրբ օրենքներ» են գործել Արատտայում, որոնք զարմացրել են հարեւան ժողովուրդներին, սակայն դյուրին է կռահել, որ խոսքը սովորութային իրավունքի ամենաինքն դրսեւորումների մասին է:

Հայ իրավունքի պատմության ճանաչված մասնագետ Խաչիկ Սամուելյանը գրել է. «Ամեն մի սովորույթ անխտիր չի կարող իրավունքի աղբյուր լինել, այլ միայն այն սովորույթները, որոնք հասարակական համակեցության մեջ գործադրվում են պահպանվում են իբրև պարտադիր նշանակություն ունեցող որոշ նորմեր»<sup>3</sup>:

Նախնադարյան մարդը, հազարամյակներ շարունակ խմբովին պայքար մղելով իր գոյության համար, մշակել էր համակեցադային կարգեր, որտեղ, որպես մարդկանց միջև հարաբերությունների հիմնական կարգավորիչ, հանդես էր գալիս

սերնդե սերունդ փոխանցվող սովորույթը: Պետական կազմավորումների ի հայտ գալով, վավերացվեցին եւ իրավական կանոնների մեջ ներառվեցին մի շարք սովորույթներ, որոնք, իբրև պարտադիր նշանակություն ունեցող նորմերի համակցություն, իրավունքի պատմության մեջ ստացել են սովորութային իրավունք անվանումը՝ ունենալով այն պահպանելու յուրահատուկ համակարգ:

Դժվար չէ ենթադրել, որ հին աշխարհի իրավունքի նշանավոր հուշարձանից՝ «Համմուրաբիի օրենքների» ստեղծումից շուրջ հազար տարի առաջ Արատտայում արդեն գործող օրենքներն ինչպիսի արձագանք պիտի գտնեին հարեւան երկրներում:

Հայկական ցեղերի մեկ այլ պետական կազմավորման՝ Հայասա-Ազգիի իրավական համակարգի մասին որոշ տեղեկություններ են պարունակում Բ. ա. 14-րդ դարում խեթական պետության՝ Խաթթիի տիրակալ Սուպալիուլիումասի (Բ. ա. 1380-1340 թթ.) եւ Հայասայի թագավոր Խուկկանայի (Հականա) միջև կնքված միջպետական պայմանագիրը<sup>4</sup>

Ըստ այդ պայմանագրի, Հայասայի թագավորը, կնության առնելով խեթական արքայի քրոջը, պարտավորվում էր հավատարիմ լինել Սուպալիուլիումասին, նրան տրամադրել ռազմական օգնություն, վերադարձնել Խաթթիից փախած անձանց (ստրուկներին, որոնց, հավանաբար, ազատ կարգավիճակ էր տրվում Հայասայում, հակառակ դեպքում նրանք չէին փախչի Խաթթիից): Հետաքրքիր է, որ այդ պայմանագրով Սուպալիուլիումասը դիմել է նաեւ «Հայասայի մարդկանց», որի ներքո, հետազոտողների կարծիքով, պետք է հասկանալ «ժողովրդական հավաքը»: Հայասա-Ազգիում հիշատակվում է նաեւ «ավագների խորհուրդը»: Այս երկու մարմինները հիշեցնում են հենց հարեւան խեթերի տուլիան (թագավորի մերձավորներից եւ պալատական իշխաններից կազմված խորհուրդը)<sup>5</sup> եւ պանկուսը (ժողովրդական հավաքը, որն աստիճանաբար փոխվեց զինվորական խորհրդի):

Ցավոք, քիչ բան է հայտնի նաեւ Արարատի կամ Վանի թագավորության (Ուրարտու) պետիրավական համակարգի մասին: Ուրարտագետ Հովհաննես Կարաոյոյանի կարծիքով, ջրաշինական եւ այլ կառույցների, այգիների մոտ գտնված արքայական կոթող-արձանագրությունները՝ «անեծք-բանաձեւերի» տեսքով, պետության արքունական-տաճարային օրենսգրքի հատվածներ են: Բուն օրենսգրքի ամբողջական շարադրանքն առայժմ հայտնաբերված չէ: Կարծիք է հայտնվել նաեւ, որ Արարատյան թագավորության դիցարանում հասարակական կարգ ու կանոնի պահպանման աստվածը Արդին էր, իսկ մարդկանց գրաված տեղն ու դիրքը սահմանում էր Բարձիա դիցուհին:

Մեր պատմության մեջ հետագա դարերի ընթացքում գործող իրավաբանական նորմերի ժողովածուների բացակայությունը բնավ հիմք չէ ենթադրելու, թե Հայաստանում գոյություն չի ունեցել իրավական լայն գործունեության նախադրյալ: Հայաստանն իր հասարակական հարաբերությունները կարգավորել է իրավաբանական որոշ նորմերով: Հայ մատենագրությունը վկայում է, թե ինչպես են հայ թագավորները օրենքներ ընդունել: Օրինակ, Խորենացին Վաղարշակ թագավորին (Բ. ա. 2-րդ դար) է վերագրում հայ նախարարությունների «հաստատումն ու կարգումը» (ճիշտ կլինի գրել վերահաստատումն ու վերակարգումը, որովհետեւ Հայոց նախարարական տներից շատերը հայտնի էին դեռ Արարատի թագավորության ժամանակներից): Նա նաեւ «իր թագավորական տանը օրենքներ է հաստատում», «սահմանում զինվորական կարգեր», «սահմանում է իրավարարներ արքունի տանը, իրավարարներ՝ քաղաքներում եւ ավաններում»<sup>6</sup>:

Սակայն Հայաստանում շատ ավելի գործուն դեր են խաղացել սովորութային իրավունքի նորմերը: Ինչպես գրում է Խաչիկ Սամուելյանը, «.սովորութական իրավունքի ավանդական դերը հասարակական հարաբերություններում այնքան ուժեղ է արմատացած է եղել, որ կարիք չի զգացվել այդ ամենը գրավոր ձևերի վերածել: Թերեւս, սովորութական իրավունքի այդ ընդհանրացած բնույթին պետք է վերագրել հայ թագավորների օրենսդրական գործունեության սղությունը»<sup>7</sup>:

Սովորութային իրավունքի իմաստ ունեն մեր հին մատենագրության մեջ գործածված «օրենք նախնյաց», «կարգ նախնյաց», «սահմանք» հասկացությունները, որոնք, սակայն, իրենցից քարացած օրենքների կանոնացված ամբողջություն չեն ներկայացրել, այլ սնվել ու մշակվել են ազգի

բարոյական ու գեղագիտական չափանիշների դրական թանձրութից, կրել են ժողովրդի՝ դարերի խորքից եկող իմաստության կնիքը: Եվ եթե այսօր զարմանում ու հիանում ենք Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» կամ սրա հետեւութամբ կազմված Սմբատ Գունդստաբլի «Դատաստանագրքի»՝ իր ժամանակի համար անսովոր «մարդասիրական» հողվածներով, ի շնորհիվ այն բանի, որ դրանք բովանդակում են հայ սովորութային իրավունքի բազմաթիվ նորմեր: Մխիթար Գոշի այն վկայությունը, «որ ոչ թուին ի կանոնաց, ի կենդանի առաք ձայնէ» (Դատաստանագիրք, 1 , ճթ), հաստատում է, թե ինչ մեծ դեր էր կատարում սովորութային իրավունքը հայ իրականության մեջ:

Սովորութային իրավունքի անչափ հարուստ նյութ է բովանդակում հայ ազգագրությունը, որը, ցավոք, լայնորեն ուսումնասիրված չէ այդ տեսանկյունից: Հենց միայն մեր էպոսի վերլուծությունը բավարար է սովորութային իրավունքի նորմերի թաքնված մի գանձարան բացելու եւ, թերեւս, պատասխանելու այն հարցին, թե ինչու «Սասնա ծռերը», ի տարբերություն այլ ժողովուրդների դուրսագնալուծների, այդչափ զերծ է սպանությունների ու պատերազմների սարսափազդու տեսարաններից, մարդկային դաժանությունից ու նենգությունից, հեղվող արյան գետերից:

Զջափազանցելով սովորութային իրավունքի նշանակությունը, հարկ է նաեւ նշել հայ եկեղեցական ժողովների կանոնական որոշումների խաղաղած կարեւոր դերը: Այդ ժողովները, հատկապես պետականության կորստից հետո, երբեմն հրավիրվել են քաղաքական ճգնաժամային պահերին, եւ որոնց, բացի կրոնավորներից, մասնակցել են նախարարներ, աշխարհիկ դասի այլ ներկայացուցիչներ: Եկեղեցական ժողովների կանոնները շատ անգամ իրավաբանական նորմերի նշանակություն են ստացել, կարգավորել ներքին հասարակական ու արտաքին հարաբերություններ:

Մասնավորապես կարելի է նշել Աշտիշատի (365թ.), V դարի (443թ.) Շահապիվանի, 768թ. Պարտավի, 1243թ. Սսի, 1268թ. Չագավանի, 1651թ. Երուսաղեմի եկեղեցական ժողովների որոշումները, 554, 645, 719 թ թ. մշակված Դվինի կանոններն ու որոշումները, 726 թ. Մանազկերտի կանոնները, Գրիգոր Լուսավորչի, Սահակ Պարթեւի, Հովհան Մանդակունու, Դավիթ Ալավկատրդու եւ այլոց կանոնական գրությունները: Այս շարքում առանձնահատուկ տեղ ունի VIII դարի սկզբին Հովհաննես Օձնեցու կազմած Կանոնագիրքը: Խոսելով Օձնեցու «Կանոնագրքի» նշանակության մասին, Վ. Հակոբյանը, կարեւոր ընդհանրացում կատարելով, նշում է, որ Կանոնագրքի քաղաքական ու գործնական նշանակությունն էր « Ազգային ավանդական կարգ ու կանոնով, սովորություններով իրականացնել հասարակական - քաղաքական որոշակի նպատակներ.»<sup>8</sup>:

Օձնեցին՝ որպես Կաթողիկոս, ի մի բերելով, ամբողջականացրեց իրենից առաջ սահմանված կանոնները, պաշտոնական ձեւ ու վավերացում տվեց մինչեւ այդ ճանաչում գտած կանոնական սահմանումներին:

Հասարակական կյանքի կանոնակարգման ու ազգային կեցության կանոնների վերահսկման գործում եկեղեցու դերն ավելի է ուժեղանում օտարների տիրապետության տարիներին: Դա, մասնավորապես, վերաբերում է սելջուկների տիրապետությանը (11- 12-րդ դարեր): Այդ տարիներին եկեղեցուն էր վերապահված բոլոր տիպի հարցերով, այդ թվում՝ քրեական, վճիռներ կայացնելու իրավունքը<sup>9</sup>:

Տեղին է ավելացնել նաեւ Փավստոս Բուզանդի վկայությունն այն մասին, որ Ներսես Կաթողիկոսի կողմից (353-373թթ.) հրավիրվեց եկեղեցական ժողով եւ մշակվեցին նորմեր, որոնք կարգավորում էին ոչ միայն ներեկեղեցական հարաբերությունները, այլեւ իշխանավորների ու նրանց հպատակների հարաբերությունները:

Հատուկ կարեւորելու անհրաժեշտություն ունի նաեւ այն հանգամանքը, որ, սկսած 4-րդ դարից, հայ իրականության մեջ ոչ միայն եկեղեցական, այլեւ աշխարհիկ կյանքը կանոնակարգող կանոնախմբերի հիմնական փիլիսոփայությունը եղել է խրատի, բարոյական դատապարտման եւ կամ ապաշխարության միջոցով կանխել մարդկանց համակեցության կանոնների հնարավոր խախտումները: Սա ոչ միայն պատմական բացառիկ կարեւորության հանգամանք է, այլեւ արժեքավոր դաս մեր ժամանակների համար:

Պատմական այս անդրադարձը<sup>10</sup> միայն մի նպատակ է հետապնդում՝ ցույց տալ, որ հայ իրականության մեջ նույնպես, անկախ այն բանից, պետականությունը կորցրել ենք թե այն առկա է, հասարակությունն ունեցել է համակարգված գոյի ու զարգացման իր կանոններն ու դրանք պահպանելու կարգը: Այդ կանոնները, չնայած չեն ունեցել այսօրվա սահմանադրական ձեւակերպումներին բնորոշ հատկանիշներ, սակայն ներկայացել են որպես հոգեւոր կանոններ, որպես բարոյական նորմեր, ընտանեկան ավանդույթներ եւ, վերջապես, ազգային սովորույթների, արժեքների մի ամբողջ համակարգ: Դրանց պահպանումն անհրաժեշտորեն դառնում էր եկեղեցու ու նաեւ ողջ ժողովրդի համախումբ պարտականությունը:

իրավիճակն արմատապես փոխվեց, երբ ժողովուրդները սահմանադրորեն ձեւակերպեցին իրենց հասարակական վարքի կանոնները: Հասարակական կյանքի զարգացման տրամաբանական թելադրանքն էր պետական կառավարման համակարգի սահմանադրական եւ օրենսդրական հստակեցումը, իշխանությունների տարանջատումն ու գործունեության ներդաշնակումը, անհատ եւ հասարակություն հարաբերություններում նոր արժեհամակարգերի արմատավորումը: Նման իրավիճակում անխուսափելիորեն առաջանում է հասարակական համակեցության հիմնական կանոնների պահպանման վերահսկողության համարժեք համակարգի՝ սահմանադրական վերահսկողության, անհրաժեշտությունը՝ որպես հասարակության կայուն ու առողջ զարգացման գրավական:

Ի՞նչ է իրենից ներկայացնում սահմանադրական վերահսկողությունը որպես համակարգ: Շատ հաճախ գրականության մեջ այս հարցը շրջանցվում է կամ նույնացվում սահմանադրական վերահսկողության դատական համակարգի հետ: Հետագա շարադրանքում մենք կանդրադառնանք այս խնդրի մի շարք կողմերին: Այստեղ կցանկանայինք հատկապես առանձնացնել երկու սկզբունքային հարցադրում: Նախ. սահմանադրական վերահսկողությունը չի սահմանափակվում միայն դատական վերահսկողության շրջանակներում: Այստեղ նկատի պետք է ունենալ նաեւ օրենսդիր ու գործադիր իշխանությունների գործառնական դերը, բարոյական, ազգային ու հոգեւոր արժեքների պահպանման ավանդույթն ու կարգը: Երկրորդ՝ սահմանադրական վերահսկողությունը որպես համակարգ, որպես տարբեր իրավասություն ունեցող մարմինների գործառնական դերը ու միաժամանակ ներդաշնակություն պահանջող համակցություն կարող է գոյություն ունենալ եւ արդյունավետ գործել միայն որոշ նախապայմանների առկայության դեպքում: Դրանցից անհրաժեշտ է ընդգծել հասարակական հարաբերությունների սահմանադրական որոշարկվածությունը, հասարակության զարգացման ժողովրդավարական սկզբունքների որդեգրումը

( հեղափոխությունների կամ բռնատիրության ժամանակ նման համակարգն անելիք չունի ), վերահսկողության անկախությունը, հանընդգրկուն բնույթը, հասարակության անդամներին դրա մատչելիությունը, սահմանադրական վերահսկողության հրապարակայնությունը եւ այլն:

Հետեւությունն այն է, որ ցանկացած հասարակություն, այդ թվում՝ նախասահմանադրական շրջանում, ունեցել է հասարակության կենսագոյի գրված ու չգրված կանոններ, ինչպես նաեւ դրանց պահպանության ու իշխանությունների նկատմամբ վերահսկողության ( կամ արգելակների ) ամբողջական համակարգ: Դրա կարեւոր բաղադրիչներն են եղել հավատը ( եկեղեցին ), բարոյական վարքագծի նորմերը, ավանդույթները ( հասարակական, ընտանեկան ), մեծ կամ փոքր համակարգի առանձնահատկություններով պայմանավորված վարքի կանոնները, իրավական նորմերը եւ այլն:

Այս բոլորի հետ մեկտեղ, պետության Հիմնական օրենքի ընդունումը թելադրում է մոտեցման նոր կերպ, նոր եղանակ: Վերջինիս էությունը հանգում է նրան, որ սահմանադրական վերահսկողության գործառնական խնդիրներին համապատասխան ձեւավորվում է այն իրականացնող սահմանադրական ինստիտուտ կամ կազմակերպական հատուկ կառուցվածք: Սակայն դա չի նշանակում, որ մինչ այդ գործող ձեւերն ամբողջությամբ դադարում են գոյություն ունենալ: Հակառակը, խնդիրը հանգում է նրան, որ յուրաքանչյուր երկրում, իր բազում առանձնահատկությունների հիման վրա, վեր հանվեն ու ներդաշնակվեն իրավական համակարգի, սովորութային իրավունքի, ապրելակերպի ու ավանդույթների, հոգեւոր ու բարոյական արժեքների պահպանման բոլոր բաղադրամասերը: Միայն այս դեպքում է հնարավոր համակողմանիորեն հաշվի առնել տվյալ հասարակական համակարգի հիմնական բնորոշիչները եւ արմատավորել դրանց պահպանության գործուն իմունոհամակարգ:

## **II. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՓՈՒՆՈՒՄ**

Մարդկության պատմության բոլոր ժամանակներում հասարակության համակարգային վերափոխումները համեմատվել են երկրաշարժերի հետ, որովհետեւ հիմնականում հանկարծառաժեշտ ստեղծվում է որակական բոլորովին նոր վիճակ, որին բնորոշ են անորոշությունը, անկառավարելիությունը, ինստիտուցիոնալ համակարգերի կազմալուծումը կամ բացակայությունը, մտածողության ու արժեհամակարգի շփոթը, իրադրության անկանխատեսելի փոփոխությունները, անելիքի անհստակությունը, կարիքն ու սոցիալական զերլարվածությունը եւ այլն: Պարզապես դա հասարակական համընդգրկուն ստրես է, որի առաջին շրջանը տիպիկ շոկային իրավիճակ է, այնուհետեւ տիրապետող է դառնում տագնապն ու անորոշությունը, որի հաղթահարմամբ է սկիզբ առնում կայունությունն ու զարգացումը:

Նման վիճակում հայտնվեցին հետհամայնավարական շրջանի գրեթե բոլոր երկրները: Այն առանձնահատուկ ընդգծումներով դրսևորվեց նախկին ԽՍՀՄ հանրապետություններում: Բանն այն է, որ վերջիններս ապրեցին կրկնակի փլուզում՝ նախ. հասարակական հարաբերությունների համակարգի եւ ապա՝ պետական կառույցի: Եթե առաջինը ենթադրում էր անցում շուկայական տնտեսական հարաբերությունների եւ իշխանությունների տարանջատման սկզբունքի հիման վրա ժողովրդավարական, իրավական ( որոշ նորանկախ երկրներում նաեւ սոցիալական ) պետությանը բնորոշ հասարակական հարաբերությունների արմատավորում, ապա երկրորդը պարտադրում էր անհետաձգելի քայլեր՝ մասից ամբողջ դառնալու, ինքնուրույն պետական - հասարակական համակարգ ստեղծելու ուղղությամբ:

Նշված խնդիրների լուծումը պահանջում էր գործադրել ճգնաժամային կառավարման ողջ գինանոցը՝ անցումը կառավարելի դարձնելու, համակարգային վերափոխումների ամխուսափելի բացասական հետեւանքները մեղմելու, քաղաքական, տնտեսական, հոգեբանական եւ ընդհանրապես արժեհամակարգային անորոշությունը հաղթահարելու, համակեցության նոր կանոնները հստակեցնելու, փլուզված կառույցների փոխարեն նորերը ձեւավորելու եւ բազմաթիվ այլ անհետաձգելի խնդիրներ լուծելու համար: Պահանջվում էր ջանքերի գերազույն լարում՝ կյանքի ռիթմը պահպանելու եւ տարածության ու ժամանակի մեջ նորովի կողմնորոշվելու համար: Այն, ինչ ընդհանուր էր բոլոր նորանկախ երկրներում, բազմապատիկ դժվարություններով էր դրսևորվում Զայաստանում՝ պայմանավորված երկրաշարժով, պատերազմով, շրջափակումով, անկենսունակ տնտեսությամբ, աշխարհաքաղաքական նոր իրողություններով:

Զասարակական կառավարման ու, մասնավորապես, մեր ուսումնասիրության առարկայի տեսանկյունից մեծ կարեւորություն ունեն հետեւյալ հարցերի պատասխանները.

ա ) ինչպե՞ս տեղի ունեցավ անցումը: Դա անցում էր, թե՞ փլուզում՝ առանց նախապատրաստման,

բ ) որքանո՞վ էր հստակ, թե դեպի ու՞ր էր անցումը,

գ ) ինչպիսի՞ն է բուն անցման շրջանը, դրա տեսականությունը, փուլերը, սկիզբն ու վերջը,

դ ) պահանջում է, արդյոք, անցման շրջանը հասարակական կառավարման ու, մասնավորապես, սահմանադրական վերահսկողության յուրահատուկ մոտեցում:

Թե Եվրոպայի նախկին համայնավար երկրների եւ թե ԽՍՀՄ հանրապետությունների համար 1985 թվականի ապրիլից հետո ընկած ժամանակահատվածն ընկալվում էր որպես իրավիճակի վերափոխումների ուղղությամբ նոր ձեռնարկումների ժամանակաշրջան: Իսկ ստեղծված իրավիճակի վերաբերյալ Արեւմուտքի քաղաքական գնահատականն այն էր, որ գործ ունեն « չարիքի կայսրության » հետ եւ այն բարեփոխելու գորբաչովյան ջանքերը համարվեցին հերոսություն: Իսկ տնտեսական համակարգին բնորոշ էին անկենսունակությունն ու վերարտադրական գործընթացների խաթարվածությունը:

Սակայն գորբաչովյան բարեփոխումներն ի սկզբանե դատապարտված էին ձախողման մի շարք պատճառներով: Նախ. դրանք ընդգրկում էին միայն տնտեսական ոլորտը եւ գրեթե չշոշափեցին քաղաքական համակարգը:

Երկրորդ՝ հասարակական կյանքում տեղի ունեցող գործընթացներն առաջ էին անցել փնտրվող եւ պարտադրվող լուծումներից: Ավելին, վերջիններս ոչ միայն չէին կարող կաղապարել նոր իրականությունը, այլեւ խորքային սոցիալական վերափոխումների խթանիչի դեր էին կատարում: Դրա լավագույն վկայություններն են Նովոօգորյովյան գործընթացը, 1991 թվականի մարտի 17-ի հանրաքվեն, Մերձբալթյան հանրապետություններում եւ Զայաստանում ընթացող գործընթացների նկատմամբ Մոսկվայի անհեռատես արձագանքները եւ այլն:

Երրորդ՝ սխալ էր ընկալվում եւ գնահատվում միջազգային գործոնը: Մի կողմից, թերագնահատվեցին Արեւմուտքի աշխարհաքաղաքական շահերը եւ արտածին գործոնների հնարավոր ներագդեցությունը, մյուս կողմից՝ տիրապետող գլխապատույտն էր ու չհիմնավորված ոգելորությունը:

Եթե այս ամենին ավելացնենք , որ բացակայում էր հստակ պատկերացումն անելիքի մասին ու աղճատված էր իրականության զգացողությունը, ապա պատկերը մոտավորապես ամբողջական կլինի:

Այս ամենը վկայում է այն մասին, որ նոր իրականության

« հասունացումը » տեղի էր ունեցել կառավարողների կամքից անկախ եւ « գաղտնի շրջանով »: Բնականաբար, վերափոխումը պետք է լիներ պայթուցային՝ համապատասխան հետեւանքներով<sup>11</sup>: Փաստորեն, պատմական իրողությունն այն է, որ տեղի ունեցավ համակարգային փլուզում՝ առանց դրա սուբյեկտ հանդիսացող ժողովուրդներին դրան նախապատրաստելու: Ավելին, թե միջազգային շրջանակների եւ թե մոսկովյան իշխանությունների ամբողջ ջանքերն ուղղված էին ապակողմնորոշելու հասարակական կարծիքը եւ թյուր պատկերացում տալու սպասվելիք իրադարձությունների մասին: Բնական է, որ նման իրավիճակում անխուսափելի էր հոգեբանական ու աշխարհընկալման ցնցումը, որն անհամեմատ ծանրացրեց անցման շրջանի դժվարությունների հաղթահարման գործը:

Նման իրավիճակում առաջին պլան են մղվում ճգնաժամային կառավարման մոտեցումները՝ առաջադրելով երկակի խնդրի լուծում: Նախ. թույլ չտալ քաոսի առաջացում եւ կազմակերպված ու կառավարելի ձեռով դուրս գալ այդ իրավիճակից՝ նվազագույնի հասցնելով կորուստները: Երկրորդ՝ հնարավոր կարճ ժամկետներում ճշտել առաջնահերթությունները, նախապատրաստել պետական մեքենան աշխատելու ֆունկցիոնալ կառավարման պայմաններում, ստեղծել հասարակական մոր հարաբերություններին բնորոշ օրենսդրական դաշտ ու կառավարման ինստիտուցիոնալ համակարգ: Այս խնդիրների լուծումը եվրոպական նախկին համայնավար երկրների համար ուներ այն առանձնահատկությունը, որ , մի կողմից, ավելի հստակ էր անելիքը եւ պատկերացումն ապագայի նկատմամբ՝ հասարակական գիտակցությունից դեռեւս դուրս չէին մղվել այն արժեքները, որոնք պետք է վերականգնվեին ու մեծ թիվ էին կազմում դրանք կրողները: Մյուս կողմից՝ կային ազգային-պետական ամբողջական համակարգ, համեմատաբար ինքնուրույն կառուցվածքի վրա խարսխված տնտեսություն, եվրոպական առաջադիմական արժեհամակարգերին ինտեգրվելու ավելի մեծ հնարավորություն, աշխարհաքաղաքական առավել բարենպաստ իրավիճակ:

ԽՍՀՄ հանրապետությունների համար ոչ միայն մեծ էր իներցիայի գործոնը եւ տարիներով քողարկված ու առավել սրությամբ ի հայտ եկած հիմնահարցերի ազդեցությունը, այլեւ անհամեմատ դժվար էր ինքնուրույն գործելու հնարավորությունը: Դա պայմանավորված էր, մի կողմից, նրանով, որ տնտեսական կապերը եւ դրանց ներազդեցությունը քաղաքական գործընթացների համեմատությամբ ունեն հարաբերական անկախություն ու մեծ իներցիա: Մյուս կողմից՝ առաջացել էր շահերի աններդաշնակություն նաեւ այն պատճառով, որ միջեւ վերջ հստակ չէին անելիքները, մոր լուծումներն ու դրանց հասնելու ճանապարհները: Գործեց. այսպես կոչված,

« փրկվեք ինչպես կարող եք » կարգախոսը: Եվ պատահական չէ, որ, նույնիսկ ԱՆԿԻ պետությունների համագործակցության ձեւավորումից հետո, համատեղ ընդունված որոշումները գերազանցապես մնացին որպես բարի ցանկություն եւ գործնականում չեն իրականացվում:

Այս ամենն զգալիորեն պայմանավորված է նրանով, որ նորանկախ երկրների մեծ մասի համար տեւականորեն հստակ չէր, թե դեպի ուր է անցումը եւ դա խորքային ինչ վերափոխումներ է պահանջում ( դրա լավագույն վկայություններից են նաեւ 1991թ. մարտի 17-ի հանրաքվեի արդյունքները 9 հանրապետությունում ):

Անցման շրջանը պայմանականորեն կարելի է բաժանել հետեւյալ ժամանակահատվածների.

1. Հասարակական մոր կենսաձեւին անցնելու նախընթաց շրջան: Տեսականորեն դա կարող է վերաբերել ամբողջ 70 տարվան ( շատերի համար այդ տարիները դարձան աքսորի, քաղաքական հալածանքների ու անհույս պայքարի տարիներ ) : Գործնականում այն խթանվեց 1953, 1965, 1979 եւ 1985 թվականների տնտեսական բարեփոխումների կիսալուծումների ու անհաջող փորձերի արդյունքով եւ հասարակական համընդգրկուն բնույթ ստացավ 1987 թվականից հետո, երբ պարզվեց վերակառուցման գաղափարախոսության սնանկությունը: Այս շրջանը կարելի է բնութագրել նաեւ փլուզման հասունացման «գաղտնի շրջան», քանի որ, ինչպես նշեցինք, անցումը ծրագրված իրականացնելու փոխարեն տեմդագին եւ ուշացած քայլեր էին արվում այն խոչընդոտելու եւ հասարակությանն ապակողմնորոշելու համար: Միաժամանակ այն կարող է համարվել նաեւ կորցրած հնարավորությունների շրջան, քանի որ մոր իրականության մեջ ապրելու ու գործելու նախապատրաստական գրեթե որեւէ աշխատանք չտարվեց:

2. Դա ԽՍՀՄ փաստական փլուզման եւ դրան հաջորդած շոկի շրջանն էր:

Մի կողմից՝ դարաբաղյան շարժումը եւ ժողովրդավարական գործընթացների առաջին քայլերը Հայաստանին ավելի էին նախապատրաստել դիմագրավելու սպասվելիք փորձությունները ( այստեղ պետք է նկատի ունենալ նաեւ պատմական հիշողության գործոնը, փոքր համակարգերին բնորոշ ադապտացման առանձնահատկությունները եւ այլն ), մյուս կողմից՝ Հայաստանը հայտնվեց փլատակների ամենածանր հատվածում՝ հայտնի բազմաթիվ գործոնների պատճառով:



Այս փուլին, որը ներառում է 1991-92 թվականները, բնորոշ էին.

- փլուզմանը հաջորդող ցնցումները ( ավտրոշուկերը ), եղած համակարգերի շարունակական կազմալուծումը,

- իրավիճակի վրա արտաժին գործոնների ներազդեցության գերակայությունը ներծին գործոնների համեմատությամբ,

- անկառավարելիության վտանգը եւ իրադրության փոփոխության նվազ կանխատեսելիությունը,

- հասարակական շփոթը, անելիքի անորոշությունը, անվստահությունն ու վախը վաղվա օրվա նկատմամբ,

- տնտեսական ու քաղաքական նոր համակարգերի ձեւավորման մոտեցումների տենդագին փնտրտուքն ու առաջին համարձակ քայլերը<sup>12</sup>,

- նոր արժեհամակարգերի բացակայությունը եւ ժամանակի ու տարածության նորոպի իմաստավորման պակասը,

- հին մտածողության սինդրոմը, անկախ ու ազատ ապրելու ունակության պակասը,

- հասարակության հետագա զարգացման խնդիրներին զգայական ու որոշ առումով նաեւ սիրողական մոտեցումը եւ այլն:

Հասարակական հոգեբանության տեսակետից որոշ չափով այլ էին տազնապները մինչեւ 1991 թվականի դեկտեմբերը եւ դրանից հետո: Ընդհանրապես 1991 թվականը դարձավ հասարակական մեծ ալեկոծությունների տարի՝ մարտի 17-ի՝ Միությունը պահպանելու հանրաքվե ( որին Հայաստանը չնասնակցեց ), սեպտեմբերի 21-ի անկախության հանրաքվե Հայաստանում, ԽՍՀՄ հեղաշրջման փորձ ( օգոստոս ) եւ ապա փլուզում ( դեկտեմբեր ) ու բազմաթիվ այլ իրադարձություններ, որոնցից յուրաքանչյուրը շոշափում էր կենսագոյի հիմնախնդիրներն այսօր եւ այսուհետ:

Ավելացնենք նաեւ, որ անկախությունն արդեն իսկ ճանաչում գտած քաղաքական ու բարոյահոգեբանական իրողություն էր, որը տնտեսական ու սոցիալական իր գինն էր պահանջում վճարել:

Այս փուլին էր վիճակված լուծելու երկու ծայրահեղ կարեւոր խնդիր՝ նախ՝ հաղթահարել անցման շրջանի տազնապները: Երկրորդ՝ հստակեցնել սկզբունքային

դիրքորոշումները հասարակության հետագա զարգացման գործընթացների նկատմամբ եւ դրանք օրենսդրորեն կարգավորել: Առանց վարանելու կարելի է փաստել, որ մեծագույն դժվարություններով հանդերձ, Հայաստանում երկու խնդիրներն էլ լուծվեցին հաջողությամբ: Ճշտվեցին նաեւ մոտեցումները նոր Սահմանադրության մշակման եւ սահմանադրական վերահսկողության հատուկ համակարգ ստեղծելու ուղղությամբ:

Նոր Սահմանադրության ընդունման խնդիրը դարձավ խորհրդարանական ակտիվ քննարկման առարկա, որը նաեւ հասարակությանը նոր իրականությանը հաղորդակից դարձնելու եւ իր ապագայի մասին խորհելու լավ առիթ ու հնարավորություն ընձեռեց: Ի դեպ, չմոռացվեցին նաեւ սահմանադրական վերահսկողության անհրաժեշտության հետ կապված հարցերը: Դեռեւս 1991 թվականի նոյեմբերի 19-ին ուժի մեջ մտած « Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանվեց սահմանադրական դատարանի ձեւավորման կարգը:

3. Թե Հայաստանի եւ թե նորանկախ շատ երկրների համար հետագա տարիները, մինչեւ նոր սահմանադրությունների ընդունումը, դարձան հատվածական

( դիսկրետ ) վերափոխումների եւ իրադրության որոշ կայունացման տարիներ: Զգալի չափով ամրապնդվեց վերափոխվող հասարակական հարաբերությունների օրենսդրական բազան, հիմնականում կազմավորվեցին պետական կառավարման ինստիտուտները, նոր որակ ստացավ տնտեսական անկախությունը՝ հատկապես սեփական դրամանիշի եւ ֆինանսաբանկային ինքնուրույն հարաբերությունների արմատավորման շնորհիվ, ձեւավորվեցին միջազգային գործուն կապեր, որոնք կողմնորոշեցին նաեւ տնտեսական բարեփոխումների բնույթը: Մինչդեռ, գրեթե անխուսափելի էր սեփական սխալն ուղղելով որոշ լուծումներ փնտրելը:

Այս փուլն ուներ նաեւ ներքին վտանգներ ու խութեր: Հայաստանի համար դա պայմանավորված չէր միայն դարաբաղյան պատերազմի ածանցյալ հետեւանքներով: Օրենսդրական բացերը, կառույցների անկատարությունը, կառավարման սխալներն ու մի շարք հարցերի անձեռնահաս լուծումները հասարակության մեջ պարարտ հող ստեղծեցին բացասական բազմաթիվ դրսեւորումների ի հայտ գալու ու խորանալու համար, որոնք շատ կարճ ժամանակամիջոցում խոր արմատներ ձգեցին:

Հասարակության համար այլեւս ավելի մեծ վտանգ էին ներկայացնում ոչ այնքան հնից մնացած խոցերը, որքան նոր առաջացած ու իռացիոնալ վերարտադրության փուլ մտած երեւույթները: Պետական կառավարման մեծագույն բացթողումներից մեկն այն էր, որը, ի դեպ, տիպական է նաեւ նախկին ԽՍՀՄ շատ երկրների, որ ծրագրված արդյունավետ պայքար չծավալվեց դրանց կանխարգելման եւ բարեփոխումների դրական հետեւանքների առաջանցիկ ընթացք ապահովելու ուղղությամբ: Ավելին, կարճ ժամանակում սոցիալական բեւեռացումը հասավ այն աստիճանի, որ հասարակությունը պատրաստ չէր այն ընկալելու: Իսկ գաղափարի համար պայքարի ելածներից շատերն արագ գայթակղվեցին ու տրվեցին ընչաքաղցությանը, հասարակության աչքում արժեզրկելով թե իրենց եւ թե շատ գաղափարներ:

Այս փուլում բավարար ուշադրություն չդարձվեց հատկապես դատախարակական վերափոխումներին եւ, մասնավորապես, սահմանադրական վերահսկողության գործուն համակարգի ստեղծմանը:

4. Զգալի չափով տարբերվում է հետսահմանադրական շրջանը, երբ նորանկախ երկրները ձեռնամուխ եղան համակարգված վերափոխումների: Այս շրջանը կշարունակվի այնքան ժամանակ, քանի դեռ իրավական ու ժողովրդավարական հարաբերությունները չեն հավաքել բավարար կրիտիկական զանգված՝ հասարակական կյանքի հիմնական բնութագրիչներ դառնալու համար, եւ շուկայական տնտեսական հարաբերությունները չեն ներառել վերարտադրության բոլոր փուլերն ու չեն ստեղծել ընդլայնված վերարտադրության բավարար նախադրյալ: Սակայն բարդությունն այն է, որ ժամանակը չի սպասում, բացասական դրսեւորումների կանխում եւ դրական տեղաշարժերի անհրաժեշտ արագություն է պետք, որպեսզի բացասական միտումներն առաջ չանցնեն ու արգելակեն հետագա գործընթացները: Իսկ դրական արագ տեղաշարժեր կարելի է ակնկալել միայն համակարգված, ներդաշնակ ու ակտիվ քայլերի պարագայում, լրջորեն հոգ տանելով հասարակական ինունոհամակարգի ամրապնդման մասին:

Միջազգային փորձը վկայում է, որ նման իրավիճակներում ոչ թե դրսեւորվել է վախվորած մոտեցում, այլ ավելի է կարելորդվել ակտիվ գործող սահմանադրական վերահսկողության դերը: Գրականության մեջ նույնիսկ կարծիք է հայտնվում, որ Գերմանիայում, Ֆրանսիայում եւ եվրոպական մի շարք այլ երկրներում մասնագիտացված սահմանադրական վերահսկողության ինստիտուտների ծնունդը պայմանավորված էր համակարգային վերափոխումներով թելադրված կոնկրետ խնդիրների լուծմամբ<sup>13</sup>: Մենք այն կարծիքին ենք, որ սահմանադրական վերահսկողությունն ամենից առաջ բնորոշ է դիմանիկ ու կայուն զարգացման ուղի բռնած հասարակությանը, որտեղ ժողովրդավարությունը կարգախոսից վեր է ածվել կենսածեւի, դարձել է կենսական անհրաժեշտություն եւ գործելակերպի բովանդակություն՝ առաջին հերթին պետական իշխանությունների համար: Դրա հետ

մեկտեղ, սահմանադրական վերահսկողությունը հզոր միջոց է հասարակությունը այդպիսին դարձնելու եւ համակարգային անցումն արագացնելու համար:

Բնականաբար, անցման շրջանում սահմանադրական վերահսկողությունը նույնպես

դրսեւորվում է որոշ առանձնահատկություններով: Նախ՝ ընտրվում է օբյեկտների եւ սուբյեկտների համեմատաբար նեղ շրջանակ: Երկրորդ՝ այն երկրներում, որտեղ տրված է այդ հնարավորությունը, գերակայում են անհատական դիմումների հիման վրա գործերի քննությունը: Երրորդ՝ նախագահների կողմից լիարժեքորեն չեն օգտագործվում Սահմանադրության գերակայությունն ապահովելու հարցում սահմանադրական դատարանների հնարավորությունները՝ պայմանավորված սահմանադրության

պահպանման ուղղությամբ իրենց իրավասության իրականացման մեխանիզմների անկատարությամբ: Չորրորդ՝ պակաս կարեւորություն է տրվում հետագա վերացական վերահսկողությանը, որը սակայն անցման փուլում ավելի մեծ չափով կարող է նպաստել օրենսդրական համակարգի ներքին հակասությունների հաղթահարմանը եւ Սահմանադրության գերակայության ապահովմանը: Զինգերորդ՝ սահմանադրական դատարանները կազմավորման փուլում ինքնահաստատման ու հասարակական վստահության պակաս ունեն, որը թուլացնում է հասարակական գործընթացների վրա ունեցած ներազդեցությունը:

Չխորանալով այլ մանրամասների մեջ, նշենք, որ անցումային փուլում առավել քան կարեւորվում է գործուն սահմանադրական վերահսկողության անհրաժեշտությունը, եւ այն իրականացնելու գլխավոր պայմանը բավարար լիազորություններով, գործունեության անհրաժեշտ նախադրյալներ ունեցող ու անկախ գործող սահմանադրական դատարանի ստեղծումն է:

### III. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒՅԹԸ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Հասարակական հարաբերությունների սահմանադրական կարգավորման վերջին երկու հարյուրամյակի փորձը վկայում է, որ պետության Սահմանադրության ընդունման կարեւոր նպատակներից մեկը համարվել ու համարվում է տվյալ երկրի հասարակական հարաբերությունների բնույթի որոշարկումը: Բացի այն, որ շատ երկրների սահմանադրություններում տվյալ պետությունը բնութագրվում է որպես աշխարհիկ պետություն<sup>14</sup>, իշխանությունների տարանջատման սկզբունքը որդեգրած երկրները գերազանցապես, ուղղակի կամ անուղղակի, սահմանադրորեն ամրագրել են, որ իրենք ժողովրդավարական, իրավական ու նաեւ սոցիալական պետություն են<sup>15</sup>: Ի՞նչ է ենթադրում մեզ բնորոշումը, որքանով է այն դիտարկվում որպես սկզբունք, որպես նպատակ կամ որպես անմիջապես գործող իրավանորմ եւ ի՞նչ խնդիրներ է առաջադրում սահմանադրական վերահսկողության նոր ձեւավորվող իրավական համակարգերին:

Պատասխանը, մեր կարծիքով, կարելի է գտնել այդ բնորոշումների՝ որպես հասարակական հարաբերություններ բնութագրող կատեգորիաների, համակողմանի վերլուծության ու եռամիասնության մեջ դրանց ընդհանուր որակի բացահայտման միջոցով:

Խնդրին ճիշտ մոտեցման համար նախ անհրաժեշտ է հստակ տարբերակել կատեգորիա եւ իրավանորմ հասկացությունները: Դա իր հերթին հնարավորություն կտա հստակեցնել նաեւ սահմանադրական նորմի նշանակությունը որպես սկզբունք կամ նպատակ, եւ սահմանել այն վերահսկելու առանձնահատուկ կարգն ու պայմանները:

Ամեն մի հասկացության փիլիսոփայական իմաստն այն է, որ արտացոլում է տվյալ երեւույթի (ուսումնասիրման առարկայի) այն հատկությունները, որոնցից յուրաքանչյուրն անհրաժեշտ է, իսկ միասին վերցրած՝ բավարար, որպեսզի տվյալ երեւույթը (առարկան)՝ որպես որակական որոշակի ամբողջականություն, տարբերակվի, ճանաչվի: Կատեգորիան հասկացության ամենաբարձր աստիճանի ընդհանրացումն է, տվյալ երեւույթի ամբողջական բնութագրման ամենալայն ու ծավալուն վերացարկումը: Մեր ուսումնասիրման առարկայի առումով այն արտահայտում է օբյեկտիվորեն գոյություն ունեցող հարաբերությունների ընդհանրական էությունը, որակը, բնույթը:

Անկախ մեր ճանաչողության աստիճանից, այդ հարաբերությունները, անհրաժեշտ նախադրյալների առկայության պարագաներում, կան կամ առաջանում ու գործում են: Որքանով ենք դրանք ճանաչում, մոդելավորում ու տալիս կանոնակարգված ձեւակերպում, պարունակում է այն հարցի պատասխանը, թե ինչպիսին է մեր ճանաչողությունը, գործելակերպի ազատությունը եւ օբյեկտիվ գործընթացների վրա ներազդելու հնարավորությունը: Գնահատողության եւ հարաբերությունների կարգավորման տվյալ աստիճանից ելնելով, այն կարող է հասարակության կողմից ընդունվել որպես վարքագծի պարտադիր կանոն:<sup>16</sup> Այլ կերպ, իրավանորմը հասարակական հարաբերությունների կարգավորված, որոշակիորեն սահմանված վիճակի բնորոշումն է: Բայց, քանի որ այդ հարաբերությունները գոյություն ունեն դինամիկայի մեջ, իրավանորմը չի կարող հանդես գալ միայն որպես փաստագրում, այն արտահայտում է ճանաչողության, մոտեցման կերպ կամ սկզբունք, արտահայտում է շարժում կամ նպատակ, արտահայտում է տարափոփոխ իրավիճակում վարքագծի բնույթ, որին եւ պետք է համապատասխանեն սահմանադրական վերահսկողության համակարգը, ձեւերն ու մեթոդները: Այս հանգամանքն ունի հատուկ կարեւորություն, քանի որ անցման փուլում գտնվող մի շարք երկրների (մասնավորապես Զուլուգարիայի, Խորվաթիայի, Ռուսաստանի եւ այլն) փորձը վկայում է, որ այն

բավարար խորությամբ հաշվի չառնելու դեպքում կարող են ծնվել խորքային լուրջ հակասություններ կամ փակուղային վիճակներ: Գլխավորն այստեղ այն ճշմարտության ընդունումն է, որ հատկապես հասարակական հարաբերությունների արմատական վերափոխումների ընթացքում, սահմանադրական նորմը, իր իրավակիրառական նշանակությամբ հանդերձ, հիմնարար սկզբունք է ու զարգացման ուղենիշ: Իր հերթին, սահմանադրական վերահսկողությունը պետք է սահմանադրորեն ուղենշված զարգացման խթանը, այլ ոչ թե արգելակը լինի:

Առաջնորդվելով մեթոդաբանական այդ մոտեցմամբ, փորձենք նախ մեկնաբանել հասարակական հարաբերությունների սահմանադրորեն ամրագրված համակարգի ժողովրդավարական, իրավական, սոցիալական բնույթը:

Ժողովրդավարությունը որպես հասարակական հարաբերությունների բնութագրիչ եւ որպես կառավարման կերպ ընկալվում եւ մեկնաբանվում է միանգամայն տարբեր ձեւերով ու հաճախ՝ ընդհուպ փոխակերպվում է պարզ ամբոխավարության ու նաեւ՝ ամենաթողության (խնդիրը ոչ միայն էության ըմբռնումը, այլեւ չափի ընկալումն է):

Ժողովրդավարությունը քաղաքակրթության մեծագույն նվաճումներից է, վկայում է քաղաքացիական հասարակության ձեւավորման մասին, որտեղ ամեն մի անհատ՝ որպես բանական էակ, որպես սոցիալական սուբյեկտ, որպես հասարակության իրավահավասար անդամ, արժեք է ստանում,<sup>17</sup> որտեղ հարաբերությունները հստակեցված ու կանոնակարգված են՝ սահմանված են կարգն ու այն պահպանելու կանոնները, մարդու քաղաքացիական ազատության ու ինքնավարության շրջանակները:

Այդպիսին է դառնում այն պետությունը, որի պետական կառավարման ձեւը, կառուցվածքը եւ գործունեությունը համապատասխանում են ժողովրդի կամքին, ինչպես նաեւ մարդու եւ քաղաքացու իրավունքների ու ազատությունների հանրաճանաչ նորմերին, որտեղ իշխանության կրողը, իրականացնողն ու վերահսկողը ժողովուրդն է՝ ի դեմս նրա հավաքական կամքի ու ինքնակառավարման իրավունքի, որն իրականացվում է հասարակության անդամների իրավահավասարության սկզբունքի հիման վրա: Դա պետք է ամրագրված լինի Սահմանադրությամբ եւ երաշխավորված օրենքներով ու անհրաժեշտ ինստիտուցիոնալ համակարգերով:

Առանցքային նշանակություն ունի այն, որ ժողովրդի կողմից իշխանությունն իրականացվում է անընդհատության սկզբունքի հիման վրա, ներկայացուցչական մարմինների գործունեության վերահսկողության ու հետադարձ կապի պայմաններում:

Այդպիսի պետության հիմնական բնութագրիչներն են. իրական ներկայացուցչական ժողովրդավարությունը (ժողովրդի կողմից ընտրովի ինստիտուտների միջոցով իշխանության իրականացման օրինականությունը, վերահսկելիությունն ու հետադարձ կապի ապահովման իրական վիճակը), ժողովրդի կողմից իշխանության իրականացման անընդհատության երաշխավորվածությունը, ինչպես նաեւ մարդու (որպես սոցիալական արժեք) եւ քաղաքացու (որպես տվյալ հասարակական համակարգի իրավասուբյեկտ) իրավունքների երաշխավորված պաշտպանվածությունը: Ասվածից հետեւում է, որ ժողովրդավարական կարող է համարվել այն պետությունը, ուր հասարակությունը կառուցված է կամ կառուցվում է օրենսդրորեն կարգավորված փոխհարաբերությունների վրա, որտեղ երաշխավորված են անհատի բնականոն ինքնաարտահայտման ու ինքնավարության շրջանակները եւ, առանց որեւէ ընտրանքի, յուրաքանչյուր անհատ՝ որպես սոցիալական սուբյեկտ, հասարակական արժեք է, ուր մարդկանց, նրանց խմբերի եւ ողջ հասարակության պետականորեն ներդաշնակված շահերն են ընկած հասարակական առաջընթացի հիմքում:

Նման հասարակական համակարգն անխուսափելիորեն պետք է լինի իրավական եւ ժողովրդավարական արժեքներն իրավական պաշտպանվածության երաշխիքներ պետք է ունենան:

Իրավական է բնորոշվում այն պետությունը, որի ամբողջ գործունեությունը խարսխված է իրավունքի վրա, եւ որի գլխավոր նպատակը մարդու եւ քաղաքացու իրավունքների երաշխավորված պաշտպանությունն է:

Ընդհանրապես իրավական պետությունը հասկացությունը 18-րդ դարի վերջի եւ 19-րդ դարի սկզբի ծնունդ է: Սակայն գաղափարը գոյություն է ունեցել շատ ավելի վաղ:<sup>18</sup>

Իրավական պետությունն ամենից առաջ ենթադրում է հասարակական հարաբերությունների որոշակի իրավական կարգավորվածություն եւ դրանց գործադրման համակարգերի հուսալի ու անխափան

աշխատանք: Միայն այդ պարագայում իրավունքի սուբյեկտները կարող են լինել ազատ: Միայն օբյեկտիվ հասարակական հարաբերությունների ճանաչումը, իրավական կարգավորումը եւ դրա իմացությունն է մարդուն ազատ գործելու հնարավորությունը ընծեռում: Իրավական պետության հիմնական սկզբունքն էլ հենց մարդկանց սուբյեկտիվ իրավունքների ու դրանց պետականորեն իրացման օբյեկտիվ նախադրյալների ներդաշնակումն է:

Իրավական պետության բնորոշ գծերից է նաեւ այն, որ պետությունը պատասխանատու պետք է լինի պաշտոնատար անձանց գործողությունների համար, պետք է ստեղծվի պատասխանատվության ու նաեւ իրավունքների իրականացման վերահսկման երաշխավորված համակարգ:

Պետության թե ժողովրդավարական, թե իրավական եւ թե սոցիալական գործառույթի բնութագրումը չի կարող պարփակվել որեւէ նորմի շրջանակներում կամ դիտարկվել որպես ինքնուրույն, անջատ ձեւով արտահայտվող որակ: Այդ որակները, որպես հիմնարար ու սկզբունքային, պետք է ներծծված լինեն հասարակական հարաբերությունների կարգավորման յուրաքանչյուր բջջի մեջ, արտացոլվեն պետության կողմից ձեռնարկված ամեն մի քայլում, դառնան հասարակության յուրաքանչյուր անդամի ապրելակերպի անքակտելի բաղադրիչը: Դա պետք է դառնա ազգային - պետական մտածելակերպ ու գործելակերպ: Այլ կերպ՝ դրանք իրենց արտացոլումը պետք է գտնեն նաեւ Սահմանադրության յուրաքանչյուր նորմի եւ դրա գործադրման մեխանիզմների մեջ:

Իրավական պետության համար որպես պարտադիր բնութագրիչներ են. իշխանությունների տարանջատումը, կառավարման օրինականությունն ու օրենքի գերակայությունը, դատարանի անկախությունը, մարդու իրավունքների պաշտպանության երաշխավորվածությունը, սահմանադրական վերահսկողության ամբողջական եւ գործուն համակարգի առկայությունը եւ այլն:

Սահմանադրորեն իրավական պետության հռչակումն ամենից առաջ պետության բնույթի եւ հասարակական հարաբերությունների յուրահատկության վկայությունն է, դա պետության կազմակերպական առանձնահատկության արտահայտությունն է, հաստատումն այն բանի, որ տվյալ հասարակության մեջ փոխհարաբերությունների հիմքում դրվում են օրենքն ու իրավունքը: Նման պետության համար խնդիր է առաջադրվում՝ այդ սկզբունքին ծառայեցնել պետության ու հասարակության սոցիալական վարքագիծը, անհատի համար հստակեցնել քաղաքացիական հասարակության վարքի կանոններն ու իր ազատության շրջանակները, երաշխավորել այդ ազատությունը:

Անվիճելի է, որ ցանկացած երկրի Սահմանադրություն ամենից առաջ դիտվում է որպես համակեցության կանոնների շուրջ ձեռք բերված հասարակական համաձայնություն : Այն ցանկության, մոտեցման ձեւի ու եղանակի, նպատակների, սկզբունքների, որոշակի ընդհանրացումների հաստատագրման ամբողջություն է: Սահմանադրությունը յուրաքանչյուր երկրի համար դառնում է օրինաստեղծման աղբյուր, այնտեղ ամրագրված սկզբունքները սոսկ փաստի արձանագրում չեն, այլ՝ գործելակերպի հիմնական կանոններ: Այդ կանոնները վերաբերում են ոչ միայն իշխանություններին, այլ նաեւ պետությունը ներկայացնող յուրաքանչյուր իրավասուբյեկտի՝ կլինի անհատ, քաղաքացի, թե դրանց տարաբնույթ համակցություն, դառնալով նրանց հասարակական դիմագիծը, ինքնաարտահայտման կերպն ու բովանդակությունը:

Իրավական պետության մեջ սոցիալական հանրությունն ստանում է որոշակի կանոնակարգված դիմագիծ, որը բնորոշվում է որպես հասարակական կարգ, իսկ անհատը դառնում է իրավունքի սուբյեկտ, նրա հարաբերությունները հասարակության մյուս անդամների հետ որոշակիորեն կարգավորված իրավահարաբերությունների բնույթ են ստանում: Նման հասարակությունն անխուսափելիորեն պետք է ունենա նաեւ սահմանադրորեն կարգավորված իրավահարաբերությունների վերահսկման անընդհատությունն ապահովող ինստիտուցիոնալ համակարգ, որը հասարակական օրգանիզմի յուրատեսակ իմունոհամակարգի դեր է կատարում:

Նաեւ սահմանադրական վերահսկողության առումով առավել մեծ տարակարծություններ են առաջանում սոցիալական պետությունը հասկացության մեկնաբանման հարցում, ինչպես նաեւ, հատկապես նորանկախ երկրներում, լուրջ խնդիրներ են ծագում մարդկանց սոցիալական բնույթի իրավունքների պաշտպանության սահմանադրական վերահսկողության պրակտիկայում: Ուստի դրանց կանդրադառնանք առավել հանգամանորեն:<sup>19</sup>

Սոցիալական պետությունը հասկացությունը XIX դարի վերջի - XX դարի սկզբի ծնունդ է: Այն վկայում է պետության նոր որակի առաջացման մասին, համաձայն որի պետությունը պարտավորություն է ստանձնում հոգ տանել իր քաղաքացիների սոցիալական պաշտպանվածության համար: Նման որակը տիպական չէ լիբերալ իրավական պետությանը, որում առաջնայնությունը տրվում է արտադրությանը

ու շուկայական ազատությանը: Սակայն ասվածից չի բխում, որ լիբերալ իրավական պետության մեջ սոցիալական հարցեր չեն առաջադրվում ու պետականորեն լուծվում: Սխալ է նման հակաթեզի առաջադրումը: Հարցն այն է, որ պետության սոցիալական բնույթի սահմանադրորեն ամրագրումը հասարակական ողջ համակարգին ծրագրավորված գործելակերպի այլ բովանդակություն է հաղորդում<sup>20</sup>:

Շատ կարելու է սոցիալական տերմինի բովանդակային հստակ մեկնաբանումը: Այն օգտագործվում է միանգամայն տարբեր

հասկացությունների հետ զուգորդված (սոցիալական միջավայր, սոցիալական կառուցվածք, սոցիալական հոգեբանություն, սոցիալական խնդիր եւ այլն): Գործնական հարաբերություններում մի դեպքում այն ընկալվում է որպես մարդկանց սպասարկման հետ առնչվող որոշակի ուղրտ (կրթություն, առողջապահություն, գիտություն, սպորտ, մշակույթ եւ այլն), մյուս դեպքում նկատի է առնվում որպես հասարակական խումբ կամ շերտ, երրորդ դեպքում՝ ընդհանրացնելով հասարակականի հետ, նկատի է առնվում որպես մարդկային հանրություն՝ միավորված ընդհանուր շահերով, արժեհամակարգերով, կեցության կանոններով, ընդհանուր նպատակներով եւ այլն:

Բոլոր դեպքերում ընդհանուրն այն է, որ շեշտվում են անհատ - խումբ - հասարակություն փոխհարաբերությունների տարբեր կողմերն ու շահերի խաչաձեւման տարբեր հարթությունները, ընդգծվում է այն հանգամանքը, որ խոսքը վերաբերվում է բանական սուբյեկտներից կազմված հասարակության ու նրա անդամների միջեւ եղած հարաբերություններին:<sup>21</sup>

Ելնելով սոցիալական տերմինի տարբեր մեկնաբանություններից, շատ հաճախ սոցիալական պետություն ասելով հասկացվում է այն պետությունը, որը պատասխանատվություն է ստանձնում հասարակության գոյության համար (տվյալ դեպքում սոցիալականը նկատի է առնվում որպես հասարակական)<sup>22</sup>: Սակայն հիմնական մոտեցումն այն է, որ սոցիալական պետություն ասելով պետք է հասկանալ մարդկանց համակեցության մի այնպիսի համակարգ, որտեղ առկա են փոխհամաձայնեցված մարդկային հարաբերություններ, որտեղ փոխադարձ պարտավորություն է ստանձնվում օգնել կարիքավորին, ներազդել հասարակական տնտեսական բարիքների վերաբաշխման վրա՝ արդարության այնպիսի սկզբունքներից ելնելով, որպեսզի յուրաքանչյուրի համար արժանապատիվ ապրելու երաշխիքներ ստեղծվեն: Մեր կարծիքով, սահմանադրորեն իրեն սոցիալական կարող է հռչակել այն պետությունը, որը ոչ միայն ստանձնում է պարտավորություններ դաշնակել անհատի, նրանց խմբերի ու ընդհանուր հասարակական շահերը, բացառել դրանց հակադրումն ու ենթակայումը մեկը մյուսին, այլև միջոցներ է ձեռնարկում հետեւողականորեն այն իրականացնելու համար:

Պետության սոցիալական ֆունկցիայի ճանաչումը եւ սահմանադրորեն ամրագրումն առավել բնորոշ է ազգակենտրոն պետական համակարգերին եւ, թերեւս, նրա ներդաշնակ զարգացման, անցյալի, ներկայի ու ապագայի օրգանական միասնությունն ապահովելու գլխավոր երաշխիքն է: Դա պայմանավորված է տեսակի, մարդկային ինքնության պահպանության ու ներդաշնակ զարգացման բնական օրինաչափությամբ:<sup>23</sup>

Հասարակական հումանիզմի դրսեւորման եւ քաղաքակրթության առաջընթացի մեծագույն ձեռքբերում է սոցիալական պետության կազմավորումը, ուր հասարակության անդամները, սահմանադրական համաձայնության հիման վրա, որոշում են իրենց առաջընթացի նպատակը, հստակեցնում նպատակ, նախադրյալ, միջոց հարաբերակցությունը: Սա հասարակական համակեցության ավելի բարձր որակ է: Սոցիալական կարող է լինել այն պետությունը, ուր մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքների ամբողջական եւ գործուն համակարգ է ստեղծվել, ուր պետության կառավարման ամբողջ համակարգը խարսխված է հասարակական շահերի ներդաշնակման սկզբունքի վրա:

Սոցիալական պետությունն անհատի եւ հասարակության, անհատի եւ պետության փոխհարաբերությունների ներդաշնակման ավելի բարձր աստիճան է ենթադրում: Այն պետք է ճանաչվի, ընկալվի ու պաշտպանվի հասարակության յուրաքանչյուր բջջի կողմից, վարքագծի պարտադիր կանոն պետք է դառնա, որ այն ամենը, ինչ անօրինական է՝ արդար չէ ու անհարիր է սոցիալական պետությանը:

Նման մոտեցումը համապատասխան պահանջներ է առաջադրում նաեւ սոցիալական պետության սահմանադրական վերահսկողության համակարգին: Այս հանգամանքը հաշվի չառնելը կարող է հանգեցնել նրան, որ իշխանության տարբեր մարմինների կողմից հասարակական զարգացման բարդ ու բազմաշերտ խնդիրներին կարող են ցուցաբերվել անհամաձայնեցված մոտեցումներ, որոնք

անուղղակի ձեւով կարող են հանգեցնել նաեւ հակասահմանադրական իրավիճակի: Սակայն, մեր կարծիքով, առավել մեծ ուշադրության է արժանի այն, որ սոցիալական պետությանն անխուսափելիորեն անհրաժեշտ է առավել ճկուն ու կատարյալ սահմանադրական վերահսկողության համակարգ: Դրա վկայությունը, մասնավորապես, տվել է Գերմանիան:

Իրավամբ քաղաքացիական է համարվում այն հասարակությունը, որտեղ անհատն իր շահերով ոչ թե հակադրվում է հասարակությանը, այլ ինքնադրսեւորման առավելագույն հնարավորություն է ստանում՝ անհատի ու հասարակության շահերի ներդաշնակման պարագայում:<sup>24</sup>

Չաճախ պետության սոցիալական ֆունկցիան հակադրվում է հասարակության անդամների ազատության ապահովման ֆունկցիային, որը, մեր կարծիքով, արդարացված չէ: Ժողովրդավարական ազատությունը ենթադրում է նաեւ հասարակության անդամի երաշխավորված սոցիալական պաշտպանվածություն, որը մարդկային հասարակության հիմնական բնութագրիչներից է: Քաղաքացիական ազատությունը բնական ազատությունից տարբերվում է հենց նրանով, որ հասարակության մեջ անհատի գործունեությունը չպետք է հակադրվի հասարակության մյուս անդամների ազատության իրավունքին, եւ քաղաքացիական հասարակությունն իր անդամների ազատ ինքնադրսեւորման ներդաշնակ համակարգ պետք է ունենա: Իսկ վերջինս անհնարին է առանց պետության կողմից հասարակության անդամների երաշխավորված սոցիալական պաշտպանվածության ապահովման: Դա իր հերթին նշանակում է, որ հասարակության մեջ անհատը չի կարող իրեն մեկուսացված տեսնել, նրա գոյության բնականոն վիճակը փոխկապվածությունն է, փոխգործակցությունը ու նաեւ՝ պատասխանատվությունը հասարակության ներկայի ու ապագայի հանդեպ: Դրա հետ մեկտեղ, իրավացի է իրավագիտության դոկտոր Ե. Ա. Լուկաշովան, երբ շեշտում է, որ տեսական մակարդակով նույնպես այսօր վակուում է առաջացել՝ բացակայում են հետխորհրդային հասարակության մեջ քաղաքացու եւ պետության փոխհարաբերությունների հիմնադրույթները<sup>25</sup>: Նման իրավիճակը սովորաբար հանգեցնում է նրան, որ պետության համար չի հստակեցվում հասարակության անդամի նկատմամբ ոչ միայն վաղվա, այլեւ՝ այսօրվա պարտավորությունները, իսկ քաղաքացու համար, իր հերթին, պարզ չէ իր ակնկալիքների պետականորեն բավարարման հնարավորություններն ու պահանջմունքի կամ սպասելիքների հիմնավորվածությունն ու արդարացիությունը: Նման իրավիճակը, մի կողմից լուրջ բարդություններ է առաջ բերում սահմանադրական վերահսկողության պրակտիկայում (առավել եւս, երբ քաղաքացին սահմանադրական դատարան դիմող սուբյեկտ չէ), մյուս կողմից՝ սոցիալական անբավարարվածության մեծ ու վտանգավոր խթան է: Ուստի, անցման շրջանի պետական քաղաքականության առաջնահերթությունների շարքում բացառիկ կարեւոր տեղ պետք է հատկացվի քաղաքացի եւ պետություն փոխհարաբերությունների հստակ ու բոլորի համար մատչելի համակարգի մշակմանն ու գործադրմանը: Այս ամենի մեջ առանցքայինն այն է, որ սոցիալական պետության համար բոլոր լուծումների կենտրոնում մարդն է՝ պետականորեն ճանաչված, սահմանադրորեն ամրագրված, պաշտպանության անհրաժեշտ երաշխիքներ ունեցող իր իրավունքներով ու ազատություններով, ինչպես նաեւ հասարակության հանդեպ ունեցած իր պարտավորություններով:

Մեր կարծիքով, սոցիալական պետության հիմնական բնութագրիչներից անհրաժեշտ է առանձնացնել՝

- ա) մարդկանց սոցիալական պաշտպանվածության եւ բարեկեցության օրենսդրական երաշխիքների ապահովումը,
- բ) սոցիալական պաշտպանվածության պետական եւ ոչ պետական անհրաժեշտ ինստիտուցիոնալ համակարգերի ստեղծումն ու դրանց հստակ աշխատանքի ապահովումը (մասնավորապես, նկատի է առնվում նաեւ սոցիալական ապահովության համակարգը, որն առաջին հերթին առնչվում է խեղված ճակատագրերին՝ հաշմանդամություն, հիվանդություն, կերակրողի կորուստ, գործազրկություն, անապահով ծերություն եւ այլն, ինչպես նաեւ սոցիալական ապահովագրության գործուն համակարգի առկայությունը, որը կարգավորում է սոցիալական ռիսկը),
- գ) կենսանվազագույնի երաշխավորումը,
- դ) անհատի ազատ զարգացման, դավանանքի ու նախասիրությունների անկաշկանդ իրացման, ինչպես նաեւ բանական ինքնադրսեւորման երաշխիքների ապահովումը,
- ե) այդ սկզբունքի իրականացման անշրջելիության երաշխավորումը,
- զ) մարդու իրավունքների եւ ազատությունների պաշտպանության սահմանադրական վերահսկողության ապահովումը եւ այլն:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ անցման շրջանում բացառիկ կարեւորություն է ստանում մարդկանց տնտեսական իրավունքների պաշտպանության խնդիրը՝ որպես սոցիալական պետության կարեւոր գործառույթ: Բանն այն է, որ անցումը շուկայական հարաբերություններին, երբ լիարժեք ձեւավորված չեն շուկայական ենթակառուցվածքները, չկա սոցիալական պաշտպանվածության հստակ համակարգ, ապա շատ ուղրտներում շարունակվում է մենաշնորհային թելադրանքը, տեղի են ունենում լուրջ խորքային կառուցվածքային վերափոխումներ, զգալի է հոգեբանական ու սովորույթի իներցիան եւ այլն, ինչպես նաեւ ոչ լիարժեք շուկայական հարաբերություններում բազմապատկվում են մարդկանց սոցիալական եւ տնտեսական իրավունքների ոտնահարման հնարավորությունները: Ուստի, պետությունը պարտավոր է իր ակտիվ մասնակցությունը բերել անցումային խնդիրների լուծմանը եւ ստեղծել երաշխիքների անհրաժեշտ համակարգ՝ ապահովելու համար մարդկանց իրավունքների պաշտպանությունը, հասնելու նրան, որ մարդիկ հավասար իրավունքներով դառնան նոր տնտեսական հարաբերությունների կրողը:

Անցման շրջանում ստեղծվում է նաեւ սոցիալ- հոգեբանական մի այնպիսի վիճակ, երբ պետության կողմից թույլատրված ցանկացած իրավասուբյեկտի գործունեությունն նույնացվում է պետականին եւ նրանց նկատմամբ վերաբերմունքը դառնում է վերաբերմունք պետության նկատմամբ՝ իր բոլոր դրսևորումներով: Դրա մասին են վկայում բազմահազար (առանձին երկրներում՝ բազմամիլիոն) խաբված ավանդատուները, դրա հետեւանքն է Ալբանիայում 1997թ. փետրվար-մարտ ամիսներին ստեղծված իրավիճակը: Սա վկայությունն է նաեւ այն բանի, որ պետությունները բավարար ուշադրություն չեն դարձնում անցումային հարաբերությունների կառավարելիությանը եւ չի ստեղծվում մարդկանց իրավունքների պաշտպանության եւ իրավասուբյեկտների գործունեության վերահսկման անհրաժեշտ համակարգ: Դժբախտությունն այն է, որ նման երեւոյթները ժամանակին չկանխելու դեպքում անխուսափելի են դառնում հասարակական մետաստազները: Պետության համար ավելի վտանգավոր են դառնում ոչ այնքան անցյալից եկող բացերը, որոնք իներցիոն բնույթ ունեն եւ աստիճանաբար մարում են, որքան նոր իրականության մեջ առաջացած եւ պարարտ միջավայր գտած անօրինականությունները, որոնք շատ արագ իռացիոնալ վերարտադրության հուն են մտնում, ու եթե հնարավոր է բուժել, ապա միայն վիրահատական միջամտությամբ: Ցավոք, այս հանգամանքը ժամանակին թերագնահատեցին շատ նորանկախ երկրներ, այդ թվում՝ Հայաստանը: Ելքն այն է, որ յուրաքանչյուր իրավիճակում պետությունն առաջին հերթին հոգ տանի հասարակության ինունդեֆիցիտը կանխելու մասին, որի գլխավոր նախապայմանը կառավարման մեխանիզմների կայացմանը համակարգային մոտեցում ցուցաբերելն է:

Սոցիալական պետության հիմնական բնութագրիչներին անդրադառնալիս անհրաժեշտ է, թերեւս, առանձնացնել նաեւ սոցիալական հավասարության բնութագրիչը, որը վերջին երկու դարերի հեղափոխական պայքարի առանցքն է հանդիսացել: Այս որակն ընկալվել ու մեկնաբանվել է տրամագծորեն տարբեր դիրքերից: Հաճախ սոցիալական հավասարության սկզբունքի պարզունակ ընկալումը եւ այն որպես սոցիալական արդարության գերագույն չափանիշ ներկայացնելը հանգեցնում է հասարակական հարաբերությունների բնույթի եւ զարգացման օրինաչափությունների տարաբնույթ գռեհիկ ու աղճատված մեկնաբանությունների: Անառարկելի ճշմարտություն կա այն բանում, որ սոցիալական հավասարությունն ապահովելու համար սոցիալիստական պետությունը պայքարում է հարստության դեմ (ըստ 70-ամյա փորձի), սոցիալական պետությունը՝ աղքատության: Սոցիալական պետությունը չի կարող բացառել իր անդամների հավասարության սկզբունքը, սակայն այն ոչ թե պետք է բացարձակեցվի, այլ դիտվի որպես հասարակության յուրաքանչյուր անդամի իրավունք, որի իրացման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծումը պետության պարտավորությունն է: Այս սկզբունքը ենթադրում է նաեւ, որ պետության պարտքն է երաշխավորել, որպեսզի հասարակության առանձին անդամներ, սոցիալական կամ այլ խմբեր կողմնակալ վերաբերմունքի չարժանանան: Փաստորեն, սոցիալական պետությունը, մի կողմից ապահովելով սոցիալական պաշտպանվածության որոշակի միջավայր, դնելով, այսպես կոչված, ներքին չափաձողը, մյուս կողմից՝ անհրաժեշտ միջավայր պետք է ստեղծի, որպեսզի հավասար իրավունքներ ունեցող ամեն մի անհատ իր բանական կարողություններին ու օրինական հնարավորություններին համապատասխան ինքնադրսևորման դաշտ ստանա: Հենց դա է ապահովում ազատության եւ հավասարության ներդաշնակումը:

Եռամիասնության մեջ ժողովրդավարական, իրավական, սոցիալական պետությունն ամբողջական ձեւով ներդաշնակում է անհատի կենսագոյի հիմնական սկզբունքները՝ ազատությունն ու հավասարությունը: Այս որակներից յուրաքանչյուրի առանձնացումը եւ միակողմանի բացարձակեցումը կամ հակադրումը մեթոդաբանական կոպիտ սխալ է եւ կարող է հանգեցնել (վկան՝ պատմության դառը փորձը) ծայրահեղ, աղճատված եւ, որպես կանոն, ոչ ճիշտ եզրահանգումների:

Սոցիալական պետությունը, ստանձնելով պատասխանատվություն անհատի սոցիալական պաշտպանվածության հարցում, առաջին հերթին պետք է մտահոգված լինի բանական էակի ինքնաճանաչման ու ինքնադրսևորման նախադրյալների ապահովմամբ: Սակայն ամենաբարդ



խնդիրն այն է, թե որտեղ պետք է սահմանափակվի պետության միջամտությունը հասարակական-տնտեսական հարաբերություններին, որպեսզի, մի կողմից ապահովվի պետության սոցիալական ֆունկցիայի երաշխավորված իրականացումը, մյուս կողմից այն չխոչընդոտի շուկայական հարաբերությունների բնականոն զարգացմանը: Այստեղ մեկընդմիջ տրված լուծումներ փնտրելն անպտուղ է: Յուրաքանչյուր երկրում եւ յուրաքանչյուր կոնկրետ իրավիճակի համակողմանի զննհատման հիման վրա պետք է ապահովվի այդ հաշվեկշռվածությունը: Դրանում է հենց կառավարման արվեստը: Դա է կառավարության գործունեության զննհատման հիմնական չափանիշը: Սակայն ընդհանուրն այն է, որ սոցիալական պետությունը հասարակական վերարտադրության համակարգում իր ակտիվ ու ծրագրավորված մասնակցությունը պետք է ունենա: Դա վերաբերում է թե արտադրությանը եւ թե շրջանառությանն ու բաշխմանը: Այս հանգամանքը հատուկ կարեւորվեց նաեւ Գերմանիայի համար, երբ այս երկիրն իրեն հռչակեց սոցիալական, իրավական պետություն: Ինչպես նշում է Հեսսե Կոնրադը, սոցիալական պետությունը ոչ միայն հատուկ ծրագրավորված քաղաքականություն է իրականացնում առանձին սոցիալական խնդիրների լուծման բնագավառում, այլեւ նման պետությունն ընդհանրապես կառավարող, արտադրող եւ բաշխող պետություն է<sup>26</sup>:

Պետության սոցիալական բնույթի ընդունումը միաժամանակ հանդես է գալիս թե որպես սկզբունք, թե որպես նպատակ եւ թե որպես իրավանորմ: Այն դառնում է հարափոփոխ հասարակական հարաբերությունների էության բնութագրիչ եւ դիմամիկ հարաբերություններում՝ հասարակական սուբյեկտների վարքագծի կանոն:

Սոցիալական պետության կայացումն անընդհատ եւ մշտական գործընթաց է եւ պահանջում է համարժեք մոտեցում յուրաքանչյուր նոր ու փոփոխվող իրավիճակում: Սխալ է այն մոտեցումը, թե պետությունը կարող է սոցիալական համարվել միայն այն դեպքում, երբ արդեն ստեղծել են հզոր տնտեսական նախադրյալներ եւ կարող է ժամանակ գտնել մտածելու մարդկանց սոցիալական կարիքների մասին: Մարդկանց պահանջումներն եւ դրանց բավարարման հնարավորությունների արդարացի ներդաշնակման խնդիրը գոյություն ունի յուրաքանչյուր պահ, եւ այն դիմամիկ երեւոյթ է: Այլ բան է, որ տարբեր հնարավորությունների պարագայում սոցիալական բավարարման տարբեր խնդիրներ կարող են լուծվել: Բայց դա չի նշանակում, որ ժամանակի ու տարածության մեջ միջոցը կարող է կտրվել նպատակից, առավել եւս՝ հակադրվել դրան:

Ինչ վերաբերում է անցման շրջանին, հատկապես՝ ճգնաժամային կառավարման իրավիճակներին, ապա սոցիալական պաշտպանվածության խնդիրը պետության համար ստանում է հատուկ առաջնահերթություն: Ավելին, եվրոպական երկրների փորձը վկայում է, որ պետության սոցիալական ֆունկցիան հատկապես ընդգծվեց եւ սահմանադրորեն ամրագրվեց համակարգային վերափոխումների ընթացքում, քանզի նման վերափոխումների գերագույն նպատակը մարդն է, նրա կարիքների բավարարումն ու, ինչպես պատկերավոր նշվում է՝ «.հասարակության մարդկայնացումը»: Հետեւաբար, անցման շրջանում պետության հիմնական խնդիրն է

շուկայական հարաբերություններին անցնելու թափը հավասարակշռել սոցիալական պաշտպանվածության հուսալի համակարգով: Հակառակ պարագայում կաղճատվի, ընդհուպ՝ կվտանգվի տնտեսական ամեն մի բարեփոխում, առավել եւս, եթե վերջինիս նպատակն առողջ մրցակցային հիմքի վրա նորմալ շուկայական տնտեսության ստեղծումն է:

Այս առումով նույնպես հետաքրքիր է Գերմանիայի փորձի ուսումնասիրումը: Սահմանադրորեն առաջին ամրագրելով, որ Գերմանիան ժողովրդավարական եւ սոցիալական դաշնային պետություն է (հոդվ. 20), որպես այդպիսին իր պետականության զարգացման առաջին փուլի խնդիրը համարեց յուրաքանչյուր քաղաքացու կենսանվազագույնի երաշխավորվածությունը: Ընդ որում, ենթադրվում է, որ յուրաքանչյուր չափահաս անձ պարտավոր է աշխատել եւ հոգալ իր կարիքները: Եթե դա հնարավոր չէ նրա անգործունակ լինելու պատճառով, ապա պետությունը պետք է հոգածության իր բաժինն ստանձնի: Միաժամանակ պետությունը պետք է նախադրյալներ ապահովի անհատի ինքնադրսեւորման, միմյանց օգնելու, միավորվելու եւ համատեղ գործելու համար:

Աշխարհի դեռ ոչ մի պետություն չափ ու կշեռք չի դրել ասելու՝ թե ինքն այս կամ այն չափով սոցիալական է: Այդ ճանապարհով գնում են կամ չեն գնում, պետականորեն այդպիսի գործառույթ ստանձնում են կամ չեն ստանձնում: Եթե ստանձնում են, ապա պետության խնդիրն է դառնում պետականորեն ապահովել մի կողմից՝ սոցիալական պաշտպանվածության երաշխավորված համակարգի ստեղծումը, մյուս կողմից՝ բանական էակի, որպես սոցիալական սուբյեկտի, բնականոն ինքնադրսեւորման միջավայրի ստեղծումը: Բնականաբար, դա պահանջում է յուրահատուկ մոտեցում թե արտադրական եւ թե բաշխման հարաբերությունների նկատմամբ:

Եթե պետությունն իրեն չի համարում սոցիալական, ապա նշված խնդիրները հասարակությունը փորձում է լուծել այլ ձևերով ու ճանապարհներով: Հիմնականում դրանք դառնում են ինքնակարգավորվող հարաբերությունների հետեւանք:

Այլ կերպ, հիմնականը, գլխավորն այն է, որ հասարակական հարաբերությունների բնույթի որոշարկումը՝ որպես սահմանադրական նորմ, ամենից առաջ բնութագրում է այդ հարաբերությունների որակական առանձնահատկությունները, բացահայտում դրանց էությունը, զարգացման ներքին տրամաբանությունը: Եվ, գլխավորը՝ իրեն սոցիալական համարող պետությունը չի կարող ծրագրավորված մոտեցում չցուցաբերել հասարակական զարգացմանը, չի կարող ինքնակառավարվող հարաբերությունների հետեւանքները գրանցողի պասիվ դերն ստանձնել՝ ամեն ինչ թողնելով ամենագոր շուկայի տնօրինությանը:<sup>27</sup>

Սոցիալական պետության կայացումը ենթադրում է նաեւ խելամիտ սպասելիքների ու պահանջումների խնդրի առաջադրում: Հասարակության անդամների սպասելիքների իմացությունը, ռազմապետական սպասելիքների ձեւավորումը, դրան համապատասխան՝ համակեցության նոր արժեհամակարգերի անհրաժեշտությունը ոչ միայն համակարգված ու ծրագրավորված տնտեսական, այլեւ քաղաքական ու, առավել եւս՝ բարոյական նոր մոտեցումներ են պահանջում: Բանն այն է, որ անցման շրջանին բնորոշ այնպիսի վիճակներ, ինչպիսիք են խաթարված վերարտադրական համակարգը, արմատական վերակազմակերպման անհրաժեշտություն ունեցող եւ սեփական կառուցվածքային հիմք չունեցող տնտեսությունը, անորոշության գործոնը, աղճատված հասարակական գիտակցությունը, փլուզված արժեհամակարգերը եւ այլն, թելադրում են անհատի ու հասարակության փոխհարաբերությունների նոր սկզբունքների ակտիվ ու համակարգված ձեւավորում: Առանց դրա անհնարին է հաղթահարել մոտեցումների ծայրահեղ բեւեռացումն ու անհանդուրժողական հակադրությունը, մեղմել հասարակական լարվածությունը, ապահովել ներդաշնակ զարգացում: Ավելին, մեծանում են ամբողջ հասարակությանը ստրեսային վիճակի մեջ զցելու եւ տեւականորեն նման իրավիճակում պահելու քաղաքական եւ այլ շարժառիթները, որի բանիմաց հաղթահարման դեղատոմսը չգտնելու դեպքում անխուսափելի են ավերիչ հետեւանքները, մասնավորապես՝ հասարակական իմունոանբավարարության առաջացումը:

Բժշկագիտության կողմից վաղուց ապացուցվել է, որ մարդու գլխուղեղի նորմալ գործունեության համար հույզերի 60 %-ը պետք է լինի չեզոք, 35-ը՝ դրական եւ միայն 5 %-ը՝ բացասական: Եթե այս համամասնությունը խախտվում է ու հատկապես բացասական հույզերի բաժինն ավելանում է, ապա անխուսափելիորեն զարգանում են տարբեր հիվանդություններ: Իրեն սոցիալական համարող պետությունը նման խնդիրն անուշադրության մատնել չի կարող: Առավել եւս քաղաքացիական հասարակության մեջ իր անդամի սպասելիքների ու հույզերի կառավարման խնդիրը դառնում է պետության հիմնական գործառնություններից մեկը: Պատահական չէ, որ այս հիմնահարցը համարվում է հասարակագիտության առանցքային հարցերից մեկը, եւ 1995 թվականին ԱՄՆ ճանաչված տնտեսագետ Ռոբերտ Լուկասն արժանացավ Նոբելյան մրցանակի՝ հենց ռազմապետական սպասելիքների տեսության մեջ կատարած իր ներդրման համար:

Պետության սոցիալական բնութագրի ամբողջականությունը պայմանավորված է նրա յուրաքանչյուր անդամի, ամեն մի օղակի, ողջ հասարակության որդեգրած արժեքներով ու գործելակերպով:

Հատկապես անցումային փուլում պետության կարելորագույն գործառնություններից մեկն է դառնում կառավարելի անցումը շուկայական տնտեսական հարաբերությունների: Այլ կերպ չի էլ լինում՝ ընդունում ենք այն, թե՛ ոչ, գիտակցում ենք դրա անհրաժեշտությունը, թե՛ ոչ, իրական կյանքը գնում է հենց այդ ճանապարհով, միայն, անհարկի հակադրվելով, ստիպված ենք լինում հաղթահարել մեր իսկ ստեղծած ավելորդ խոչընդոտները: Ընդհակառակը, պետության հոգածության խնդիրը պետք է դառնա հասարակական ստրեսների թուլացման ու հաղթահարման հարցը, իսկ դրա արհեստական հրահրումը, անկախ այն բանից, թե ում եւ ինչ ուժերի կողմից ու ինչ ձևերով է արվում, պետք է հանգեցնի ընդհուպ որոշակի իրավական հետեւանքների:

Պետության իրավական, սոցիալական, ժողովրդավարական բնորոշիչներն առանձին - առանձին հասարակական հարաբերությունների բնույթի որոշակի որակական գծերն արտահայտելուց զատ իրենց միասնության մեջ տալիս են նաեւ նոր որակ: Այն ենթադրում է, որ սլյալ պետության համար տիպական է.

1. վերարտադրական համակարգը գործում է շուկայական օրենքներով, որտեղ ապահովված է ազատ գործարարություն ու մրցակցություն, հաղթահարված է մենաշնորհային ցանկացած թելադրանք եւ որի երաշխավորը պետությունն է,

2. բաշխման հարաբերությունների վրա անհրաժեշտ է դառնում պետության կարգավորված օրինական ներազդեցությունը ,

3. ենթադրվում է երկրի մասշտաբով տնտեսական լուծումների արդյունավետության զուգորդում սոցիալական հետևանքների հետ (առաջնորդվելով հասարակական արտադրության սոցիալ-տնտեսական արդյունավետության չափանիշներով),

4. դրվում է տնտեսական, վարչական, քաղաքական ուժի ցրման օպտիմալացման խնդիր,

5. անհրաժեշտություն է առաջանում պետականորեն հստակեցնել զարգացման առաջնահերթությունները,

6. մշակվում եւ գործադրվում են Սահմանադրության գերակայությունը եւ կայունությունն ապահովող մեխանիզմներ եւ այլն:

Տարբեր երկրների փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետության տնտեսական համակարգի հիմնական առաջնահերթություններն են. կենսամակարդակ (բարօրություն), ազատություն, անվտանգություն, հավասարություն եւ կարիքավորին օգնություն:

Բնականաբար, թե նշված առաջնահերթությունները եւ թե դրանց հաջորդականությունը յուրաքանչյուր երկրի համար ունեն իրենց դրսեւորման առանձնահատկությունները՝ պայմանավորված անցյալով, ներկայով ու ապագայով:

Եթե փորձենք հարցին մոտենալ ավելի լայն ընդգրկումով, ներառելով հասարակական - պետական ողջ համակարգը, ապա Հայաստանի Հանրապետության ներկա պարագայում պետականության ամրապնդման ու ազգային

ինքնահաստատման ճանապարհով զարգանալու առաջնահերթությունների թվին, մեր կարծիքով, կդասվեն հետեւյալները. միասնություն,<sup>28</sup> ազգային անվտանգություն, բարօրություն, ազատություն, հավասարություն, օգնություն կարիքավորին:

Դրանց ամբողջությունը դառնում է ազգային -հասարակական - պետական գործելակերպի նպատակ, իսկ դրանց իրականացման ուղղությամբ կոնկրետ ծրագրերն ու քայլերը մարմնավորում են տվյալ ժամանակին համապատասխանող քաղաքականությունը:

Հայաստանի պարագայում չափազանց կարեւոր է ներդաշնակության ու եռամիասնության, դեռ ավելին՝ մեկ ամբողջականության մեջ տեսնել ազգային, հասարակական, պետական նպատակներն ու շահերը: Դրանց տարանջատումը, առավել եւս՝ հակադրումը, ճակատագրական կարող է լինել:

Ընդհանրացնելով ասվածը, հանգում ենք այն եզրակացությանը, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ ամրագրելով, որ « Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է », կատարվել է առաջին վճռական ու, բարեբախտաբար, ճիշտ բնորոշումն այն հասարակական հարաբերությունների, որի նախադրյալները ցանկանում ենք ստեղծել, եւ որը մեր ազգային ու պետական առաջընթացի երաշխիքն է լինելու: Խնդիրն այն է, որ յուրաքանչյուր գործնական քայլ արվի այդ ուղղությամբ, բխի այդ բնորոշումների էությունից, ապահովի այդ ուղղությամբ

հասարակության զարգացումը: Դրան պետք է ուղղված լինեն օրենսդրական աշխատանքը, համակարգային կառուցվածքային ու կազմակերպական վերափոխումները, գործնական մեխանիզմներն ու դրանց գործադրման եղանակները, ամբողջ հասարակության եւ յուրաքանչյուր առանձին իրավասուբյեկտի վարքագիծը: Այս հենքի վրա պետք է գծագրվի նաեւ սահմանադրական վերահսկողության փիլիսոփայությունը:

Այդ բոլորով հանդերձ, անպատասխան է մնում այն հարցը, թե սահմանադրական վերահսկողության տեսանկյունից գործնականում ինչպիսի՞ն պետք է լինի վերաբերմունքը հատկապես Սահմանադրության առաջին հոդվածի առնչությամբ, այն նորմերի նկատմամբ, որոնք որոշարկում են նոր հասարակական հարաբերությունների բնույթը, սակայն այդ հասարակությունը դեռեւս գտնվում է կազմավորման բարուրում:

Հետաքրքիր է այս առումով ԱՄՆ -ի փորձը: Երկրի Սահմանադրությունն ընդունելուց հետո տասնյակ տարիներ այս երկրում զլխավոր հարցերը ֆեդերալ կառավարության եւ ստրկության օրինականության հարցերն էին: Սակայն բոլոր հարցերի լուծման բանալին փնտրվում էր Սահմանադրության ոչ այնքան տառի, որքան տրամաբանության մեջ: Այս մոտեցումը նկատելի էր նաեւ 1865-1937 թվականներին, երբ հիմնական խնդիրը կառավարության եւ տնտեսության փոխհարաբերության հարցն էր:

Նշված հիմնահարցը ժամանակին առաջացել է նաեւ Արեւմտյան Եվրոպայի երկրներում՝ ետպատերազմյան շրջանում<sup>29</sup>:

Հատկապես անցումային ժամանակների համար Սահմանադրության տառին թե՞ ոգուն հետեւելու հին բանավեճը կարծեք ավելի պարզ լուծում է ստանում: Ընդունելի տարբերակն այն է, որ հասարակական հարաբերությունների արմատական վերափոխումների իրավիճակներում զնահատման առանցքը դառնա այն պարագան, թե ընդունվող իրավանորմերը, կամ իշխանության մարմինների գործողությունները, որքանով են բխում նոր հարաբերությունների բնույթը սահմանադրորեն որոշարկող հիմնարար սկզբունքներից եւ որքանով են նպաստում, մասնավորապես, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետության կայացմանը : Այս հայելու մեջ պետք է արտացոլվի նաեւ սահմանադրական դատարանի կողմից ընդունվող յուրաքանչյուր որոշում, եւ դրանք ամենից առաջ պետք է ուղղված լինեն այն բանին, որ հասարակությունը չչեղվի զարգացման սահմանադրորեն կանխորոշված մայրուղուց:

#### IV. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՓՈԻԼԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ՈՐԱԿԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սահմանադրական վերահսկողության պատմական էվոլյուցիան համընկնում է սահմանադրական արդարադատության զարգացման փուլերի հետ: Ինչպես արդեն նշել ենք, ամենաընդհանուր ձևով այն կարելի է բաժանել երկու ժամանակահատվածի: Առաջին՝ մինչ հասարակական հարաբերությունների սահմանադրական կարգավորումը, երբ հասարակական կեցության կանոնների պահպանումը ոչ միայն ու ոչ այնքան իրավական ոլորտի խնդիր էր, որքան բարոյական, հոգեւոր ու սովորութային: Երկրորդ՝ վերջին երկու հարյուրամյակը, երբ հասարակական հարաբերությունների զարգացումը թելադրեց մարդկային ու պետական կյանքն առավել կարգավորված ձևի մեջ դնելու անհրաժեշտությունը, երբ Սահմանադրության ընդունումը, հասարակության համար դրա գերակայության հաստատումն ու պահպանումը դարձավ կենսական անհրաժեշտություն: Սա քաղաքացիական հասարակություն կառուցելու ճանապարհն էր, որը պահանջում էր ոչ միայն համակեցության կանոնների շուրջ հասարակական համաձայնություն, այլեւ դրա պահպանման ու վերահսկման հուսալի համակարգի առկայություն:

Ներկայումս մեծ հետաքրքրություն է ներկայացնում 19 եւ 20-րդ դարերի ընթացքում սահմանադրական արդարադատության զարգացման փորձի ուսումնասիրումը, քանի որ նկատելի են որակական վերափոխումների մի շարք փուլեր, ինչպես նաեւ կուտակվել է հարուստ փորձ եւ այն մեծապես կարող է օգնել հատկապես նորանկախ երկրներում սահմանադրական վերահսկողության արդյունավետ համակարգերի արմատավորման գործին: Հաշվի առնելով ԱՄՆ-ի Գերագույն դատարանի կողմից իրավական ակտի սահմանադրականության հարցով ընդունած առաջին որոշումը եւ նոր մոտեցումներն այս հարյուրամյակի ընթացքում, պայմանականորեն կարելի է առանձնացնել օրենքի սահմանադրականության հարցի որոշման համակարգային մոտեցման հետեւյալ փուլերը.

1. 1803 -1920 թվականներ,
2. 1920 - 1940 թվականներ,
3. 1945 - 1990 թվականներ,
4. 1990 թվականից հետո:

ԱՄՆ Սահմանադրությունը չի ամրագրում իրավական ակտերի սահմանադրականության հարցի որոշման որեւէ հստակ մեխանիզմ:

Առաջին փաստաթուղթը, որն իրավական հիմք դրեց ընդհանուր իրավասության դատարանների համար լուծելու նաեւ նորմատիվ ակտերի սահմանադրականության հարցերը, դա ԱՄՆ Գերագույն դատարանի որոշումն էր « Ուիլյամ Մերբերին ընդդեմ Մեդիսոնի » գործով, որն ընդունվեց 1803թ. փետրվարի 24-ին: Այդ որոշմամբ, փաստորեն, հակասահմանադրական համարվեց 1789 թ. Կոնգրեսի ընդունած դատավարական ակտի այն մասը, որը վերաբերում էր Գերագույն դատարանին

վերապահված լիազորություններին (պարագրաֆ 13)<sup>30</sup>: Դասական բանաձևում է դարձել 1803թ. փետրվարի 24-ի որոշման առնչությամբ ԱՄՆ Գերագույն դատարանի նախագահ Ջոն Մարշալի այն միտքը, որ « Միայն եւ միայն դատական ճյուղի պարտականությունն է ասել, թե ինչ է իրենից ներկայացնում օրենքը: . Սահմանադրությանը անհամատեղելի օրենքն անվավեր է»<sup>31</sup>: Այս բանաձևումն այսօր դարձել է սահմանադրական վերահսկողություն իրականացնող ընդհանուր իրավասության դատարանների գործունեության գլխավոր նշանաբանը:

Երկրորդ փուլը համընկնում է սահմանադրական վերահսկողության առաջին մասնագիտացված ինստիտուտի ստեղծման հետ: Դա 1920 թ. կազմավորված Ավստրիայի Բարձրագույն սահմանադրական դատարանն էր ( ինչպես նաեւ նույն ժամանակաշրջանում ձեւավորված Չեխոսլովակիայի սահմանադրական դատարանը)<sup>32</sup>:

Այս փուլը կարելի է նաեւ պայմանականորեն համարել նոր մոտեցման փիլիսոփայության մշակման փուլ: Ինչ վերաբերում է գործնականում նոր համակարգերի ներդրմանը, ապա կատարվեցին միայն առաջին ու ինչ -որ տեղ նաեւ՝ ձախողված փորձերը ( այդ թվում նաեւ Չեխոսլովակիայում, ու հետագայում՝ Իսպանիայում ):

Երրորդ փուլը ետպատերազմյան շրջանն է, երբ եվրոպական երկրներում գրեթե համատարած կազմավորվեցին սահմանադրական դատարաններ՝ առաջնահերթ խնդիր ունենալով ապահովել օրենքների ու նորմատիվ այլ ակտերի համապատասխանությունը հիմնական օրենքին:

Այս շրջանում համայնավար հասարակարգ ու միակուսակցական պետական կառավարման համակարգ ունեցող երկրներում սահմանադրական վերահսկողության ինստիտուտներն ավելի շուտ դիտարկվում էին որպես բուրժուական շքեղություն: Դրան հակառակ եվրոպական երկրներից շատերը ( Ավստրիա, Գերմանիա, Իսպանիա, Իտալիա եւ այլն ) խնդիր առաջադրեցին, որ սահմանադրական վերահսկողության առանցքային հարցերից մեկը մարդու սահմանադրական իրավունքների ու ազատությունների պաշտպանությունն է: Բնականաբար, ետպատերազմյան շրջանում այս երկրների սահմանադրական դատարանները ոչ միայն օժտվեցին նման լիազորությամբ, այլեւ քաղաքացիներն իրենք իրավունք ստացան՝ ընդհուպ սահմանադրական դատարանում պաշտպանելու իրենց իրավունքները:

Իշխանությունների տարանջատումը եւ զսպումների ու հակակշիռների հստակ համակարգի արմատավորումը, դրա օգնությամբ օրենսդիր, գործադիր ու դատական իշխանությունների ներդաշնակ աշխատանքի ապահովումը ենթադրում էր նաեւ իշխանության տարբեր թեւերի միջեւ լիազորությունների հարցով առաջացած վեճերի լուծման արդյունավետ համակարգի արմատավորում: Եվրոպական երկրների փորձը վկայում է, որ ետպատերազմյան շրջանում ձեւավորվող սահմանադրական վերահսկողության մասնագիտացված մարմինների համար այս խնդիրը նույնպես եղել է առանցքայիններից մեկը:

Չորրորդ փուլը համընկնում է համաշխարհային ժողովրդավարական գործընթացների որակական նոր ալիքի՝ բազմաթիվ նորանկախ պետությունների կազմավորման շրջանի հետ: Արդեն իսկ նկատի ունենալով եվրոպական երկրների փորձը, նորանկախ պետություններն իրենց պետական շինարարության ու ժողովրդավարական ինստիտուտների զարգացման առաջին ու արմատական քայլերից մեկը համարեցին սահմանադրական վերահսկողության ամբողջական համակարգերի ստեղծումը: Դա նաեւ պայմանավորված էր գրեթե բոլոր երկրներում զգալի դժվարություններով՝ մշակված ու ընդունված հիմնական օրենքի հուսալի պաշտպանության, հասարակությունը ճգնաժամային կառավարման հարթությունից դինամիկ զարգացման հարթություն տեղափոխելու, պետական ու հասարակական կայունությունն ամրապնդելու անհրաժեշտությամբ:

Այսօր աշխարհի 164 երկրներ իրականացնում են նորմատիվ ակտերի սահմանադրական վերահսկողություն: Դրանցից 74 - ուն գործում է մասնագիտացված կամ եվրոպական ինստիտուցիոնալ համակարգ, 48 - ուն գործում է սահմանադրական վերահսկողության ամերիկյան մոդելը, 30-ուն՝ այդ երկուսի հիման վրա ձեւավորված խառը ձեւը: Մի շարք երկրներում գործում է պաշլամենտական վերահսկողության տարբերակը: Եվրոպական - ֆրանսիական տարատեսակ համակարգ է գործում աշխարհի շուրջ 25 երկրներում:

Սահմանադրական վերահսկողության ամերիկյան մոդելը, որին բնորոշ է վերահսկողության իրականացումն ընդհանուր իրավասության դատարանների միջոցով, գործում է նաեւ Արգենտինայում, Մեքսիկայում, Բոլիվիայում, Բրազիլիայում, Կոլումբիայում, Նիկարագուայում, Սկանդինավյան երկրներում ( Դանիա, Նորվեգիա, Շվեդիա ), Անգլիական դոմինիոններում՝ Ավստրալիա, Կանադա, Նոր

Ջելանդիա, Հարավ- աֆրիկյան Միություն, ինչպես նաև Ճապոնիայում, Հնդկաստանում, Մալազիայում եւ մի շարք այլ երկրներում:

Այս համակարգն ունի նաև այն առանձնահատկությունը, որ երկրներից մի մասում՝ ԱՄՆ, Ճապոնիա, Սկանդինավյան երկրներ եւ այլն, սահմանադրական վերահսկողություն իրականացնում են ընդհանուր իրավասության բոլոր դատարանները: Մյուս խմբում ( Գանա, Էստոնիա եւ այլն)՝ միայն ընդհանուր իրավասության դատարանների բարձրագույն ատյանը:

Առանձնահատկություններ կան նաև դաշնային կառուցվածք ունեցող երկրներում: ԱՄՆ -ում, Ավստրալիայում, Կանադայում, Հնդկաստանում, Մալազիայում եւ մի շարք այլ երկրներում նաև նահանգներն ունեն նման համակարգ, չնայած, որ, ի տարբերություն մյուս երկրների, ԱՄՆ - ում գործում է դաշնային եռաստիճան դատական համակարգ: Սահմանադրական արդարադատություն իրականացնող ընդհանուր իրավասության դատարանների գերագույն ատյանների անդամների նշանակումն իրականացվում է իշխանության մյուս մարմինների միջոցով: Սակայն դրա ձևերը տարբեր են: Օրինակ, Շվեյցարիայի Դաշնային դատարանի անդամներին ընտրում է խորհրդարանը, ԱՄՆ - ում Գերագույն դատարանի անդամներին նշանակում է Նախագահը, որից հետո ներկայացնում Սենատի հաստատմանը (ԱՄՆ Գերագույն դատարանը կազմավորվել է 1789թ.եւ ներկայումս կազմված է 9 անդամից, որոնք նշանակվում են անփոփոխելիության սկզբունքով եւ պաշտոնավարում են այնքան ժամանակ, քանի դեռ նրանց վարքն անբասիր է ): Իսկ , օրինակ, Գանայում՝ Նախագահի ներկայացմամբ հաստատում է պառլամենտը:

Ֆիլիպիններում նշանակում է Նախագահը՝ դատավորների եւ փաստաբանների խորհրդի կողմից յուրաքանչյուր տեղի համար ներկայացված երեքական թեկնածուներից:

Շվեդիայում սահմանադրական արդարադատությունն իրականացնում են գերագույն դատարանը եւ գերագույն վարչական դատարանը: Դատավորներին նշանակում է կառավարությունը ( ընդհանուր թիվն է 18 մարդ, որոնց առնվազն 2/3-ը պետք է լինեն իրավաբաններ ): Նշանակվում են անփոփոխելիության սկզբունքի հիման վրա եւ պաշտոնավարում մինչեւ 65 տարին լրանալը:

Հետաքրքիր առանձնահատկություն ունի Ճապոնիայի Գերագույն դատարանի ձևավորումը: Այն կազմված է 15 անդամից, որոնք Ճապոնիայի Սահմանադրության համաձայն ( հոդվ.79 ) ցմահ նշանակվում են Կաբինետի կողմից: Դատարանի նախագահին նշանակում է Կայսրը, սակայն պառլամենտի հաջորդ ընտրություններում եւ հետագայում, 10 տարի անց, առաջիկա ընտրություններում նշանակված դատավորները պետք է ստանան ժողովրդի վստահությունը ( նման մեխանիզմ կիրառվում է նաև ԱՄՆ նահանգային դատավորների նշանակման պարագայում՝ թվով 42 նահանգում ):

Հիշատակման արժանի է նաև սահմանադրական վերահսկողության համակարգը Դանիայում: Դանիական թագավորությունում Թագավորի կողմից 1661 թվականի դեկրետով ստեղծվել է գերագույն դատարան: Սակայն 1849 թվականի Սահմանադրության հիման վրա, դառնալով սահմանադրական միապետություն, երկրում միաժամանակ դատարանը դարձավ անկախ մարմին ու ստանձնեց նաև սահմանադրական վերահսկողության առաքելությունը: Դանիայում ներկայումս գործում են օկրուգային, բարձրագույն եւ գերագույն դատարաններ ( եռաստիճան համակարգ է ):

Սահմանադրական վերահսկողության հարցերը հիմնականում լսվում են գերագույն դատարանում: Սակայն այս երկրում արդարադատության նախարարն իրավասու է վճռել այս կամ այն հարցը տարբեր աստիճանի դատարաններում լսելու խնդիրը: Ավելացնենք նաև, որ գերագույն դատարանը կազմված է նախագահից ու 14 անդամից: Բոլորին նշանակում է Թագուհին՝ արդարադատության նախարարի ներկայացմամբ, անժամկետ:

Նախորդ հարյուրամյակում՝ ամբողջ աշխարհում եւ ներկայումս նշված երկրներում գործող սահմանադրական վերահսկողության ամերիկյան համակարգը բնութագրվել է հետեւյալ հիմնական հատկանիշներով.

- այն ունի համընդգրկուն բնույթ, ներառում է ոչ միայն օրենքներն, այլև՝ ցանկացած նորմատիվ ակտ,
- վերահսկողությունն իրականացվում է ապակենտրոնացված, ցանկացած դատարանի կողմից, ոչ կանոնավոր պարբերականությամբ, ցանկացած գործ քննելիս, կոնկրետ գործի քննության ընթացքում՝ եթե օրենքը կամ նորմատիվ ակտը առնչվում է տվյալ գործը հարուցողի կոնկրետ շահերին,
- ունի հարաբերական բնույթ, քանի որ դատարանի վճիռը պարտադիր է միայն դատական կողմերի համար եւ չի տարածվում իրավունքի կիրառման ամբողջ դաշտի վրա:

Ինչու՞ 20-րդ դարի Եվրոպան չնդունեց ամերիկյան մոդելը: Այս հարցին շատերն են փորձել պատասխանել: Մի դեպքում պատասխանը փնտրվել է «օրենք» եւ «Սահմանադրություն» հասկացությունների տարաբնույթ ընկալման հարթությունում: Մեկ այլ դեպքում շեշտը դրվել է դատարանակազմության եւ դատավորների գործելակերպի առանձնահատկությունների վրա ( հատկապես կարեւորելով դատարանի անկախության աստիճանի եւ դատավորների կողմից օրենքի սահմանադրականության հարցով վճիռ կայացնելու ունակության պարագաները ): Երրորդ դեպքում առաջին պլան է մղվել տվյալ երկրում հասարակության առջեւ ծառայած խնդիրների բնույթն ու դրանց լուծման բնորոշ առանձնահատկությունները:

Այսպես թե այնպես, մեկ դարից ավելի ամբողջ աշխարհում սահմանադրական վերահսկողության լիազորություններն իրականացրեցին ընդհանուր իրավասության դատարանները: Սակայն 20 -րդ դարի սկզբների հասարակական կյանքի վայրիվերումները՝ իշխանությունների տարանջատման պայմաններում, մասնագետների շրջանում առաջ բերեցին մի շարք մտահոգություններ.

1. հնարավոր էր դառնում օրենքի միջոցով իշխանության չափազանց մեծ կենտրոնացում, ընդհուպ՝ բռնազավթում,
2. հասարակական իրավիճակի եւ դրան համապատասխան օրենսդրական դաշտի արագ փոփոխման պայմաններում միայն կոնկրետ գործերով իրականացվող վերահսկողությունն ակնհայտորեն անբավարար էր սահմանադրական արդյունավետ վերահսկողության համար,
3. իշխանությունների տարանջատման պայմաններում հասարակական անկայունության զլխավոր դետոնատորը դարձել էր իշխանության տարբեր թելերի պայթարը՝ միմյանցից լիազորություններ կորզելու համար:

Բացի վերոհիշյալներից, մեր կարծիքով, այլ էր նաեւ մոտեցման մեթոդաբանությունը: Առաջին պլան մղվեց ոչ միայն կոնկրետ մարդու կոնկրետ շահերից բխող եւ միայն նրան առնչվող խնդրի լուծումը, այլ օրենսդրական դաշտի սահմանադրականության ապահովման միջոցով հասարակական կայունության ու առաջընթացի խթանման խնդիրը: Առաջին պլան մղվեց կայուն պետություն, դինամիկ առաջընթաց կարգախոսը:

Եվրոպական համակարգում ըստ առաջնայնության առանձնացվեց երեք գերխնդիր.

- ա) նորմատիվ ակտերի սահմանադրականության ապահովում եւ դրա միջոցով իշխանության տարանջատված թելերի սահմանադրորեն ամրագրված ֆունկցիոնալ հավասարակշռության պահպանում,
- բ) լիազորությունների հարցով իշխանության տարբեր մարմինների միջեւ առաջացած վեճերի լուծման խնդրի հստակ կանոնակարգում,
- գ) մարդու սահմանադրական իրավունքների պաշտպանության առավել ամբողջական եւ հուսալի համակարգի ստեղծում:

Այլ է հարցը, թե ինչպես լուծվեցին այս խնդիրները դարասկզբին: Մեր կարծիքով, իրականությունն այն է, որ նոր, հատուկ մասնագիտացված ու կենտրոնացված համակարգով սահմանադրական վերահսկողության իրականացումն ապահովում է աստիճանաբար, փուլ առ փուլ այդ խնդիրների լուծումը, եւ այդ միտումն է ընկած այսօր համակարգի զարգացման ներքին տրամաբանության հիմքում:

Այս համակարգերի բնորոշ առանձնահատկությունը միայն այն չէ, որ վերահսկողությունն իրականացվում է հատուկ մասնագիտացված մարմնի միջոցով: Առանձնահատուկ կարեւորություն է ստանում այն պարագան, որ էապես փոխվում են նաեւ վերահսկման ձեւն ու բնույթը:

Մասնավորապես այս համակարգին են բնորոշ միայն նախնական, վերացական (աբստրակտ ) եւ պարտադիր վերահսկողությունը ( որոնց մեք կանդրադառնանք ստորեւ ): Նման մոտեցման շնորհիվ է, որ սահմանադրական վերահսկողությունը ձեռք է բերում ամբողջական, համալիր բնույթ եւ կարող է իրականացվել հետեւողականորեն ու արդյունավետ:

Եվրոպական մոդելի հիմնադիր գաղափարախոսը ՅԱՆՍ ՔԵԼՁԵՆՆ է

( Քելզենը 1920 թ. դարձավ նաեւ Ավստրիայի առաջին սահմանադրական դատարանի անդամ ):

Այս համակարգը, ունենալով այն հիմնական ընդհանրությունը, որ վերահսկողությունը կենտրոնացված է եւ իրականացվում է հատուկ մասնագիտացված մարմնի միջոցով, միաժամանակ ունի թե կառուցվածքային - կազմակերպական եւ թե գործառական զգալի առանձնահատկություններ: Հարկ է նշել, որ այդ առանձնահատկություններն արտացոլվում են այն բանում, թե ինչպե՞ս են ձեւավորվում սահմանադրական վերահսկողության մարմինները, ինչպիսի՞ կազմ ու կառուցվածք ունեն, ո՞վ եւ ինչպե՞ս կարող է դիմել այդ մարմնին, ինչպիսի՞ն է վերահսկման բնույթը ( վերացական թե կոնկրետ, նախնական թե հետագա, պարտադիր թե ֆակուլտատիվ ), որո՞նք են վերահսկման օբյեկտներն ու ովքե՞ր են սուբյեկտները, ի՞նչ բնույթ ունեն սահմանադրական վերահսկողության մարմնի կողմից ընդունված որոշումները եւ այլն: Հարցեր, որոնց պատասխանները կփորձենք տալ թե առանձին հիմնախնդիրներ քննարկելիս եւ թե տարբեր երկրների սահմանադրական վերահսկողության առանձնահատկություններին անդրադառնալիս:

Իշխանության ո՞ր թելին է պատկանում մասնագիտացված սահմանադրական վերահսկողությունը: Այս հարցում նույնպես դեռ շարունակվում է բանավեճը: Մի շարք երկրների սահմանադրությամբ այն ներառված է դատական իշխանության համակարգում ( Քերմանիա, Թուրքիա, Ռուսաստան, Վրաստան, Հայաստան ), մյուսներում ներկայացվում է որպես հատուկ մարմին ( Ֆրանսիա, Իտալիա, Իսպանիա, Լեհաստան եւ այլն ):

Բանավեճն ընթանում է ընդհուպ այն ուղղությամբ, որ սահմանադրական վերահսկողությունը դիտարկվում է որպես օրենսդիր ֆունկցիա:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԸ ՈՉ ԹԵ ՕՐԵՆՔԻ ԿԻՐԱՌՈՒՄՆ Է, ԱՅՆ ՕՐԵՆՔՆ՝ ԻՆՔԸ. այս առումով սահմանադրական դատարանի գործառական բնույթը կարծեք թե մոտենում է պառլամենտականին: Սակայն, ըստ էության, այդպիսի մոտեցումը հիմնավոր չէ:

Ոմանք սահմանադրական վերահսկողությունը առանձնացնում են որպես իշխանության առանձին թել՝ վերահսկող իշխանություն, որն ակնհայտ չափազանցություն է:<sup>33</sup>

Ի դեպ, որոշ երկրներում սահմանադրական դատարանի տեղի հստակեցման հարցը դարձել է անզամ դատական նիստի քննության առարկա: Օրինակ, Չեխիայում 1995թ. գարնանը սահմանադրական դատարանը, հատուկ քննության առնելով այս հարցը, փաստեց, որ սահմանադրական դատարանը չի համարվում դատական համակարգի մարմին եւ այդ համակարգից դուրս է:

Այս ենթատեքստում հարցի քննարկումն առաջին հերթին պահանջում է հստակեցնել սահմանադրական դատարանի եւ ընդհանուր իրավասության դատական համակարգի գործառական փոխհարաբերությունները: Այս հարցում տիպական կարող են հանդիսանալ, ասենք, Քերմանիայի, Իսպանիայի եւ Պորտուգալիայի օրինակները: Խնդիրն այն է, որ նույնիսկ այն դեպքերում, երբ սահմանադրական դատարանը չի համարվում դատական իշխանության մարմին, միեւնույնն է, նրա անկախ գործունեությունն անմիջականորեն առնչվում է մյուս դատարանների հետ՝ հատկապես կոնկրետ վերահսկողության եւ մարդու իրավունքների պաշտպանության հարցերով:

Մեր կարծիքով, նման բանավեճերը հաճախ արհեստական ու անբովանդակ են թվում: Գլխավոր հարցն այն է, թե երկրի ներսում ստեղծվե՞լ է արդյոք սահմանադրական վերահսկողության այնպիսի համակարգ, որն ի զորու է առնվազն լուծում տալ երեք խնդրի. ապահովել սահմանադրության գերակայությունը եւ նորմատիվ ակտերի սահմանադրականությունը, լուծել լիազորությունների հարցում իշխանության մարմինների վեճերը, պաշտպան կամզանել մարդու սահմանադրական իրավունքներին ու ազատություններին: Մնացած բոլոր հարցերն ածանցյալ են: Գլխավորը նշված երեք խումբ խնդիրների լուծման ինստիտուցիոնալ հստակ համակարգի մշակումն է: Թե որ մարմինները կլինեն դրա կրողը եւ ինչ կարգով այն կիրականացնեն, նույնպես երկրորդ պլանի ( բայց ոչ երկրորդական ) խնդիր է: Այսուհանդերձ, միջազգային փորձը վկայում է հենց այն մասին, որ այդ խնդիրներն առավել արդյունավետությամբ լուծում են սահմանադրական դատարանները:

Մասնագիտացված սահմանադրական վերահսկողության մարմինները տարբեր երկրներում մինչանցից զգալի չափով տարբերվում են թե առաջադրված խնդիրների լուծման նկատմամբ ունեցած մոտեցումներով եւ թե կազմավորման առանձնահատկություններով ու սահմանադրական վերահսկողության տարբեր ձեւերի ու եղանակների կիրառմամբ:



**V. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Մասնագիտացված կամ կենտրոնացված սահմանադրական վերահսկողության համակարգը ենթադրում է այն իրականացնող յուրահատուկ կազմակերպական կառուցվածք: Գոյություն ունեցող փորձը վկայում է, որ հիմնականում կան հետեւյալ ինստիտուտները.

Սահմանադրական դատարաններ (եվրոպական եւ նորանկախ երկրների մեծ մասում),  
Սահմանադրական խորհուրդներ (Ֆրանսիա, Մարոկկո, Մոզամբիկ, Ղազախստան),  
Գերագույն դատարանների սահմանադրական պալատներ (Բուրկինա - Ֆասո, Գվինեա, Կոստա - Ռիկա),  
Սահմանադրական հետաքննության խորհուրդ (Եթովպիա):

Յուրահատուկ է Արդարադատության կանցլերի ինստիտուտը Էստոնիայում:

Հետաքրքիր առանձնահատկություն գոյություն ունի Պորտուգալիայում, որտեղ կա սահմանադրական դատարան, բայց սահմանադրական վերահսկողության ֆունկցիա ունեն մաեւ ընդհանուր իրավասության դատարանները՝ ինչպես ԱՄՆ - ում: Սահմանադրական դատարանը սահմանադրական վերահսկողության գործերով կատարում է դատական վերին ատյանի ֆունկցիա: Սա, փաստորեն, երկու մոդելների հետաքրքիր խառնուրդ է:

Կան մաեւ երկրներ, որտեղ սահմանադրական վերահսկողության ինստիտուտները խիստ առանձնահատուկ են եւ բնորոշ են հիմնականում այդ երկրին: Դրա տիպական օրինակ է սահմանադրական վերահսկողության համակարգը մեր հարեւան Իրանի Իսլամական Հանրապետությունում: Այստեղ Սահմանադրության 91 հոդվածի համաձայն այդ ֆունկցիան իրականացնում է Պահապան խորհուրդը: Այն կազմված է 12 անդամից՝ 6 հոգեւոր ներկայացուցիչ եւ 6 իրավունքի մասնագետ: Այս խորհրդի լիազորությունների ժամկետը 6 տարի է: Ներկայացուցչական կազմի կեսը 3 տարին մեկ փոխվում է (հոդվ. 92): Վերահսկողությունը նախնական է եւ պարտադիր: Դա նշանակում է, որ պառլամենտը բոլոր օրենքները ներկայացնում է Պահապան խորհուրդ, որը 10- օրյա ժամկետում որոշում է դրանց համապատասխանությունը իսլամական կանոններին եւ Սահմանադրությանը: Չհամապատասխանելու դեպքում վերադարձվում է պառլամենտ՝ վերանշակման (հոդվ. 94): Ի դեպ, իսլամական կանոններին օրենքի համապատասխանության հարցը վճռում են միայն խորհրդի հոգեւորական անդամները:

Այս մարմնին վերապահված է մաեւ Սահմանադրության մեկնաբանման իրավունք՝ ձայների 3 / 4 -ով (հոդվ. 98): Այն վերահսկում է մաեւ Նախագահի եւ պառլամենտի ընտրությունների օրինականությունը (հոդվ. 99):

Սահմանադրական դատարանների անկախ ու արդյունավետ գործունեությունն իրականացնելու համար բացառիկ կարեւոր նշանակություն ունի դրանց կազմավորման կարգը: Այստեղ հարկ է առանձնացնել քննության արժանի հետեւյալ հիմնական հարցերը.

ա) ինչպիսի՞ն է դատարանի անդամների ընտրության կարգը,

բ) քանի՞ տարով են ընտրվում դատարանի անդամները,

գ) ի՞նչ պահանջներ են ներկայացվում դատարանի անդամներին:

Սահմանադրական վերահսկողության մարմնի անդամները հիմնականում նշանակվում (կամ ընտրվում) են իշխանության տարբեր թեւերի կողմից: Միջազգային պրակտիկայում սակայն հանդիպում են տարատեսակ բազմաթիվ մոտեցումներ: Օրինակ, Հունգարիայում, Լեհաստանում, Պերուում, Սլովակիայում, Գերմանիայում, Լատվիայում, Բելառուսում սահմանադրական վերահսկողության մարմնի բոլոր անդամները նշանակվում են պառլամենտի կողմից: Ավստրիայում, Ալբանիայում, Հայաստանում, Ֆրանսիայում, Լիտվայում, Բենինում, Դոմինիկայում, Ռուսաստանում նշանակում են Նախագահը եւ պառլամենտը:

Բուլղարիայում, Գաբոնում, Իտալիայում, Իսպանիայում, Լիտվայում, Մադագասկարում, Մոլդովայում, Ռեկրաիմայում, Մոնղոլիայում, Թուրքիայում, Կորեայում նշանակում են Նախագահը, պառլամենտը եւ

դատական իշխանության ինստիտուտները (այսինքն՝ ապահովվում է երեք իշխանությունների մասնակցությունը):

Ի տարբերություն ընդհանուր իրավասության դատարանների, սահմանադրական դատարանի անդամ կարող են լինել ոչ միայն փորձառու դատավորներ, այլև իրավունքի գծով դասախոսներ, պետական ծառայողներ, քաղաքական գործիչներ, այդ թվում՝ ոչ իրավաբաններ: Կան երկրներ, որտեղ ոչ իրավաբանների թիվն օրենքով սահմանվում է (Գաբոնում եւ Մալիում՝ 9-ից 2-ը, Գաբոնի Սահմանադրության 89 հոդված, Շվեդիայում ոչ իրավաբաններ կարող են լինել դատավորների ընդհանուր թվի 1/3-ը): Իսկ, օրինակ, Ուզբեկստանի սահմանադրական դատարանի մասին օրենքի 12 հոդվածով նախատեսված է, որ սահմանադրական դատարանի անդամ կարող է ընտրվել Ուզբեկստանի քաղաքացին՝ իրավունքի եւ քաղաքականության ոլորտի մասնագետներից, որն ունի բարձր բարոյական հատկանիշներ եւ անհրաժեշտ որակավորում:

Հետաքրքիր առանձնահատկություն գոյություն ունի Թուրքիայում, որտեղ կարող են ընտրվել ինչպես իրավաբաններ, այնպես էլ որոշակի վարչական աշխատանքի փորձ ունեցողներ:

Կան նաեւ ընդհանուր իրավասության դատարանների միջոցով սահմանադրական վերահսկողություն իրականացնող երկրներ, որտեղ այս լիազորությունը կարող են իրականացնել բոլոր նրանք, ովքեր համապատասխանում են պատգամավորին առաջադրվող պահանջներին (օրինակ, Շվեյցարիան: Այս երկրի Սահմանադրության 108 հոդվածի հիման վրա Դաշնային դատարանի անդամ կարող են դառնալ Շվեյցարիայի այն քաղաքացիները, ովքեր իրավունք ունեն ընտրվել Ազգային խորհրդում): Սա տիպական օրինակ է այն երկրների, որտեղ սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմնի գործունեությունը երկրի Սահմանադրությամբ ներառում է գլխավորապես քաղաքացիական իրավունքի բնագավառի վեճերը եւ, բնականաբար, օրենքների ու պետական իշխանության մարմինների որոշումների սահմանադրականության հարցերը (Շվեյցարիայի Սահմանադրության 110 հոդված):

Բելգիայում սահմանադրական վերահսկողության մարմնի (կոչվում է Հաշտարար դատարան) անդամ կարող են դառնալ ոչ միայն դատավորներն ու իրավունքի պրոֆեսորները, այլև այն անձինք, ովքեր եղել են պատգամավոր:

Իսկ, օրինակ, Ֆրանսիայի սահմանադրական խորհրդի անդամների համար մասնագիտական որեւէ սահմանափակումներ չեն դրվում:

Որոշ տեսաբանների կարծիքով սահմանադրական վերահսկողության հատուկ մարմնի կազմում այլ մասնագետների (հատկապես քաղաքագիտության, փիլիսոփայության եւ հասարակագիտական այլ ոլորտների), ինչպես նաեւ պետական կառավարման ոլորտում աշխատած բարձրաստիճան ու փորձառու մարդկանց ընդգրկումը կարող է ունենալ մեծ առավելություն եւ օգտակարություն:<sup>34</sup>

Նման անհրաժեշտությունը յուրովի էր մեկնաբանում ԱՄՆ Գերագույն դատարանի անդամ Հյուգո Բլեքը (նշանակվել է 1937թ.՝ Ֆրանկլին Ռուզվելտի կողմից, պաշտոնավարել է 34 տարի, մահացել է 1971թ.): Նա գտնում էր, որ ոչ իրավաբանի նշանակումը Գերագույն դատարանի անդամ նրան հաղորդում է անկախության ավելի մեծ լիցք, քանի որ հաղթահարվում է նաեւ հիերարխիկ կարիերայի տրամաբանությամբ թելադրված կախվածության հոգեբանությունը:

Կարելու է նաեւ այն փաստարկը, որ տվյալ պարագայում գործ ունենք ոչ այնքան օրենքի կամ այլ իրավական ակտի կիրառման տեխնոլոգիայի, որքան հասարակական հարաբերությունների կանոնակարգման ու կառավարման փիլիսոփայության հետ, եւ օրինաստեղծության հանգամանքն ու դրան տիրապետելու կարողությունը դառնում է առաջնահերթ խնդիր:

Առանձին վերլուծության խնդիր է դատարանի անդամների նշանակման ժամկետի եւ թարմացման կարգի խնդիրը: Գործնականում կան տարաբեւեռ լուծումներ: Նախ. կան երկրներ, որոնք գտնում են, որ սահմանադրական վերահսկողության անկախությունն ապահովելու նպատակով այն իրականացնող մարմնի անդամները պետք է ընտրվեն անփոփոխելիության սկզբունքով (ԱՄՆ, Ավստրիա, Դանիա, Հայաստան եւ այլն):

Երկրների մյուս խումբը գտնում է, որ նշանակման կամ ընտրության ժամկետը պետք է լինի սահմանափակ (սովորաբար այն տատանվում է 5-15 տարվա միջակայքում): Այս երկրների թվին կարելի է դասել Գերմանիան, Ֆրանսիան, Իտալիան, Իսպանիան, Թուրքիան եւ այլն: Նման երկրներում նաեւ նախատեսվում է աստիճանական թարմացման մեխանիզմ (սովորաբար երեք տարին մեկ):

Գրեթե բոլոր երկրներում կան նաեւ սահմանադրական դատարանի ձեւավորման նույնական լուծումներ: Ամենից առաջ դա վերաբերում է դատարանի անդամներին ներկայացվող որոշ պահանջների. նախ՝ նրանք չեն կարող այլ վճարովի աշխատանքով զբաղվել (մի շարք երկրներում բացառություն է կազմում գիտամանկավարժական եւ ստեղծագործական աշխատանքը): Երկրորդ՝ սահմանադրական վերահսկողության մարմնի անդամը չի կարող լինել քաղաքական կուսակցության անդամ կամ զբաղվել քաղաքական գործունեությամբ (զգալի թիվ են կազմում նաեւ այն երկրները, որոնք օրենքով արգելում են սահմանադրական դատարանի անդամներին լինել արհմիության կամ որեւէ այլ հասարակական կազմակերպության անդամ): Երրորդ՝ նույնիսկ եթե նշանակումը չի կատարվում անփոփոխելիության սկզբունքով, միեւնույնն է, 65-70 տարեկանից բարձր եւ 35-40 տարեկանից ցածր տարիք ունեցող անձը, որպէս կանոն, դատարանի անդամ չի նշանակվում կամ ընտրվում: Բացի դրանից, գրեթե բոլոր երկրներում նրանց վրա տարածվում է անձեռնմխելիության սկզբունքը, եւ իրենց պարտականությունները ստանձնելուց առաջ նրանք երդում են տալիս: Ի դեպ, երկրներից մեծ մասում միայն դատարանն է իրավասու պաշտոնից ազատելու իր անդամին՝ օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում (Ալբանիա, Բուլղարիա, Գերմանիա, Լատվիա, Պորտուգալիա, Ռումինիա, Շվեյցարիա, Թուրքիա եւ այլն): Երկրների մեկ այլ խմբում դատարանի եզրակացության հիման վրա վերջնական որոշումը կայացնում է նրանց նշանակած մարմինը (Սլովակիա, Չեխոսլովակիա, Նիդերլանդներ, Ֆրանսիա, Իտալիա, Սլովենիա, Սերբիա, Իսպանիա, Եգիպտոս, Մարոկկո, Մավրիտանիա, Ղազախստան, Ֆրանսիա եւ այլն): Ֆինլանդիայում, ճապոնիայում, ԱՄՆ-ում, Լիտվայում դատավորին պաշտոնից ազատելու համար գործում է պաշտոնանկության հատուկ կարգ:

Մի շարք երկրներ սահմանադրական վերահսկողության ինստիտուտները ձեւավորելիս հատուկ նշանակություն են տալիս լեզվի հարցին: Մասնավորապէս Շվեյցարիան եւ Կանադան, որոնք մեկից ավելի պաշտոնական լեզուներ ունեն, գերագույն դատարանի անդամներ ընտրելիս սահմանում են լեզվական տարբեր խմբերին պատկանողների որոշ համամասնություն: Օրինակ, Կանադայում երեք դատավոր գերագույն դատարանում պետք է լինեն Քվեբեկից եւ ունենան քաղաքացիական իրավունքի փորձառություն, իսկ վեցը՝ ընդհանուր իրավունքի գործնական աշխատանքի փորձ:

Հետաքրքիր տարբերություններ կան նաեւ սահմանադրական վերահսկողության մարմնի նախագահի ընտրության հարցում:

Ընտրությունը (նշանակումը) կատարում է.

ա) դատարանն ինքը (Բուլղարիա, Ռումինիա, Բենին, Հունգարիա, Իտալիա, Մոնղոլիա, Կոնգո, Պորտուգալիա, Ռուսաստան, Մոլդովա, Վրաստան եւ այլն),

բ) պետության գլուխը՝ առանց որեւէ համաձայնեցման (Ալժիր, Եգիպտոս, Մարոկկո, Մավրիտանիա, Ղազախստան, Ֆրանսիա եւ այլն).

գ) ընտրում (նշանակում) է պառլամենտը (Գերմանիա, Չեխոսլովակիա, Լիտվա, Ղրղզստան),

դ) նշանակում է Նախագահը՝ կառավարության խորհրդով (Ավստրիա),

ե) Նախագահը՝ պառլամենտի համաձայնությամբ (Կորեայի Հանրապետություն):

Մի շարք երկրներում որոշում ընդունելիս հավասար ձայների դեպքում սահմանադրական դատարանի նախագահի ձայնը վճռական է (Իտալիա, Իսպանիա եւ այլն):

Սահմանադրական վերահսկողության արդյունավետ իրականացման, երկրի վարչատարածքային կառուցվածքի առանձնահատկությունները հաշվի առնելու համար լուրջ ուշադրություն է դարձվում նաեւ սահմանադրական վերահսկողության մարմինների կազմակերպական կառուցվածքի հարցերին: Սահմանադրական դատարանները սովորաբար լինում են միապալատ կամ երկպալատ:

Երկպալատ դատարանները հիմնականում բնորոշ են դաշնային կառուցվածք ունեցող երկրներին: Երկպալատ դատարանների պարագայում օրենքը կարգավորում է պալատների ձեւավորման, դրանց միստերում հարցերի քննարկման եւ լուծման կարգը, սահմանում է հարցերի այն շրջանակը, որոնց լուծման բացառիկ իրավունքը վերապահված է դատարանի ամբողջ կազմին՝ լիազումար միստին:

Սակայն այս բաժանումն ունի նաեւ գործառական բնույթ եւ հնարավորություն է տալիս առանձին հարցեր քննության առնել եւ լուծումներ տալ դատարանի անդամների մի մասի կազմով: Այս խնդիրը հատկապէս առաջանում է այն դեպքում, երբ սահմանադրական վերահսկողության մարմնին

վերապահված է ընդհանուր իրավասության դատարաններին բնորոշ ինչ - ինչ իրավասություն եւ դրված է ժամանակային սահմանափակման մեջ: Մեր հանրապետությունում այս խնդիրը թերի է լուծված եւ կարող է առաջ բերել լուրջ փակուղային վիճակ: Բանն այն է, որ մի կողմից սահմանադրական դատարանը պարտավոր է 30 -օրյա ժամկետում որոշում կայացնել (ՀՀ Սահմանադրություն, հոդված 102), մյուս կողմից ամբողջ կազմով լուծել պատգամավորների ընտրությունների արդյունքների հետ կապված վեճերը (հոդված 100, կետ 3), որոնց միաժամանակյա թիվը կարող է մի քանի հարյուրի հասնել: Նման հնարավոր փակուղային վիճակները, որին մենք կրկին կանդրադառնանք, սովորաբար լուծվում են կամ ժամանակային սահմանափակումները մեղմելու, կամ, նույնիսկ միապալատ դատարանների դեպքում, դատավորների որոշ թվով (սովորաբար 3 կամ 5 դատավորի կազմով) գործեր քննելու եւ որոշում կայացնելու իրավունք վերապահելով:

Սահմանադրական վերահսկողության մարմինների կազմավորման առանձնահատկություններն իրենց հիմքում ունեն նաեւ այն ընդհանուր նպատակը, որ յուրաքանչյուր երկրի հասարակական հարաբերությունների բնույթից ու զարգացման խնդիրներից ելնելով, նպատակ է դրվում ստեղծել անկախ, քաղաքական ներազդեցություններից զերծ, բարձր բարոյական սկզբունքներով առաջնորդվող մի մարմին, որն ի զորու լինի ապահովել երկրի հիմնական օրենքի ու իրավունքի գերակայությունը, նպաստել հասարակության կայուն ու դինամիկ զարգացմանը:

## VI. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Տարբեր երկրների սահմանադրական վերահսկողություն իրականացնող մասնագիտացված մարմինների առջեւ Սահմանադրությամբ կամ օրենքներով դրվում են տարբեր խնդիրներ: Բնական է, դրանք բխում են այն կոնկրետ գործառնություններից, որոնք վերապահված են այս մարմիններին: Ընդհանուր առմամբ այդ խնդիրները հանգում են հետեւյալներին.

- օրենքների ու նորմատիվ այլ ակտերի սահմանադրականության հարցի որոշումը եւ ապահովումը,
- միջազգային պայմանագրերի սահմանադրականության որոշումը եւ ապահովումը (Ավստրիա, Ալբանիա, Հայաստան, Բուլղարիա, Հունգարիա, Իսպանիա, Ֆրանսիա, Լիտվա, Պորտուգալիա, Մոլդովա, Ուզբեկստան եւ այլն),
- Սահմանադրության եւ նորմատիվ այլ ակտերի մեկնաբանումը,
- պետական իշխանության տարբեր մարմինների միջեւ ծագող վեճերի լուծումը,
- կենտրոնական ու տեղական իշխանությունների միջեւ ծագող վեճերի լուծումը,
- մարդու սահմանադրական իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը,
- ժողովրդավարության պաշտպանությունը, մասնավորապես` ընտրություններ, հանրաքվե, կուսակցությունների գործունեության սահմանադրականության ապահովում (կուսակցությունների հարցով - Գերմանիա, Թուրքիա, Լեհաստան, Հայաստան, Բուլղարիա, Ռումինիա, Մոլդովա, Վրաստան, Ադրբեջան, ընտրությունների հարցով -Ֆրանսիա, Ավստրիա , Գերմանիա, Հայաստան, Վրաստան, Ռումինիա, Ղրղզստան (այստեղ Նախագահի ընտրության արդյունքները դատարանն ընտրություններից հետո 7 օրվա ընթացքում հաստատում է եւ ինքն էլ հրապարակում - Սահմանադրություն, հոդված 45, մաս 1.),
- իշխանությունների տարանջատման հաշվեկշռի պահպանումը, իշխանության բռնազավթման կանխումը, զսպումների ու հակակշիռների մեխանիզմի գործադրումը, դրա գործողության վերահսկումը (շատ երկրներում, օրինակ, Ֆրանսիա` պառլամենտի պալատների կանոնակարգերը դառնում են նախնական վերահսկողության օբյեկտ),
- օրինաստեղծ գործունեությանը նպաստելը,
- հասարակական արժեքների պահպանումը, դրանց էվոլյուցիոն զարգացմանը նպաստելը, հեղափոխականության կանխումը,

- օրենքի գերակայության ապահովումը, իրավական պետության երաշխավորումը:

Սահմանադրական դատարանի հիմնական ու առաջնահերթ լիազորությունը՝ օրենքի սահմանադրականության հարցի որոշումը, ունի էական առանձնահատկություններ: Նախ. կա ՀԱՄԱՊԱՐՓԱԿ եւ ՍԱՀՄԱՆԱՓՈՒԿ վերահսկողություն: Համապարփակի դեպքում սահմանադրական վերահսկողության օբյեկտ են բոլոր նորմատիվ ակտերը: Սահմանափակի դեպքում՝ օրենքը սահմանափակում է դրանց շրջանակը (օրինակ, Ղազախստանում՝ միայն օրենքները եւ միջազգային պայմանագրերը, Ֆրանսիայում, Սարոկկոյում, Մոլդովայում, Ռումինիայում, Հունգարիայում, Գաբոնում, Բենինում՝ նաեւ պառլամենտի պալատների կանոնակարգերը, Իտալիայում, Իսպանիայում՝ օրենքի ուժ ունեցող ակտերը, Սլովակիայում՝ գործադիր իշխանության կենտրոնական մարմինների բոլոր իրավական ակտերը՝ այդ թվում նախարարների նորմատիվ որոշումները):

Համապարփակը, որպես կանոն, բնորոշ է ամերիկյան մոդելին, սահմանափակը՝ եվրոպական: Սակայն սա պայմանական է: Ընդ որում, ԱՄՆ - ում սահմանադրական վերահսկողության օբյեկտ է քրեական կամ քաղաքացիական գործի դատաքննության ընթացքում վիճարկվող ցանկացած օրենսդրական կամ վարչական ակտ:

Եվրոպական շատ երկրներում սահմանադրական վերահսկողության մարմինների լիազորությունների շրջանակը գրեթե համապարփակ է (Ավստրիա, Պորտուգալիա, Լեհաստան, Գերմանիա): Օրինակ, Լեհաստանում Սահմանադրական տրիբունալը որոշում է ոչ միայն օրենքների, այլև կենտրոնական եւ տեղական մարմինների ակտերի սահմանադրականության հարցը:

Սահմանադրական վերահսկողության օբյեկտ են դառնում տեղական ինքնակառավարման մարմինների ակտերը (Սլովակիա, Սլովենիա, Չեխիա):

Առանձնահատկությունները մեծ են նաեւ դաշնային եւ ունիտար պետություններում: Առաջիններում սահմանադրական վերահսկողությունը կոչված է ապահովելու նաեւ դաշնային շահի գերակայությունը մասի նկատմամբ: Ռուստի, վերահսկողության օբյեկտ են դառնում նաեւ դաշնության սուբյեկտների նորմատիվ ակտերը:

Մի շարք երկրներում կան օրենքներ, որոնք դուրս են սահմանադրական վերահսկողության շրջանակներից: Օրինակ, Թուրքիայում՝ այն օրենքները, որոնք ընդունվել են հանրապետության կազմավորման ժամանակ, եւ այն ղեկրետները, որոնք ունեն օրենքի ուժ եւ ընդունվել են արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ (1982թ. Սահմանադրության 174 եւ 148 հոդվածներ):

Վիճահարույց է սահմանադրական եւ հանրաքվեով ընդունված օրենքների՝ սահմանադրական վերահսկողության օբյեկտ լինելու հարցը:

Կարծիք է հայտնվում, որ նման ակտերը, ինչպես նաեւ Սահմանադրությունը չեն կարող լինել սահմանադրական վերահսկողության օբյեկտ: Մյուս կողմից առկա է հակափաստարկը, համաձայն որի նույնիսկ Սահմանադրությունը սահմանադրական վերահսկողության օբյեկտ է, քանի որ պարունակում է գերակայող նշանակություն ունեցող նորմեր: Օրինակ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 114 հոդվածով նախատեսված է, որ Սահմանադրության 1, 2 եւ 114 հոդվածները փոփոխման ենթակա չեն: Բացի դրանից, շատ երկրների սահմանադրություններ պարունակում են նորմեր, որոնք կարգավորում են առանձին հոդվածների կամ սահմանադրական դրույթների կիրարկման առանձնահատկությունները: Ավելացնենք նաեւ, որ յուրաքանչյուր իրավական փաստաթուղթ, եթե նույնիսկ նյութական կամ բովանդակային վերահսկման օբյեկտ չէ, ապա անխուսափելիորեն կարող է դառնալ ըստ ձեւի կամ ձեւական վերահսկման օբյեկտ:

Մի շարք երկրներում, օրինակ՝ Ռումինիա, Ղրղզստան, մինչեւ սահմանադրական փոփոխության ընդունումը (պառլամենտ կամ հանրաքվե), այն ներկայացվում է սահմանադրական դատարան: Միայն վերջինիս դրական կարծիքի դեպքում կարող է հետագա ընթացք տրվել: (Ռումինիայի սահմանադրական դատարանը 10 օրում պետք է եզրակացություն տա՝ Սահմանադրության 13 եւ 37 հոդվածներ: Նման կարգ է նաեւ Մոլդովայում՝ 135 եւ 141 հոդվածներ):

Մի շարք երկրներում սահմանադրական դատարանն ունի օրենսդրական նախաձեռնության իրավունք (Ռեզեկստան, «Սահմանադրական դատարանի մասին» օրենք, հոդված 10): Առավել ուշագրավ է այն հանգամանքը, որ երբ առաջադրվում են սահմանադրական փոփոխություններ, ապա դրանք նախնական պարտադիր վերահսկողության համակարգով քննության են առնվում սահմանադրական դատարանի կողմից:

Գոյություն ունի սահմանադրական վերահսկողություն կամ հսկողություն կատեգորիաների տարբեր մեկնաբանություն:

Վերահսկողություն դեպքում, օրինակ, սուբյեկտ վերահսկողը իրավասու է ուժը կորցրած ճանաչել վերահսկվող ակտը:

Հսկողությունը պասսիվ բնույթ ունի՝ ուշադրություն հրավիրել կամ առաջարկ անել, իսկ ակտի գործողության կասեցումը կամ ուժը կորցրած ճանաչելն այդ ակտն ընդունողի կամ մեկ այլ մարմնի իրավասության հարցն է:

Սահմանադրական վերահսկողության պրակտիկայում վերջին վիճակի հետ հանդիպում ենք, օրինակ, Լեհաստանի սահմանադրական տրիբունալի առնչությամբ:

Սահմանադրական վերահսկողության ինստիտուտների շարքում հսկողություն իրականացնող տիպական օրինակ է արդարադատության կանցլերի ինստիտուտը Էստոնիայում: Սակայն այս հարցն ունի ավելի լայն ընդգրկում: Բանն այն է, որ, ինչպես նշեցինք, սահմանադրական վերահսկողության սուբյեկտների ցանկը բավականին ընդարձակ է եւ դրանց զգալի մասը, սահմանադրորեն կամ օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում, իրավական ակտերի նկատմամբ իրականացնում է ոչ թե վերահսկողական, այլ՝ հսկողական ֆունկցիա:

## VII. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՕՐՅԵԿՏՆԵՐՆ ՈՒ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ

Սահմանադրական վերահսկողության առանցքային եւ, թերեւս, ամենազգայուն հարցերից են վերահսկման օբյեկտների հստակեցման եւ սահմանադրական դատարան դիմող սուբյեկտների որոշման հարցերը: Կախված այն բանից, թե ի՞նչ օբյեկտների նկատմամբ է իրականացվում վերահսկողությունը, պարզ է դառնում, թե ինչ խնդիրներ են դրված սահմանադրական դատարանի առջեւ: Ճշտելով այն հարցի պատասխանը, թե ովքե՞ր են իրավասու դիմել սահմանադրական դատարան, կարելի է ամբողջական պատկերացում կազմել տվյալ դատարանի կենսունակության մասին:

Միջազգային փորձը վկայում է, որ սահմանադրական վերահսկողության մասնագիտացված մարմիններ ունեցող երկրները կարելի է պայմանականորեն բաժանել երեք խմբի.

1. որտեղ սահմանադրական դատարանների վրա է դրված՝
  - ա) օրենքների եւ այլ նորմատիվ ակտերի սահմանադրականության հարցի լուծման խնդիրը,
  - բ) լիազորությունների հարցերով պետական իշխանության ու կառավարման մարմինների միջեւ առաջացած վեճերի լուծումը,
  - գ) մարդու իրավունքների պաշտպանության սահմանադրական վերահսկողությունը,
2. որտեղ իրականացվում են միայն ա) եւ բ) ենթակետերով նախատեսված լիազորությունները,
3. որտեղ սահմանադրական դատարանները հիմնականում իրականացնում են ա) ենթակետով նախատեսվող գործառնություններ:

Առաջին խմբին կարելի է դասել հետեւյալ երկրները. Ավստրիա, Գերմանիա, Իսպանիա, Պորտուգալիա, Իտալիա, Ռուսաստան, Սլովակիա, Յունգարիա, Սլովենիա, Վրաստան եւ այլն:

Երկրորդ խմբին, որտեղ գլխավոր շեշտը դրվում է իշխանությունների գործունեության սահմանադրական հաշվեկշռի պահպանման վրա, կարելի է դասել Յունաստանը, Բուլղարիան, Թուրքիան, Ղրղզստանը, Լիտվան եւ այլն:

Երրորդ խմբում, որտեղ հայտնվել է նաեւ Հայաստանը, տեղ են գտել այն երկրները, որտեղ Սահմանադրությամբ էապես սահմանափակված է սահմանադրական դատարանների գործողության ոլորտը: Նման համակարգեր գոյություն ունեն նաեւ Ֆրանսիայում, Ռումինիայում, Լեհաստանում, Լատվիայում, Մոլդովայում, Ուկրաինայում, Ղազախստանում, Ուզբեկստանում եւ այլն:

Նկատենք նաեւ, որ տարբեր խմբերի մեջ մտնող երկրների մեծ մասում հատուկ կարեւորվում է ընտրությունների ու հանրաքվեների անցկացման, ինչպես նաեւ քաղաքական կուսակցությունների գործունեության օրինականության ու սահմանադրականության ապահովման խնդիրները, եւ դրանք դարձել են սահմանադրական վերահսկման առարկա: Մասնավորապես, քաղաքական կուսակցությունների գործունեության սահմանադրականության ապահովման նպատակով մի շարք երկրներում սահմանադրական դատարաններին իրավունք է վերապահված յուրաքանչյուր տարի ստուգելու դրանց հաշիվները: Ավելին, օրինակ, Պորտուգալիայում սահմանադրական դատարանի վրա է դրված կուսակցությունների գրանցման հարցը: Այս երկրում սահմանադրական դատարանը վերահսկում է նաեւ պետական պաշտոնյաների եկամուտները՝ աշխատանքի նշանակվելիս եւ ազատվելիս պահանջելով եկամուտների ու սեփականության հայտարարագիր, որը կարող է նաեւ ստուգվել:

Անկախ այն բանից, թե երկիրը որ խմբում է գտնվում եւ որքան է նեղ կամ լայն սահմանադրական վերահսկողության ոլորտը, միեւնույնն է, երկրի առջեւ ծառայած խնդիրների լուծման բնույթից ելնելով պետք է ճշգրտվեն սահմանադրական վերահսկողության օբյեկտները:

## ԱԱՐՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՎԵՐԱՐՍՎՈՂՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ

Սահմանադրական դատարանի գործունեության ուղղվածությունը, ինչպես նաեւ արդյունավետությունը նախ պայմանավորված է նրանով, թե որոնք են վերահսկման օբյեկտները, ինչպիսի նորմատիվ ակտերի սահմանադրականության (առանձին երկրներում՝ նաեւ օրինականության) հարցեր պետք է քննության առնի սահմանադրական դատարանը:

Հիմնականում խոսքը վերաբերում է հետեւյալ իրավական ակտերին.

- Սահմանադրություն,
- օրենք,
- նորմատիվ այլ ակտեր,
- միջազգային պայմանագրեր,
- դատարանների որոշումներ,
- տեղական ինքնակառավարման մարմինների որոշումներ,
- կուսակցությունների որոշումներ,
- հասարակական կազմակերպությունների որոշումներ:

Քիչ թվով երկրներ կան, որտեղ նշված բոլոր տիպի իրավական ակտերը հանդիսանում են սահմանադրական վերահսկողության օբյեկտ: Դրանք հիմնականում վերը նշված առաջին խմբի երկրներն են: Սահմանադրական արդարադատության զարգացման միտվածությունն այնպիսին է, որ այդ խումբ երկրների թիվը գնալով ավելանում է: Սակայն այստեղ կան լուրջ բանավեճային բնույթ կրող հարցեր: Նախ. Սահմանադրության եւ հանրաքվեով ընդունված օրենքների առնչությամբ: Ինչպես արդեն նշել ենք, քիչ չեն դեպքերը, երբ սահմանադրական դատարաններն անդրադարձել են այս հարցին եւ ընդհուպ որոշումներ են ընդունել՝ հստակեցնելու իրենց դիրքորոշումը: Ֆրանսիայի, Չեխիայի եւ մի շարք այլ երկրների օրինակը վկայում է, որ նման երկրներում հակված են հեռու մնալ Սահմանադրության եւ հանրաքվեով ընդունված օրենքների սահմանադրական վերահսկողությունից: Նկատի ունենալով, որ այս հարցին արդեն անդրադարձել ենք, կցանկանայինք միայն ավելացնել, որ սահմանադրական վերահսկողության համակարգը երբեք ավարտուն, ամբողջական ու գործուն չի լինի, եթե այն չի ներառում Սահմանադրության մեկնաբանման իրավունքը եւ, անկախ բնույթից, բոլոր տիպի նորմատիվ ակտերի սահմանադրական վերահսկողությունը: Այս առումով հարկ է առանձնացնել նաեւ բանավեճային բնույթ կրող հարցերի երկրորդ խումբը: Այն վերաբերում է գործադիր իշխանության կենտրոնական ու տարածքային մարմինների եւ տեղական ինքնակառավարման մարմինների որոշումներին: Հայաստանի օրինակը վկայում է, որ, բացի կառավարության որոշումներից, նման տիպի իրավական ակտերը սահմանադրական վերահսկողության օբյեկտ չեն: Նման վիճակը տիպական է հիմնականում վերոհիշյալ երրորդ խմբում ընդգրկված երկրներին: Մի կողմից, դա բացատրվում է նրանով, որ սահմանադրական դատարանի առջեւ չի դրվում լիազորությունների հարցով վեճերի լուծման խնդիր, ինչպես նաեւ դատարանն օժտված չէ անհատական դիմումների հիման վրա քննության առարկա դարձնել այդ ակտերի սահմանադրականության ու օրինականության հարցը՝ կապված մարդու իրավունքների պաշտպանության խնդիրների հետ: Մյուս կողմից՝ փորձ է արվում դատական ընդհանուր համակարգում այս հարցերն ավելի շատ կենտրոնացնել ընդհանուր իրավասության դատարաններում, իսկ սահմանադրական դատարանների ուշադրությունը հատկապես բեւեռել օրենքի եւ միջազգային

պայմանագրերի սահմանադրականության ապահովման խնդրի վրա: Նման լուծումը, սակայն, պահանջում է սահմանադրական դատարան եւ դատական ընդհանուր համակարգ գործառնական փոխհարաբերությունների մանրամասն հստակեցում եւ ճշգրիտ սահմանում (լավագույն օրինակ կարող են ծառայել դարձյալ Ավստրիան, Գերմանիան, Իսպանիան կամ Իտալիան), որպեսզի չառաջանան մի կողմից՝ փակուղային իրավիճակներ, մյուս կողմից՝ խնդրի լուծումը մնա օդից կախված կամ տեղափոխվի վարչական քաջքշուկների ոլորտ: Ցավոք, այս հարցում Հայաստանում չի գտնվել անհրաժեշտ լուծումը, եւ խնդիրն ամբողջական վերանայման անհրաժեշտություն ունի:

## ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ

Հաճախ կարծիք է հայտնվում, որ սահմանադրական վերահսկողությունն իրականացվում է կենտրոնացված կամ ապակենտրոն դատական համակարգի միջոցով, իսկ մյուս բոլոր մարմինները, որոնք ուղղակիորեն առնչվում են այս խնդրի հետ, հանդես են գալիս որպես դատարան դիմող սուբյեկտներ ( եթե դա նախատեսված է Սահմանադրությամբ կամ օրենքով): Սա, մեր կարծիքով, ճիշտ մոտեցում չէ, այն նաեւ շփոթ է առաջացնում: Տարբերակվում են սահմանադրական վերահսկողության սուբյեկտ եւ սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտ հասկացությունները:

Շատ երկրների սահմանադրությունների ուսումնասիրությունը միանշանակ վկայում է, որ տարբեր մարմիններ ուղղակիորեն, այս կամ այն չափով, ունեն սահմանադրական վերահսկողության իրավասություն:

Բնական է, որ կոնկրետ վերահսկողությունն իրականացվում է տարբեր ձեւերով եւ յուրաքանչյուր սուբյեկտի համար օրենքով սահմանված կարգով: Չնայած տարբեր երկրներում այս ամենն ունի իր առանձնահատկությունները, սակայն, ընդհանուր առմամբ որպես սահմանադրական վերահսկողության սուբյեկտ են հանդես գալիս.

- ժողովուրդը (երբ հանրաքվեով ընդունում է Սահմանադրությունը եւ նրանում կատարում փոփոխություն),
- երկրի Նախագահը (երկրներից մեծ մասում Նախագահի երդման տեքստում ամրագրված է Սահմանադրության պաշտպանության պարտավորությունը, իսկ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 49 հոդվածի առաջին մասը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետության Նախագահը հետեւում է Սահմանադրության պահպանմանը, ապահովում օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների բնականոն գործունեությունը: Նման իրավասությունը պահանջում է նաեւ հստակ մեխանիզմ),
- հատուկ մասնագիտացված սահմանադրական դատարանները,
- խորհրդարանը,
- ընդհանուր իրավասության դատական համակարգը,
- իրավապահ մարմինները,
- ցանկացած պետական մարմին կամ հասարակական կազմակերպություն (որոնք ապահովում են Սահմանադրությանը համապատասխան որոշումների ընդունում եւ գործունեություն): Այստեղ հատկապես առանձնանում են կառավարությունները, որոնց վերաբերյալ նաեւ Սահմանադրությամբ հատուկ պարտականություններ են նախատեսվում (օրինակ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 89 հոդվածի 7 կետով կառավարությունը պարտավոր է միջոցներ ձեռնարկել օրինականության ամրապնդման, քաղաքացիների իրավունքների եւ ազատությունների ապահովման ուղղությամբ):

Մի շարք երկրներում սահմանադրորեն նախատեսված ինստիտուտ է ժողովրդի պաշտպանը, որը նաեւ սահմանադրական վերահսկողության սուբյեկտ է:

Վերահսկողության ձեւերից մեկն էլ այն է, երբ մի շարք երկրներ Սահմանադրությամբ ֆիզիկական ու իրավաբանական անձանց իրավունք են վերապահում չենթարկվել հակասահմանադրական օրենքների (Գանա, Բենին, Սլովակիա, Գերմանիա): Սա շատ նուրբ եւ խութերով լեցուն հարց է:

Ինչպես արդեն նշել ենք, սահմանադրական վերահսկողության համակարգը թերի է, եթե այն չի ներառում տվյալ ազգի ու երկրի պատմականորեն ձեւավորված հասարակական կեցության ողջ արժեհամակարգի պահպանման ու զարգացման դաշտը: Ուստի, հասարակության յուրաքանչյուր բջիջ յուրովի հանդես է գալիս նաեւ որպես հավաքական ու մոդելավորված արժեհամակարգի՝ սահմանադրական վերահսկողության սուբյեկտ:



Սահմանադրական վերահսկողության առանցքային հարցերից է, թե ովքե՞ր են դատարան դիմող սուբյեկտները եւ ի՞նչ կարգով են իրականացնում հատկապես վերացական (աբստրակտ) վերահսկողության իրենց իրավասությունը: Որպես կանոն, դրանց թվին են դասվում պետության գլուխը, պառլամենտը եւ դրա անդամների որոշակի մասը, կառավարությունը, ընդհանուր իրավասության դատարանները, քաղաքացիները:

Այստեղ հարկ է նշել, որ մի շարք երկրներում սահմանադրական դատարան դիմող սուբյեկտների ցանկը բավականին ընդարձակ է: Օրինակ, Պորտուգալիայում այդպիսիք են նաեւ նախարարները, պառլամենտի խմբակցությունները, դատախազը, դատավորները, տարածաշրջանային կառավարման մարմինները, քաղաքացիները:

Ռուսաստանում՝ Նախագահ, կառավարություն, Դումա, Դաշնային խորհուրդ, պատգամավորների մեկ հինգերորդը, բարձրագույն արբիտրաժային դատարանը, գերագույն դատարանը, ցանկացած դատավոր, Դաշնության սուբյեկտների օրենսդիր ու գործադիր մարմինները, ինչպես նաեւ քաղաքացիները՝ եթե օրենքը ոտնահարել է նրանց իրավունքները:

Սիրիայում դիմող սուբյեկտ են միայն երկրի Նախագահը եւ պառլամենտի մեկ քառորդը, Շրի-Լանկայում՝ միայն Նախագահը:

Ֆրանսիայում մինչեւ 1974թ. դիմում էին Նախագահը, կառավարությունը եւ պառլամենտի պալատների նախագահները (այդ ընթացքում սահմանադրական խորհուրդը լսում էր տարեկան միջին հաշվով մեկ գործ՝ սահմանադրականության հարցով): 1974 թվականից դիմող սուբյեկտ դարձան 60 պատգամավոր եւ 60 սենատոր (1974-1991թթ. լսվեց 220 գործ՝ վերջիններիս նախաձեռնությամբ):

Գերմանիայում սահմանադրական դատարան դիմող սուբյեկտների շրջանակն ընդլայնվեց 1969 թվականին:

Որոշ երկրներում դիմող սուբյեկտ են նաեւ իրենք՝ սահմանադրական դատարանները: Այսինքն՝ սահմանադրական դատարանը գործը կարող է քննել սեփական նախաձեռնությամբ: Առանձին երկրներում օրենքն այն նախատեսում է եւ հստակեցնում նախաձեռնության շրջանակները (Ալբանիա, Ավստրիա, Բենին, Գաբոն, Լեհաստան, Ռեբելստան): Օրինակ, Ավստրիայի սահմանադրական դատարանը եթե օրենքի որեւէ դրույթի սահմանադրականության հարցով գործ է քննում, ապա կարող է քննության մյուս դարձնել նաեւ տվյալ օրենքի մյուս հոդվածները՝ անկախ այն բանից դիմումում դա նշված է, թե՛ ոչ: Ընդհանրապես իր նախաձեռնությամբ գործի քննումը որպես իրավունք սահմանադրական դատարաններին վերապահելը նպատակահարմար չի համարվում, եւ մենք միանգամայն համամիտ ենք այդ մոտեցման հետ: Վտանգը՝ ներքաշվելն է քաղաքական խաղերի մեջ (դա է վկայում հատկապես Ռուսաստանի փորձը՝ 1991-1993թթ. նման իրավունք ունեին: Վերացվեց 1993թ.՝ Սահմանադրությամբ):

Արդյունավետ սահմանադրական վերահսկողության համար անհրաժեշտ նախապայման է նաեւ այն, որ ընդհանուր իրավասության դատարաններն իրավունք ունենան օրենքի սահմանադրականության հարցով օպերատիվ կարգով ուղղակի դիմել սահմանադրական վերահսկողություն իրականացնող մարմնին, ինչպես նաեւ հնարավորություն տալ սահմանադրական դատարանին քաղաքացու դիմումի հիման վրա վերանայելու այն դատարանի որոշումը, որը, ըստ դիմողի, հակասահմանադրական իրավանորմ է կիրառել:

Ներկայումս ամենահրատապ խնդիրներից մեկը նորմատիվ ակտերի սահմանադրականության որոշման հարցում ֆիզիկական անձանց դիմող սուբյեկտ ճանաչելու հնարավորություն ընձեռելն է: Սա երկակի խնդիր է: Նախ. էապես ընդլայնվում է սահմանադրական վերահսկողության սուբյեկտների շրջանակը եւ վերահսկողությունը դառնում է ավելի գործուն: Երկրորդ՝ առավել կատարյալ է դարձնում մարդու իրավունքների պաշտպանության ներպետական համակարգը:

Անկախ համակարգի բնույթից՝ եվրոպական է, ամերիկյան, թե մեկ այլ տարբերակ, կարելու է այն է, որ ֆիզիկական անձը նորմատիվ ակտի սահմանադրականության հարցը բարձրացնելու եւ դատական կարգով լուծում ստանալու հնարավորություն ունենա (օրինակ, Ալովենիայում նորմատիվ ակտերի սահմանադրականության հարցով քննվող գործերի շուրջ 80 տոկոսը քննության է ընդունվում ֆիզիկական անձանց դիմումների հիման վրա, 20 տոկոսը՝ պետական մարմինների)<sup>36</sup>: Առավել վտանգավորն այն է, երբ խնդիրն օդում կախված է մնում եւ դառնում է քաղաքական լարվածության խթանիչ:

Սահմանադրական դատարան դիմող սուբյեկտների շարքում տեղ պետք է գտնեն թե տեղական ինքնակառավարման մարմինները (ինչպես գոյություն ունի որոշ երկրներում), եւ թե եկեղեցին (կրոնական կազմակերպությունները): Այս հարցերի առումով նույնպես կան տարբեր մոտեցումներ: Հատկապես դա վերաբերում է կրոնական կազմակերպություններին, որոնք անջատ են պետությունից, սակայն պետք է ի վիճակի լինեն պաշտպանել իրենց (որոշ առումով նաեւ իրենց հավատացյալների) սահմանադրական իրավունքները: Այս հարցում, թերեւս, հիմնական օրինակը Գերմանիան է, որտեղ Սահմանադրության 4 հոդվածի առաջին մասում նախատեսված է, որ կրոնական միությունները կարող են սահմանադրականության հարցերով բողոք ներկայացնել, եթե նրանց արմատական իրավունքը՝ դավանանքի ազատության մասին, խախտվել է:

Ավելացնենք նաեւ, որ ընդհանրապես սահմանադրական վերահսկողության ինստիտուտների գործունեության արդյունավետությունը, դրանց աշխատանքի նպատակայնությունն ու ուղղվածությունը մեծապես պայմանավորված են դիմող սուբյեկտների կազմի խելամիտ ու հաշվեկշռված ընտրությամբ: Լավագույն մոդելը, թերեւս, այն է, երբ սահմանադրական վերահսկողության (ու նաեւ հսկողության) բոլոր սուբյեկտները, ինչպես նաեւ քաղաքացիներն՝ իրենց սահմանադրական իրավունքների պաշտպանության հարցով, սահմանադրական դատարան դիմող սուբյեկտներ են:

Ինչ վերաբերում է նորմատիվ ակտերի սահմանադրականության խնդրին, ապա ընդհանուր միտումն այն է, որ պառլամենտի անդամները՝ հնարավոր նվազագույն թվով, սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունենան:

## VIII. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՉԵՎԵՐԸ

Մասնագիտացված ինստիտուտների կողմից սահմանադրական վերահսկողությունն իրականացվում է տարբեր կերպ: Տարբեր են նաեւ վերահսկողության բնույթը, կարգը, որոշումների ընդունման լիազորություններն ու դրանց իրավական հետեւանքները:

Առաջին հերթին անհրաժեշտ է քննության առարկա դարձնել նորմատիվ ակտերի սահմանադրականությանն առնչվող խնդիրները:

Այս իրավասության շրջանակներում սահմանադրական վերահսկողության հատուկ մարմինների միջոցով իրականացվող վերահսկողությունը տարբերակվում է.

### Ըստ ժամանակի՝

ա/ նախնական՝ երբ ակտը նախագիծ վիճակում է կամ դեռեւս չի դրվել գործողության մեջ,

բ/ վերջնական/ հետագա/՝ երբ ակտն ընդունվել է գործում է:

Նախնական վերահսկողությունն իր հերթին ունի որոշ առանձնահատկություններ: Այն իրականացվում է կամ նախագիծ վիճակում գտնվող ակտի նկատմամբ ( օր. Ֆրանսիա ), կամ երբ օրենսդիր մարմնի կողմից ընդունվել է օրենքը, սակայն Նախագահը դեռեւս չի ստորագրել ( օր. Ռումինիա ): Ռումինիայի Սահմանադրության 144 հոդվածով նախատեսված է, որ եթե օրենքը հակասահմանադրական է ճանաչվում սահմանադրական դատարանի կողմից, ապա այն պետք է վերադարձվի պառլամենտ՝ վերաքննարկման: Եթե օրենքը վերստին ընդունվում է նույն խմբագրությամբ՝ երկու պալատների անդամների ձայների առնվազն 2 / 3 -ով, ապա օրենքը հաստատվում է:

### Ըստ բնույթի՝

ա/ վերացական /աբստրակտ/՝ երբ կապված չէ կոնկրետ գործի հետ,

բ/ կոնկրետ՝ երբ կապված է կոնկրետ գործի հետ:

Սովորաբար վերացական ( աբստրակտ ) վերահսկողության դեպքում, որպես կանոն, դիմող սուբյեկտները պետական իշխանության մարմիններն են: Սակայն կան երկրներ, որտեղ քաղաքացիները՝ ոչ միայն կոնկրետ գործով, այլ նաեւ որպես վերացական վերահսկողության

սուբյեկտ, նույնպես կարող են դիմել ( Բրազիլիա, Մալագիա ) : Օրինակ, Բրազիլիայում ցանկացած քաղաքացի կարող է դիմել, եթե գտնում է, որ օրենքը վնասում է ազգային մշակութային ժառանգությանը, շրջակա միջավայրին կամ հասարակական արժանապատվությանը: Եվրոպական շատ երկրներում, որտեղ քաղաքացին նորմատիվ ակտի սահմանադրականության հարցով անմիջապես սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունի, նույնպես գործում է վերացական վերահսկողության համակարգը ( Իսպանիա, Պորտուգալիա, Վրաստան եւ այլն ) : Ի դեպ, Գերմանիայում սահմանադրականության վերաբերյալ քաղաքացու դիմելու իրավունքը կիրառվում է թե ֆեդերալ եւ թե հողերի մակարդակներում (Բավարիա, Բեռլին, Յեսեն եւ Սաար ) :

Լավագույնը երկու ձեւերի ներդաշնակումն է: Գերմանիայում 1953 - 1984 թթ. դաշնային սահմանադրական դատարանի բոլոր որոշումներից 82-ը եղել է վերացական, 2200-ը՝ կոնկրետ դիմումով ( Իտալիայում 1948-1976 թթ. համապատասխանաբար՝ 406 եւ 5761 ) :

### Ըստ կարգի՝

ա/ պարտադիր, երբ ակտը սահմանված կարգով պարտադիր քննության է առնվում եւ որոշվում է դրա սահմանադրականության հարցը (Ֆրանսիայում՝ օրգանական օրենքները, Յայաստանում՝ միջազգային պայմանագրերը եւ այլն ),

բ/ ֆակուլտատիվ, երբ ըստ ցանկության դիմել է օրենքով դրա իրավունքն ունեցող սուբյեկտը:

Ըստ ձեւի սահմանադրական վերահսկողությունը կարող է լինել ձեւական եւ նյութական կամ քովաճղակային: Առաջին դեպքում վերահսկման առարկա է դառնում իրավական ակտի ընդունման ձեւի սահմանադրականության կամ օրինականության հարցը :

Քննարկվող թեմայի առանցքային հարցերից է վերահսկման տարբեր ձեւերի ներդաշնակ համակարգի ընտրությունը: Այդ նպատակով անհրաժեշտ է խորությամբ պարզել վերահսկման յուրաքանչյուր ձեւի առավելություններն ու հնարավոր թերությունները: Ամենից առաջ առանձնացվում են նախնական ( կամ կանխարգելիչ ) եւ հետագա ( կամ վերջնական ) ձեւերի առավելություններն ու թերությունները:

Կանխարգելիչ կամ նախնական վերահսկողության առավելություններն են.

1. սահմանադրականության հարցի նախօրոք հստակեցումը, որն ամրապնդում է իրավական համակարգի հուսալիությունն ու ապահովությունը,
2. նպաստում է օրենսդրի առավել արդյունավետ աշխատանքին եւ նրա հեղինակությանը՝ հետագայում հակասահմանադրական չհամարելով արդեն ընդունված ակտը,
3. կանխում է այն բարդությունները, որոնք կարող են առաջանալ, եթե տարիներ շարունակ գործող օրենքը կամ դրա դրույթը ճանաչվում է հակասահմանադրական,
4. նախքան միջազգային պայմանագրի վավերացումը եւ պետության կողմից միջազգային պարտավորությունների ստանձնումն ապահովում է այդ պարտավորությունների սահմանադրականության հարցի վերաբերյալ վերջնական եւ հեղինակավոր որոշումը:

Նախնական վերահսկողության թերություններն են.

1. շատ հաճախ նորմերի փաստացի եւ հնարավոր հետեւանքները հնարավոր չէ անվերապահորեն պարզել վաղ փուլում: Առաջին հայացքից սահմանադրական թվացող օրենքը կամ դրա դրույթը կյանքում գործադրելու ընթացքում կարող է դրսևորվել որպես հակասահմանադրական, երբ հարցը վերաբերում է կոնկրետ դեպքերի կամ կոնկրետ շահերի բախման,
2. մեկ կամ մի քանի շաբաթվա ընթացքում օրենքի ( հաճախ հարյուրավոր հոդվածներով ) վերաբերյալ որոշում կայացնելը, ընդ որում՝ վերջնական, դժվարին խնդիր է,
3. սոցիալական եւ տնտեսական, ինչպես նաեւ հասարակական պայմանները, որոնց ի սկզբանե հասցեագրված է եղել օրենքը, կարող են որակական փոփոխություն կրել, որի պայմաններում օրենքի գործողությունը կարող է հանգեցնել հակասահմանադրականության: Դրա պատճառով այն նախապես սահմանադրական չի կարող համարվել,

4. օրենսդրական նորմերի նախնական վերահսկողությունը կարող է խոչընդոտել օրենսդիր մարմնին արագ արձագանքելու շատ հարաբերությունների անհապաղ կանոնակարգմանը, հատկապես, եթե սահմանադրական դատարան գործի հարուցումը, ինքնաբերաբար, արգելակում է օրենքի գործադրումը մինչև դատարանի որոշումը:

Այս թերությունները հնարավոր է հաղթահարել վերահսկողության երկու ձևերի ներդաշնակման միջոցով: Մեր կարծիքով, սխալ է խնդրի լուծումը փնտրել մեկ կամ մյուս ժայռահեղության մեջ՝ ընտրելով ձևերից մեկը, մերժելով մյուսը: Չափազանց կարելու է բացահայտել ու գործադրել յուրաքանչյուր ձևի դրական ներուժը: Նկատի ունենալով, որ հիմնական ժխտողական վերաբերմունքը դրսևորվում է նախնական վերահսկողության նկատմամբ, ուստի ցանկանում ենք ընդգծել, որ ըստ մեր կարծիքի.

1. միանշանակ է, որ պառլամենտի պալատների կանոնակարգերը ենթակա են նախնական պարտադիր վերահսկման,
2. նախնական վերահսկողությունն անհրաժեշտ է իրականացնել պառլամենտի կողմից օրենքն ընդունելուց հետո,
3. նախնական վերահսկողության դիմող սուբյեկտներ կարող են հանդիսանալ պառլամենտի անդամների 1/5-ը, Հանրապետության Նախագահը, կառավարությունը,
4. սահմանադրական դատարանը իրավունք պետք է ունենա օրենքով սահմանված դեպքերում եւ կարգով վերանայելու իր որոշումը:

Կցանկանայինք հատուկ կարելու նաեւ այն հանգամանքը, որ անցումային փուլում, արտակարգ իրավիճակներում առավել կարելու է հնարավոր բացասական դրսևորումների կանխարգելումը, քան թե դրանց հետեւանքների հաղթահարումը: Այս առումով նույնպես չափազանց կարելու է նախնական վերահսկողությունը:

Տարբեր ձևերի համադրումը նույնպես ծնունդ է խնդիրներ: Օրինակ, սահմանադրական վերահսկողության մարմինը կարող է նախնական վերահսկողությամբ օրենքը ճանաչել սահմանադրական, սակայն հետագայում, կոնկրետ վերահսկողության պարագայում, հակասահմանադրականության իրավիճակի առջև հայտնվել: Այստեղից հետեւում է, որ խստորեն պետք է հստակեցվեն նախնական եւ հետագա վերահսկողության շրջանակները:

Ինչպես նշվեց, կարելու է նախնական վերահսկողության պահի ընտրությունը՝ մինչև օրենսդիր կողմից որոշում կայացնելը, թե՛ դրանից հետո: Վերջին դեպքում առավելությունն այն է, որ, նախ՝ օրենսդիրն ինքը կարող է վերացնել թերությունը եւ, երկրորդ՝ սահմանադրական դատարանը չի միջամտի օրինաստեղծ գործունեությանը: Մյուս դեպքում նպատակասլաց են դարձվում խորհրդարանական քննարկումները եւ օրենսդիրն հնարավորություն է ընձեռվում խուսափելու հակասահմանադրական նորմ ընդունելուց: Այսուհանդերձ այս ձևը փոխում է դատարանի գործառական դերը, եւ գերադասելի է առավելագույնս նեղացնել չընդունված ակտի վերահսկողության շրջանակները:

Օրենքի սահմանադրականության հարցը քննելիս չափազանց կարելու են.

- ի՞նչ կարգի նորմատիվ ակտեր են ենթակա վերահսկողության,
- ո՞վ է լիազորված դիմելու սահմանադրական դատարան եւ ինչ հիմունքներով,
- ինչպե՞ս է իրականացվում գործի քննությունը՝ դիմողի մասնակցությամբ, թե՞ առանց մասնակցության,
- բացի դիմողից ո՞վ կամ ո՞ր ինստիտուտները կարող են մասնակցել քննությանը եւ հանդես գալ դատարանում,
- ի՞նչ շրջանակներում կարող է հարցին մոտենալ սահմանադրական դատարանը՝ միայն այն նորմի, որը վիճարկվում է, թե՞ քննարկման առարկա կարող է դարձնել ամբողջ ակտը,

- ի՞նչ ձեւ, բովանդակային կառուցվածք ու բնույթ պետք է ունենա սահմանադրական դատարանի որոշումը:

Այս բոլորը պետք է որոշարկվեն եւ հստակ արտացոլվեն սահմանադրական դատարանի մասին օրենքում, որը պետք լինի օրգանական կամ սահմանադրական օրենք:

Այս առումով չափազանց կարեւոր խնդիր է նորմատիվ ակտերի սահմանադրականության հարցը որոշելու սահմանադրական դատավարության հստակ ընթացակարգի առկայությունը: Շատ երկրներ այս խնդիրը լուծել են սահմանադրական դատավարության մասին հատուկ օրենք ընդունելով: Գերակայող տեսակետն այն է, որ սահմանադրական դատարանները պետք է մշակեն ու հաստատեն նման կանոնակարգ՝ բնականաբար, դուրս չգալով Սահմանադրությամբ նախատեսված իրավասության շրջանակներից:

Դեռեւս մեծ տարակարծությունների առարկա հանդիսացող հարցերից մեկն էլ այն է, թե ի՞նչ պետք է անել, երբ հակասահմանադրական իրավիճակն առաջանում է ոչ թե այս կամ այն նորմը կիրառելու հետեւանքով, այլ պետական իշխանության որեւէ մարմնի կողմից իր սահմանադրական պարտականությունները չկատարելու ( կամ ժամանակին չկատարելու ), ինչպես նաեւ անհրաժեշտ օրենսդրական ակտը նախատեսված ժամկետներում չնդունելու հետեւանքով: Օրինակ, Հայաստանի Հանրապետությունում նման իրավիճակ կարող է առաջանալ, եթե նախատեսված ժամկետներում չկատարվեն ՀՀ Սահմանադրության 116 հոդվածի 7, 9, 10 կետերի պահանջները:

Նման իրավիճակները, որոնք դարձյալ հիմնականում բնորոշ են անցման փուլերին, գրեթե ոչ մի երկրում սահմանադրորեն հստակ կանոնակարգված չեն: Սակայն ձեւավորվել է պրակտիկա, երբ այդ խնդիրն լուծում է տալիս սահմանադրական դատարանը: Այս հարցում որոշ փորձ ունեն հատկապես Պորտուգալիայի, Իտալիայի, Հունգարիայի սահմանադրական դատարանները<sup>37</sup>: Նման խնդրի առաջացման դեպքում, որպես կանոն, սահմանադրական դատարան դիմող սուբյեկտ են հանդես գալիս կամ երկրի Նախագահը կամ մարդու իրավունքների պաշտպանը ( եթե կա նման ինստիտուտ ):

Նորանկախ երկրների համար անհրաժեշտ է, որպեսզի այս հարցը դառնա իշխանության տարբեր թեւերի փոխհամաձայնեցված գործողության առարկա: Մասնավորապես Հայաստանի Հանրապետությունում նման վիճակից խուսափելու եւ Սահմանադրության անցումային դրույթներով նախատեսված ժամկետներում անհրաժեշտ աշխատանքներն իրականացնելու նպատակով ընտրվեց, այսպես կոչված, կանխարգելիչ ճանապարհը: ՀՀ Նախագահի հրամանագրով, Սահմանադրության 49 հոդվածի առաջին մասի հիման վրա, օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների ներկայացուցիչների կազմով, ձեւավորվեց դատաիրավական բարեփոխումների իրականացման աշխատանքները համակարգող պետական հանձնաժողով: Առանց նման համագործակցված աշխատանքի այդպիսի խնդիրների լուծումը կարող է մտնել փակուղի:

Առկա է անցման փուլին բնորոշ մեկ այլ խնդիր եւս: Դա, մի կողմից օրենսդրական վակուումն է, մյուս կողմից՝ օրենսդրական դաշտի ներքին հակասությունները: Օրինակ, Ռուսաստանում փորձագետների զննհատմամբ դաշնային օրենքների 70 տոկոսը պարունակում է Սահմանադրությանը չհամապատասխանող դրույթներ<sup>38</sup>: Գրեթե համանման վիճակ գոյություն ունի նորանկախ երկրների մեծ մասում: Հայաստանի Հանրապետությունում այսօր գործում են երեք բնույթի նորմատիվ ակտեր.

- ա) ընդունված խորհրդային ժամանակներում,
- բ) ընդունված մինչեւ Սահմանադրության ընդունումը,
- գ) կյանք մտած Սահմանադրության ընդունումից հետո:

Որքանով են այդ բոլորը զերծ ներքին հակասություններից եւ ինչպիսի՞ն է Սահմանադրությանը դրանց համապատասխանությունը, ոչ- ոք չի կարող ասել: Բանն այն է, որ իշխանության որեւէ օղակում այս ուղղությամբ ծրագրավորված աշխատանք չի տարվում, իսկ սահմանադրական դատարանը, Սահմանադրության 101 հոդվածի պահանջներից ելնելով, գործեր քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում: Այն փաստը, որ նման պարագայում մեկ տարվա ընթացքում սահմանադրական դատարանն օրենքի սահմանադրականության հարցով ոչ մի դիմում չի ստացել, ակնհայտորեն խոսում է պետական մեքենայի անկատարության եւ թույլ իմունոհամակարգի մասին: Բացի դրանից, ՀՀ Սահմանադրության 116 հոդվածի երկրորդ մասով սահմանված է, որ Հայաստանի Հանրապետության օրենքները եւ մյուս իրավական ակտերը գործում են այնքանով, որքանով չեն հակասում Սահմանադրությանը: Բայց ո՞վ եւ ինչպե՞ս է որոշում՝ կա հակասություն, թե՛ ոչ, եթե այս հարցով սահմանադրական դատարան նրա ստեղծման օրվանից շուրջ մեկուկես տարվա

ընթացքում դեռեւս ոչ մի դիմում չի մուտքագրվել, իսկ ընդհանուր իրավասության դատարանները սահմանադրական դատարանի հետ գործառնական որելէ առնչություն չունեն: Բնական է, որ նման վիճակն անհապաղ շտկման անհրաժեշտություն ունի: Առավել արդյունավետ ուղին, որի մասին վկայում է նաեւ միջազգային փորձը, սահմանադրական դատարան դիմող սուբյեկտների ցանկի լուրջ ընդլայնումն է: Տվյալ պարագայում նկատի ունենք նման իրավունքի ընծեռումն ընդհուպ պատգամավորական յուրաքանչյուր խմբակցության, կառավարությանը, ընդհանուր իրավասության դատարաններին եւ այլն: Այս հիմնական խնդրի լուծման հետ մեկտեղ, հատկապես անցումային շրջանում, օգտակար կարող էր լինել նաեւ այս հարցով նույնպես երեք իշխանությունների ներկայացուցիչների կազմով համընդգրկուն վերլուծություն կատարելը եւ դրա հիման վրա օրենսդրական դաշտը կարգի բերելու ծրագրված աշխատանքի իրականացումը:

Ուշադրության է արժանի նաեւ այն փորձը, երբ սահմանադրական դատարաններին իրավունք է վերապահվում այս հարցերով տարեկան ուղերձով դիմելու պառլամենտին:

## **IX. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ**

Սարդու իրավունքների պաշտպանությունը պետության սահմանադրական եւ միջազգային - իրավական կարելու պարտականությունները մեկն է: Պետության խնդիրն է ստեղծել մարդու սահմանադրական իրավունքների պաշտպանության քաղաքական ու իրավական երաշխիքների հուսալի համակարգ, որը պետք է ներառի սկզբունքների, օրենքների, կառույցների, մեխանիզմների մի ամբողջություն: Որպես խնդրի լուծման սուբյեկտ են հանդես գալիս պետական իշխանության բոլոր ինստիտուտները: Առանձնահատուկ կարելու դեր է վերապահվում պետության առաջին դեմքին, պառլամենտին, դատական համակարգին, կառավարությանը: Միջազգային պրակտիկան վկայում է, որ մարդու իրավունքների իրավական պաշտպանության արդյունավետ իրականացման գործում զնալով էլ ավելի է կարելուվում սահմանադրական վերահսկողության մասնագիտացված մարմինների դերը: Ուշադրության են արժանի հետեւյալ հարցերը.

- ա) սահմանադրական վերահսկողության մարմնի մասնակցությունը որքանով է ապահովում այս խնդրի համակարգված եւ ամբողջական լուծումը,
- բ) մարդու իրավունքների պաշտպանության սահմանադրական վերահսկողության ի՞նչ ձեւ ու դիմող սուբյեկտների ի՞նչ համակարգ է ընտրվում,
- գ) մասնավորապես այս խնդրում ինչպե՞ս են փոխհարաբերվում քաղաքացին, ընդհանուր իրավասության դատարանները, ժողովրդի պաշտպանի ինստիտուտը եւ սահմանադրական դատարանը:

Առաջին հարցն անմիջականորեն շաղկապվում է պետության ներսում մարդու եւ քաղաքացու սահմանադրական իրավունքների ու ազատությունների պաշտպանության երաշխիքների գործում ու ամբողջական համակարգի ստեղծման խնդրի հետ: Ամենից առաջ դա վերաբերում է օրենսդրական եւ ինստիտուցիոնալ երաշխիքներին:

Սարդու իրավունքների պաշտպանության հարցն ամենեւին չի սահմանափակվում սահմանադրորեն այդ իրավունքի ամրագրմամբ: Արդյո՞ք ստեղծվում են դրա համար բավարար օրենսդրական երաշխիքներ: Որքա՞ն է ամբողջական ու ավարտուն օրենսդրական դաշտը, հաղթահարվա՞ծ են, արդյոք, ներքին հակասությունները, կա՞ն բավարար երաշխիքներ օրենքների կիրարկման համար, ստեղծվե՞լ ու պատրա՞ստ են պետական ու ոչ պետական համապատասխան ինստիտուտներն այդ խնդիրները լուծելու համար: Այս հարցերի պատասխանները պետք է դասվեն պետական քաղաքականության առաջնայնությունների շարքին:

Պակաս կարելու չէ մարդու իրավունքների պաշտպանության սահմանադրական վերահսկողության ձեւի խնդիրը: Միջազգային պրակտիկայում կարելի է առանձնացնել մի քանի հիմնական մոտեցումներ: Պայմանականորեն դրանք նախ կարելի է բաժանել երկու խմբի՝ ուղղակի վերահսկողություն եւ անուղղակի վերահսկողություն: Առաջին խմբի տիպական օրինակ են այն

երկրները, որտեղ քաղաքացիներն առանց որեւէ նախապայմանի սահմանադրական դատարան դիմող սուբյեկտ են:

Երկրորդ խումբն իր հերթին կարելի է բաժանել երկու ենթախմբի. նախ. երբ մարդու եւ քաղաքացու սահմանադրական իրավունքի պաշտպանության հարցը կոնկրետ վերահսկողության շրջանակներում միջնորդավորված ձևով դառնում է սահմանադրական դատարանի քննության առարկա: Երկրորդ՝ երբ այս հարցը քննության առարկա է դառնում վերացական, ֆակուլտատիվ վերահսկողության ճանապարհով (այսպիսի օրինակ կարող են հանդիսանալ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումները Գերմանիայի, Եգիպտոսի, Վրաստանի հետ կնքված միջազգային պայմանագրերի առնչությամբ, որոնցում առանձին նորմեր ճանաչվեցին ՀՀ սահմանադրությանը չհամապատասխանող՝ հենց մարդու սահմանադրական իրավունքների պաշտպանության առումով):

Առաջին ենթախմբի լավագույն օրինակ է Իտալիան: Այստեղ քաղաքացին նախ պետք է հայցադիմում ներկայացնի ընդհանուր իրավասության դատարան: Եթե կողմերը կամ դրանցից մեկը գտնում են, որ հայցն առնչվում է նորմատիվ ակտի սահմանադրականության խնդրին, ապա դատավորը, եթե գտնում է (կամ կասկածում է), որ այդպես է, ապա ժամանակավորապես դադարեցնում է գործի քննությունը եւ դիմում սահմանադրական դատարան:

Գրեթե նմանատիպ համակարգ է գործում նաեւ Իսպանիայում: Ընդ որում, եթե Իտալիայում եւ Իսպանիայում այս իրավասությունն ունեն բոլոր դատարաններն, ապա Ավստրիայում, օրինակ, դրանից օգտվում են միայն երկրորդ աստիճանի եւ բարձրագույն դատական ատյանները: Այս դեպքերում գործ ունենք մասնակի կոնկրետ եւ մասնակի վերացական մի խառը համակարգի հետ:

Փաստորեն, սահմանադրական վերահսկողությունը մարդու իրավունքների բնագավառում կարող է հանդես գալ կամ որպես վերացական վերահսկողություն, կամ կոնկրետ գործերի քննության ընթացքում, ինչպես նաեւ անհատական դիմումների հիման վրա:

Վերջին չորս տասնամյակների փորձը վկայում է, որ անհատական դիմումների հիման վրա սահմանադրական վերահսկողությունը սովորաբար արմատավորվում է սահմանադրական դատարանների կազմավորումից որոշ ժամանակ հետո: Օրինակ, Ավստրիայում անհատական դիմումների հիման վրա սահմանադրական դատարանի կողմից քաղաքացու իրավունքների պաշտպանության կարգն արմատավորվեց միայն 1975 թվականից հետո: Այն հետագայում է արմատավորվել նաեւ Գերմանիայում, Իսպանիայում, Պորտուգալիայում: Սակայն այս հանգամանքը չի կարելի նաեւ բացարձակեցնել: Գլխավորն այն է, որ մարդու իրավունքների պաշտպանության հարցը ներկայումս դարձել է սահմանադրական արդարադատության առանցքային հարցերից մեկը, եւ այն հաջողությամբ կարելի է իրականացնել առաջին հերթին անհատական դիմումների հիման վրա: Ուստի, մեր կարծիքով ճիշտ վարվեցին այն նորանկախ երկրները, որոնք, առանց հապաղելու եւ ժամանակ կորցնելու, ստեղծեցին նման հնարավորություն:

Նշված երկրների փորձը վկայում է նաեւ, որ նման իրավասությունն արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ է հստակ օրենսդրական կարգավորում մտցնել: Սովորաբար գործում են, այսպես կոչված, զտիչների այնպիսի մեխանիզմներ, որոնք ապահովում են, մի կողմից մարդկանց համար սահմանադրական դատարան դիմելու մատչելիությունը, մյուս կողմից՝ դիմել այնպիսի հարցերով, որոնք իրավամբ սահմանադրականության խնդիր են բովանդակում<sup>39</sup>: Այդ նպատակով գործադրվում են. ընդհանուր իրավասության դատարանների հնարավորությունները (որպեսզի սահմանադրական դատարան դիմելու իրավունք ձեռք բերեն այլ հնարավորություններն սպառելուց հետո), դատարան դիմելու համար վճարի կարգը (օրինակ, Գերմանիայում 1985 թվականից այն կազմում է 1000 մարկ, իսկ այդ իրավունքի չարաշահման դեպքում՝ 5000 մարկ), նորմատիվ ակտերի շրջանակի սահմանումը (օրինակ, Ռուսաստանում կարող են դիմել միայն օրենքի սահմանադրականության հարցով), մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը (երբ վերջինս է դառնում սահմանադրական դատարան դիմող սուբյեկտ) եւ այլն:

Կարելու է նաեւ այն հարցը, թե տվյալ պարագայում ինչպիսի՞ն պետք է լինի սահմանադրական դատարանի որոշումը՝ համապարփա՞կ, թե՞ հարաբերական: Այս հարցում նույնպես հանդիպում ենք խիստ տարբեր մոտեցումների: Եթե Իսպանիայում եւ Իտալիայում այն հարաբերական բնույթ ունի, ապա Գերմանիայում համապարփակ է եւ այստեղ պահանջվում է, որպեսզի ընդհանուր իրավասության դատարանը սահմանադրական դատարան դիմի միայն նորմատիվ ակտի կամ տվյալ դրույթի Սահմանադրությանը չհամապատասխանելու հարցում համոզված լինելու դեպքում:

Սակայն այս հանգամանքը մարդու իրավունքների պաշտպանության սահմանադրական վերահսկողության հարցում արգելակող դեր չունի, քանի որ Գերմանիայում քաղաքացին կարող է նաև ուղղակի դիմել սահմանադրական դատարան:

Ընդհանրապես այս խնդրի առնչությամբ սահմանադրական վերահսկողության մարմինները կարելի է բաժանել 3 խմբի.

1. երբ յուրաքանչյուր անձ կարող է նորմատիվ ակտերի սահմանադրականության հարցով դիմել սահմանադրական դատարան (օրինակ, Ավստրիա, Գերմանիա, Ռուսաստան, Դոմինիկա, Սլովենիա, Վրաստան),
2. երբ կարող են դիմել միջնորդավորված՝ ընդհանուր իրավասության դատարանների կամ ժողովրդական պաշտպանի ինստիտուտի միջոցով (Իտալիա, Պորտուգալիա եւ բոլոր այն երկրները, որտեղ սահմանադրական վերահսկողությունն իրականացվում է ընդհանուր իրավասության դատարանների միջոցով),
3. երբ քաղաքացիներն ընդհանրապես զրկված են սահմանադրական դատարան դիմելու իրավունքից (Ֆրանսիա, Լեհաստան, Լատվիա, Ռումինիա, Դայաստան, Ուկրաինա, Մոլդովա):

Մի շարք երկրներում (մասնավորապես՝ Իսպանիայում, Պորտուգալիայում) քաղաքացիների այդ իրավունքն իրացվում է միջնորդավորված՝ օմբուդսմանի (մարդու իրավունքների պաշտպանի, կամ հաճախ անվանվում է՝ ժողովրդական պաշտպանի) ինստիտուտի միջոցով:

Մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում սահմանադրական վերահսկողությունն իրականացնում է երկակի ֆունկցիա: Մի կողմից, պաշտպանվում են մարդու եւ քաղաքացու սահմանադրորեն ամրագրված անհատական իրավունքները, մյուս կողմից՝ վերահսկվում է այս հարցում պետական իշխանության մարմինների պարտականությունների կատարումը եւ վերաբերմունք է դրսևորվում դրա նկատմամբ: Այս հանգամանքի թերագնահատումը եւ սահմանադրական դատարանին այդ իրավասությունից ու պարտականությունից զրկելը միարժեք ենթադրում է խնդիրը դարձնել անլուծելի եւ պետության ներսում չունենալ մարդու իրավունքների պաշտպանության ամբողջական ու գործուն համակարգ:

Սահմանադրական վերահսկողության պրակտիկայում միշտ բանավեճային բնույթ է կրում այն հարցը, թե սահմանադրական ի՞նչ նորմերի շրջանակներում է գերադասելի անհատական դիմումների հնարավորությունը, կամ արդյո՞ք անհրաժեշտ են սահմանափակումներ, գտիչների ինչ - որ մեխանիզմներ: Ուսումնասիրությունները հանգեցնում են այն հետեւությանը, որ առավել հիմնավորված է մարդու եւ քաղաքացու Սահմանադրորեն ամրագրված հիմնական իրավունքների ու ազատությունների շրջանակով սահմանափակվելը: Դայաստանի պարագայում դա վերաբերում է սահմանադրության երկրորդ գլխին: Նման մոտեցումը հնարավորություն է ընձեռում առավել առարկայական ու արդյունավետ դարձնել սահմանադրական վերահսկողությունը, ինչպես նաև հստակություն մտցնել թե դատական իշխանության եւ թե իշխանության այլ համակարգերի ինստիտուտների գործառնական փոխհարաբերություններում:

Կարելու է նաև այն հարցը, թե ի՞նչ նորմատիվ ակտերի վրա է տարածվում վերահսկողությունը: Այստեղ նույնպես կան էական տարբերություններ: Օրինակ, Ավստրիայում, Գերմանիայում, Սլովենիայում եւ մի շարք այլ երկրներում որեւէ սահմանափակում չի դրվում, եւ ցանկացած նորմատիվ ակտ սույն խնդրի առնչությամբ կարող է սահմանադրական վերահսկողության օբյեկտ դառնալ: Սակայն Իտալիայում, Իսպանիայում, Ռուսաստանում այն տարածվում է միայն օրենքների եւ օրենքի ուժ ունեցող նորմատիվ ակտերի վրա: Իսկ, օրինակ, Ավստրիայում, Խորվաթիայում եւ այլուր, վերահսկողությունը տարածվում է նաև գործադիր իշխանությունների կողմից ընդունված ենթաօրենսդրական ակտերի վրա: Մեր կարծիքով, կարելի է անել այն հետեւությունը, որ անցման շրջանում գտնվող երկրների համար, քանի դեռ մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքների հստակ ու գործուն համակարգ չի ձևավորված, իսկ օրենսդրական դաշտն ունի ներքին բազմաթիվ անհամաձայնություններ ու հակասություններ, նախապատվությունը պետք է տրվի նորմատիվ ակտերի շրջանակը չսահմանափակելուն:

Տարբեր երկրներում մարդու իրավունքների պաշտպանության սահմանադրական վերահսկողության բազմաբնույթ առանձնահատկությունների հետ մեկտեղ կա գրեթե համընդհանուր ճանաչում գտած ճշմարտություն: Դա այն է, որ մարդու եւ քաղաքացու իրավունքների ու ազատությունների ոտնահարումը կանխելու, օրենսդրության մեջ նման հնարավորությունը բացառելու արդյունավետ եւ



գործուն ճանապարհին այս հարցով սահմանադրական դատարան դիմող սուբյեկտների շրջանակի հնարավոր ընդլայնումն է:

## X. ԱՄՅԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒՅԹԸ

Սահմանադրական արդարադատության մարմինների որոշումների բնույթով է մեծապես պայմանավորված պետական իշխանության համակարգում նրանց տեղն ու դերը եւ Սահմանադրության գերակայությունն ապահովելու ներուժը:

Սահմանադրական դատարանի որոշումը, որպես կանոն, պարտադիր է կատարման համար եւ վերանայման ենթակա չէ: Սակայն որոշ երկրներում պաշտպանները կարող է վերանայել սահմանադրական դատարանի որոշումները (Լեհաստան, Նամիբիա, Ռումինիա, Էկվադոր, Եթովպիա): Լեհաստանում Սեյմը կարող է ձայների 2/3 -ով մերժել: Համանման վետոյի իրավունք ունի նաեւ Ռումինիայի պաշտպանները: Մոնղոլիայում նույնպես պաշտպաններն ունի վետոյի իրավունք, Ղազախստանում՝ Նախագահը (Մոնղոլիայում եթե բարձրագույն պետական խորալը մերժում է , դատարանը նորից է անդրադառնում եւ ընդունում վերջնական որոշում (Ս. 66 հոդված), Ղազախստանում Նախագահի վետոն հաղթահարվում է ձայների 2/3-ով):

Պարտադիր որոշումներն իրենց հերթին լինում են երկու կարգի՝ նախ. որ ունեն համընդհանուր բնույթ եւ պարտադիր են բոլորի համար եւ, երկրորդ՝ հարաբերական ներազդեցություն ունեն եւ վերաբերում են միայն տվյալ գործի հետ առնչվող իրավասուբյեկտներին:

Անհրաժեշտ է հատուկ կարեւորել սահմանադրական դատարանների որոշումների ներազդեցության հանգամանքը: Կցանկանայինք այս հարցը պարզաբանել երկու օրինակով: Նախ. Անդաշ Շայոյի այն ձեւակերպմամբ, որ արել է Հունգարիայի սահմանադրական դատարանի որոշումների առումով՝ սոցիալ-տնտեսական իրավունքների առնչությամբ: Բանաձեւումն հետեւյալն է.

« Սոցիալ- տնտեսական իրավունք + սահմանադրական դատարան = պետական սոցիալիզմի ռեցիդիվ»<sup>40</sup>: Հարցադրման ամբողջ իմաստն այն է, որ հատկապես նորանկախ երկրներում առանձնահատուկ կարեւորություն ու նոր երանգ է ստանում այն մարմնի որոշումը, որը խնդրին վերջնական լուծում է տալիս, եւ որ այդ որոշումը վերանայման ենթակա չէ: Տվյալ պարագայում, բացարձակեցնելով օրենքի տառը ( ընդ որում, նաեւ այն օրենքի, որն իր հիմնադրույթներով արդեն իսկ հակասության մեջ է նոր իրականության փիլիսոփայության եւ բարեփոխումների տրամաբանության հետ, սակայն, հաճախ նաեւ զուտ տեխնիկական պատճառներով, փոփոխությունների հերթը դրան չի հասել ), անուղղակի ձեւով թելադրվում է մի մտտեցում, որն իր հիմքում հակասության մեջ է մտնում հասարակական հարաբերությունների վերափոխումների գործընթացի եւ սահմանադրորեն ամրագրված նոր հարաբերությունների բնույթի հետ: Այս խնդիրը, ցավոք, քիչ է ուսումնասիրված եւ անհրաժեշտ խորությամբ չի արտացոլված նորանկախ երկրների սահմանադրական արդարադատության մարմինների մասին ընդունված օրենքներում: Նման իրավիճակը հաճախ կարող է հանգեցնել նաեւ ծայրահեղ եւ ոչ ճիշտ լուծումների: Օրինակ, Հունգարիայի նոր Սահմանադրության նախագծով, վիճակից ելք գտնելու համար, նախատեսվում է վերացնել քաղաքացիների՝ սահմանադրական դատարան անմիջական դիմելու իրավունքը: Նման մտտեցմանն իր վերաբերմունքն արտահայտեց Եվրախորհրդի

« Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով » Վենետիկի հանձնաժողովն իր 1997թ. մարտի 7-ի նիստում, որին մասնակցում էր նաեւ ՀՀ սահմանադրական դատարանի պատվիրակությունը, եւ այդ քայլը համարվեց անթույլատրելի ու լուրջ նահանջ:

Կցանկանայինք բերել նաեւ երկրորդ օրինակը: Այն վերաբերում է Ռուսաստանի Դաշնության սահմանադրական դատարանի 1997թ. փետրվարի 18 -ի որոշմանը՝ կառավարության 1995 թ. փետրվարի 28 -ի թիվ 197 որոշման սահմանադրականության վերաբերյալ<sup>41</sup>: Բանն այն է, որ սահմանադրական դատարանը, համոզված լինելով, որ կառավարության որոշումը բովանդակում է Սահմանադրությանը չհամապատասխանող նորմեր, նույնքան համոզված էր նաեւ, որ այդ որոշման գործողության անմիջական կասեցումն իր հերթին ( կապված բյուջեի եկամտային մասի սպասվելիք փոփոխությունների հետ ), կարող է առաջ բերել հակասահմանադրական իրավիճակ: Սահմանադրական դատարանը ելքը տեսել է նրանում, որ կառավարության որոշումն ուժը կորցրած է ճանաչվում սահմանադրական դատարանի որոշման ուժի մեջ մտնելուց վեց ամիս հետո: Նման

որոշումը կարելի է, թերևս, համարել նաև փոխզիջողական եւ տիպական՝ հատկապես անցման փուլի համար: Սակայն մեր շեշտադրումը վերաբերում է այն բանին, որ սահմանադրական դատարանները կամա թե ակամա անհրաժեշտ ուշադրություն պետք է դարձնեն նաև իրենց որոշումների հնարավոր հետեւանքներին ու հասարակական գործընթացների վրա դրանց ուղղակի եւ ածանցյալ ազդեցություններին:

Միջազգային պրակտիկայում փորձ է կատարվում օգնել նորանկախ երկրների սահմանադրական դատարաններին՝ կայացման եւ հատկապես անցումային փուլի խնդիրներին ճիշտ լուծումներ տալու հարցում: Հսկայական փորձ է կուտակել այս առումով Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովը ( ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով ), որը տարբեր երկրներում կազմակերպում է սահմանադրական վերահսկողության հիմնահարցերին նվիրված սեմինարներ, օրենքների, դրանց նախագծերի փորձաքննություն, պրոբլեմային քննարկումներ եւ այլն: Սակայն անախադեպ էր Հանձնաժողովի 1997թ. մարտի 7-ի նիստում ընդունած որոշումը: Հարցը վերաբերում էր Խորվաթիայի սահմանադրական դատարանին: Որոշման էությունն այն էր, որ Եվրախորհուրդը Խորվաթիայի սահմանադրական դատարանի կողմից ներկայացրած 3 եւ Վենետիկի հանձնաժողովի կողմից ներկայացրած 3 թեկնածուներից ընտրում է երկուսին եւ որպես մշտական դատորդ է նշանակում Խորվաթիայի սահմանադրական դատարանում: Դատորդներին իրավունք է տրվում մինչեւ որոշման ընդունումը կարծիք արտահայտել, իսկ որոշումն ընդունելուց հետո՝ հանդես գալ գրավոր հատուկ կարծիքով: Չանդրադառնալով հարցի մանրամասներին, հատկապես այն հանգամանքին, որ սա շատ վտանգավոր նախադեպ է ու կարող է քաղաքական գործոն դառնալ, կցանկանայինք միայն շեշտել, որ ճգնաժամային իրավիճակներում եւ համակարգային վերափոխումների խնդիրները լուծելիս սահմանադրական վերահսկողությունն ավելի է կարելուրվում, իսկ որոշումները կարող են լինել բախտորոշ, եւ պահանջում են զգույշ ու հավասարակշիռ մոտեցում:

Հաճախ նաև կարծիք է հայտնվում, որ անցման շրջանի համար սահմանադրական նորմերը նույնպես պետք է ունենան ժամանակավոր բնույթ եւ չկաշկանդեն հատկապես տնտեսական բնագավառում ակտիվ բարեփոխումների իրականացմանը<sup>42</sup>: Բնականաբար, նման իրավիճակները դժվարացնում են սահմանադրական դատարանների խնդիրը եւ նոր երանգներ են հաղորդում Սահմանադրության տառին կամ ոգուն նախապատվություն տալու հին բանավեճին: Մեր կարծիքով, առաջնային է դառնում սահմանադրական դատարանների հարաբերականորեն «անկաշկանդ » գործունեության ապահովման եւ Սահմանադրության մեկնաբանության ուղղակի իրավասություն ունենալու հարցը: Սակայն, տվյալ պարագայում պետք է բացառվի դատարանի կողմից իր նախաձեռնությամբ որեւէ հարցով գործ քննելու եւ որոշում կայացնելու հնարավորությունը: Հակառակ պարագայում լրիվ կարողարացվի ֆրանսիացի իրավագետ Լեշարյերի արտահայտությունն այն մասին, որ « Սահմանադրական խորհուրդը ֆրանսիական սահմանադրական իրավունքի ամենից ավելի ծիծաղելի էջն է: Անգամ առավել պահպանողական խենթերը չէին կարող հնարել վետոյի իրավունք եւ այն վերապահել բարեհաճ հովանավորչության շնորհիվ կամայականորեն ընտրված ու նշանակված՝ ոչ-ոքի առջեւ պատասխանատվություն չկրող ինը պարոնների»<sup>43</sup>: Մեր կարծիքով չպետք է ընկնել նաև նման ծայրահեղությունների մեջ եւ հաշվի պետք է առնել, որ նույնիսկ օրինաստեղծ աշխատանքի նկատմամբ սահմանադրական վերահսկողությունը հանդես է գալիս սոսկ որպես ժողովրդի ինքնիշխանությունն ապահովելու միջոց:

Սահմանադրական վերահսկողության պրակտիկայում չափազանց մեծ նշանակություն ունի դատարանի կողմից որոշում կայացնելու ժամանակամիջոցի կարգավորման խնդիրը: Ինչպես արդեն նշել ենք, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի առաջին մասով միանշանակ սահմանված է. որ

« Սահմանադրական դատարանը ընդունում է որոշումներ եւ եզրակացություններ՝ դիմում ստանալուց ոչ ուշ, քան երեսուն օր հետո »: Նման շրջանակներում է գործում նաև Ֆրանսիայի սահմանադրական խորհուրդը: Սակայն Ֆրանսիայի պարագայում դա հնարավոր է դառնում այն պատճառով, որ վերահսկողություն իրականացվում է հիմնականում գրավոր սկզբունքով, չկա մրցակցային դատավարություն, որոշումը կայացվում է դեմփակ քննարկումների արդյունքով: Բոլոր այն երկրներում, որտեղ որոշումը կայացվում է կողմերի մասնակցությամբ եւ դատավարության արդյունքով, որպես կանոն, ժամկետային նման խիստ սահմանափակումներ չեն դրվում: Կան նաև ծայրահեղ օրինակներ, երբ, ասենք, ԱՄՆ -ի Գերագույն դատարանը որոշում կայացրել է գործի քննությունից մի քանի տարի հետո: Տիրապետող եւ, թերևս, ճիշտ մոտեցումն այն է, երբ ժամկետի որոշման հարցում սահմանադրական դատարանին որոշակի ինքնուրույնություն է տրվում: Նման դեպքերում գործնականում միջին ժամկետը տատանվում է 5-6 ամսվա շրջանակում: Դա է վկայում Իտալիայի, Գերմանիայի, Սլովակիայի, Սլովենիայի, Հունգարիայի եւ մի շարք այլ երկրների փորձը:

Կարելու է նաև տարբերակում մտցնել առանձին լիազորություններն իրականացնելիս: Օրինակ, Հայաստանն այն ոչ մեծ թվով երկրներից մեկն է, որտեղ սահմանադրական դատարանին տրված է

պատգամավորների ընտրությունների արդյունքների հետ կապված վեճերը լուծելու իրավասություն (ՀՀ Սահմանադրություն, հոդված 100, կետ 3): Միաժամանակ դատարանը որոշում պետք է կայացնի բանավոր քննությամբ, դմբաց նիստում, լրիվ կազմով ( ապահովելով քվորում ) եւ 30 օրվա ընթացքում: Տեսականորեն չի բացառվում, որ առաջիկա ընտրություններից հետո միաժամանակ սահմանադրական դատարան դիմեն պատգամավորության բազմաթիվ թեկնածուներ: Անխուսափելիորեն կան առաջանալու է փակուղային վիճակ, կան դատարանը դրսևորելու է խիստ ձեւական մոտեցում, որը բացասաբար կանդրադառնա նրա հեղինակության վրա: Սրանք հարցեր են, որոնք, մեր պարագայում, ընդհուպ սահմանադրական հստակեցման կարիք ունեն:

## XI. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

Այս հարցը սահմանադրական արդարադատության առանցքային հարցերից մեկն է, որի լուծումը, սակայն, յուրաքանչյուր երկիր գտել է յուրովի:

Ի՞նչ ընդհանրություններ ու առանձնահատկություններ կան սահմանադրական վերահսկողության ամբողջ համակարգի անկախ եւ անաչառ գործունեությունն ապահովելու հարցում: Նախ՝ ընդհանրությունների մասին: Վերջիններիս թվին կարելի է դասել.

- սահմանադրական վերահսկողության հատուկ մարմնի առկայությունը (եվրոպական գրեթե բոլոր երկրներում ընդունված է, որ սահմանադրական դատարանը յուրովի դարձել է Սահմանադրության կենդանի վկայությունը եւ վեր է քաղաքական կոնյունկտուրայից),
- բոլոր երկրներում սահմանադրությամբ եւ օրենքներով ամրագրվում է, որ սահմանադրական վերահսկողության մարմիններն անկախ են եւ ենթարկվում են միայն Սահմանադրությանը, իսկ նրանց գործունեությունը կարգավորվում է հատուկ օրենքով,
- սահմանադրական վերահսկողության մարմնի բոլոր անդամները նշանակվում կան ընտրվում են իշխանության տարբեր թեւերի կողմից, նրանք իրենց պարտականություններն ստանձնելուց առաջ երդվում են, անձեռնմխելի են, իրենց պարտականությունների կատարումից կարող են ազատվել միայն օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում, ընտրության ( նշանակման ) ժամանակ նրանց ներկայացվում են որոշակի պահանջներ,
- այս իրավասությունն իրականացնողների համար Սահմանադրությամբ նախատեսվում է գործունեության ավելի մեծ ժամանակահատված, քան նախատեսված է այս մարմնը ձեւավորող իշխանության մյուս թեւերի համար: Որպես հավելյալ երաշխիք, շատ երկրներում կիրառվում է նաեւ անփոփոխելիության սկզբունքը,
- սահմանադրական վերահսկողության մարմնի անդամին օրենքով արգելվում է լինել որեւէ կուսակցության անդամ, զբաղվել քաղաքական գործունեությամբ ( մասամբ՝ նաեւ հասարակական գործունեությամբ ), կատարել այլ վճարովի աշխատանք, տեղ զբաղեցնել պառլամենտում կամ գործադիր իշխանության համակարգում,
- որպես կանոն, այս մարմնի որոշումը վերջնական է, հիմնականում վերանայման ենթակա չէ,
- վերացական վերահսկողություն իրականացնելիս սահմանադրությամբ նախատեսվում է դիմող սուբյեկտների այնպիսի շրջանակ, որպեսզի դատարանի գործունեությունը կախվածության մեջ չդրվի իշխանության որեւէ թեւից: Պարտադիր վերահսկողության պարագայում՝ օրենքով հստակ սահմանվում է վերահսկման օբյեկտների շրջանակը եւ վերահսկման կարգը,
- սահմանադրական վերահսկողության մարմիններն ունեն գործունեության կազմակերպման, ֆինանսական միջոցների տնօրինման, աշխատակազմի հետ տարվող աշխատանքի՝ օրենքով սահմանված որոշակի ինքնուրույնություն,

-անկախության ապահովման կարելու գործն է նաև գործունեության հրապարակայնության ապահովումը:

Նշվածներից բացի կան նաև մի շարք առանձնահատուկ հանգամանքներ, որոնք տարբեր երկրներում լրացուցիչ երաշխիքներ են ստեղծում սահմանադրական անկախ վերահսկողություն իրականացնելու համար: Այս ուսումնասիրության շրջանակներում բերված են օրինակներ, երբ, ասենք, սահմանադրական դատարանն ինքը դառնում է սահմանադրական վերահսկողության սուբյեկտ, նրան վերապահվում է օրենսդրական նախաձեռնության իրավունք, ինչպես նաև սահմանադրական փոփոխությունները դառնում են նախնական պարտադիր վերահսկողության օբյեկտ: Կան նաև երկրներ, որտեղ ամբողջ դատական համակարգի անկախությունն ապահովելու նպատակով վերջինիս նկատմամբ վերահսկողության որոշակի լիազորություններ վերապահվում են սահմանադրական դատարանին:

## XII. ՍԱՐՅԱՆԱԴՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀԵՏԱԳԱ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Սահմանադրական վերահսկողության համեմատական վերլուծությունը հնարավորություն է տալիս նախ՝ բացահայտել այն ընդհանուրն ու անհրաժեշտը, առանց որի այս համակարգերը կղադարեն որպես այդպիսին գոյություն ունենալուց: Երկրորդ՝ վեր հանել կոնկրետ երկրների սահմանադրական վերահսկողության առանձնահատկություններն ու բնորոշ գծերը, որոնք կարող են ուսանելի ու օգտակար լինել մյուս երկրների համար: Երրորդ, որը կցանկանայինք հատուկ նշել, անհրաժեշտություն է առաջանում իմի բերել սահմանադրական վերահսկողության համակարգերի պատմական զարգացման դասերը՝ որպես հասարակության կայուն առաջընթացի ապահովման կարելու պայման:

Ուստի, սահմանադրական վերահսկողության համակարգերի հետագա զարգացման միտումներն ամփոփ ներկայացնելուց առաջ, արդեն իսկ կատարած վերլուծության շրջանակներում փորձենք անել մի շարք ընդհանրացումներ:

Միջազգային փորձը, օրենքի սահմանադրականության ապահովման երկու համակարգերի զարգացման դիալեկտիկան, անցումային փուլի առանձնահատկություններից բխող նոր խնդիրներն ու դրանց լուծման տրամաբանությունը վկայում են, որ, պայմանականորեն, պատմական էվոլյուցիայի հիմնական դասերը հանգում են հետևյալներին.

1. 20-րդ դարի սկզբին ստեղծվեցին օբյեկտիվ նախադրյալներ սահմանադրական վերահսկողության որակապես նոր համակարգի անցնելու համար: Դրանք առաջին հերթին վերաբերում էին հասարակական հարաբերությունների որակական ակտիվ վերափոխումներին՝ ընդհուպ համակարգային փոփոխություններին, ինչպես նաև միաժամանակ մի շարք երկրներում հասարակական կառավարման էքստրեմալ իրավիճակների առաջացմանը,
2. օրենքի սահմանադրականության ապահովման խնդիրը դադարեց միայն, կամ առավելապես մարդու իրավունքների պաշտպանության խնդիր լինելուց: Առաջին պլան մղվեց հասարակական կայունության ապահովմանն ու զարգացմանը կայուն դինամիզմ հաղորդելու եւ այդ գործում պետական իշխանության բոլոր մարմիններին, ինչպես նաև քաղաքացիներին ակտիվ ու փոխհամաձայնեցված մասնակից դարձնելու խնդիրը,
3. որակապես նոր բնույթ ստացավ մարդու իրավունքների պաշտպանության ներպետական մեխանիզմների ձեւավորման խնդիրը, որտեղ առանձնահատուկ տեղ հատկացվեց սահմանադրական վերահսկողության մասնագիտացված ինստիտուտներին,
4. առավել եւս անցումային ու էքստրեմալ իրավիճակներում կարելուվում է ոչ այնքան հետեւանքների հաղթահարումը, որքան բացասական երեւույթների կանխակայունը եւ հնարավոր վնասը նվազագույնի հասցնելը: Այս առումով չափազանց կարելու էր նախնական վերահսկողության համակարգի արմատավորումը, որն անհամատեղելի է սահմանադրական վերահսկողության ամերիկյան մոդելին,

5. հատկապես անցումային փուլում գտնվող երկրների համար սահմանադրական վերահսկողության մասնագիտացված համակարգն ստեղծում է առավելագույն հնարավորություններ՝ գտնելու քաղաքական անհամաձայնությունների իրավական լուծումներ: Փաստորեն, ստեղծվում է իրական հնարավորություն փակուղային բոլոր իրավիճակներից իրավական, սահմանադրական ելք գտնելու համար ,

6. նոր համակարգերի կողմից օրենքի սահմանադրականության հարցի որոշումը փոխեց նաև մոտեցման մեթոդաբանությունը՝ խնդիրն իրավակիրառական հարթությունից տեղափոխվեց հասարակական կառավարման հարթություն,

7. մասնագիտացված համակարգերի ձեւավորումը հնարավորություն տվեց համալիր մոտեցում դրսևերել օրենքի սահմանադրականության ապահովման խնդրին՝ ոչ միայն սահմանադրականության հարցը քննության առարկա դարձնելով օրենքի մշակման, ընդունման եւ կիրառման բոլոր փուլերում, այլեւ հաստատելով լայն ժողովրդավարություն, էապես ընդլայնելով սահմանադրական վերահսկողության սուբյեկտների եւ այդ նպատակով սահմանադրական դատարան դիմողների ցանկը,

8. սահմանադրական դատարանների մասնագիտացված համակարգը էապես մեծացրեց սահմանադրական վերահսկողության ներադրեցությունն օրենսդրական համակարգի բարելավման, ընդհուպ սահմանադրական լուծումների հետագա կատարելագործման գործում,

9. ստեղծվեց ավելի մեծ հնարավորություն պահպանելու իշխանությունների տարանջատման հաշվեկշիռը, արդյունավետ գործադրելու զսպունների ու հակակշիռների մեխանիզմը: Այս խնդրի լուծմանը էապես նպաստող հանգամանքներից կցանկանայինք առանձնացնել հատկապես պաշտամենտի պալատների կանոնակարգերի նկատմամբ սահմանադրական նախնական վերահսկողության պրակտիկան, սահմանադրական վերահսկողության հարցում պաշտամենտական փոքրամասնությանն ընձեռնող հնարավորությունը, սահմանադրական դատարանների վերահսկիչ ֆունկցիան նախագահական ընտրությունների եւ կուսակցությունների գործունեության սահմանադրականության նկատմամբ, ինչպես նաև սահմանադրական վերահսկողության մարմինների միջոցով պետական իշխանության տարբեր մարմինների միջեւ առաջացած անհամաձայնությունների լուծման հնարավորությունը եւ այլն,

10. թերեւս կարելու դաս է, մեր կարծիքով, նաև այն, որ շատ երկրներում սահմանադրական վերահսկողության մարմիններն սկսեցին ծանրաբեռնվել իրենց գործառական դերին ոչ բնորոշ լիազորություններով, ինչը հաճախ բացասաբար է անդրադառնում դրանց գործունեության արդյունավետության վրա,

11. որպես կարելու հետեւություն կցանկանայինք առանձնացնել նաև այն, որ սահմանադրական վերահսկողության մարմինների հետեւողական ու արդյունավետ աշխատանք կարելի է ակնկալել այնտեղ եւ այն դեպքում, որտեղ եւ երբ այդ համակարգի ձեւավորմանը ցուցաբերվում է համալիր մոտեցում, նախապես հստակ որոշվում ու սահմանադրության մեջ ամրագրվում է լիազորությունների ամբողջությունն ու դրանց իրականացման ռեալ նախադրյալները: Տվյալ դեպքում մոտեցումը չպետք է թելադրված լինի այդ պահին բնորոշ այս կամ այն քաղաքական նկատառումով, այլ իր հիմքում պետք է ունենա համակարգային կառավարման մեթոդաբանությամբ առաջադրվող պահանջները: Անկախ քաղաքական իրավիճակի փոփոխությունից, պետք է երաշխավորված լինի սահմանադրական վերահսկողության մարմնի անձեռնմխելիությունն ու անկախ գործունեությունը: Դա հատկապես կարելու է անցման շրջանում, ու դրա մասին են վկայում Ռուսաստանի Դաշնության ու Բելառուսի դեպքերը: Այս խնդիրը թելադրում է նաև սահմանադրական դատարանների միջազգային համագործակցության էական բարելավման պահանջ,

12. բացառիկ կարելու նշանակություն ունի այն իրողության գիտակցումը, որ ցանկացած հասարակություն, այդ թվում նախասահմանադրական շրջանում, ունեցել է հասարակության կենսագոյի գրված ու չգրված կանոններ, ինչպես նաև դրանց պահպանության ու իշխանությունների նկատմամբ վերահսկողության (կամ արգելակների) ամբողջական համակարգ: Դրա կարելու բաղադրիչներն են եղել հավատը ( եկեղեցին ), բարոյական վարքագծի նորմերը, ավանդույթները (հասարակական, ընտանեկան), մեծ կամ փոքր համակարգի առանձնահատկություններով պայմանավորված վարքի կանոնները, սովորույթային իրավունքը, իրավական նորմերը եւ այլն: Խնդիրն այն է, որ սահմանադրական վերահսկողությունը ոչ թե հակադրվի, այլ ներդաշնակվի այս ամենին: Իսկ դա նշանակում է, որ

յուրաքանչյուր երկրում, իր բազում առանձնահատկությունների հիման վրա, պետք է վեր հանվեն ու ներդաշնակվեն բոլոր բաղադրամասերը: Հետեւությունը նաեւ այն է, որ անձնակենտրոն համակարգերում երբեք մույն կանոնները չեն կարող գործել, ինչ՝ ազգակենտրոն համակարգերում:

Տրամաբանական հարց է առաջանում, թե որո՞նք են սահմանադրական վերահսկողության գործող համակարգերի հետագա զարգացման հիմնական միտումները եւ դրանք ի՞նչ նոր խնդիրներ ու մոտեցումներ են թելադրում նորանկախ երկրներին:

Այս առումով կցանկանայինք կատարել հետեւյալ շեշտադրումները.

1. սահմանադրական վերահսկողության հատուկ կամ մասնագիտացված մարմինները դառնում են պետական իշխանության համակարգի կարեւոր, հավասարակշռություն, կայունություն, օրենքի գերակայություն ապահովող, ժողովրդավարության հաստատմանն ու խորացմանը նպաստող բացառիկ կարեւորության ինստիտուտներից մեկը,

2. գործող համակարգերի զարգացումն ընթանում է կազմակերպման ձեւերի կատարելագործման, լիազորությունների հստակեցման ու ամբողջականացման, վերահսկողության սկզբունքների, ձեւերի ու մեթոդների բարելավման, դիմող սուբյեկտների ցանկի ընդլայնման, վերահսկողության օբյեկտների որոշարկման, նախնական վերահսկողության դերի բարձրացման եւ մի շարք այլ ուղղություններով:

Անհրաժեշտ է ընդգծել, որ շատ կարեւոր է նախնական ու հետագա վերահսկողության ճիշտ հաշվեկշիռի հաստատումը, ինչպես նաեւ պարտադիր ու ֆակուլտատիվ վերահսկողության խելամիտ ներդաշնակումը, եւ այս ուղղությամբ տարբեր երկրներ շարունակում են փնտրել ռացիոնալ լուծումներ,

3. օրենքի սահմանադրականության հարցի որոշման գործում բացառիկ կարեւորություն է ներկայացնում սահմանադրական վերահսկողության մարմինների կողմից ընդունվող որոշումների բնույթը: Մեր կարծիքով, այս հարցին պետք է ցուցաբերել տարբերակված մոտեցում՝ ըստ իրավական ակտի տեսակի եւ ըստ վերահսկողության ձեւի սահմանելով որոշման իրավական հետեւանքների ու դրա իրացման ամբողջական մեխանիզմ,

4. գնալով ավելի է կարեւորվում լիազորությունների հարցով իշխանությունների միջեւ առաջացած վեճերի լուծման եւ այդ ուղղությամբ սահմանադրական դատարանների կողմից իրականացվող կանխարգելիչ քայլերի դերն ու նշանակությունը,

5. սահմանադրական վերահսկողության համակարգն անկատար է ու թերի այնքան ժամանակ, քանի դեռ մարդու իրավունքների պաշտպանության վերահսկողությունը չի դարձել այդ համակարգի անքակտելի մասը: Բոլոր այն երկրները, որոնք ձգտում են հասարակական զարգացմանը կայունություն եւ թափ հաղորդել, ուր գիտակցվել է քաղաքացիական հասարակության ձեւավորման անհրաժեշտությունը, որտեղ կարեւորվում է հասարակության ստեղծագործական ներուժի խելամիտ օգտագործման խնդիրը, ձգտում են ամրապնդել մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության երաշխիքները՝ նաեւ հարցը սահմանադրական վերահսկողության առարկա դարձնելու ճանապարհով:

Նորանկախ երկրների համար կարեւոր է, որ ժողովրդավարական հաստատուն ավանդույթներ ունեցող եվրոպական զարգացած երկրներում նույնպես սահմանադրական վերահսկողության ինստիտուտները կազմավորվել են վերջին տասնամյակների ընթացքում, հետեւաբար, կարելի է առավել ակտիվ ձեւով հաշվի առնել նրանց փորձը՝ խուսափել սեփական սխալները անընդհատ շտկելու ճանապարհով առաջ գնալուց:

**XIII. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Սահմանադրական վերահսկողության միջազգային փորձի ուսումնասիրումը հանգեցնում է այն հետեւությանը, որ Հայաստանի Հանրապետությունում այս համակարգը դեռեւս զարգացման լուրջ ճանապարհ պետք է անցնի:

Հայաստանը այն երկրներից է, որտեղ, նախ՝ սահմանափակված է դատարանի գործունեության ոլորտը: Սահմանադրական մակարդակով անհրաժեշտ ուշադրություն չի դարձվել լիազորությունների հարցով իշխանության մարմինների միջեւ առաջացած վեճերի լուծման խնդրին: Թույլ է համակարգային մոտեցումը իշխանության ամբողջ ինստիտուցիոնալ համակարգում: Այսօր Հայաստանն այն բացառություններից մեկն է, որտեղ ընդհանրապես բացակայում է որեւէ գործառական փոխհարաբերություն սահմանադրական դատարանի եւ դատական համակարգի մյուս մարմինների միջեւ:

Մեծապես կարելու է ժողովրդավարությունը որպես մեր երկրի զարգացման համար այլընտրանք չունեցող ուղի, Հայաստանում միաժամանակ վերահսկողական անհրաժեշտ երաշխիքներ չեն ստեղծվել մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում: Առանց վարանելու պետք է ասել, որ այս հարցը սահմանադրական վերահսկողության համակարգից արհեստականորեն կտրելը պատմականորեն երբեք չի արդարացվելու:

Հայաստանի սահմանադրական վերահսկողության համակարգին բնորոշ են նաեւ մի շարք, այսպես կոչված, կիսալուծումներ, որոնք ամբողջականացման ու շտկման անհրաժեշտություն ունեն: Բարդությունն այն է, որ դրանց մի զգալի մասն անմիջականորեն առնչվում է սահմանադրական լուծումների հետ: Այսուհանդերձ, մենք կանդորադառնանք դրանց մի մասին, որոնց նմանօրինակ խնդիրներն ուսումնասիրված երկրների մեծ մասում ժամանակի ընթացքում հաջողությամբ լուծվել են:

Նախ, Հայաստանում անտեղի բացարձակեցվել է սահմանադրական դատարանում գործերի քննության բանավորության սկզբունքը: Այսօր դժվար թե գտնվի երկրորդ մի երկիր, որտեղ ցանկացած հարց սահմանադրական դատարանում քննվում է միայն դռնբաց ու բանավորության կարգով: Հակառակը, սովորաբար գերակայում է գրավոր քննությունը, կամ դատարանին է թողնված քննության ձեւի ընտրության իրավունքը: Հատկապես դա վերաբերում է անհատական դիմումներին, միջազգային պայմանագրերին, ինչպես նաեւ նախնական վերահսկողության օբյեկտ հանդիսացող ակտերից մեծ մասին:

Այս հարցն անմիջականորեն առնչվում է նաեւ գործերի քննության կարգի հետ: Երկրների մեծ մասում, որտեղ նաեւ սահմանադրական դատարանները միապալատ են, իրավունք է վերապահված դատարանին առանձին գործեր քննել 3 կամ 5 անդամի կազմով: Լավագույն օրինակները մեկը Հունգարիան է, որի սահմանադրական դատարանում 3 դատավորի կազմով իրականացվում է քննություն եւ կայացվում որոշում: Բնականաբար, նման դեպքերում սահմանվում են նաեւ ներքին վերահսկման մեխանիզմներ: Սակայն այնպիսի փակուղային իրավիճակների հնարավորություն, ինչպիսին կարող է տեղի ունենալ Հայաստանում պատգամավորների ընտրությունների ժամանակ, ուղղակի բացառվում է:

Երկրորդ՝ Հայաստանը դարձյալ այն եզակի երկրներից է, որտեղ սահմանադրական դատարանների հիմնական լիազորություններից մեկը՝ Սահմանադրության պաշտոնական մեկնաբանման հարցը, մեր կարծիքով, չափազանց խրթին ու անհստակ է լուծված: Այն պարագայում, երբ չկա նաեւ լիազորությունների հարցերով առաջացած վեճերի լուծման հստակ մեխանիզմ, նման վիճակը, ժողովրդավարության խորացմանը զուգընթաց, ավելի մեծ չափով է իրեն զգացնել տալու, կամ, վատագույն դրսևորման մեջ, ուղղակիորեն կարող է դառնալ ժողովրդավարական գործընթացների խոչընդոտ:

Երրորդ՝ չնայած խիստ սահմանափակ են սահմանադրական վերահսկողության օբյեկտները, դրա հետ մեկտեղ հստակություն չկա հատկապես Ազգային ժողովի կողմից ընդունված, սակայն Նախագահի կողմից դեռեւս չստորագրված օրենքների սահմանադրական վերահսկողության հարցում: Այս խնդրի լուծման լավագույն օրինակ են տալիս Ֆրանսիան, Լեհաստանը, Էստոնիան, Ռուսիան եւ այլ երկրներ: Հայաստանում տեսականորեն հնարավոր է նման վերահսկողություն: Սակայն գործնականում անհնարին է՝ մի շարք պատճառներով եւ, ամենից առաջ նրանով, որ սահմանադրորեն նման պարագաներում չի հստակեցված Ազգային ժողով - Նախագահ- սահմանադրական դատարան փոխհարաբերություններն ու օրենքի ստորագրման ժամկետների հետ կապված հարցերը:

Չորրորդ՝ պետությունների սահմանադրական պրակտիկայում քիչ են դեպքերը, երբ նորմերի անհամաձայնեցվածությունը գործնականում առաջացնի փակուղային իրավիճակ: Նման վիճակում հայտնվեց Հայաստանը նախագահական ընտրությունների առնչությամբ: Երկար խոսակցությունների

առիթ տվեց, մասնավորապես, այն հարցը, որ օրենքով սահմանված ժամկետային անախրոնիզմի հետեւանքով դեռեւս սահմանադրական դատարանի կողմից ընտրությունների հարցով գործի քննությունը չավարտված Նախագահը պարտավոր էր երդվել եւ ստանձնել իր պարտականությունների կատարումը: Սակայն, ինչպես ասում են, ամեն ինչ դեռ դրանով չի վերջանում: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 51 հոդվածով սահմանվում է, որ եթե քվեարկվել է երկուսից ավելի թեկնածու եւ նրանցից որեւէ մեկը չի ստացել անհրաժեշտ ձայներ, ապա քվեարկությունից հետո տասնչորսերորդ օրը անցկացվում է քվեարկության երկրորդ փուլ, որին կարող են մասնակցել առավել ձայներ ստացած երկու թեկնածուն: Սա ընդհանուր կանոն է եւ ճիշտ է ձեւակերպված: Բայց պարզվում է, որ այն առաջին իսկ թեկնածուի սահմանադրական իրավունքի իրացման՝ նույն Սահմանադրության 101 հոդվածի հիման վրա սահմանադրական դատարան դիմելու դեպքում, դադարում է գործելուց եւ երկրորդ փուլի կազմակերպումը միանգամից դուրս է գալիս 14 -օրյա ժամանակացանցից եւ դառնում է կամ անհնար, կամ՝ հակասահմանադրական: Ավելին, կարող է ստեղծվել այնպիսի իրավիճակ, որ չի գործի նաեւ Սահմանադրության 51 հոդվածով նախատեսվող այն նորմը, ըստ որի, եթե Հանրապետության Նախագահ չի ընտրվում, ապա քվեարկությունից հետո քառասուներորդ օրն անցկակվում է նոր ընտրություն: Չէ որ բացառված չէ, ասենք, այն դեպքը, երբ թեկնածուն դիմել է սահմանադրական դատարան՝ կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումից հետո օրենքով իրեն վերապահված մեկ ամսվա վերջում, իսկ սահմանադրական դատարանը, Սահմանադրության 102 հոդվածի պահանջները պահպանելով, գործը քննել եւ որոշում է կայացրել : Բայց պարզվում է, որ ԿԸՀ կողմից 40 օր հետո կազմակերպվել է նոր ընտրություն, այն դեպքում, երբ սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմումատուն իրավացի է եւ անհրաժեշտ է, օրինակ, կազմակերպել ընտրությունների երկրորդ փուլ:

Պետական բացառիկ կարելություն ունեցող հարցերի լուծման գործում տեղ գտած նման օրենսդրական բացերն անհապաղ շտկման կարիք ունեն:

Հինգերորդ՝ շատ երկրներում սահմանադրական վերահսկողության օբյեկտ են միջազգային պայմանագրերը ( Ավստրիա, Իսպանիա, Պորտուգալիա, Հունգարիա, Ռուսաստան, Սլովակիա, Ռումինիա, Հայաստան եւ այլն ): Այս իրավասության իրականացման բնորոշ առանձնահատկությունն այն է, որ միջազգային պայմանագրերը հանդիսանում են նախնական, ֆակուլտատիվ, վերացական վերահսկողության օբյեկտ: Հայաստանի Հանրապետությունում միջազգային պայմանագրերը դարձել են միջանկյալ պարտադիր վերահսկողության առարկա:

Մեկ տարվա փորձառությունը վկայում է, որ այս հարցը նույնպես շտկումների անհրաժեշտություն ունի: Նորանկախ երկրի համար քաղաքական, տնտեսական եւ բազմապիսի այլ հետեւանքներ կարող են ունենալ բոլոր այն դեպքերը, երբ արդեն իսկ բարձր մակարդակով ստորագրված միջազգային պայմանագրի նորմերը սահմանադրական դատարանի վերջնական ու փոփոխության ոչ ենթակա որոշմամբ ճանաչվում են Սահմանադրությանը չհամապատասխանող, առավել եւս, երբ շատ հարցեր առաջ են գալիս այդ փաստաթղթերի անորակ նախապատրաստման հետեւանքով:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը մեկ տարում չորս անգամ « կարմիր լույս է վառել » միջազգային պայմանագրերի վավերացման առջեւ ( Գերմանիա, Եգիպտոս, Թուրքմենիա, Վրաստան ): Սա մենք համարում ենք արտառոտ իրավիճակ: Նման նախադեպ միջազգային պրակտիկայում գրեթե չկա:

Ստորագրած պայմանագրի չվավերացման հետեւանքով առաջացած բարդություններից խուսափելու լավագույն ելքը մեխանիզմն առավել խելամիտ դարձնելն է: Մեր կարծիքով, նպատակահարմար է միջազգային պայմանագրերի նախնական պարտադիր վերահսկողությունն իրականացնել դրանց ստորագրմանը նախորդող փուլում: Բացի դրանից, նման գործերը սահմանադրական դատարանում քննության առարկա պետք է դառնան միայն գրավորության սկզբունքի հիման վրա:

Հարկ է նշել նաեւ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 55 հոդվածի 7-րդ կետի այն դրույթի շտկման անհրաժեշտության մասին, ըստ որի Հանրապետության Նախագահին իրավասություն է տրվում ստորագրել Ազգային ժողովի վավերացրած միջազգային պայմանագրերը: Սա այն դեպքն է, երբ ասում են՝ մեկնաբանություններն ավելորդ են:

Վեցերորդ՝ Հայաստանում սահմանադրական վերահսկողության սահմանադրական եւ օրենսդրական կարգավորման լուրջ թերություններից է նաեւ այն, որ թերի են սահմանված սահմանադրական դատավարության կանոնները: Սովորաբար սա կամ արվում է օրենքով, կամ այդ իրավասությունը տրվում է դատարանին: Վերջինս ավելի տարածված ձեւ է: Հայաստանի պարագայում դատարանը նման իրավասություն չունի, օրենքն այն հստակ չի կարգավորում: Ավելին, դատարանը հաճախ արհեստականորեն դրվում է այնպիսի կապանքների մեջ, որ նիստն անգամ հետաձգել չի կարող:



Այստեղ նույնպես եզակի օրինակներից ենք: Միջազգային փորձը, ընդհակառակը, վկայում է այն մասին, որ ընդարձակվում է նմանօրինակ հարցերի լուծման գործում դատարանների ինքնուրույնությունը: Սահմանադրական դատարաններին ընդհուպ իրավունք է վերապահվում նաև օրենքով նախատեսված որոշակի հանգամանքներում վերանայելու իրենց որոշումները, կամ ընդունել միջանկյալ որոշումներ:

Չմտնելով լրացուցիչ մանրամասների մեջ, հարկ է ընդգծել, որ բացի վերոհիշյալներից, Հայաստանում սահմանադրական վերահսկողության համակարգի հետագա կատարելագործումը պետք է ընթանա նաև հետեւյալ ուղղություններով.

ա) օրենքի սահմանադրականության հարցով սահմանադրական դատարան դիմող սուբյեկտների զգալի ընդլայնում: Ժամանակի ընթացքում այդ ցանկը պետք է համալրեն Ազգային ժողովի նախագահը, պատգամավորների առնվազն 1/5-ը կամ յուրաքանչյուր խմբակցություն, վարչապետը, վճռաբեկ դատարանի նախագահը, գլխավոր դատախազը, ընդհանուր իրավասության դատարանները, ֆիզիկական անձինք, տեղական ինքնակառավարման մարմինները, եկեղեցին ( բնական է, որ օրենքով կհստակեցվեն յուրաքանչյուր դիմող սուբյեկտի իրավասության շրջանակները եւ այն իրավական ակտերը, որոնց վերաբերյալ այս կամ այն սուբյեկտը կարող է դիմել սահմանադրական դատարան ),

բ) սահմանադրական վերահսկողության օբյեկտ հանդիսացող նորմատիվ ակտերի ցանկի ճշգրտում ( վարչապետի, տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների ներառում եւ Ազգային ժողովի ներքին աշխատակարգին վերաբերող որոշումների դուրս բերում այս ուղղությամբ ): Միջազգային պրակտիկան վկայում է, որ կառավարման համակարգի արդյունավետությունը զգալի չափով բարձրանում է, երբ սահմանադրական վերահսկողության օբյեկտ են դառնում գործադիր իշխանության բոլոր մարմինների նորմատիվ ակտերը:

գ) քաղաքացիներին սահմանադրական դատարան դիմելու հնարավորության ընձեռում՝ Սահմանադրության երկրորդ գլխում ամրագրված մարդու եւ քաղաքացու իրավունքներին ու ազատություններին առնչվող նորմատիվ ակտերի սահմանադրականության հարցերով: Բնականաբար, տվյալ պարագայում քաղաքացին պետք է ամբողջությամբ օգտագործած լինի ընդհանուր իրավասության դատարանների ընձեռած հնարավորությունները, այսինքն՝ պետք է գործի անհրաժեշտ ու բավարար զտիչների համակարգ,

դ) մի շարք օրենքների ( հատկապես , Ազգային ժողովի աշխատանքը կանոնակարգող եւ այլն ) նախնական պարտադիր վերահսկողության ապահովում՝ մինչև Հանրապետության Նախագահի կողմից դրանց ստորագրումը եւ հրապարակումը ( սա նաև խորհրդարանական փոքրամասնությունների շահերի պաշտպանության երաշխիք է եւ ընդունված է մի շարք երկրներում ),

ե) «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի փոփոխությունների եւ սահմանադրական դատավարության մասին կանոնակարգի ընդունում:

Եվրոպական երկրների փորձը վկայում է նաև, որ շատ երկրներում համանման խնդիրները լուծվել են տարիների ընթացքում, աստիճանաբար, քայլ առ քայլ բարեփոխելով սահմանադրական վերահսկողության ամբողջ համակարգը: Այս առումով հատկապես հատկանշական է Ֆրանսիայի եւ Գերմանիայի փորձը: Առաջինում համանման խնդիրները լուծվեցին սահմանադրական խորհուրդն ստեղծելուց հետո շուրջ 15 տարիների ընթացքում, իսկ Գերմանիայում կազմավորման եւ ամբողջականացման այդ փուլը տեւեց մոտ 18 տարի: Սակայն մեծ վտանգ է պարունակում նաև հապաղումը, քանի որ բավարար հիմքերի վրա չի դրվում հասարակական իմունոհամակարգը, եւ նշված թերությունների հետեւանքով առաջացած բացասական երեւույթները կսկսեն արմատակալել, մտնել իռացիոնալ վերարտադրության փուլ, վերածվել մետաստազի, որի հաղթահարումն անասելի դժվար կլինի:

#### **XIV. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՍՎԱՐԳԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԱՌԱՆՁԱԳՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՌԱՆՁԻՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ**

Սահմանադրական վերահսկողության միջազգային փորձի ուսումնասիրումը կարելու է ոչ միայն համեմատական վերլուծության տեսանկյունից, այլև յուրաքանչյուր երկրին բնորոշ համակարգն ամբողջության մեջ դիտարկելու առումով: Բանն այն է, որ միայն այս դեպքում է հնարավոր բացահայտել սահմանադրական վերահսկողության տեղն ու գործառական առանձնահատկությունները պետական իշխանության ամբողջական համակարգում: Դա իր հերթին

հնարավորություն է ընձեռնում ճիշտ կողմնորոշվել այս կամ այն խնդիրը լուծելիս՝ միջազգային փորձից դիմելու հարցում, խուսափել չարդարացված նմանակումից, սովորել նաեւ որիշների սխալների վրա, առաջնորդվել համակարգային մոտեցման մեթոդաբանությամբ:

Հետագա շարադրանքում հիմնական շեշտը դրվում է յուրաքանչյուր կոնկրետ երկրում սահմանադրական վերահսկողության համակարգի բնորոշ առանձնահատկությունների բացահայտման վրա:

## ԱՎԱՏՐԻԱ

Ավստրիան այն երկիրն է, որտեղ ձեւավորվեց մասնագիտացված ինստիտուտների միջոցով սահմանադրական վերահսկողություն իրականացնելու գաղափարախոսությունը եւ 1920 թվականին կազմավորվեց առաջին սահմանադրական դատարանը՝ նույն թվականի հոկտեմբերի 1-ին ուժի մեջ մտած դաշնային սահմանադրական օրենքի հիման վրա: Հանս Քելզենը գտնում էր, քանի որ Սահմանադրությունը հիմնական օրենքն է, ապա այն առավել մեծ չափով պետք է կայունություն հաղորդի հասարակությանը, հետեւաբար, դժվար պետք է լինի հենց Սահմանադրության փոփոխությունը, եւ սահմանադրական նորմերի ու սկզբունքների իրականացման նկատմամբ պետք է սահմանվի հատուկ վերահսկողություն: Նման մոտեցումը եւ սահմանադրական վերահսկողության հատուկ մարմնի հիմնումը, ըստ Քելզենի լիովին բխում է իշխանությունների տարանջատման սկզբունքի տրամաբանությունից:

Նման հիմնավորումների ընթացքում հաշվի են առնվել նաեւ նոր իրականությանը բնորոշ այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ հասարակական անկայունությունը, համակարգային փոփոխությունների հնարավորությունը, էքստրեմալ հասարակական իրավիճակների ինտենսիվ երեւան գալը, հասարակական փոփոխվող իրավիճակների օրենսդրական արագ կարգավորման անհրաժեշտությունը եւ այլն:

Նոր ինստիտուտի կազմավորումը Ավստրիայում դիտվում էր նաեւ որպես ժողովրդավարության խորացում, նկատի ունենալով, որ պառլամենտական փոքրամասնությունը լծակ էր ստանում ներազդելու մեծամասնության գործունեության վրա:

Կարելոր է այն պարագան, որ Ավստրիայում դատական համակարգի ներսում յուրահատուկ դերաբաժանում է կատարվել: Գերագույն դատարանը վերահսկում է քաղաքացիական եւ քրեական գործերով դատական որոշումները: Վարչական դատարանն իրականացնում է վարչական որոշումների օրինականության ստուգումը: Սահմանադրական դատարանը հետեւում է օրենքների սահմանադրականությանը եւ ենթաօրենսդրական ակտերի համապատասխանությանը օրենքներին: Ընդ որում, նախորդ երկու դատարանների դիմումի հիման վրա սահմանադրական դատարանը իրավասու է վերջնական որոշում կայացնել նաեւ նրանց քննության առած գործերի վերաբերյալ:

Ավստրիայում սահմանադրական դատարանը կազմված է 14 մարդուց՝ 12 անդամ, նախագահ, տեղակալ: Կա նաեւ 6 պահեստային անդամ: Նախագահին եւ տեղակալին նշանակում է Դաշնության Նախագահը (ինչպես նաեւ 6 հիմնական եւ 3 պահեստային անդամներին՝ կառավարության ներկայացմամբ), 3 հիմնական եւ 2 պահեստային անդամներին՝ Ազգային խորհրդի ներկայացմամբ եւ 3 հիմնական ու 1 պահեստային անդամներին՝ Դաշնային խորհրդի ներկայացմամբ դարձյալ նշանակում է Դաշնության Նախագահը: Սահմանադրական դատարանի անդամները նշանակումից հետո կարող են շարունակել կատարել իրենց նախկին աշխատանքը կամ ընդհուպ լինել այլ դատական մարմնի անդամ: Բանն այն է, որ սահմանադրական դատարանն աշխատում է նստաշրջաններով՝ տարեկան 4 նստաշրջան՝ 3 շաբաթ տեւողությամբ, մարտին, հունիսին, հոկտեմբերին եւ դեկտեմբերին:

Միաժամանակ սահմանադրական դատարանն իրավասու է ձայների 2/3-ով որոշում ընդունել իր անդամի լիազորությունները ժամանակավորապես կասեցնելու կամ հեռացնելու մասին, եթե գտնում է, որ նա արատավորել է սահմանադրական դատարանի անդամի պատիվը կամ անգործունյա է: Ուշադրության է արժանի այն, որ դատարանի անդամի նշանակումից հետո նրան կարող է ազատել միայն դատարանը եւ միայն օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում: Վերջիններիս մեջ առանձնացվում են դատավորի կառավարության անդամ դառնալը, պատգամավոր ընտրվելը,

նիստերին 3 անգամից ավելի անընդմեջ անհարգելի բացակայելը, ծառայողական գաղտնապահության խախտումը, պարտականությունների կատարման անկարողությունը եւ այլն:

Դատարանի նախագահը եւ տեղակալը պաշտոնն ստանձնելիս երդվում են Դաշնության Նախագահի առջեւ, իսկ դատարանի անդամները՝ սահմանադրական դատարանի նախագահի առջեւ: Ի դեպ, դատարանի նախագահի եւ տեղակալի արձակուրդ մեկնելու հարցը նույնպես որոշում է Դաշնության Նախագահը:

Դատարանն իր անդամներից 3 տարի ժամկետով ընտրում է մշտական զեկուցողներ, որոնք, նախագահի հանձնարարությամբ, նախապատրաստում են գործի քննությունը: Սովորաբար որոշումներն ընդունվում է ձայների մեծամասնությամբ, իսկ նախագահի ձայնը, ձայների հավասարության դեպքում, վճռական չէ: ՌԷշադրության արժանի առանձնահատկություն է այն, որ, չնայած դատարանը միապալատ է եւ որոշումներն ընդունում է ամբողջ կազմով, սակայն կան հարցեր, որոնք կարող են քննել եւ որոշում ընդունել չորս դատավորներ: Այս մոտեցումը միանգամայն կիրառելի կարող էր լինել Հայաստանի պարագայում՝ սահմանադրական դատարանում պատգամավորների ընտրությունների հետ կապված վեճերը լուծելիս:

Սահմանադրական դատարանի անդամ չեն կարող լինել Դաշնային եւ Հողերի կառավարությունների անդամները, Ազգային եւ Դաշնային, ինչպես նաեւ այլ ներկայացուցչական մարմինների անդամները: Դատարանի անդամը չի կարող քաղաքական կուսակցություններում որեւէ պոստ զբաղեցնել՝ անկախ այն բանից, թե դա վճարովի է, կամ թե իրականացվում է հասարակական հիմունքներով:

Սահմանադրական դատարանը, ըստ Սահմանադրության 140 հոդվածի, օրենքների սահմանադրականության հարցը քննության է առնում Վարչական դատարանի կամ Գերագույն դատարանի ներկայացմամբ, ինչպես նաեւ այն դատարանի ներկայացմամբ, որն իրավասու է եղել գործը քննել որպես երկրորդ ատյան: Իսկ այն դեպքում, երբ տվյալ օրենքը ենթակա է կիրառման սահմանադրական դատարանում՝ իրավական վեճի լուծման առնչությամբ, ապա սահմանադրական դատարանը տվյալ օրենքի սահմանադրականության հարցը կարող է քննության առնել սեփական նախաձեռնությամբ:

Հողերի օրենքների սահմանադրականության հարցը քննության է առնվում Դաշնային կառավարության ներկայացմամբ: Իսկ Դաշնային օրենքների հարցով կարող են դիմել Հողերի կառավարությունները կամ նրանց պառլամենտների անդամների 1 / 3 -ը:

Քաղաքացին կարող է դիմել սահմանադրական դատարան, եթե պնդում է, որ օրենքի հակասահմանադրական լինելն ուղղակիորեն առնչվում է իր սահմանադրական իրավունքներին: Նման դեպքերում դիմումը տրվում է փաստաբանի միջոցով: Սահմանադրության 144 հոդվածի հիման վրա տրված նմանատիպ դիմումները կազմում են սահմանադրական դատարանում քննվող գործերի շուրջ 80 տոկոսը:

Սահմանադրական դատարանը նաեւ լուծում է.

- միջազգային պայմանագրերի սահմանադրականության եւ օրինականության հարցերը,

- պետության բարձրագույն մարմինների (երկրի Նախագահ, կառավարություն, Հողերի կառավարություններ, նահանգապետեր, Վիեննայի քաղաքապետարանի ղեկավարություն եւ այլն) ղեկավարների գործունեության սահմանադրականության հարցերով առաջացած վեճերը,

-տարբեր դատարանների եւ դատարանների ու վարչական մարմինների միջեւ ծագած վեճերը,

- իշխանության տարբեր մարմինների միջեւ առաջացած իրավական վեճերը,

- իրավական ակտերի ինչպես սահմանադրականության, նույնպես եւ օրինականության հարցերը,

-կենտրոնական իշխանության եւ Հողերի ու վերջիններիս միջեւ առաջացած վեճերը,

-Դաշնության Նախագահի եւ ներկայացուցչական մարմինների ընտրությունների (ցանկացած մակարդակի՝ սկսած համայնքներից) հետ կապված վեճերը (եթե խախտումներն էական ազդեցություն ունեն ընտրությունների արդյունքների վրա),

-քննում է Դաշնության Նախագահի, կառավարության անդամների, Հոդերի կառավարության անդամների եւ մի շարք այլ պաշտոնատար անձանց (ինչպես, օրինակ, մայրաքաղաքի ղեկավարության, Հոդերի դպրոցական խորհուրդների նախագահների կամ նրանց պաշտոնակատարների եւ այլն) դեմ հարուցված գործերը

(այդ թվում՝ քրեական)՝ նրանց կողմից օրինախախտումների դեպքերում, եթե այն կապված է իրենց պաշտոնեական պարտականությունների կատարման հետ

(հստակ սահմանված է, թե յուրաքանչյուր դեպքում պետական որ մարմինն է դիմում),

- որոշումներ է ընդունում միջազգային իրավունքի նորմերի խախտման հարցերով,

- լուծում է Սարդու իրավունքների պաշտպանի եւ պետական մարմինների միջեւ առաջացած վեճերը՝ կապված իրենց իրավունքների շուրջ առաջացած մեկնաբանությունների հետ:

Սահմանադրական դատարանի անդամ կարող են դառնալ դատավորները, պետական բարձրաստիճան ծառայողները, իրավունքի եւ քաղաքական գիտությունների գծով դասախոսները: Դատարանի անդամները, ինչպես նաեւ նախագահը եւ տեղակալը, նշանակվում են անփոփոխելիության սկզբունքով եւ աշխատում են մինչեւ 70 տարին լրանալու տարվա վերջը:

Սահմանադրական դատարանի մասին առաջին օրենքը (1920թ.) վերախմբագրվել է 1929թ. դեկտեմբերի 7-ին: Առավել հանգամանորեն սահմանադրական դատարանի կազմավորումը եւ գործունեությունը կանոնակարգվել են 1925թ. դեկտեմբերի 18-ին ընդունված դաշնային օրենքով: Վերջինս դաշնային կառավարության կողմից վերահրատարակվել է 1953թ. մայիսի 18-ին եւ ներկայումս հայտնի է որպես սահմանադրական դատարանի մասին 1953թ. օրենք: Դրանից հետո այն լրացվել եւ փոփոխվել է 15 անգամ:

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում սահմանադրական դատավարության առանձնահատկություններն Ավստրիայում: Այստեղ 1946 թ. հոկտեմբերի 3-ին սահմանադրական դատարանը հաստատել է իր գործունեության կանոնակարգը, որն անփոփոխ գործում է առ այսօր: Այդ կանոնակարգը բաղկացած է 16 հետեւյալ բաժիններից.

1. ղեկավարությունը, 2. ռեֆերենտները (քննող դատավորները), 3. անհատական կազմով Սենատը, 4. դատարանի նիստը, 5. նախաքննական գործընթացը,

6. դատարանի անդամների հրավիրումը դատավարությանը եւ նիստերին,

7. արձակուրդը, 8. կողմերի հրավիրումը դատավարությանը, 9. դատավարությունը եւ նիստերը, 10. քննարկումը եւ քվեարկությունը, 11. որոշումները, 12. ուղղումները,

13. առարկությունների ընդունումը, 14. քաղվածքներ արդարադատության մասին,

15. դատարանի գործունեության մասին տարեկան զեկույց, 16. եզրափակիչ դրույթներ:

Վերջինում հիմնականում տրվում են արտասահմանյան կազմակերպությունների հետ դատարանի փոխհարաբերությունները:

Սահմանադրական դատարանում կողմերը կարող են հրաժարվել մասնակցել նիստին: Դա որեւէ կերպ չի խանգարում դատարանի որոշման կայացմանը:

Սահմանադրական դատարանի հեղինակության եւ դատական պրոցեսը բնականոն իրականացնելու համար նախագահողին իրավունք է վերապահված տեղում կիրառել վարչական տույժ՝ 500- 1500 շիլինգի չափով եւ (կամ) կալանք՝ 3-9 օրով: Առավել խիստ պատիժներ են կիրառվում վիրավորական խոսքերի, ժամանակի կանխամտածված ձգձգման, ոչ ճիշտ ցուցմունքներ տալու համար:

Գործի քննության ընթացքում օրենքով նախատեսված չէ դատարանի անդամի բացարկի կամ ինքնաբացարկի հնարավորություն: Սակայն դատարանը դռնփակ նիստով կարող է որոշել եւ թույլ չտալ իր անդամին մասնակցել կոնկրետ գործի քննությանը՝ եթե նա ուղղակի առնչություն է ունեցել տվյալ գործի հետ:

Սահմանադրական դատարանի որոշումներն ուժի մեջ են մտնում սահմանված կարգով մամուլում պաշտոնական հրապարակման օրվանից: Միաժամանակ դատարանն իրավասու է սահմանել իրավական ակտերի ուժը կորցնելու որոշմամբ նախատեսված այլ ժամկետ:

Ուշադրության է արժանի նաեւ այն, որ յուրաքանչյուր տարվա գործունեության արդյունքներով սահմանադրական դատարանը կազմում է ամփոփ տեղեկատվություն եւ այն ներկայացնում Դաշնության Կանցլերին: Այն բովանդակում է նաեւ սահմանադրական արդարադատության իրականացման վերաբերյալ եզրակացություններ ու առաջարկություններ:

Սահմանադրական դատարանի անկախության երաշխիքների թվում կարելի է դատարանի անդամների անփոփոխելիությունը (մինչեւ 70 տարին լրանալը), բարձր աշխատավարձը (դատարանի նախագահն ստանում է պառլամենտի անդամի վարձաչափի 160 տոկոսը, փոխնախագահը եւ մշտական զեկուցողները՝ 130 տոկոսը), երաշխավորված թոշակը (տարեկան աշխատավարձի չափով) եւ այլն:

Ավստրիայի սահմանադրական դատարանի լիազորությունների եւ գործունեության առանձնահատկությունների վերլուծությունից բխում է, որ նախ. սահմանադրական դատարանը դիտարկվում է որպես Սահմանադրության պահպանման եւ կառավարման օրինականության երաշխիք,

երկրորդ՝ ստեղծված են դատարանի անկախության ամբողջական երաշխիքներ: Նշվածներից բացի, կարելի է նաեւ այն պարագան, որ երբ իշխանության որեւէ մարմին դատարանի որոշումից հետո պահանջվող քայլեր չի ձեռնարկում, ապա սահմանադրական դատարանը կարող է քննության հարց դարձնել համապատասխան պաշտոնատար անձանց հարցը,

երրորդ՝ դատարանը բաց է ու մատչելի, առավելագույնս ընդլայնված է դիմող սուբյեկտների ցանկը, հստակ են առնչությունները դատական համակարգի մյուս ինստիտուտների հետ,

չորրորդ՝ դատարանի գործունեության ամբողջ փիլիսոփայությունը խարսխված է պետական կառավարման ներդաշնակ ինստիտուցիոնալ համակարգ ստեղծելու վրա եւ ստեղծվել է այնպիսի ինունդհամակարգ, երբ կառավարման ոլորտում առաջացած բոլոր վեճերն իրավական լուծման ելք ունեն,

հինգերորդ՝ ամբողջական է մարդու իրավունքների պաշտպանության սահմանադրական վերահսկողության համակարգը: Ի տարբերություն շատ երկրների

(Պորտուգալիա, Հունգարիա, Վրաստան եւ այլն), Ավստրիայում, մեր կարծիքով, գտնվել է սույն իրավասությունն իրականացնելիս « զտիչների » օպտիմալ մեխանիզմ,

վեցերորդ՝ համակարգն աչքի է ընկնում մեծ ճկունությամբ՝ գործադրելի է թե ունիտար եւ թե դաշնային պետություններում,

յոթերորդ՝ նորմատիվ ակտերի սահմանադրականության հարցը որոշելիս վերահսկողության օբյեկտի սահմանափակում գրեթե չկա: Որպես այդպիսին կարող է լինել գործադիր իշխանության ցանկացած մարմնի որոշում:

Նշվածներից զատ կցանկանայինք ընդգծել նաեւ, որ, մեր կարծիքով, Ավստրիայի սահմանադրական դատարանը չափից ավելի է ծանրաբեռնված այնպիսի լիազորություններով, որոնք հաջողությամբ կարող էին իրականացնել ընդհանուր իրավասության դատարանները՝ առավել եւս սահմանադրական դատարան դիմելու նրանց հնարավորության պարագայում: Դա վերաբերում է թե տարաբնույթ վեճերի լուծմանը եւ թե տեղական ընտրությունների հետ կապված հարցերին սահմանադրական դատարանի մասնակցությամբ: Մի շարք երկրների փորձը վկայում է, որ սահմանադրական դատարաններին ոչ բնորոշ ֆունկցիաներով գերծանրաբեռնելուց խուսափելու համար, մասնավորապես, քրեական բոլոր տիպի գործերով քննությունը ճիշտ է վերապահել ընդհանուր իրավասության դատարաններին, իսկ սահմանադրական դատարանը կարող է քննության առնել միայն պետական պաշտոնյաների գործողությունների սահմանադրականության հարցը: Սակայն, ինչպես տեսնում ենք, Ավստրիայում (նույնն է նաեւ Թուրքիայում) սահմանադրական դատարանին է վերապահված զգալի թվով պետական պաշտոնյաների հետ առնչվող բոլոր տիպի գործերի քննության իրավասությունը:

## ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Գերմանիայում սահմանադրական վերահսկողության մասնագիտացված համակարգը, թերևս, եզակիներից է, որ առավել խորությամբ հաշվի է առնում իրավական, ժողովրդավարական ու նաև սոցիալական պետության բոլոր հիմնական բնութագրիչները, ինչպես նաև պետական կառավարման դաշնային համակարգի առանձնահատկությունները:

Երկրի Հիմնական օրենքը, որով նախատեսվեց սահմանադրական դատարանի ստեղծումը, մշակվել է 1948-1949թթ. եւ ուժի մեջ մտել 1949թ. մայիսի 23-ին:

Սահմանադրության 9-րդ գլուխը կոչվում է « Արդարադատություն» եւ այս գլխի 92, 93, 94 հոդվածները վերաբերում են Դաշնային սահմանադրական դատարանին:

Սահմանադրական արդարադատության հիմնական բնութագրիչը Գերմանիայում այն է, որ սահմանադրական դատարանը չի զբաղվում անեն տիպի վեճերով եւ բոլոր տիպի նորմատիվ ակտերի օրինականության հարցերով: Նրա գլխավոր առաքելությունը Սահմանադրությունը հարգել տալը ու այն պահպանելն է:

Գերմանիայում սահմանադրական դատարանը ձևավորվել է 1951 թվականին: Այս երկիրն ունի այն առանձնահատկությունը, որ գործում է սահմանադրական դատարանների համակարգ՝ դաշնային դատարանը եւ Հողերի սահմանադրական դատարանները:

1951-1986թթ. Գերմանիայի Դաշնային սահմանադրական դատարանն ուժը կորցրած է ճանաչել / մասնակի կամ լրիվ/ 179 օրենք, որը կազմում է այդ ժամանակահատվածում ընդունված օրենքների 5 տոկոսը: Քննության է առնվել այդ ընթացքում 88 գործ՝ վերացական վերահսկողության կարգով, 2337 գործ՝ կոնկրետ վերահսկողության:

Ունի Սահմանադրությունը մեկնաբանելու իրավունք:

Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեն նաև մյուս դատարանները:

Քաղաքացին դիմում է միայն օրենքով սահմանված մյուս բոլոր հնարավորություններն սպառելուց հետո:

Սահմանադրության 92 հոդվածի համաձայն սահմանադրական դատարանը դատական իշխանության մարմին է:

Դատական իշխանությունը վերապահված է դատավորներին, այն իրականացվում է Դաշնային սահմանադրական դատարանի, Դաշնային դատարանների միջոցով՝ Սահմանադրությամբ նախատեսված կարգով, եվ Հողերի դատարանների միջոցով (հոդվ. 92):

93 հոդվածով նախատեսվում է. (1) Դաշնային սահմանադրական դատարանը լուծում է գործեր.

1) կապված Հիմնական օրենքի մեկնաբանման հետ՝ պայմանավորված վեճերով, որոնք առաջանում են գերագույն դաշնային մարմինների կամ այլ մասնակիցների իրավունքների ու պարտականությունների հարցերով, եւ որոնք այդ իրավունքներն ստացել են Հիմնական օրենքով կամ բարձրագույն դաշնային մարմնի կանոնակարգով: Ինչ վերաբերում է օրենքների սահմանադրականության հարցին, ապա այդ հարցով սահմանադրական դատարան դիմելու իրավասություն է վերապահված դաշնային կառավարությանը, Հողերի կառավարություններին, Բունդեստագի անդամների 1/3-ին:

2) երբ տարակարծություն կամ կասկած կա դաշնային իրավունքի կամ Հողերի իրավունքի եւ Հիմնական օրենքի ձեւական կամ փաստական համապատասխանության հարցում, կամ Հողերի իրավունքի եւ դաշնային իրավունքի համապատասխանության հարցում՝ Դաշնային կառավարության, Հողերի կառավարության կամ Բունդեստագի անդամների մեկ երրորդի առաջարկով,

3) երբ կարծիքները չեն համընկնում Դաշնային եւ Յողերի կառավարությունների իրավունքների ու պարտականությունների հարցում, մասնավորապես, Յողերի կողմից դաշնային իրավունքը կիրառելիս եւ դաշնային վերահսկողությունն իրականացնելիս,

4) Դաշնության ու Յողերի միջեւ, առանձին Յողերի միջեւ, դրանց ներսում հանրային - իրավական վեճեր առաջանալիս,

4-ա) (ներառվել է 29.01.1969թ.) սահմանադրական այն գանգատներով, որոնք կարող են տրվել յուրաքանչյուրի կողմից, ով պնդում է, որ իշխանությունը խախտել է նրա որեւէ հիմնական իրավունք, կամ որեւէ իրավունք, որը շարադրված է 20 (մաս 4), 33, 38, 101, 103 եւ 104 հոդվածներում,

4-բ) (ներառվել է 29.01.1969թ.) համայնքների սահմանադրական գանգատներով, եթե խախտվել է ինքնակառավարման մասին օրենքի 28 հոդվածով նախատեսված իրավունքը, իսկ հողերի օրենքների առնչությամբ՝ այն պայմանով, որ գանգատ չբերվի Յողի սահմանադրական դատարան,

5) Սահմանադրությամբ նախատեսված այլ դեպքերում:

Դաշնային սահմանադրական դատարանն այլ դեպքերում գործում է դաշնային օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում:

Անհրաժեշտ է նշել, որ Գերմանիայում սահմանադրական դատարանը անուղղակի վերահսկողական լուրջ ֆունկցիա է իրականացնում ամբողջ դատական համակարգի նկատմամբ: Նրան է վերապահված ընդհուպ դաշնային եւ հողերի դատավորների իմպիչմենտի հետ կապված գործերի լսումը:

Սահմանադրության 94 հոդվածը կարգավորում է սահմանադրական դատարանի կազմավորման եւ գործունեության հարցերը: Այստեղ, մասնավորապես, նախատեսված է.

(1) Դաշնային սահմանադրական դատարանը կազմված է **դաշնային դատավորներից եւ այլ անդամներից**: Դաշնային սահմանադրական դատարանի անդամներն ընտրվում են հավասար թվով՝ Բունդեստագի եւ Բունդեսրատի կողմից: Նրանք չեն կարող ոչ Բունդեստագի, ոչ Բունդեսրատի, ոչ Դաշնային կառավարության եւ ոչ էլ Յողերի համապատասխան մարմինների անդամ լինել :

Ներկայումս դատարանը կազմված է 16 անդամից: Դատավորը պետք է ունենա իրավաբանական կրթություն, 40 տարին լրացած լինի, օրենքով նախատեսված կարգով դատավորի համապատասխան կարգավիճակ ունենա: Բացի դրանից, դատարանի երկու պալատներից յուրաքանչյուրը պետք է ունենա երեքական անդամ, որոնք նախկինում աշխատել են գերագույն դաշնային դատարաններում:

Դատավորն այլ գործունեությամբ զբաղվել չի կարող՝ բացառությամբ համալսարաններում իրավունք դասավանդելուց:

Գերմանիայում նույնպես սահմանադրական դատարանի դատավորին ոչ ոք իրավասու չէ աշխատանքից ազատել: Նա կարող է հեռանալ միայն սեփական ցանկությամբ կամ սահմանադրական դատարանի որոշմամբ՝ իր պարտականությունների կատարման անկարողության պատճառով:

(2) Դաշնային օրենքը կարգավորում է Դաշնային սահմանադրական դատարանի կազմավորումն ու գործերի քննության կարգը եւ որոշում է, թե որ դեպքերում նրա որոշումներն ունեն օրենքի ուժ: Օրենքը, որպես պայման, կարող է սահմանել, որ սահմանադրական գանգատ ներկայացնելու համար պետք է ընդհանուր իրավասության դատարանների հնարավորությունները սպառված լինեն: Սահմանվում է նաեւ նման գանգատների ներկայացման հատուկ կարգը:

(Երկրորդ եւ երրորդ նախադասությամբ լրացումը կատարվել է 29.01.1969թ.):

Սահմանադրության 18 հոդվածը, որը տրված է 28.06. 1993թ. խմբագրությամբ, սահմանում է, որ նա, ով որպես ազատ ժողովրդավարական կարգերի հիմքերի դեմ պայքարի միջոց չարաշահում է կարծիքի ազատության, մասնավորապես, մամուլի ազատության (հոդվ. 5, մաս.1), դասավանդման ազատության (հոդվ.3, մաս3), ժողովի ազատության (հոդվ.8), միավորման ազատության (հոդվ. 9), գաղտնի նամակագրության, փոստային ու հեռախոսակապի (հոդվ.10), սեփականության

(հոդվ.14) կամ ապաստանի իրավունքը (հոդվ.16-ա), զրկվում է այդ հիմնական իրավունքներից: Նշված իրավունքներից զրկումը եւ դրա ծավալը որոշում է Դաշնային սահմանադրական դատարանը:

Սահմանադրության 21 հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է.

(2) Կուսակցությունները, որոնք իրենց ծրագրերով կամ իրենց կողմնակիցների վարքով ձգտում են վնաս պատճառել ազատ ժողովրդավարական կարգերի հիմքերին, կամ այն վերացնել, կամ վտանգել Գերմանիայի Դաշնակցային Հանրապետության գոյությունը, հակասահմանադրական են: Հակասահմանադրականության հարցը որոշում է Դաշնային սահմանադրական դատարանը:

Սահմանադրության 61 հոդվածով նախատեսված է.

(1) Բունդեստագը կամ Բունդեսրատը կարող են Դաշնային սահմանադրական դատարան գործ հարուցել Դաշնության Նախագահի դեմ, եթե նրա կողմից կանխամտածված խախտվել է Հիմնական օրենքը կամ դաշնային այլ օրենք: Մեղադրանքը կարող է ներկայացվել Բունդեստագի կամ Բունդեսրատի անդամների ձայների ոչ պակաս քան մեկ քառորդի կողմից: Բունդեստագը կամ Բունդեսրատը որոշումը կարող են կայացնել ձայների երկու երրորդով: Մեղադրանքը պաշտպանվում է այն ներկայացրած մարմնի կողմից:

(2) Եթե Դաշնային սահմանադրական դատարանը գտնում է, որ Նախագահը մեղավոր է հիմնական օրենքի կամ դաշնային օրենքների կանխամտածված խախտման մեջ, ապա նրան կարող է պաշտոնանկ անել: Մեղադրանքը ներկայացնելուց հետո Դաշնային սահմանադրական դատարանն իրավասու է ժամանակավոր կարգադրությամբ որոշել, որ Դաշնության Նախագահը չի կարող կատարել իր պաշտոնական պարտականությունները:

Սահմանադրության 98 հոդվածով սահմանվում է.

Եթե դաշնային դատավորը ծառայության վայրում կամ դրանից դուրս խախտում է Հիմնական օրենքի սկզբունքները կամ որևէ Հողի սահմանադրական կարգերը, ապա Դաշնային սահմանադրական դատարանը կարող է Բունդեստագի առաջարկով կամ իր անդամների երկու երրորդից ոչ պակաս ձայներով կարգադրություն անել այդ դատավորին այլ աշխատանքի փոխադրել կամ հեռացնել նրան՝ պաշտոնազրկելով: Եթե կանխամտածված խախտում է, կարող է որոշում կայացնել պաշտոնից հեռացնելու մասին:

Հոդված 100-ում նախատեսվում է, որ եթե դատական վեճ է առաջանում միջազգային պայմանագրի նորմերի վերաբերյալ, դատարանը պետք է դիմի սահմանադրական դատարան:

1968թ. հունիսի 24-ին Դաշնային Սահմանադրությունը լրացվել է մի ամբողջ բաժնով, որում 115-գ հոդվածով նախատեսվել է, որ չի կարող վնաս հասցվել Դաշնային սահմանադրական դատարանի սահմանադրական կարգավիճակին եւ նրա ու իր դատավորների կողմից իրենց սահմանադրական պարտականությունների իրականացմանը:

Դաշնային սահմանադրական դատարանի մասին օրենքը կարող է փոփոխվել միայն համատեղ կոմիտեների օրենքով՝ պայմանով, որ դա անհրաժեշտ է, եւ Դաշնային սահմանադրական դատարանի կարծիքով կնպաստի նրա գործունեության արդյունավետ իրականացմանը: Մինչեւ նման օրենքի իրապարակումը սահմանադրական դատարանը կարող է ձեռնարկել համապատասխան միջոցներ դատարանի գործունակությունը պահպանելու ուղղությամբ: Սահմանադրական դատարանի կողմից, երկրորդ եւ երրորդ առաջարկություններին համապատասխան, որոշումներն ընդունվում են ներկաների ձայների մեծամասնությամբ:

Անցումային դրույթների մասին 126 հոդվածով նախատեսված է, որ եթե վեճ է առաջացել, ապա Դաշնային սահմանադրական դատարանն է որոշում, թե տվյալ դաշնային իրավունքը շարունակում է գործել, թե՛ ոչ:

Անցումային դրույթներով նախատեսվել է նաեւ, որ մինչեւ սահմանադրական դատարանի կազմավորումը նրա ֆունկցիաները կկատարի Գերմանական բարձրագույն դատարանը (հոդված 137, 3-րդ մաս):

Սահմանադրական դատարանը գործում է Սահմանադրության, սահմանադրական դատարանի մասին 1951 թ. ընդունված (հետագա փոփոխություններով՝ մասնավորապես 1969, 1993թ.թ.) օրենքի եւ իր կանոնակարգի



(ընդունված 1986 թ. եւ վերանայված 1989 թ.) հիման վրա: Դատարանը գործում է անընդհատ: Պալատներից մեկի աշխատանքները դեկավարում է դատարանի նախագահը, մյուսինը՝ փոխնախագահը: Որոշումները սովորաբար ընդունվում են ձայների մեծամասնությամբ: Եթե ձայները հավասար են ( պալատներում 4:4 հարաբերակցություն է), ապա դադարեցվում է գործի քննությունը:

Կարելու է ընդգծել, որ հիմնականում գործերի քննությունն իրականացվում է գրավոր: Դատարանն իրավունք ունի կազմակերպել նաեւ բանավոր լսումներ՝ եթե կողմերը չեն առարկում: Անհատական դիմումներով չեն կարող պահանջվել բանավոր լսումներ, դրանց քննությունը կազմակերպվում է գրավոր: Ի դեպ, անհատական զանգատներ կարող են ներկայացվել վիճարկվող ակտը կամ դատական որոշումն ընդունելուց հետո մեկամսյա ժամկետում: Եթե բողոքարկվում է օրենքը, ապա այդ ժամկետը մեկ տարի է: Օրենքով սահմանված է, որ սահմանադրական դատարան անհատական զանգատ կարող է ներկայացվել միայն այն դեպքում, երբ դատական կարգով հարցի լուծման այլ հնարավորությունները լրիվ սպառվել են: Օրենքը պահանջում է նաեւ, որ կողմերը դատարան ներկայանան իրավաբանների միջոցով:

Հետաքրքրություն է ներկայացնում նաեւ դատարանի կողմից ընդունվող որոշումների բնույթը: Սահմանադրական դատարանը կարող է իրավանորմը համարել ուժը կորցրած, եւ այդ որոշումը կարող է ունենալ նաեւ հետադարձ ուժ: Միաժամանակ, դատարանը կարող է գտնել, որ իրավանորմը չի համապատասխանում Սահմանադրությանը, եւ այդ դեպքում տվյալ նորմը շարունակում է գործել մինչեւ օրենսդրի կողմից դրա վերանայումը: Ընդ որում, սահմանադրական դատարանը կարող է վերանայման համար ժամկետ սահմանել (սահմանադրական դատարանի մասին օրենքի 31 եւ 79 պարագրաֆներ): Սահմանադրական դատարանը կարող է նաեւ չեղյալ հայտարարել սովորական դատարանի որոշումը եւ գործն ուղարկել այլ դատարան (որպես կանոն, սահմանադրական դատարանը սովորական դատարանների գործերով որոշումներ չի կայացնում):

Փաստորեն, վերոհիշյալ իրավունքներով եւ գործունեության սահմանված կարգով Գերմանիայի սահմանադրական դատարանը կարող է համարվել դասական օրինակներից մեկը: Ուշագրավ է նաեւ այն հանգամանքը, որ տարիների ընթացքում էապես ընդլայնվել են դատարանի իրավասությունը, ինչպես նաեւ՝ դատարան դիմող սուբյեկտների շրջանակը, որը լրջորեն բարձրացրել է դատարանի գործունեության արդյունավետությունը եւ այն դարձել է հասարակության կայուն ու դինամիկ զարգացման կարեւորագույն գրավական՝ ինչպես բնորոշում են եվրոպական սահմանադրական դատարանների փորձն ուսումնասիրող շատ մասնագետներ: Գերմանիայում նույնպես ընդհանուր կարծիքն այն է, որ ձեւավորվել է սահմանադրական արդարադատության գործուն համակարգ, այն ապահովում է իշխանության կայունությունը եւ սահմանադրականությունը երկրում, պետական իշխանության համակարգում առաջացած վեճերն ունեն իրավական լուծման հստակ մեխանիզմներ եւ չի առաջանում փակուղային իրավիճակ: Այս ամենը հաշվի առնելով, համակարգի նոր բարեփոխումներ չեն նախատեսվում:

Դժվար է չհամաձայնել այդ փաստարկներին: Սակայն կցանկանայինք ավելացնել, որ, մեր կարծիքով, այս համակարգում լիարժեք չեն օգտագործվում նախնական վերահսկողության առավելությունները, ինչպես նաեւ երկրորդ պլան է մղված քննության բանավորությունն ու իրապարակայնությունը: Վիճահարույց է նաեւ դատարանի որոշումների բնույթը՝ այն պարագաներում, երբ նորմատիվ ակտի դրույթը ճանաչվում է հակասահմանադրական, սակայն դեռ ինչ - որ ժամանակ շարունակում է գործել: Երկրորդ է, տվյալ դեպքում սահմանադրական վերահսկողության համակարգում նկատի է ունեցվում նաեւ պառլամենտի ակտիվ դերը, սակայն, անկախ ամեն ինչից, հակասահմանադրական նորմը գործնական կյանքում անխուսափելիորեն առաջ կմղի իռացիոնալ գործընթացներ:

Այսուհանդերձ, Գերմանիայում ձեւավորվել է սահմանադրական վերահսկողության ամբողջական եւ ուսանելի համակարգ:

## **ԻՏԱԼԻԱ**

Եվրոպական սահմանադրական դատարանների շարքում, որպես ամբողջական համակարգ, առանձնանում է նաեւ Իտալիայի սահմանադրական դատարանը:

Իտալիայի Սահմանադրությամբ սահմանադրական դատարանի ստեղծումը նախատեսվել է 1947 թվականին, դատարանի մասին օրենքն ընդունվել է 1953թվականին (11.03), իսկ դատարանի առաջին նիստը գումարվել է 23.04.1956թ.

(նման ձգձգման պատճառը պառլամենտում եղած տարածայնություններն էին՝ դատարանի անհրաժեշտության եւ լիազորությունների վերաբերյալ):

1956-1986թթ. սահմանադրական դատարանն ընդունել է 3000 որոշում, որից

600-ը՝ վիճարկվող իրավանորմը չեղյալ հայտարարելու մասին (քանի որ Իտալիայում մեծ թվով օրենքներ ընդունվել են մինչեւ երկրորդ համաշխարհային պատերազմը, սակայն շարունակում են գործել, ուստի, վիճարկվող նորմերը շատ են):

Իտալիայի Սահմանադրությամբ (22.12.1947թ.) եւ 1953, 1967,

1989 թթ. սահմանադրական օրենքներով կատարված

փոփոխություններով նախատեսված է.

1. Սահմանադրական դատարանին վերաբերող դրույթներն առանձնացված են դատական մարմիններին նվիրված բաժնից եւ տրված են 6-րդ բաժնում, որը կրում է

« Սահմանադրական երաշխիքներ» անվանումը: Այս բաժնի առաջին ենթաբաժինը նվիրված է սահմանադրական դատարանին (134-137 հոդվածներ):

134 հոդվածով, որը տրվում է 1989թ. փոփոխություններով, նախատեսված է, որ սահմանադրական դատարանի քննությանն ենթակա են.

ա/ օրենքների եւ օրենքի ուժ ունեցող ակտերի / պետության եւ տարածքների / սահմանադրականության հարցով վեճերը,

բ/ պետական տարբեր իշխանությունների, պետության եւ տարածքային իշխանությունների, տարածքային տարբեր մարմինների միջեւ առաջացած վեճերը, ինչպես նաեւ պետական իշխանության տարբեր ինստիտուտների լիազորությունների հարցերով առաջացած վեճերը,

գ/ երկրի Նախագահի եւ նախարարների դեմ Սահմանադրությամբ նախատեսված կարգով հարուցվող մեղադրանքները:

Իտալիայում նույնպես ընդհանուր իրավասության դատարանների եւ սահմանադրական դատարանի միջեւ սահմանված է փոխհարաբերությունների որոշակի մեխանիզմ: Այստեղ առանձնահատուկն այն է, որ եթե ընդհանուր իրավասության դատարանները դիմում են սահմանադրական դատարան՝ իրավանորմի սահմանադրականության հարցով նրանց պարզաբանում տալու խնդրանքով, ապա սահմանադրական դատարանը կարող է ընդունել խորհրդատվական բնույթի պարզաբանումներ այն ակտերի վերաբերյալ, որոնք օրենքի ուժ ունեն: Ի դեպ, Իտալիան վերացրել է սկզբնական շրջանում սահմանադրական դատարանին վերապահված այն իրավասությունը, երբ այս մարմինը կարող էր քննության առարկա դարձնել նախարարների կողմից ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում թույլ տրված օրինախախտումների վերաբերյալ գործերը:

Սահմանադրական դատարանը, Հանրապետության Նախագահի հետ միասին, որպես սահմանադրական նորմերի գերագույն երաշխավոր, դուրս է դասական 3 իշխանություններից:

Սահմանադրության 135 հոդվածի համաձայն սահմանադրական դատարանն ունի 15 անդամ, որոնք մեկ երրորդով նշանակվում են՝ Հանրապետության Նախագահի (նշանակման մասին դեկրետը վավերացնում է վարչապետը), Պառլամենտի՝ պալատների համատեղ նիստով (ծայնների 2/3-ով, որպեսզի մեծամասնություն ունեցող կուսակցությունը միայն իր համախոհներին չընտրի) եւ Բարձրագույն դատական վարչակազմի կողմից (ընդհանուր եւ վարչական): Վերջին պարագայում նախատեսված է, որ 3 անդամ ընտրվում են Վճռաբեկ դատարանից, եւ մեկական՝ Պետական խորհրդի ու Հաշվիչ պալատի կողմից:

Սահմանադրական դատարանի դատավորներն ընտրվում են այլ դատավորների կազմից, այդ թվում՝ պաշտոնաթողվածներից, բարձրագույն ընդհանուր եւ վարչական դատարաններից, համալսարանների իրավունքի պրոֆեսորներից, փաստաբաններից, որոնք ունեն առնվազն 20 տարվա ստաժ:

Սահմանադրական դատարանի դատավորները նշանակվում են 9 տարի ժամկետով՝ հաշվված երդման օրվանից (մինչև 1967 թվականը սահմանված էր 12 տարի): Նրանք չեն կարող վերանշանակվել:

Օրենքով սահմանված կարգով սահմանադրական դատարանն իր կազմից երեք տարի ժամկետով ընտրում է նախագահ: Նա կարող է վերընտրվել այնքան անգամ, քանի դեռ իր դատավոր լինելու ժամկետը չի սպառվել:

Սահմանադրական դատարանի անդամի պաշտոնն անհամատեղելի է պառլամենտի կամ մարզային խորհրդի անդամի, փաստաբանի եւ այլ պաշտոնների հետ, որոնք նշված են օրենքով: Նա նույնիսկ համալսարանում դասավանդել չի կարող:

Հանրապետության Նախագահի դեմ մեղադրանք հարուցելու դեպքում, բացի սահմանադրական դատարանի դատավորներից, մասնակցում են նաեւ դատարանի 16 անդամներ, որոնք վիճակահանությանը ընտրվում են այն քաղաքացիների թվից, որոնք ունեն անհրաժեշտ հատկանիշներ սենատոր ընտրվելու համար: Այդ ցուցակը, որում ընդգրկվում է 45 մարդ, կազմվում է պառլամենտի կողմից, 9 տարվով՝ ընդհանուր իրավասության դատավորների նշանակման համար նախատեսված կարգով: Նրանք համարվում են դատարանի լրացուցիչ անդամներ եւ երգվում են սահմանադրական դատարանի նախագահի առջեւ:

Հոդված 136-ով նախատեսվում է .

Եթե դատարանը օրենքը կամ օրենքի ուժ ունեցող որոշումը ճանաչել է հակասահմանադրական, ապա այն դադարում է գործել որոշման հրապարակման հաջորդ օրվանից:

Դատարանի որոշումը տպագրվում եւ ուղարկվում է պառլամենտ ու մարզային խորհուրդներ:

Հոդված 137-ում ամրագրված է, որ սահմանադրական օրենքը սահմանում է սահմանադրական դատարանի դիմելու կարգը, ձևը, ժամկետները, ինչպես նաեւ սահմանադրական դատարանի դատավորների անկախության երաշխիքները:

Այն դրույթները, որոնք անհրաժեշտ են դատարանի ձեւավորման եւ գործելու համար, սահմանվում են սովորական օրենքով:

Սահմանադրական դատարանի որոշումների գանգատարկում չի թույլատրվում: Սահմանադրական դատարանն ունի նախագահություն՝ կազմված նախագահից, փոխնախագահից եւ սահմանադրական դատարանի 5 անդամից, որոնք ընտրվում են գաղտնի քվեարկությամբ՝ 2 տարի ժամկետով:

Դատարանի նախագահն օժտված է դատավորին պաշտոնազրկելու իրավունքով:

Իտալիայի սահմանադրական դատարանը Հիմնական օրենքի 75 հոդվածի հիման վրա, ինչպես նաեւ հաշվի առնելով նախադեպերը

(մասնավորապես դա վերաբերում է 1976թ. ընդունած թիվ 16 որոշմանը), կարող է որոշել առանձին նորմերի արգելման հարցերով հանրաքվե կազմակերպելը թույլ տալու հարցը (նկատի պետք է ունենալ, որ շատ երկրների սահմանադրական դատարաններ, մասնավորապես նաեւ Ֆրանսիայի սահմանադրական խորհուրդը, գտնում են, որ իրենք իրավասու չեն քննության առնելու հանրաքվեների անցկացման հետ կապված հարցերը):

## **ՖՐԱՆՍԻԱ**

Եվրոպական երկրներից Ֆրանսիան այն երկիրն է, որը չգնաց

տրորված ճանապարհով եւ ի սկզբանէ փորձեց ձեւավորել սահմանադրական վերահսկողության յուրահատուկ ինստիտուտ, որը հետագայում դարձավ բազմաթիվ վերլուծությունների ու մեկնաբանությունների առարկա: Այլ է նաեւ անվանումը՝ սահմանադրական խորհուրդ: Գլխավոր առանձնահատկությունն այն է, որ Ֆրանսիայում հատուկ կարեւորություն տրվեց նախնական վերահսկողության համակարգին:

Ֆրանսիան այն երկիրն էր, որն առաջինը որդեգրեց օրգանական օրենքների եւ պառլամենտի պալատների կանոնակարգերի սահմանադրականության հարցի որոշման պրակտիկան՝ մինչեւ օրենսդիր մարմնի կողմից դրանց ընդունումը: Նման մոտեցումն ակտիվ վերահսկողություն է ապահովում նաեւ տարանջատված իշխանությունների զսպումների ու հակակշիռների մեխանիզմի հավասարակշռված պահպանության նկատմամբ:

1958թ. Սահմանադրության ընդունումից անմիջապէս հետո ձեւավորվեց սահմանադրական խորհուրդը:

1974թ. սահմանադրական փոփոխությունների հիման վրա սովորական օրենքների հարցով դիմելու իրավունք ձեռք բերեցին 60- ական պատգամավորներ եւ սենատորներ: Եթէ մինչ այդ /1959-ից/ եր 29 դիմում, ապա՝ 1974-1986թթ.՝ 150 դիմում (օրենքների սահմանադրականության հարցերով):

Պարտադիր վերահսկողության օբյեկտ են /մինչեւ օրենքի ընդունումը/՝ օրգանական օրենքները, պառլամենտի երկու պալատների կանոնակարգերը եւ այն օրենքները, որոնք առնչվում են մարդկանց իրավունքներին եւ ազատություններին:

Սահմանադրական խորհուրդ դիմելու իրավունք ունեն /օրենքների սահմանադրականության հարցով/ Զանրապետության Նախագահը, վարչապետը, խորհրդարանի երկու պալատների նախագահները եւ 60 պատգամավոր կամ 60 սենատոր:

Միջազգային պայմանագրերը քննարկվում են նախագծային փուլում:

Սահմանադրական խորհրդի նիստերը դռնփակ են: Անդամները երդվում են խորհրդի իրավասության հարցերով խորհրդատվություններ չանել:

Ֆրանսիայում սահմանադրական վերահսկողության առանձնահատկություններն ունեն նաեւ համակարգային բնույթ՝ սահմանադրական վերահսկողություն իրականացվում է սահմանադրական խորհրդի կողմից՝ օրենքների նկատմամբ, մինչդեռ, կառավարության ակտերի նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Պետական խորհուրդը:

Ֆրանսիայի սահմանադրության (ընդունված 1958թ. հունիսի 3-ին), առանձին՝ 7-րդ բաժինը նվիրված է Սահմանադրական խորհրդին: Դրանից հետո 8-րդ բաժինը նվիրված է Դատական իշխանությանը:

56 հոդվածի համաձայն սահմանադրական խորհուրդը կազմված է 9 անդամից, որոնց լիազորությունների ժամկետը 9 տարի է: Նրանք ենթակա չեն վերահաստատման: Սահմանադրական խորհուրդը երեք տարին մեկ նորացվում է մեկ երրորդով: 3 անդամները նշանակվում են Զանրապետության Նախագահի, 3-ը՝ Ազգային ժողովի նախագահի, 3-ը՝ Սենատի նախագահի կողմից: Խորհրդի անդամները երդվում են Զանրապետության Նախագահի առջեւ:

9 անդամներից զատ, սահմանադրական խորհրդի կազմում ցմահ ընդգրկվում են հանրապետության նախկին նախագահները:

Սահմանադրական խորհրդի նախագահին նշանակում է Զանրապետության Նախագահը: Չայների հավասարության դեպքում խորհրդի նախագահի ձայնը վճռորոշ է:

Սահմանադրական խորհրդի կազմում պարտադիր պետք է լինի 2 անդամ՝ սահմանադրական իրավունքի մասնագետ: Մնացած անդամների վերաբերյալ կրթական որեւէ ցենզ չի նախատեսվում:

57 հոդվածով սահմանվում է, որ սահմանադրական խորհրդի անդամի ֆունկցիաներն անհամատեղելի են կառավարության կամ պառլամենտի անդամի ֆունկցիաների հետ: Անհամատեղելիության այլ դեպքերը սահմանվում են օրգանական օրենքով (մասնավորապէս, խորհրդի անդամ չեն կարող լինել նաեւ Եվրոպառլամենտի անդամները, տնտեսական եւ սոցիալական խորհուրդների անդամները):

Խորհրդի անդամները միայն կամավոր կարող են հրաժարվել իրենց մանդատից, կամ հեռացվել Խորհրդի որոշմամբ՝ պարտականությունների կատարման անկարողության պատճառով:

Սահմանադրական Խորհուրդը հետեւում է Հանրապետության Նախագահի ընտրության օրինականությանը, որոշում է ընդունում դրա վերաբերյալ եւ հրապարակում է ընտրությունների արդյունքները (հոդվ. 58):

Սահմանադրական Խորհուրդը որոշում է ընդունում պատգամավորների ու սենատորների ընտրությունների օրինականության հարցով, եթե այն վիճարկվում է

(հոդվ. 59: Այս հարցի վերաբերյալ 1959 թ. ընդունվել է հատուկ կանոնակարգ, որը փոփոխությունների է ենթարկվել 05.03.1986թ., 24.11.1987թ., 09.07.1991թ.): Ի դեպ, 1994թ. հունվարի 1-ի դրությամբ Խորհուրդն ընդունել է 1633 որոշում՝ ընտրությունների արդյունքների վերաբերյալ, այն դեպքում, երբ օրենքների սահմանադրականության հարցով ընդունված որոշումների թիվը մոտ 500 է:

Սահմանադրական Խորհուրդը հետեւում է հանրաքվեի անցկացման ճշտությանը եւ հրապարակում արդյունքները (հոդվ. 60):

Օրգանական օրենքները, մինչեւ դրանց ստորագրումը եւ հրապարակումը Հանրապետության Նախագահի կողմից, եւ պառլամենտի պալատների կանոնակարգերը՝ մինչեւ դրանց ընդունումը, պետք է ներկայացվեն սահմանադրական Խորհուրդ, որը որոշում է ընդունում դրանց սահմանադրականության վերաբերյալ (հոդվ. 61):

Նույն նպատակով մինչեւ օրենքների ստորագրումը եւ հրապարակումը Հանրապետության Նախագահի կողմից, դրանք Նախագահի, վարչապետի, Ազգային ժողովի նախագահի, Սենատի նախագահի կամ 60 պատգամավորի կամ 60 սենատորի կողմից կարող են ներկայացվել սահմանադրական Խորհուրդ (մինչեւ 1974թ. այստեղ չկային պատգամավորներն ու սենատորները, իսկ պառլամենտից կարող էր դիմել պալատների նախագահներից մեկը միայն):

Որոշման ընդունման ժամկետը 1 ամիս է / կառավարության պահանջով կարող է իջեցվել մինչեւ 8 օր/: Խորհուրդը որոշումներ է ընդունում քվորումի առկայության

(անդամներից 7-ի մասնակցության) դեպքում: Որոշումն ընդունվում է գրավոր քննության եւ կողմերի մասնակցության արդյունքով: Ընդ որում, նախատեսված չէ հատուկ կարծիքի իրավունքը եւ քննարկումների ու քվեարկության արդյունքները չեն հրապարակվում:

62 հոդվածով նախատեսվում է, որ հակասահմանադրական ճանաչված դրույթը չի կարող հրապարակվել կամ կիրառվել:

Սահմանադրական Խորհրդի որոշումները զանգատարկման ենթակա չեն: Դրանք պարտադիր են իշխանությունների, բոլոր վարչական ու դատական մարմինների համար:

Օրգանական օրենքը սահմանում է սահմանադրական Խորհրդի ձեւավորման ու գործունեության ընթացակարգը, մասնավորապես, Խորհրդին դիմելու ժամկետները

(հոդվ. 63):

Կազմակերպական բնույթի էական առանձնահատկություն է այն, որ Հանրապետության Նախագահի դեկրետով նշանակվում է Խորհրդի գլխավոր քարտուղար, որը գլխավորում է վարչական եւ իրավաբանական ծառայությունների աշխատանքը: Բացի այդ, ապահովված է Խորհրդի ֆինանսական անկախությունը՝ բյուջեն հաստատում է Խորհրդի նախագահը եւ այն ներառվում է պետական բյուջեի ընդհանուր ծախսերի բաժնում:

Ֆրանսիայի սահմանադրական Խորհրդի գործունեության առանձնահատկությունների ուսումնասիրությունը վկայում է, որ այս համակարգում անհամեմատ նեղացված է նորմատիվ ակտերի հետագա ու կոնկրետ սահմանադրական վերահսկողության հնարավորությունը, եւ այստեղ որեւ դեր չի վերապահված նաեւ անհատական դիմումներին: Գլխավոր շեշտը դրված է պետական կառավարման ինստիտուտների ներդաշնակ աշխատանքն ապահովելու խնդրի վրա:

Ֆրանսիայում սահմանադրական վերահսկողության համակարգի հետագա կատարելագործման հիմնական առաջարկությունները վերաբերում են նորմատիվ ակտերի սահմանադրականության հարցով քաղաքացիներին դիմելու իրավունք վերապահելուն, գործերի բանավոր քննարկումների հնարավորության ընձեռմանը, խորհրդի անդամների նշանակման կարգի փոփոխություններին, կոնկրետ վերահսկողության արմատավորմանը, դատական համակարգի հետ գործառնական առնչություններին եւ այլն:

## ՊՐՏՈՒԳԱԼԻՍ

Պորտուգալիայի Սահմանադրության համաձայն (1992թ. խմբագրություն) սահմանադրական դատարանը համարվում է դատական իշխանության մարմին (հոդվ. 211, 223): Ի դեպ, Պորտուգալիայի 1911թ. Սահմանադրությունն առաջին անգամ ամրագրեց օրենքների սահմանադրականության վերաբերյալ դատական վերահսկողության սկզբունքը: Սակայն, միայն 1976թ. Սահմանադրությամբ նախատեսվեց եւ ստեղծվեց սահմանադրական վերահսկողության մասնագիտացված ու գործուն համակարգ: Մինչեւ 1982 թվականն այդ իրավասությունն իրականացնում էին Յեղափոխական խորհուրդը եւ սահմանադրական հանձնաժողովը: 1982 թվականից գործում է սահմանադրական դատարանը:

Սահմանադրական դատարանը կազմված է 13 դատավորներից, որոնցից 10-ին նշանակում է պառլամենտը՝ ձայների 2/3 -ով, 3-ին՝ սահմանադրական դատարանը: Պառլամենտի կողմից նշանակված 10 դատավորից 6-ը եւ սահմանադրական դատարանի կողմից նշանակվող 3 դատավորներ պետք է ընտրվեն գործող այլ դատարանների դատավորներից, իսկ մնացածը սոսկ պետք է լինեն իրավաբաններ: Սահմանադրական դատարանի դատավորները երդվում են Յանրապետության Նախագահի առջեւ: Նրանք չեն կարող զբաղվել որեւէ այլ վճարովի աշխատանքով: Թույլատրվում է միայն անվճար զբաղվել դասախոսական եւ գիտական գործունեությամբ: Ինչպես շատ այլ երկրներում, այստեղ նույնպես դատարանի անդամներն անկախ են եւ գործունեության ժամկետում անփոփոխելի: Կարող են իրենց պարտականությունների կատարումը դադարեցնել կամավոր կամ դատարանի որոշմամբ՝ եթե կան անհրաժեշտ հիմքեր: Դատավորները ոչ միայն չեն կարող լինել որեւէ կուսակցության անդամ, այլեւ ընդհանրապես արգելվում է քաղաքական գործունեությամբ զբաղվելը:

Պաշտոնավարման ժամկետը 6 տարի է: Դատարանի նախագահն ընտրվում է դատարանի անդամների կողմից (հոդվ. 224):

Սահմանադրական դատարանի լիազորություններն են.

- օրենքների, միջազգային պայմանագրերի սահմանադրականության եւ օրինականության (ձեւական եւ նյութական) հարցի որոշումը,

- երկրի Նախագահի մահվան, ֆիզիկական անկարողության, ինչպես նաեւ ժամանակավորապես իր պարտականությունների կատարման անհնարինության փաստի հաստատումը,

- Յանրապետության Նախագահի՝ երկրի տարածքից բացակայելու դեպքում Սահմանադրությամբ նախատեսված կարգով պառլամենտի կամ հատուկ հանձնաժողովի համաձայնության կամ անհամաձայնության շուրջ առաջացած վեճի դեպքում Նախագահի բացակայության փաստի հաստատումը:

(Առանց համաձայնության բացակայության փաստի հաստատումը, ըստ 132 հոդվածի, ինքնաբերաբար հանգեցնում է Նախագահի պաշտոնանկության):

- Նախագահի պաշտոնանկության դեպքում պառլամենտին դրա հիմքերի վերաբերյալ եզրակացություն տալը,

- ընտրությունների հետ կապված վեճերի լուծումը (այս իրավասությունն իրականացնելիս Նախագահի եւ Եվրապառլամենտի պատգամավորների ընտրությունների առնչությամբ ունի ստուգումներ անցկացնելու իրավունք եւ հաստատում է արդյունքները: Պառլամենտի եւ տեղական

ընտրությունների ժամանակ քննության է առնում միայն վեճերը: Այս հարցերը քննվում են պլենարիստում),

- Նախագահի թեկնածուների մահվան կամ ֆիզիկապես անկարող դառնալու փաստի հաստատումը, որի հիման վրա, ըստ 127 հոդվածի երրորդ կետի, տեղի են ունենում նոր ընտրություններ,

- հաստատում է քաղաքական կուսակցությունների ու դրանց միավորումների կանոնադրությունների օրինականությունը, համապատասխանությունը Սահմանադրությանը եւ օրենքին (այս հարցում նույնպես կա էական առանձնահատկություն: Պորտուգալիայի սահմանադրական դատարանին է իրավունք վերապահվել գրանցել քաղաքական կուսակցությունները եւ դրանց կոալիցիաները, ինչպես նաեւ, 1993 թ. նոյեմբերի 30-ից սկսած, օրենքով սահմանված կարգով ամեն տարի ստուգել կուսակցությունների հաշիվները),

-նախապես հաստատում է հանրաքվեների անցկացման սահմանադրականությունը:

Ուշադրության արժանի առանձնահատկություն է այն, որ Պորտուգալիայի սահմանադրական դատարանին է իրավունք վերապահված վերահսկողություն իրականացնել պաշտոնյաների ունեցվածքի նկատմամբ: Բարձր քաղաքական պոստ զբաղեցնող յուրաքանչյուր պաշտոնյա իր պաշտոնավարության սկզբում եւ վերջում սահմանադրական դատարան է ներկայացնում հայտարարագիր իր եկամուտների ու սեփականության վերաբերյալ: Դատարանն իրավասու է ստուգել հայտարարագրերը, ինչպես նաեւ դրանք հրապարակել մամուլում:

Սահմանադրական դատարանն իրավասու է նաեւ

(Սահմանադրության 280 հոդված) քննելու դատական հետեւյալ որոշումները.

ա) իրավական նորմի հակասահմանադրականության վերաբերյալ դիմումը մերժելու մասին դատարանի որոշումը,

բ) դատաքննության ընթացքում իրավական նորմի սահմանադրականության վերաբերյալ որոշման փոփոխության մասին ընդունած որոշումը,

գ) երբ դատարանը մերժում է այն դիմումը, որը վերաբերում է ենթաօրենսդրական իրավական ակտի հակասությանը օրենքին,

դ) երբ որոշում է ընդունում մերժելու տեղական մարմնի կամ սուբյեկտի դիմումն իրավական նորմի՝ տեղական կամ հանրապետական օրենքին հակասելու հարցի վերաբերյալ,

ե) երբ դատարանը մերժել է իշխանության հանրապետական մարմնի կամ սուբյեկտի դիմումը տարածքային մարմնի իրավական ակտի օրինականության վերաբերյալ:

Սահմանադրական դատարանն իրավասու է քննել նաեւ դատարանների այն որոշումների վերաբերյալ զանգատները, որոնք վերաբերում են այդ որոշումների հակասահմանադրականությանը կամ հակաօրինականությանը:

Սահմանադրական դատարան կարող են դիմել Զանրապետության Նախագահը, պառլամենտի նախագահը, վարչապետը, մարդու իրավունքների պաշտպանը, գլխավոր դատախազը, պատգամավորների 1/10-ը, նախարարները, տարածքային օրենսդիր մարմինները, նրանց նախագահները կամ պատգամավորների 1/10-ը, տարածքային գործադիր մարմնի ղեկավարը (տարածքային մարմինների իրավասությանն առնչվող հարցերով) (հոդվ. 281):

Նախագահի դիմումի հիման վրա, մինչեւ օրենքի ստորագրումը կամ միջազգային պայմանագրի վավերացումը, որոշում է դրանց սահմանադրականության հարցը: Զինական առանձնահատկությունն այն է (այդպես է նաեւ Ռումինիայում), որ պառլամենտը կարող է ձայների 2/3 -ով վավերացնել իր կողմից ընդունված ակտը կամ նորմը: Սահմանված է օրենքների որոշակի շրջանակ (մասնավորապես, ընտրությունների, հանրաքվեի, սահմանադրական դատարանի, պաշտպանության, արտակարգ իրավիճակի մասին եւ այլն, որոնք պետք է ընդունվեն ձայների որակյալ մեծամասնությամբ), որոնց նախնական վերահսկողության հարցով սահմանադրական դատարան կարող են դիմել վարչապետը կամ պատգամավորների 1/5-ը: Իսկ նախարարները կարող են նախնական վերահսկողության հարցով դիմել տարածքային

(ռեզիդենս) օրենսդրության հարցերով:

Չետաքրքիր առանձնահատկություններ կան գործերի քննության դատավարական կարգի առումով: Մասնավորապես, գործով զեկուցողներն ընտրվում են վիճակահանությամբ եւ պարտավոր են ներկայացնել նաեւ որոշման նախագիծ: Որոշում ընդունելիս ծայների հավասարության դեպքում նախագահի ձայնը վճռորոշ է: Վերացական վերահսկողության հարցերով որոշումներն ընդունվում են դատարանի ամբողջ կազմով իսկ կոնկրետ վերահսկողության հարցերով՝ քննությունը կազմակերպում եւ որոշում են ընդունում 6-ական անդամից կազմված պալատները: Նախատեսված է նաեւ, որ նախագահը կարող է որեւէ կոնկրետ գործի քննությունը նույնպես տեղափոխել լիազուսար միստի:

Կողմերը դատարան են ներկայանում փաստաբանի միջոցով, գործի քննությունը գրավոր է, չի կազմակերպվում բաց դատավարություն: Դատարանում երկու մշտական ներկայացուցիչ ունի դատախազությունը: Եթե կոնկրետ գործերով տվյալ իրավանդումը երեք անգամ ճանաչվել է Սահմանադրությանը չհամապատասխանող, ապա դատարանում դատախազության ներկայացուցիչները կարող են սկսել վերացական վերահսկողության ընթացակարգը: Այս դեպքում դատարանի վճիռն ունենում է համընդգրկուն բնույթ եւ տվյալ նորմը դադարում է գործելուց: Այս երկրում նույնպես դատարանին իրավունք է վերապահված ինքնուրույն որոշել իր որոշումների ուժի մեջ մտնելու ժամկետները:

Պորտուգալիայի սահմանադրական արդարադատության էական առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ գործում է, այսպես կոչված, խառը տիպի համակարգ: Այսինքն՝ կոնկրետ գործերով նորմատիվ ակտերի սահմանադրականության հարցը որոշելու իրավասություն ունեն նաեւ ընդհանուր իրավասության բոլոր դատարանները: Միաժամանակ նրանց որոշումներն այդ հարցերով կարող են զանգատարկվել սահմանադրական դատարան: Դիմողը նույնպես կարող է պահանջել սահմանադրականության հարցի որոշումը փոխադրել սահմանադրական դատարան: Բոլոր դեպքերում, կոնկրետ գործերով ընդունած որոշումները տարածվում են միայն տվյալ գործի վրա: Դատարանը որոշումներ է ընդունում նաեւ ենթաօրենսդրական ակտերի օրենքներից համապատասխանության հարցերի վերաբերյալ: Սովորաբար այսպիսի վերահսկողությունը կոնկրետ է:

## ԻՍՊԱՆԻԱ

Իսպանիայում 1931-1936թթ. գործել է սահմանադրական երաշխիքների դատարան: Սահմանադրական դատարանը ձեւավորվել է 1980 թվականին:

Սահմանադրությամբ (հանրաքվե- 06.12.1978 թ., գործողության մեջ է դրվել 27.12.1978 թ.) սահմանադրական դատարանին հատկացված է դատական համակարգին նվիրված բաժնից առանձին բաժին՝ «Սահմանադրական դատարանի մասին» խորագրով, որը ներառում է 159-165 հոդվածները:

159 հոդվածով նախատեսված է, որ.

1. սահմանադրական դատարանը կազմված է 12 անդամից, որոնք նշանակվում են թագավորի կողմից: Նրանցից 4-ին առաջարկում է Կոնգրեսը՝ անդամների ձայների երեք հինգերորդի մեծամասնությամբ, չորսին Սենատը՝ ձայների նույն հարաբերակցությամբ, երկուսին՝ կառավարությունը եւ երկուսին՝ դատական իշխանության Գերագույն խորհուրդը,

2. սահմանադրական դատարանի անդամները նշանակվում են դատավորների եւ փաստաբանների, համալսարանական պրոֆեսորների, պետական ծառայողների, դատախազների կազմից: Նրանք բոլորը պետք է լինեն բարձրորակ եւ ճանաչված իրավաբաններ՝ ոչ պակաս 15 տարվա իրավաբանական աշխատանքի ստաժով: Տարիքային սահմանափակում չի դրվում,

3. սահմանադրական դատարանի անդամները նշանակվում են 9 տարով, յուրաքանչյուր երեք տարին մեկ կազմը նորացվում է մեկ երրորդով,

4. սահմանադրական դատարանի անդամությունն անհամատեղելի է ցանկացած ներկայացուցչական մանդատի, քաղաքական կամ վարչական պաշտոնի հետ՝ երբ ծառայություն կամ ղեկավար



գործունեություն է իրականացվում կուսակցության մեջ կամ արհմիութենական կազմակերպությունում, ինչպես նաև դատական կամ դատախազական գործունեության, ցանկացած մասնագիտական կամ առևտրական գործունեության հետ:

Բացի դրանից, սահմանադրական դատարանի անդամների վրա տարածվում են բոլոր այն կանոնները, որոնք արգելում են համատեղությունը եւ նախատեսված են դատական համակարգի ներկայացուցիչների համար,

5. սահմանադրական դատարանի անդամներն իրենց մանդատի գործողության ժամանակամիջոցում անկախ են եւ անփոփոխելի:

Հոդված 160 -ում սահմանված է սահմանադրական դատարանի նախագահի նշանակման կարգը: Վերջինս նշանակվում է Թագավորի կողմից, դատարանի անդամների կազմից՝ սահմանադրական դատարանի պլենումի ներկայացմամբ, 3 տարի ժամկետով:

Նույն կարգով նշանակվում է նաև դատարանի փոխնախագահը, որը միաժամանակ գլխավորում է դատարանի պալատներից մեկը:

Սահմանադրական դատարանի իրավասությունը տարածվում է Իսպանիայի ամբողջ տարածքի վրա (հոդվ. 161) Այն իրավասու է.

ա) քննարկել օրենքների եւ օրենքի ուժ ունեցող նորմատիվ ակտերի սահմանադրականության հարցով դիմումները, օրենքի ուժ ունեցող իրավական նորմը հայտարարել հակասահմանադրական,

բ) օրենքով նախատեսված կարգով ու դեպքերում որոշում ընդունել Սահմանադրության 53 հոդվածի 2 կետում շարադրված իրավունքների ու ազատությունների պաշտպանության վերաբերյալ,

գ) լսել այլ հարցեր, որոնք նախատեսված են Սահմանադրությամբ կամ սահմանադրական օրենքներով:

Դատարանն իրավասու է նաև մեկնաբանել Սահմանադրությունը:

Կառավարությունը կարող է սահմանադրական դատարան վիճարկել ինքնավար միավորումների մարմինների կողմից ընդունված որոշումները: Նման դեպքում գանգատարկվող վճռի կամ որոշման գործողությունը դադարեցվում է, սակայն սահմանադրական դատարանը պետք է ոչ ուշ, քան հինգ ամսվա ընթացքում հաստատի այդ դադարեցումը, կամ մերժի դիմումը:

Ըստ Սահմանադրության 162 հոդվածի.

1. օրենքն իրավունք է տալիս.

ա) վարչապետին, ժողովրդի պաշտպանին, 50 պատգամավորի, 50 սենատորի, ինքնավար միավորների գործադիր կոլեգիալ մարմիններին, ինչպես նաև դրանց ժողովներին հակասահմանադրականության վերաբերյալ հարց հարուցել,

բ) ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձի՝ դիմել սահմանադրական իրավունքների ու ազատությունների հարցով, հենվելով իրենց օրինական շահերի վրա: Այդ հարցերով կարող են դիմել նաև ժողովրդի պաշտպանը եւ դատախազությունը:

2. Մնացած բոլոր դեպքերում սահմանադրական օրենքով որոշվում են դիմող սուբյեկտները:

Եթե դատական մարմինը որեւէ հարցի քննության ժամանակ գտնում է, որ այս կամ այն նորմը, որն ունի օրենքի ուժ եւ կիրառվում է տվյալ գործով, կարող է հակասել Սահմանադրությանը, ապա նա, առանց կասեցնելու օրենքի գործողությունը, կարող է օրենքով սահմանված կարգով ու ձեւով հարց բարձրացնել սահմանադրական դատարանի առջեւ (հոդվ. 163):

Սահմանադրական դատարանի որոշումը հրապարակվում է պետության պաշտոնական տեղեկագրում՝ անհրաժեշտության դեպքում նշելով նրա անդամների հատուկ կարծիքները: Որոշումները ուժի մեջ են մտնում դրանց հրատարակման հաջորդ օրվանից եւ վերանայման ենթակա չեն: Օրենքի կամ օրենքի

ուժ ունեցող ակտի հակասահմանադրականության վերաբերյալ, ինչպես նաև բոլոր այն որոշումները, որոնք չեն սահմանափակվում որոշակի իրավունքի սուբյեկտիվ գնահատմամբ, կիրառվում են պարտադիր կարգով:

Եթե սահմանադրական դատարանն այլ եզրակացության չի հանգել, օրենքը մնում է ուժի մեջ այն մասով, որը չի ճանաչվել հակասահմանադրական (հոդվ. 164):

Օրգանական օրենքը կարգավորում է սահմանադրական դատարանի գործունեությունը, անդամների կարգավիճակը, դատավարության կանոնները եւ ընդունած որոշումների կատարման պայմանները (հոդվ. 165):

Քաղաքացին սահմանադրական դատարանում վիճարկում է միայն պետական ակտերը, որոնցով խախտվել են իր սահմանադրական իրավունքներն ու ազատությունները: Ընդունվում են միայն այն դիմումները, որոնք հստակ սահմանադրական բնույթ ունեն: Այս հարցը որոշում են դատարանի պալատների սեկցիաները, որոնք ձեւավորվում են պալատի նախագահի եւ երկու դատավորի կազմով:

Լսում է նաև պառլամենտի ներսում Պատգամավորների կոնգրեսի եւ Սենատի միջեւ առաջացած վեճերը:

Սահմանադրական դատարանի լիազորությունների մեջ են մտնում.

- օրենքների եւ օրենքի ուժ ունեցող ակտերի սահմանադրականության որոշումը

(վերահսկողությունը հետագա է, նախնականը վերացվել է 1985թ.): Դիմումը կարող է վերացական վերահսկողության կարգով տրվել օրենքի հրապարակումից հետո երեք ամսվա ընթացքում,

- մարդկանց սահմանադրական իրավունքների ու ազատությունների հարցերով որոշումների ընդունումը,

- պետության եւ ինքնավար կազմավորումների կամ վերջիններիս միջեւ վեճերի լուծումը (գործողությունների հակասահմանադրականության հարցերով քաղաքացիները դիմելու իրավունք չունեն: Այդ իրավասությունը վերապահված է վարչապետին, Մարդու իրավունքների պաշտպանին, 50-ական պատգամավորի եւ սենատորի եւ ինքնավարությունների գործադիր մարմիններին),

-այլ հարցերի լուծում՝ նախատեսված Սահմանադրությամբ կամ սահմանադրական օրենքով:

Սահմանադրական դատարանի գործունեությունը կազմակերպվում է 1990 թվականի հուլիսի 15 -ի պլենար նիստով հաստատված կանոնակարգի հիման վրա:

Որոշումները՝ թե պլենար նիստում եւ թե պալատների նիստերում, ընդունվում են, երբ նիստին մասնակցել է անդամների 2/3-ը: Պալատների միջեւ գործերը բաժանվում են պլենար նիստում:

Դատարանում գործերի քննությունը, որպես կանոն, գրավոր է: Կողմերը դատարան են ներկայանում փաստաբանի միջոցով:

Իսպանիայի սահմանադրական դատարանի բնորոշ առանձնահատկություններից է այն, որ մեծ տեղ է հատկացվում պետական իշխանության մարմինների թե հորիզոնական եւ թե ուղղահայաց հարթություններում առաջացած վեճերի ու տարաձայնությունների լուծմանը: Նման հարցերի քննության ընթացքում փաստորեն ճշտվում են համապատասխան մարմինների ու պաշտոնատար անձանց լիազորությունների շրջանակները:

Կցանկանայինք ընդգծել մեկ հանգամանք եւս. դատարանն իրավասու է հետաձգել որոշման ընդունումը (թե պլենար նիստում եւ թե պալատներում), հանձնարարել լրացուցիչ հիմնավորումներ ներկայացնել՝ այդ ընթացքում կասեցնելով վիճարկվող նորմի գործողությունը (ոչ ավելի, քան հինգ ամսով): Ընդ որում, կոկրետ գործերով նորմատիվ ակտերի սահմանադրականության վերաբերյալ ընդունված որոշումները նույնպես ունեն համընդգրկուն պարտադիր բնույթ:

## ԹՈՒՐՔԻԱ

Թուրքիայում սահմանադրական դատարանի կազմավորումն առաջին անգամ նախատեսվեց 1961 թվականի Սահմանադրությամբ: Դատարանը ձևավորվեց 1962թ. օգոստոսին: Ներկայումս գործող սահմանադրական վերահսկողության համակարգը հաստատվել է 1982թ. Սահմանադրությամբ: 1983թ. ընդունվել է օրենք սահմանադրական դատարանի կազմավորման եւ դատական ընթացակարգի մասին, իսկ 1986 թվականին դատարանը հաստատել է իր գործունեության կարգը:

Այս երկրում սահմանադրական դատարանն ունի այն բնորոշ առանձնահատկությունը, որ Սահմանադրությամբ նախատեսված մի շարք դեպքերում ստանձնում է ընդհանուր իրավասության դատարանի ֆունկցիա: Թուրքիայի սահմանադրական դատարանը փաստորեն քննում է նաեւ Հանրապետության Նախագահի, կառավարության, խորհրդարանի, դատախազության, դատարանների պաշտոնատար անձանց հետ առնչվող քրեական գործերը:

1982թ. նոյեմբերի 7-ի հանրաքվեով ընդունված Սահմանադրությամբ նախատեսվում է. որ սահմանադրական դատարանը դատական համակարգի մարմին է: Սահմանադրական դատարանի ձևավորման եւ գործունեության կարգը սահմանված է Սահմանադրության 146 - 153 հոդվածներում:

146 հոդվածով նախատեսված է, որ սահմանադրական դատարանն ունի 11 մշտական եւ չորս փոխարինող անդամ:

Հանրապետության Նախագահը պետք է 2 մշտական եւ 2 փոխարինող անդամ նշանակի Գերագույն վճռաբեկ դատարանից, 2 մշտական եւ 1 փոխարինող անդամ՝ Պետական խորհրդից եւ մեկական անդամներ՝ Զինվորական գերագույն վճռաբեկ դատարանից, Զինվորական գերագույն վարչական դատարանից ու Հաշվիչ պալատից, ընդ որում, յուրաքանչյուր պաշտոնի համար, դատարանի բոլոր անդամների բացարձակ մեծամասնության կողմից, նշված անձն մի մարմնի լիազումար նիստում առաջադրվում են 3 թեկնածուներ: Հանրապետության Նախագահը նաեւ մեկ անդամ է նշանակում Բարձրագույն կրթական խորհրդի ներկայացրած այն 3 թեկնածուներից, որոնք բարձրագույն ուսումնական հաստատությունների դասախոսական կազմից են, բայց խորհրդի անդամ չեն: Նախագահը նշանակում է եւս 3 անդամ եւ 1 փոխարինող անդամ՝ բարձրաստիճան վարչական աշխատողներից եւ իրավաբանների թվից:

Սահմանադրական դատարանի մշտական կամ փոխարինող անդամ նշանակելու համար բարձրագույն ուսումնական հաստատությունների դասախոսական կազմի անդամները, բարձրաստիճան վարչական ծառայողները եւ իրավաբանները պետք է նվազագույնը 40 տարեկան լինեն, ունենան բարձրագույն կրթություն կամ առնվազն 15 տարի լինեն բարձրագույն ուսումնական հաստատության դասախոսական կազմի անդամ, կամ պետական ծառայության, կամ իրավաբանի առնվազն 15 տարվա փաստացի աշխատանքի փորձ ունենան:

Սահմանադրական դատարանն ընտրում է դատարանի նախագահ եւ նախագահի տեղակալ՝ իր մշտական անդամներից, 4 տարի ժամկետով, մշտական անդամների թվի բացարձակ մեծամասնությամբ, գաղտնի քվեարկությամբ: Նրանք կարող են վերընտրվել պաշտոնավարման ժամկետը լրանալու դեպքում:

Սահմանադրական դատարանի անդամները, բացի իրենց հիմնական աշխատանքից, այլ պաշտոն զբաղեցնել կամ մասնավոր գործունեությամբ զբաղվել չեն կարող:

Սահմանադրական դատարանի անդամները պաշտոնավարում են անփոփոխելիության սկզբունքով՝ մինչեւ 65 տարին լրանալը:

Սահմանադրական դատարանում անդամությունն ինքնաբերաբար դադարում է, եթե անդամը մեղավոր է ճանաչվել այնպիսի հանցագործության կատարման մեջ, որը նախատեսում է նրա մեկուսացում իրավաբանական գործունեությունից: Անդամությունը դադարում է նաեւ Սահմանադրական դատարանի բոլոր անդամների բացարձակ մեծամասնության որոշմամբ, եթե որոշակիորեն պարզ է, որ անդամը չի կարող իրականացնել իր պարտականությունները հիվանդության պատճառով (հոդվ. 147):

Հոդված 148 -ը սահմանում է գործառույթների եւ իրավասության ոլորտը, համաձայն որի.

սահմանադրական դատարանը քննում է օրենքների, օրենքի ուժ ունեցող դեկրետների եւ Թուրքիայի Ազգային մեծ ժողովի ընթացակարգային կանոնների սահմանադրականությունը: Թե ըստ ձեւի եւ թե ըստ բովանդակության սահմանադրական լրացումներն ու փոփոխությունները պետք է քննվեն եւ ստուգվեն միայն ձեւական իրավաբանական տեսակետից: Սակայն սահմանադրական դատարանի կողմից չի կարող քննվել օրենքի ուժ ունեցող այն իրավական ակտերի

(դեկրետների) սահմանադրականության հարցը, զրոնք ընդունվել են արտակարգ իրավիճակներում, ռազմական դրության կամ պատերազմի պայմաններում:

Օրենքների ձեւական տեսանկյունից ստուգելը պետք է սահմանափակվի այն հարցի քննությամբ, թե օրենքի ընդունման ժամանակ անհրաժեշտ քվեների քանակը ապահովվե՞լ է, թե՞ ոչ: Սահմանադրական լրացումների ստուգումը պետք է հանգի նրան, թե ապահովվե՞լ են արդյոք անհրաժեշտ քանակությամբ քվեներ սահմանադրական լրացում անելու առաջարկության եւ քվեարկության համար, եւ որքանով է ապահովվել քննարկումներ կազմակերպելու արգելքը հրատապ ընթացակարգերի դեպքում:

Ըստ ձեւի ստուգման դիմում կարող է ներկայացվել Հանրապետության Նախագահի կամ Թուրքիայի Ազգային մեծ ժողովի անդամների առնվազն 1 / 5 կողմից: Ձեւական թերությունների պատճառաբանությամբ ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ դիմումներ տրվել եւ առարկություններ արվել չեն կարող օրենքի ստորագրումից (ուժի մեջ մտնելուց) 10 օր հետո:

Հանրապետության Նախագահի, կառավարության անդամների, սահմանադրական դատարանի, Գերագույն վճռափոխ դատարանի, Պետական խորհրդի, Զինվորական գերագույն վճռաբեկ դատարանի, Զինվորական գերագույն վարչական վճռափոխ դատարանի նախագահների եւ անդամների, այդ դատարանների գլխավոր դատախազների, հանրապետության դատախազի տեղակալների, դատավորների եւ դատախազների, Գերագույն խորհրդի նախագահների եւ անդամների, Հաշվիչ պալատի նախագահի եւ անդամների կողմից կատարված՝ նրանց լիազորություններին առնչվող հանցագործությունների վերաբերյալ գործերը քննում է սահմանադրական դատարանը՝ որպես գերագույն դատական ատյան:

Տվյալ դեպքերով Հանրապետության գլխավոր դատախազը կամ նրա տեղակալը սահմանադրական դատարանում հանդես են գալիս որպես պետական մեղադրող:

149 հոդվածով նախատեսվում է, որ սահմանադրական դատարանը որոշումներ կայացնում է անդամների բացարձակ մեծամասնությամբ, իսկ Սահմանադրության լրացումների վերաբերյալ հարցերով՝ ձայների առնվազն 2 / 3 -ով:

Սահմանադրական դատարանն առաջնահերթության կարգով քննում եւ որոշումներ է կայացնում ձեւական թերությունների հարցերով դիմումների առնչությամբ:

Դատարանն իրավասություն չունի քննելու միջազգային պայմանագրերի սահմանադրականության հարցերը:

Սահմանադրական դատարանը գործերը քննում է գրավոր փաստերի հիման վրա, բացառությամբ այն դեպքերի (որոնք թվարկվեցին նախորդ՝ 148 հոդվածում), երբ հանդես է գալիս որպես Գերագույն դատական ատյան:

Սակայն, անհրաժեշտության դեպքում, բանավոր բացատրություններ տալու նպատակով դատարանը կարող է հրավիրել գործին վերաբերող տեղեկություններ ունեցող ցանկացած անձի, իսկ քաղաքական կուսակցության լուծարման հետ կապված գործի առթիվ սահմանադրական դատարանը պետք է պաշտպանության հնարավորություն տա այդ կուսակցության ղեկավարին կամ ղեկավարի կողմից նշանակված լիազոր ներկայացուցչին՝ Գերագույն դատարանի գլխավոր դատախազի կողմից մեղադրանք առաջադրելուց հետո:

150 հոդվածը կարգավորում է օրենքների սահմանադրականության հարցերով դիմելու կարգը : Նախատեսվում է, որ օրենքի ուժ ունեցող դեկրետների, Ազգային ժողովի ընթացակարգային կանոնների, դրանց առանձին հոդվածների կամ դրույթների հակասահմանադրականության վերաբերյալ (ըստ ձեւի եւ ըստ էության) սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեն հանրապետության Նախագահը, իշխող կուսակցության պառլամենտական խմբերը, ընդդիմադիր հիմնական կուսակցությունը եւ Ազգային մեծ ժողովի անդամների ընդհանուր թվի առնվազն 1 / 5 -ը:

Եթե իշխում են մեկից ավելի քաղաքական կուսակցություններ, ապա դիմելու իրավունքն իրականացնում է առավել շատ թվով անդամներ ունեցող կուսակցությունը:

Սահմանադրական դատարանն է լուծում քաղաքական կուսակցությունների գործունեության դադարեցման հարցը: Այս երկրում սահմանադրական դատարանն իրավասու է սուուգել քաղաքական կուսակցությունների հաշիվները (նման կարգ գործում է նաև Պորտուգալիայում):

Առանձին կարգավորված են ընդհանուր իրավասության դատարանների եւ սահմանադրական դատարանի առնչությունները

(հոդվ. 152):

Եթե որեւէ կոնկրետ գործ քննող ընդհանուր իրավասության դատարան հայտնաբերի, որ օրենքը, օրենքի ուժ ունեցող դեկրետը հակասահմանադրական է, կամ եթե հակասահմանադրականության վերաբերյալ որեւէ կողմի հարցապնդումը լուրջ հիմքեր ունի, ապա դատարանը պետք է հետաձգի գործի քննությունը՝ մինչեւ սահմանադրական դատարանն այդ հարցի կապակցությամբ որոշում կայացնի :

Եթե դատարանը համոզված չէ հակասահմանադրականության վերաբերյալ դիմումի հիմնավորվածության մեջ, ապա այդ դիմումի եւ գործով հիմնական որոշման հարցը լուծում է վճռաբեկ դատարանը:

Սահմանադրական դատարանը գործով որոշում պետք է կայացնի եւ այն հրապարակի դիմումն ստանալու օրվանից ոչ ուշ, քան հինգ ամսվա ընթացքում: Եթե այդ ժամանակամիջոցում որոշում չի կայացվել, ապա առաջին ատյանի դատարանը գործը պետք է ավարտի՝ օրենսդրությանը համապատասխան: Սակայն, եթե սահմանադրական դատարանի կողմից գործով կայացվել է վերջնական որոշում, ապա առաջին ատյանի դատարանը պարտավոր է ղեկավարվել դրանով:

Օրենսդրության միեւնույն դրույթի վերաբերյալ կրկնակի դիմում չի կարող ներկայացվել, եթե 10 տարի չի լրացել սկզբնական դիմումը մերժելու մասին սահմանադրական դատարանի որոշման պաշտոնական հրապարակումից հետո:

Սահմանադրության 153 հոդվածով որոշարկվում են սահմանադրական դատարանի որոշումների բնույթը եւ հրապարակման կարգը: Նախատեսվում է, որ Սահմանադրական դատարանի որոշումները վերջնական են: Իրավական ակտի՝ ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ որոշումները չեն կարող հրապարակվել առանց պատճառների գրավոր հիմնավորման:

Օրենքների, օրենքի ուժ ունեցող դեկրետների կամ դրանց առանձին դրույթների ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ հարցի քննության ընթացքում սահմանադրական դատարանը որպես օրինաստեղծ հանդես գալ չի կարող, եւ չի կարող իր որոշմամբ նոր իրավակիրառություն հաղորդել վիճարկվող ակտին:

Օրենքը, օրենքի ուժ ունեցող նորմատիվ ակտերը, դեկրետները կամ Ազգային մեծ ժողովի ընթացակարգային կանոնները կամ դրանց առանձին դրույթներ դադարում են գործելուց՝ դրանց ուժը կորցնելու վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշումների պաշտոնական հրատարակման օրվանից:

Անհրաժեշտության դեպքում սահմանադրական դատարանը կարող է որոշել նաև իրավական ակտի՝ ուժը կորցնելու վերաբերյալ իր որոշումն ուժի մեջ մտնելու ժամկետը: Այդ ժամկետը որոշման պաշտոնական հրատարակման օրվանից մեկ տարվանից ավելի լինել չի կարող:

Սահմանադրական դատարանի որոշումները պետք է հրապարակվեն անհապաղ, տպագրվեն պաշտոնական թերթում, եւ պարտադիր են կատարման օրենսդիր, գործադիր ու դատական մարմինների, պաշտոնատար անձանց, քաղաքացիների եւ ընկերությունների համար:

Դատարանի գործունեության առանձնահատկություններից, թերեւս, կարելի է առանձնացնել նաև այն, որ նորմատիվ ակտերի սահմանադրականության վերացական վերահսկողության պարագայում դիմում կարող է ներկայացվել տվյալ ակտի հրապարակումից հետո 60 օրվա ընթացքում:

Թուրքիայում սահմանադրական դատարանի հիմնումը նաեւ նպատակ է հետապնդել որոշ առումով հակակշիռ ստեղծել պառլամենտին, որն ունի գրեթե բացարձակ իշխանություն: Սահմանադրական դատարանն այսօր նասանք է կատարում այդ դերը, որովհետեւ գերիշխում է ոչ թե ըստ բնույթի, այլ ըստ ձեւի նորմատիվ ակտերի սահմանադրականության որոշման իրավասությունը: Սահմանափակող հանգամանք է նաեւ վերացական վերահսկողության պարագայում

60 - օրյա ժամանակահատվածը: Այն դեպքում, երբ կոնկրետ վերահսկողությունը համեմատաբար պասիվ է եւ ընդունվող որոշումները չունեն համընդգրկուն բնույթ, ապա նման կարգը թուլացնում է նորմատիվ ակտերի սահմանադրական վերահսկողության ներգործությունը:

## ՀՈՒՆԱՍՏԱՆ

Սահմանադրական վերահսկողության համակարգը Հունաստանում մյուս երկրների համեմատությամբ ունի բազմաթիվ առանձնահատկություններ:

Սահմանադրության մեջ, դատական իշխանություններին նվիրված բաժնում, սահմանված է Գերագույն հատուկ դատարանի հիմնելու եւ այդ մարմնի գործունեության կարգը: Հենց այս դատարանն էլ իրականացնում է սահմանադրական վերահսկողությունը: Նախատեսված է (1975 թ. հունիսի 11-ի Սահմանադրության 100 հոդված), որ Գերագույն հատուկ դատարանի իրավասության մեջ են մտնում.

- պառլամենտական ընտրությունների հետ կապված գանգատների քննությունը,

- ազգային կարեւորություն ունեցող հարցերի գծով Նախագահի դեկրետով անցկացված հանրաքվեների արդյունքների օրինականության ստուգումը,

- պատգամավորի գործունեության անհամատեղելիության կամ օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում պատգամավորական կարգավիճակից նրան զրկելու հարցերը,

-մի կողմից, դատարանների եւ վարչակազմի, Պետական խորհրդի եւ մշտական վարչական դատարանների, մյուս կողմից՝ քաղաքացիական եւ քրեական գործերով դատարանների միջեւ առաջացած կոլիզիաները, ինչպես նաեւ նման իրավիճակները՝ Հաշվիչ պալատի եւ մյուս դատարանների միջեւ,

-օրենքի սահմանադրականության հարցի առնչությամբ, ըստ ձեւի կամ ըստ բովանդակության, առաջացած վեճի քննությունը, երբ առանձին

դրույթների գծով Պետական խորհուրդը, Վճռաբեկ դատարանը կամ Հաշվիչ պալատն ընդունել են հակասական որոշումներ,

- միջազգային պայմանագրերի եւ միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերի բնույթի շուրջ առաջացած վեճերը:

Այս դատարանը կազմված է. Պետական խորհրդի նախագահից, Վճռաբեկ դատարանի նախագահից, Հաշվիչ պալատի նախագահից, ինչպես նաեւ՝ որպես անդամներ ընդգրկված չորս պետական խորհրդականներից եւ Վճռաբեկ դատարանի չորս անդամներից, որոնք նշանակվում են վիճակահանությամբ՝ երկու տարի ժամկետով: Այդ դատարանում նախագահում է կամ Պետական խորհրդի կամ Վճռաբեկ դատարանի նախագահը:

Առանձին հարցերի քննության ժամանակ վիճակահանությամբ դատարանի կազմը լրացվում է նաեւ համալսարանների իրավաբանական ֆակուլտետների երկու պրոֆեսորներով:

Դատարանի որոշումը վերջնական է: Օրենքները, որոնք ճանաչվել են հակասահմանադրական, դադարում են գործելուց այդ մասին դատարանի որոշումը հրապարակելու պահից կամ դատարանի կողմից սահմանված ժամկետից:

Պետական խորհուրդն իր հերթին վերահսկողական իրավասություն ունի գործադիր իշխանության ակտերի նկատմամբ, ինչպես նաև քննության է առնում վարչական վեճերը (Սահմանադրության 95 հոդված):

Փաստորեն, այս համակարգը գլխավոր շեշտը դնում է իշխանությունների գործունեության սահմանադրականության ապահովման վրա եւ ձեւավորված ինստիտուտն աշխատում է դատական տարբեր մարմինների գործառական համակարգման կարգով:

## ՌՈՒՄԻՆԻԱ

Ռումինիան այն երկրներից է, որտեղ սահմանադրական վերահսկողության համակարգը ոչ միայն ունի տիպական առանձնահատկություններ, այլև այստեղ համահավաք ձեւով դրսևորվում են ընդհանրապես այս համակարգին բնորոշ շատ գծեր: Դա վերաբերում է թե՛ վերահսկողության ձեւերին, թե՛ իշխանության տարբեր թեւերի հետ հարաբերություններին եւ թե՛ որոշումների բնույթին ու դրանց ընդունման կարգին:

Սահմանադրական վերահսկողության համակարգը Ռումինիայում նման է Ֆրանսիական տարբերակին, սակայն այն ունի նաև հետաքրքիր տարբերություններ թե՛ նախնական եւ թե՛ հետագա վերահսկողության առումով:

Ռումինիայի սահմանադրական դատարանը հիմնվել է 1991թ. Սահմանադրությամբ (ընդունվել է հանրաքվեով՝ դեկտեմբերի 8-ին): Ունի 9 անդամ, որոնց լիազորությունների ժամկետը 9 տարի է եւ վերընտրման ենթակա չեն (հոդված 140): Դատավորներից 3-ին նշանակում է պառլամենտի պատգամավորների պալատը, 3-ին՝ Սենատը, 3-ին՝ Ռումինիայի Նախագահը: Դատարանն իր անդամներից գաղտնի քվեարկությամբ ընտրում է նախագահ՝ 3 տարի ժամկետով: Դատարանի կազմը 3 տարին մեկ նորացվում է 1 / 3-ով (ըստ նշանակման՝ համամասնական կարգով: Առաջին կազմն ընտրելիս մեկական անդամ նշանակվում են 3 տարով, մեկական՝ 6, եւ մեկական՝ 9 տարով): Սահմանված է նաև (հոդված 141), որ դատավորները պետք է ունենան բարձրագույն իրավաբանական կրթություն, մասնագիտական բարձր կարողություն, առնվազն 18 տարվա մասնագիտական ստաժ, ինչպես նաև, ըստ 142 հոդվածի, չեն կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել ուելե հասարակական աշխատանք: բացառությամբ գիտամանկավարժական աշխատանքի:

Նշանակումից հետո դատավորները երդվում են Ռումինիայի Նախագահի եւ պառլամենտի երկու պալատների նախագահների առջև:

Սահմանադրական դատարանը որոշում է օրենքների համապատասխանությունը Սահմանադրությանը: Ընդ որում, վերահսկողությունն իրականացվում է մինչև այդ օրենքների ստորագրումը եւ պաշտոնական գործողության մեջ դնելը: Սակայն, ի տարբերություն Ֆրանսիայի, վերահսկողությունն այստեղ պարտադիր չէ, այլ իրականացվում է համապատասխան սուբյեկտների դիմումի հիման վրա:

Սահմանադրության 144 հոդվածի համաձայն նման իրավունք ունեն Ռումինիայի Նախագահը, պառլամենտի պալատների նախագահները, պառլամենտական խմբակցությունները, 50 պատգամավոր (341-ից), 25 սենատոր

(143 -ից):

Կարելոր առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ սահմանադրական դատարանն իրականացնում է նաև հետագա վերահսկողություն: Այս դեպքում դատարանը հարցին անդրադառնում է, եթե ընդհանուր իրավասության դատարանը որոշում է կայացրել օրենքի սահմանադրականության հարցով դիմել սահմանադրական դատարան: Այս դեպքում

Սահմանադրության 144 հոդվածի հիման վրա դիմող սուբյեկտ է հանդես գալիս գերագույն դատարանը:

Ի տարբերություն շատ երկրների, Ռուսիայում օրենքների եւ պառլամենտի որոշումների սահմանադրականության հարցով սահմանադրական դատարանի վճիռը վերջնական չէ: Այն կարող է քննության առնվել պառլամենտի կողմից: Վերջինիս յուրաքանչյուր պալատի ձայների 2 / 3-ով իր որոշման վերահաստատելու դեպքում, դատարանն այլեւս իրավասու չէ անդրադառնալ տվյալ ակտի սահմանադրականության հարցին: Կա մեկ բացառություն: Վերջնական է սահմանադրական դատարանի որոշումը պառլամենտի պալատների կանոնակարգերի հարցով: Այս դեպքում պառլամենտն իրավասու չէ քննարկման առարկա դարձնել դատարանի որոշումը: Նման հարց առաջացավ 1994 թվականին, երբ պառլամենտի երկու պալատների նախագահներն առանձին-առանձին դիմեցին սահմանադրական դատարան՝ իրենց պալատների կանոնակարգերի սահմանադրականության հարցերով: Դատարանը երկու դեպքում էլ գտավ, որ դրանք բովանդակում են հակասահմանադրական նորմեր (պատգամավորների պալատի կանոնակարգի 213 դրույթներից 25-ը եւ Սենատի կանոնակարգի 184 դրույթներից 29-ը), եւ պառլամենտը ստիպված եղավ ակտերը համապատասխանեցնել Սահմանադրությանը:

Ռուսիայի սահմանադրական դատարանի լիազորությունների մեջ մտնում են նաեւ Նախագահի ընտրությունների օրինականությանը հետեւելը : Ընտրություններից հետո ընտրական հանձնաժողովը բոլոր փաստաթղթերը ներկայացնում է սահմանադրական դատարան: Վերջինս պարտավոր է 48 ժամվա ընթացքում որոշում ընդունել արդյունքները վավերացնելու կամ չվավերացնելու վերաբերյալ եւ իրապարակել այն: Դատարան, ըստ էության, հսկում է թե որքանով են ճիշտ հաշվարկվել ձայները: Քննությունը գրավոր է եւ կատարվում է դռնփակ նիստում: Կարող են մասնակցել նիստին միայն դատարանի կողմից իրավիքավորները: Սահմանադրական դատարանը քննության է առնում նաեւ Նախագահին պաշտոնանկ անելու հանգամանքները եւ տալիս է եզրակացություն, հետեւում է հանրաքվեների անցկացման կարգին ու օրինականությանը, որոշում է կայացնում կուսակցությունների գործունեության սահմանադրականության վերաբերյալ եւ այլն: Վերջին հարցով դիմելու իրավունքը վերապահված է Նախագահին , 50 պատգամավորի եւ 25 սենատորի: Քննության ժամանակ լսում են նաեւ կուսակցության եւ դատախազության ներկայացուցիչներին:

Դատարանի գործունեությունը կանոնակարգելու համար դատարանի մասին օրենքից բացի սահմանադրական դատարանը 1992թ. հուլիսին պլենար նիստում հաստատել է իր գործունեության կանոնները:

Դատարանի նիստերն իրավագոր են, եթե մասնակցում է անդամների 2/3-ը:

Մինչեւ օրենքի ստորագրումը սահմանադրական վերահսկողություն իրականացնելու համար դիմումն ստանալուց հետո դատարանի նախագահը այդ հարցով ճշտում է կառավարության եւ պառլամենտի պալատների կարծիքը եւ կարող է նշանակել գործով զեկուցող:

Կոնկրետ դիմումների հիման վրա սահմանադրականության հարցերով գործերի քննության համար դատարանի նախագահի կողմից կազմվում է երկու պալատ՝ 3 եւ 5 անդամի կազմով: Առաջինը (3 անդամով) կոչվում է ստորին պալատ, մյուսը՝ հսկիչ պալատ: Ստորին պալատը նշանակում է զեկուցող եւ նաեւ դիմում է կառավարությանը ու պառլամենտի երկու պալատներին՝ տվյալ հարցի վերաբերյալ նրանց կարծիքը ճշտելու համար:

Եթե զեկուցողը գտնում է, որ դիմումը հիմնավոր չէ, կարող է առաջարկել մերժել հարցի քննությունը: Այս որոշումը եթե միաձայն հավանության չի արժանանում, ապա նշանակվում է գործի քննություն, որին տեղյակ են պահվում կողմերը եւ դատախազությունը: Պալատներում վերջնական որոշումներն ընդունվում են ձայների մեծամասնությամբ:

Սահմանադրական դատարանը քաղաքացիների դիմումների հիման վրա վերահսկողություն չի իրականացնում: Դատարանը գործում է համեմատաբար սահմանափակ լիազորություններով: Եվրոպական մյուս երկրների համեմատությամբ սահմանափակ է նաեւ դիմող սուբյեկտների ցանկը: Պետական կառավարման համակարգերում ընդգծված չի զգացվում սահմանադրական վերահսկողության առկայությունը: Այս համակարգը, ինչպես եւ դեռեւս Չայաստանում է, պետական կառավարման համակարգում իր դերին (խոսքը ինստիտուտի գործառնական դերի եւ ոչ թե օրենքով սահմանված գործունեության կարգի մասին է) համապատասխան գործոն չի դարձել:

Ամենահիմնական խնդիրներից մեկը գործող նորմատիվ ակտերի վերացական վերահսկողության բացակայությունն է, որը լուրջ բաց է համակարգային վերափոխումների փուլում գտնվող երկրի



համար: Ինչպես արդարացիորեն նշում էին Ռուսիայի սահմանադրական դատարանի անդամները 1997թ. մարտին կայացած մեր հանդիպումների ժամանակ, գործնականում առաջանում է փակուղային վիճակ, երբ ակնհայտ է, որ գործող օրենքը բովանդակում է Սահմանադրությանը հակասող նորմ, սակայն, նույնիսկ Նախագահն այդ հարցով դատարան դիմելու իրավասություն չունի: Մեր կարծիքով, նորանկախ երկրների համար սահմանադրական վերահսկողության կարելու ազդույն խնդիրներից մեկը հենց հետագա վերագրական վերահսկողության դաշտի հնարավոր ընդլայնումն է:

## **ԼԵՂԱՍՏԱՆ**

Հետաքրքիր առանձնահատկություններ ունի Լեհաստանի սահմանադրական տրիբունալը, որը՝ որպես սահմանադրական վերահսկողության մարմին, սկսել է գործել 1986 թվականի հունվարի 1-ից:

Այն ի սկզբանե ստեղծվել է ոչ թե որպես դատական մարմին, այլ պառլամենտի վերահսկողական ֆունկցիան իրականացնող ինստիտուտ: Հետագայում նրա դերը մեծացվել է եւ այն ստանձնել է սահմանադրական վերահսկողության ֆունկցիաներ: Այն սահմանադրորեն չի համարվում դատական իշխանության մարմին եւ անկախ է օրենսդիր, գործադիր ու դատական իշխանություններից:

Սահմանադրական տրիբունալի անդամներին ընտրում է Սեյմը: Նրանք պետք է լինեն իրավաբաններ, անցնեն 2 տարվա ստաժավորում եւ հանձնեն պետական քննություն, կամ ունենան գիտական աստիճան կամ կոչում, տարիքը չպետք է գերազանցի 70 -ը: Կազմված է 12 մարդուց (նախագահ, տեղակալ, 10 անդամ): Ընտրվում են 8 տարով, 4 տարի հետո նորացվում է կազմի 50 տոկոսը:

Նիստերը նման են գերագույն դատարանի նիստերին. սահմանադրականության հարցերով գործերը լսվում են 5 դատավորի կազմով, մյուս գործերը՝ 3 դատավորի կազմով: Առանձին դեպքերում նախագահը կարող է որոշել գործը քննել ամբողջ կազմով: Օրենքների մեկնաբանության հարցով, երբ որոշումն ունենալու է համընդգրկուն բնույթ, գործը քննվում է լրիվ կազմով:

Գործերի քննությունը գրավոր է: Անդամը հատուկ կարծիքի իրավունք ունի: Կոնկրետ գործերով տարվում է դմբաք բանավոր քննություն: Կողմերը կարող են հանդես գալ անձամբ կամ փաստաբանի միջոցով: Տրիբունալն առաջնորդվում է քաղաքացիական դատավարության կանոններով:

Սահմանադրական տրիբունալի որոշումը՝ օրենքի սահմանադրականության հարցով, ենթակա է քննության Սեյմի կողմից: Եթե Սեյմը գտնում է որոշումը հիմնավոր՝ փոփոխություն է կատարում օրենքում: Եթե մերժում է տրիբունալի որոշումը, այն պետք է արվի ներկաների ձայների առնվազն 2/3-ով, ընդ որում, նիստին պետք է ներկա լինի Սեյմի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին:

Սահմանադրական տրիբունալը քննության է առնում նաեւ կուսակցությունների գործունեության սահմանադրականության հարցը:

Սահմանադրական տրիբունալը երկրի Նախագահի, վարչապետի, գերագույն դատարանի նախագահի, գլխավոր դատախազի, վարչական գերագույն դատարանի նախագահի առաջարկով մեկնաբանում է օրենքները: Մեկնաբանությունը ձեւակերպվում է որպես որոշում: Նման հարցերի քննարկման ժամանակ մասնակցում է տրիբունալի ամբողջ կազմը: Հարցումն անելու պահից ակտի գործողությունը դադարեցվում է՝ մինչեւ որոշում ընդունելը:

Լեհաստանում կա նաեւ Պետական տրիբունալ, որն ընտրում է Սեյմը: Այդ մարմնի նախագահը Գերագույն դատարանի նախագահն է: Այն լսում է բարձրաստիճան պաշտոնյաների դեմ հարուցված մեղադրանքները:

Սահմանադրական տրիբունալը չի լսում միջազգային պայմանագրերի սահմանադրականության վերաբերյալ հարցեր:

Որպես այս համակարգի թերություն է համարվում, որ սահմանադրական տրիբունալի որոշումները վերջնական չեն եւ դրանց ներազդեցությունը թույլ է: Բացի դրանից, չեն ձեւավորվել մարդու

իրավունքների պաշտպանության սահմանադրական վերահսկողության արդյունավետ մեխանիզմներ եւ նախատեսվում է, որ սահմանադրական առաջիկա փոփոխությունների հիմնական հարցերից մեկը թերեւս լինի քաղաքացիներին սահմանադրական տրիբունալ դիմելու իրավունքի վերապահումը:

Նշվածներից բացի, կարելու է նաեւ միջազգային պայմանագրերին օրենքների համապատասխանության հարցի վերահսկումը:

## ՍԼՈՎԵՆԻԱ

Սլովենիայում սահմանադրական դատարանի ստեղծումը նախատեսվել է դեռեւս 1963 թվականին ընդունված Սահմանադրությամբ: Նույն թվականի հունիսին պառլամենտի կողմից ընտրվեցին դատարանի 8 անդամներ եւ նախագահ, որոնք պառլամենտի նախագահի առջեւ երդվեցին 1964 թվականի փետրվարի 15-ին:

1974թ. Սահմանադրությունը զգալի չափով փոխեց դատարանի լիազորություններն ու գործունեության կարգը:

Նախորդ երկու դեպքում էլ Սլովենիան հանդիսանում էր Հարավսլավիայի հանրապետություններից մեկը: Չնայած այն բանին, որ Հարավսլավիայում բոլոր հանրապետություններն անհամեմատ մեծ ինքնուրույնություն ունեին, միեւնույնն է, առանձին հանրապետության սահմանադրական վերահսկողության համակարգն ամբողջական ու վերջնական լինել չէր կարող: Այդ համակարգը, ինչպես նաեւ ողջ դատական իշխանությունն անկախ ու արդյունավետ գործելու հարցում զգալի վերապահումներ ուներ նաեւ ամբողջ երկրի առումով:

Սլովենիայի անկախացումից հետո 1991թվականին ընդունվեց նոր Սահմանադրություն, որում նախատեսվեցին նաեւ փոփոխություններ սահմանադրական վերահսկողության համակարգում:

Ներկայումս սահմանադրական դատարանը համարվում է բարձրագույն մարմինը ոչ միայն նորմատիվ ակտերի սահմանադրականությունն ապիովելու, այլեւ մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում:

Դատարանը կազմված է 9 անդամից: Նախագահն ընտրվում է դատարանի կողմից 3 տարի ժամկետով: Բոլոր դատավորները Հանրապետության Նախագահի ներկայացմամբ հաստատվում են պառլամենտի կողմից՝ 9 տարի ժամկետով, առանց վերընտրման իրավունքի: Սահմանափակումներում որեւէ առանձնահատուկ մոտեցում չկա՝ նույն հիմնական պահանջներն են, ինչ այլ երկրներում:

Գործերի քննության այն առանձնահատկությունը գոյություն ունի, որ անհատական դիմումներով գործեր կարող է քննվել նաեւ դատարանի ոչ լրիվ կազմով: Ի դեպ, իր գործունեությունը կարգավորելու հարցում դատարանն ունի լայն լիազորություններ:

Նախնական վերահսկողության համակարգը գործում է միայն միջազգային պայմանագրերի նկատմամբ: Այս հարցով սահմանադրական դատարան կարող են դիմել Նախագահը, կառավարությունը, ինչպես նաեւ պատգամավորների 1/3-ը:

Սահմանադրական դատարանի հիմնական խնդիրներից մեկը պառլամենտի, Նախագահի եւ կառավարության միջեւ իրավասության շուրջ առաջացած վեճերի լուծումն է:

Գործում են նաեւ վերացական ու կոնկրետ հետազգա վերահսկողության ձևերը: Վերահսկողության օբյեկտ են ինչպես օրենքները, այնպես էլ բոլոր տեսակի նորմատիվ այլ ակտերը:

Կոնկրետ վերահսկողությունն իրականացվում է դատարանների հարցումով եւ իրավասու անձի դիմումի հիման վրա: Այս դեպքում որպես սուբյեկտ են հանդես գալիս նաեւ դատախազը, Սլովենիայի

բանկը, Սարդու իրավունքների պաշտպանը, ինչպես նաև՝ լիազորությունների հարցով վեճերի դեպքում, ցանկացած շահագրգիռ մարմին:

Անձը կարող է սահմանադրական դատարան դիմել նաև ոչ անմիջականորեն իրեն առնչվող գործով: Որպես պարտադիր նախապայման է այն, որ պետք է սպառված լինեն այլ ճանապարհով հարցի լուծման բոլոր հնարավորությունները: Սակայն սահմանադրական դատարանը, եթե գտնում է, որ խախտումն ակնհայտ է ու նորմատիվ ակտի հետագա գործողությունը կարող է ոտնահարել նաև ուրիշների իրավունքները, կարող է, առանց այլ հնարավորությունների սպառման սպասելու, գործն ընդունել քննության: Գործերի քննության ընդունման հարցը որոշվում է 3 դատավորի կազմով՝ ստեղծված կոմիտեներում: Ինչպես իրավացիորեն նշում է դոկտոր Արմեն Մավչիչը, Սլովենիայի փորձը վկայում է, որ հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանադրական վերահսկման նման համակարգն ամենից առաջ արդյունավետ միջոց է իշխանության տարբեր մարմինների կողմից մարդու իրավունքների խախտումները կանխելու համար<sup>44</sup>:

Վերացական վերահսկողության դեպքում որպես դիմող սուբյեկտներ են հանդես գալիս պառլամենտը, պատգամավորների 1/3-ը, Պետական խորհուրդը, կառավարությունը, տեղական կառավարությունների ներկայացուցչական մարմինները, արհմիությունների ներկայացուցիչները:

Նախագահի պաշտոնակության հարցով կարող է դիմել միայն պառլամենտը:

Կուսակցությունների գործունեության սահմանադրականության հարցով սահմանադրական դատարան կարող են դիմել բոլոր նրանք, ովքեր վերացական վերահսկողության կարգով դատարան դիմելու իրավունք ունեն, ինչպես նաև՝ ցանկացած շահագրգիռ անձ:

Պատգամավորների ընտրությունների հարցերով կարող են դիմել ցուցակներում եղած թեկնածուները:

Դատարանի որոշումների կիրարկման ժամկետները սահմանում է դատարանը: Որոշումները վերջնական են եւ պարտադիր կատարման համար: Միաժամանակ դատարանը կարող է ժամանակ տալ սխալն ուղղելու համար:

## ՀՈՒՆԳԱՐԻՎ

Հունգարիայում սահմանադրական վերահսկողությունն ունի այն առանձնահատկությունը, որ օրենքի սահմանադրականության հարցով կարող է դիմել ցանկացած անձ: Այստեղ սահմանադրական դատարանն աչքի է ընկնում իր լայն իրավասությամբ:

Սահմանադրական դատարանի ստեղծումը նախատեսվեց 1989 թվականին ընդունված Սահմանադրությամբ: Դատարանը կազմավորվեց եւ սկսեց գործել 1990թ. հունվարի 1-ից: Սահմանադրական դատարանը չի համարվում դատական հիերարխիայի մաս: Այն հանդես է գալիս որպես անկախ մարմին:

Սահմանադրական դատարանն ունի 15 անդամ, ընտրում է պառլամենտը

(Պետական խորհուրդը)՝ ձայների 2/3 -ով, ծառայության ժամկետն է 9 տարի, որից հետո կարող են եւս մեկ անգամ ընտրվել: Կա տարիքային սահմանափակում՝ մինչեւ 70 տարին լրանալը (45 տարեկանից երիտասարդ լինել չեն կարող): Թեկնածուներ առաջադրում են հանձնաժողովները (յուրաքանչյուր հանձնաժողովից առանձնացվում է մեկը եւ ստեղծվում հատուկ կոմիտե՝ թեկնածուներին ուսումնասիրելու համար): Այս համակարգն ունի այն թերի կողմը, որ պառլամենտը միանձնյա է ձեւավորում դատարանը, որը վերահսկելու է իր իսկ կողմից ընդունված օրենքների սահմանադրականությունը: Չնայած այս հանգամանքը գործնականում ունի նաև այլ դրսևորում: Ներկայումս դատարանի երկու անդամի տեղ թափուր է իսկ եւս երկու անդամի 70 տարին լրանում է 1998 թվականին: Սակայն պառլամենտի եւ սահմանադրական դատարանի միջեւ հակասության սրումը հասցրել է այն բանին, որ ռեալ վտանգ կա թափուր տեղերը չլրացնելու հարցում, որն իր հերթին կարող է կազմալուծել դատարանի աշխատանքը: Հարցն այն աստիճանի է սրվել, որ արծարծվեց

Վեներելի հանձնաժողովի 1997թ. մարտի 7-ի նիստում: Դատարանի անդամն օգտվում է անձեռնմխելիության ինունիտետից եւ կարող է ազատվել իր պարտականությունների կատարումից միայն սեփական նախաձեռնությամբ կամ դատարանի որոշմամբ՝ եթե հիմնավորվում է նրա կողմից պարտականությունների կատարման անհնարինությունը:

Սահմանադրական դատարանի մասին օրենքն ընդունվում է ներկաների ձայների 2/3 -ով (այժմ գործում է 1989թ. օրենքը):

Դատարանն ունի երեք անդամներից կազմված պալատներ: Որոշումներն ընդունվում են թե պլենար նիստերում եւ թե պալատների կողմից: Պալատներն հիմնականում քննության են առնում հետագա կոնկրետ վերահսկողության առարկա հանդիսացող գործերը: Սահմանադրական զանգատները պառլամենտի կողմից ընդունված ակտերի առնչությամբ, ինչպես նաեւ լիազորությունների շուրջ առաջացած վեճերը քննվում են պլենար նիստերում:

Կա նախնական վերահսկողություն (օրենքներ, որոնք ընդունվել են, սակայն չեն հրապարակվել, ինչպես նաեւ Պետական ժողովի կանոնակարգը, միջազգային պայմանագրերը): Փորձը վկայում է, որ նման տիպի միջանկյալ եւ նախնական վերահսկողությունը չափազանց արդյունավետ է հատկապես անցումային իրավիճակում գտնվող պետությունների համար՝ թե հասարակական կայունության եւ թե կայուն օրենսդրական բազա ստեղծելու տեսանկյունից:

Առկա է նաեւ վերացական ու կոնկրետ հետագա վերահսկողությունը: Ընդ որում, բավականին լայն է վերահսկման օբյեկտը՝ ներառում է նաեւ ենթաօենսդրական ակտերը, այդ թվում՝ նախարարների հրամանները:

Վերահսկվում է նաեւ օրենսդրական ակտերի համապատասխանությունը միջազգային պայմանագրերին:

Յունգարիայի սահմանադրական դատարանը իրավասու է նաեւ մեկնաբանել Սահմանադրությունը: Նրա իրավասության մեջ է մտնում հանրաքվեների սահմանադրականության հարցով առաջացած վեճերի լուծումը, ինչպես նաեւ Նախագահի պաշտոնակության հետ կապված հարցով եզրակացություն տալը:

Սահմանադրական դատարանի որոշումները վերջնական են եւ վերանայման ենթակա չեն:

Սահմանադրական դատարանը վերահսկում է ընտրությունների կազմակերպումը, կարող է կասեցնել քաղաքական կուսակցությունների գործունեությունը:

Սահմանադրական դատարանը նորմատիվ ակտերի եւ միջազգային պայմանագրերի սահմանադրականության հարցը որոշելուց զատ իրավասու է նաեւ լուծել պետության բարձրագույն մարմինների միջեւ առաջացած վեճերը, քննության առնելու քաղաքացիների զանգատները՝ իրենց սահմանադրական իրավունքների խախտման հարցերով:

Բացառիկ կարելու լիազորություն է, երբ սահմանադրական դատարանը դիմումի առկայությամբ կամ իր նախաձեռնությամբ քննության է առնում պետական մարմնի, մասնավորապես, պառլամենտի, գործունեության (կամ անգործության) հետ կապված հակասահմանադրական իրավիճակ առաջանալու հարցերը: Այս իրավիճակն ընդունված է անվանել օրինաստեղծ աշխատանքի թերացումների պատճառով ստեղծված հակասահմանադրական իրավիճակ:

Սահմանադրական դատարան կարող են դիմել՝ Յանրապետության Նախագահը, պառլամենտը, դրա մշտական հանձնաժողովները, առնվազն 50 պատգամավոր, կառավարությունը (նաեւ դրա անդամը), դատավորները, գլխավոր դատախազը, քաղաքացիները:

Սահմանադրական դատարանը կարող է գործեր քննել նաեւ սեփական նախաձեռնությամբ (օրինակ, միջազգային պայմանագրերի վերաբերյալ գործերը):

Դատարանի անդամը պետք է ընտրվի համալսարանական պրոֆեսորներից, բարձրակարգ գիտաշխատողներից, իրավաբաններից, որոնք ունենան 20 տարվա մասնագիտական ստաժ եւ չունենան դատվածություն:

Ուշագրավ է նաեւ, որ Հունգարիայում սահմանադրական դատարանի անդամ չի կարող ընտրվել այն անձը, որը վերջին 4 տարում եղել է կառավարության անդամ կամ կուսակցական գործիչ, կամ պաշտոն է զբաղեցրել պետական վարչակազմում:

Դատարանն է ընտրում նախագահին՝ 3 տարի ժամկետով, որը կարող է վերընտրվել:

Սահմանադրական դատավարության կարեւոր առանձնահատկություններից է այն, որ գործերի բանավոր քննությունը պարտադիր չէ: Սակայն դատարանը կարող է նպատակահարմար գտնել եւ կազմակերպել բանավոր քննություն: Դատարանի կողմից որոշումների ընդունման ժամկետային որեւէ սահմանափակում գոյություն չունի:

Դատարանի կանոնակարգը, սահմանադրական դատարանի ներկայացմամբ, հաստատում է պառլամենտը:

Հունգարիայի սահմանադրական դատարանն աչքի է ընկել լայն լիազորություններով ու ակտիվ գործունեությամբ: Իր կազմավորման առաջին չորս տարիների ընթացքում դատարանն ընդունել է ավելի քան 1400 որոշում եւ 60 նորմատիվ ակտ ճանաչել հակասահմանադրական:

Որպես թերություն արձանագրվում է այն հանգամանքը, որ նորմատիվ ակտերի հետագա վերացական վերահսկողության ժամանակ սուբյեկտների ոչ մի սահմանափակում չի դրվում (այդ թվում նաեւ ցանկացած քաղաքացի կարող է նախաձեռնել), որն առաջ է բերում կազմակերպական լուրջ դժվարություններ: Մեր կարծիքով, կա նաեւ էական այլ խնդիր: Բանն այն է, որ Հունգարիայի սահմանադրական դատարանը, ավելի շատ ծանրաբեռնվելով կոնկրետ գործերով ու գերապատվությունը տալով օրենքի տառին, համակարգային վերափոխումների գործում լուրջ տարածայնությունների մեջ մտավ պառլամենտի ու իշխանության մյուս մարմինների հետ: Դա է վկայում նաեւ այն հանգամանքը, որ 1996 թվականին նախապատրաստվել է սահմանադրական փոփոխություն՝ դատարանին զրկելու քաղաքացիների դիմումներով գործեր քննելու իրավասությունից: Բնականաբար, սա նույնպես ծայրահեղ մոտեցում է: Այսուհանդերձ, սահմանադրական վերահսկողության ձեւերի հստակ համակարգի մշակումն այս երկրի համար նույնպես օրակարգային խնդիր է:

## ՍԼՈՎԱԿԻԱ

Ակտիվ սահմանադրական վերահսկողության համակարգով է աչքի ընկնում Սլովակիայի Հանրապետությունը: 1992 թվականի սեպտեմբերի 3-ին ընդունված Սահմանադրությամբ սահմանադրական դատարանը համարվեց անկախ դատական մարմին, որի գլխավոր խնդիրն է երկրում սահմանադրական սկզբունքների պահպանումը:

Պետք է ընդգծել, որ այս երկրում սահմանադրական դատարանը չի համարվում դատական համակարգի մաս: Այն գործում է անկախ: Իսկ դատական ընդհանուր համակարգում բարձրագույն մարմինը գերագույն դատարանն է:

1993 թվականին (15 փետրվարի) Սլովակիայում ուժի մեջ մտավ օրենք, որը կարգավորում է սահմանադրական դատարանի գործունեությունը, ինչպես նաեւ սահմանադրական դատավարության կարգը:

Սլովակիայի սահմանադրական դատարանը կազմված է 10 անդամից: Պառլամենտը Հանրապետության Նախագահին է ներկայացնում դատավորների 20 թեկնածու, որոնցից 10-ին Նախագահը նշանակում է: Այս կարգն առանձնահատուկ է եւ զգալի չափով տարբերվում է այլ երկրների համեմատությամբ: Դատավորները նշանակվում են 7 տարի ժամկետով: Դատավորների կազմից Նախագահը նշանակում է նաեւ դատարանի նախագահ եւ փոխնախագահ:

Սահմանադրական դատարանի դատավորները նախ պետք է բավարարեն այն պահանջները, որոնք առաջադրվում են պատգամավորին: Բացի դրանից, պետք է ունենան իրավաբանական կրթություն, 15

տարուց ոչ պակաս մասնագիտական աշխատանքի ստաժ, 40-ից բարձր տարիք, չի կարող զբաղվել քաղաքական գործունեությամբ ու, բացի գիտամանկավարժականից, այլ վճարովի աշխատանքով:

Ի տարբերություն եվրոպական շատ այլ երկրների, Սլովակիայում դատավորին աշխատանքից ազատելու հարցը լուծում է Հանրապետության Նախագահը, սակայն դրա համար պարտադիր է սահմանադրական դատարանի որոշումը:

Ջգալի առանձնահատկություն ունի դատարանի կառուցվածքը: Այն ունի պլենում եւ 3- ական դատավորներից կազմված երկու պալատ: Դատարանի նախագահը եւ փոխնախագահը պալատների կազմում չեն ընդգրկվում: Յուրաքանչյուր տարի պալատները վերակազմավորվում են: Պալատներում որոշում ընդունվում է 3 դատավորի մասնակցությամբ եւ ձայների մեծամասնությամբ:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ որոշում կայացնելու համար ժամկետային որեւէ սահմանափակում չի դրվում: Բացի դրանից, կողմերը դատարան են ներկայանում փաստաբանի միջոցով:

Որպես բնորոշ առանձնահատկություն կարելի է առանձնացնել նաեւ այն հանգամանքը, որ դատարանի նախագահի կամ փոխնախագահի հանձնարարությամբ դատավորների օգնականները (որոնք պետք է պարտադիր կարգով լինեն իրավաբաններ եւ ունենան նվազագույնը 10 տարվա մասնագիտական աշխատանքի փորձ) կարող են ընդունել ընթացակարգային որոշումներ կամ հարցաքննել վկաներին ու փորձագետներին:

Սլովակիայի սահմանադրական դատարանն ունի լայն լիազորություններ նորմատիվ ակտերի սահմանադրականության որոշման հարցում: Որպես վերահսկման օբյեկտ են հանդես գալիս ոչ միայն օրենքները, այլեւ պետական իշխանության ու տեղական ինքնակառավարման մարմինների բոլոր նորմատիվ ակտերը:

Սահմանադրական դատարանը լուծում է նաեւ իրավասության հարցում իշխանության կենտրոնական մարմինների միջեւ առաջացած վեճերը:

Դատարանը լուծում է նաեւ պատգամավորների ընտրության, հանրաքվեների անցկացման, քաղաքական կուսակցությունների գործունեության կասեցման հետ կապված վեճերը, ինչպես նաեւ որոշում է ընդունում Նախագահին պետական դավաճանության մեջ մեղադրելու հարցով:

Սլովակիայի սահմանադրական դատարանը քննության է առնում նաեւ այն գանգատները, որոնք վերաբերում են պետական իշխանության կենտրոնական եւ տեղական ինքնակառավարման մարմինների այն որոշումներին, որոնք մարդու իրավունքները ոտնահարող նորմեր են բովանդակում: Նման հարցերը քննարկվում են միայն սահմանադրականության տեսանկյունից:

Սլովակիայում որոշ առանձնահատկություններ կան նաեւ որոշումների ընդունման հարցում: Դատարանը կարող է վերանայել իր որոշումը: Դա արվում է այն դեպքում, երբ պալատների միջեւ կա տարակարծություն: Տվյալ դեպքում պլենումը կարող է անդրադառնալ հարցին, վերանայել պալատի որոշումը եւ ընդունել վերջնական որոշում:

## **ԲՈՒԼՂԱՐԻԱ**

Մինչեւ 1991 թվականի հուլիսի 12 -ի Սահմանադրության ընդունումը Բուլղարիայում սահմանադրական վերահսկողությունը գործնականում իրականացրել է պառլամենտը: Նոր Սահմանադրության հիման վրա 1991թ. օգոստոսին ընդունվեց օրենք սահմանադրական դատարանի մասին եւ նույն տարում կազմավորվեց դատարանը:

Բուլղարիայի Սահմանադրությամբ սահմանադրական դատարանը չի դիտվում որպես դատական իշխանության մարմին: Դրա վերաբերյալ դրույթներն ամրագրված են առանձին բաժնում՝ տեղական ինքնակառավարումից հետո:

Ուշագրավ է նաեւ, որ սահմանադրական դատարանը 16.12.1993թ. որոշում է ընդունել այն մասին, որ սահմանադրական դատարանը դատական իշխանության մարմին չէ եւ դուրս է երեք իշխանություններից: Սահմանված է նաեւ, որ եթե հակասություն է առաջանում սահմանադրական դատարանի մասին օրենքի եւ այլ օրենքների միջեւ, ապա առաջինն ունի գերակայություն: Բացի դրանից, սահմանադրական դատավարության կանոնները հաստատվում են դատարանի կողմից, որը նույնպէս ընդգծում է սահմանադրական արդարադատության անկախությունը մյուս մարմիններից:

Կազմված է 12 անդամներից, որոնցից մեկ երրորդին նշանակում է Նախագահը, մեկ երրորդին՝ Ազգային ժողովը եւ մեկ երրորդին ընտրում է գերագույն վճռափոխ դատարանի եւ գերագույն վարչական դատարանի ժողովը:

Ընտրությունը կատարվում է 9 տարով, երեք տարին մեկ համապատասխան ընտրողի կամ նշանակողի կողմից կազմը նորացվում է մեկով:

Անդամները պետք է լինեն 15 տարվա մասնագիտական ստաժ ունեցող բարձր որակավորման իրավաբաններ: Նրանք չեն կարող կուսակցության կամ արհմիության անդամ լինել, այլ վճարովի աշխատանք կատարել, ինչպէս նաեւ չեն կարող կրկին ընտրվել կամ նշանակվել:

Դատարանի նախագահին ընտրում է դատարանը՝ գաղտնի քվեարկությամբ, 3 տարի ժամկետով:

Դատարանի գլխավոր խնդիրը Սահմանադրության գերակայության ապահովումն է:

Իրավասության շրջանակները բավականին լայն են.

- մեկնաբանում է Սահմանադրությունը,

- որոշում է Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքների եւ երկրի Նախագահի ակտերի սահմանադրականությունը<sup>45</sup>,

- քննության է առնում Ազգային ժողով - Նախագահ, Ազգային

ժողով - Նախագահ - կառավարություն իրավասության հարցերով առաջացած վեճերը, ինչպէս նաեւ կենտրոնական եւ տեղական ինքնակառավարման մարմինների վեճերը,

- մինչեւ միջազգային պայմանագրերի վավերացումը քննության է առնում դրանց սահմանադրականության հարցը,

- որոշում է օրենքների համապատասխանությունը Բուլղարիայի կնքած միջազգային պայմանագրերի դրույթներին եւ միջազգային իրավունքի նորմերին,

- որոշումներ է ընդունում կուսակցությունների գործունեության սահմանադրականության հարցերով,

- քննության է առնում Նախագահի ընտրությունների հարցերով առաջացած վեճերը,

- որոշում է ընդունում Ազգային ժողովի կողմից Նախագահին եւ փոխնախագահին ներկայացված մեղադրանքների գործերով,

- որոշում է ընդունում պատգամավորների ընտրությունների հետ կապված վեճերով:

Սահմանադրական դատարան կարող են դիմել.

- Նախագահը,

- պատգամավորների 1/5 -ը,

- կառավարությունը,

- գերագույն վճռափոխ դատարանը,

- գերագույն վարչական դատարանը,

- գլխավոր դատախազը,

- տեղական ինքնակառավարման խորհուրդները՝ կենտրոնական մարմինների հետ իրենց վեճերով:

Գործերի քննությունը կազմակերպվում է նախագահի կողմից նշանակված զեկուցողի միջոցով դիմումի ուսումնասիրությամբ: Ի տարբերություն Հայաստանում սահմանված կարգի, զեկուցողի կողմից գործի հանգամանքները մանրամասն շարադրելուց հետո դատարանը ճշտում է շահագրգիռ կազմակերպությունների եւ անձանց ցանկը եւ վերջիններիս տեղեկացնում է տվյալ գործի մասին, ինչպես նաեւ հնարավորություն է տալիս գրավոր ներկայացնել իրենց նկատառումները: Եթե գործն ընդունվում է քննության, ապա հաշվի են առնվում միայն գրավոր հիմնավորումները:

(բացառությամբ պաշտոնանկության հետ կապված գործերի քննության): Փաստորեն, նիստը տեղի է ունենում առանց կողմերի մասնակցության եւ հիմնականում գրավոր քննության սկզբունքի հիման վրա: Հրապարակային քննություն կարող է կազմակերպվել միայն դատարանի որոշման հիման վրա՝ նախապես ծանուցելով այդ մասին կողմերին ու շահագրգիռ մարմիններին: Կարելի է հանգամանք է նաեւ այն, որ դատարանի իրավաունքն է գործի քննությունը շարունակելու, քննության ձեւը փոխելու, որոշման կայացումը հետաձգելու, նոր ուսումնասիրություն կազմակերպելու եւ նմանատիպ այլ հարցերի որոշումը:

Դատավորները կարող են ներկայացնել հատուկ կարծիք: Պաշտոնանկության հետ կապված գործերով որոշում կայացնելիս քվեարկությունը գաղտնի է:

Սահմանադրական դատարանը պասիվ դեր ունի մարդու իրավունքների պաշտպանության սահմանադրական վերահսկողության գործում՝ քաղաքացիները չունեն դիմելու իրավունք, այս հարցում դատարանների հետ կապը թույլ է: Դրա հետ մեկտեղ, ավելի մեծ ուշադրություն է դարձվում բոլոր տեսակի նորմատիվ ակտերի սահմանադրականության ապահովմանը, ինչպես նաեւ իշխանությունների գործառույթներում սահմանադրական հաշվեկշռի պահպանմանը:

Քննարկումների առարկա է այն հարցը, թե ինչպես հստակեցնել սահմանադրական վերահսկողության օբյեկտները: Այս հարցում կան ծայրահեղ մոտեցումներ: Փորձ է արվում ընդհուպ այդպիսին դիտել իշխանության մարմինների բոլոր որոշումները, այդ թվում՝ վարչական բնույթի, կամ, օրինակ, Նախագահի որոշումները՝ ներման հարցերով: Սակայն ներկայումս ավելի մեծ ուշադրություն է դարձվում իշխանության թե հորիզոնական եւ թե ուղղահայաց համակարգերում առաջացած վեճերի ու անհամաձայնությունների արդյունավետ լուծման մեխանիզմների արմատավորմանը:

Բուլղարիայում կան նաեւ դատարանի որոշումների՝ ուժի մեջ մտնելու որոշ առանձնահատկություններ: Ընտրությունների հետ կապված հարցերով որոշումներն ուժի մեջ են մտնում ընդունման պահից: Մնացած հարցերով որոշումներն ուժի մեջ են մտնում ստորագրվելուց երեք օր հետո, եւ պարտադիր պետք է հրապարակվեն պաշտոնական մամուլում՝ 15 օրվա ընթացքում:

## **ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ**

Սահմանադրական դատարանը համարվում է դատական համակարգի օղակ:

Ռուսաստանի Դաշնությունում 1991-1993 թ թ. գործող սահմանադրական դատարանի աշխատանքները կասեցվեցին Նախագահի 1993թ. սեպտեմբերի 21-ի հրամանագրով: Սա սահմանադրական արդարադատության պրակտիկայում ամենաարտառոց երեւույթն էր: Դրա հետ մեկտեղ, արդարացիորեն ընդգծվում է, որ սահմանադրական դատարանի հիմնական թերությունն այն էր, որ աստիճանաբար վերածվեց քաղաքական գործիքի<sup>46</sup>:

Ինչպես արդարացիորեն նշում է պրոֆեսոր Վիտորուկը, հասարակական գիտակցության մեջ դեռեւս հստակեցված չէ սահմանադրական արդարադատության տեղն ու դերը, որը մի կողմից խանգարում է դատարանի ներուժի արդյունավետ օգտագործմանը, մյուս կողմից՝ անտեղի դժգոհելու առիթ է տալիս<sup>47</sup>:



1994 թվականին սահմանադրական դատարանն էապես վերակառուցվեց:

Սահմանադրական դատարանի մասին 1994թ. հուլիսին ընդունված սահմանադրական օրենքով (հոդվ. 8) նախատեսված է, որ դատարանի անդամ նշանակվելու համար պետք է լրացած լինի թեկնածուի 40 տարին, ունենա բարձրագույն իրավաբանական կրթություն, տասնհինգ տարուց ոչ պակաս իրավաբանական մասնագիտությամբ աշխատանքի ստաժ:

Սահմանադրության 125 հոդվածով նախատեսվում է, որ սահմանադրական դատարանը կազմված է 19 անդամից, որոնց Նախագահի ներկայացմամբ նշանակում է Դաշնության խորհուրդը: Դատարանն իրավասու է սկսել իր աշխատանքները, երբ անդամների 3/4-ը նշանակվել են: Դատարանը գործում է անկախության, կոլեգիալության, հրապարակայնության, մրցակցության եւ կողմերի հավասարության սկզբունքների հիման վրա: Դատավորները նշանակվում են 12 տարի ժամկետով: Առավելագույն տարիքը 70 տարին է: Դատարանի անդամի պարտականությունները կարող են դադարեցվել սեփական ցանկությամբ կամ օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում՝ դատարանի պլենար նիստի որոշմամբ:

Դատարանն իր կազմից գաղտնի քվեարկությամբ, 3 տարի ժամկետով ընտրում է նախագահ, փոխնախագահ եւ քարտուղար:

Դատավորների համար սահմանված է պաշտոնի անհամատեղելիության բավականին խիստ կարգ: Բացի այն, որ նրանք չեն կարող պատգամավոր, կառավարության անդամ լինել, զբաղվել որեւէ վճարովի այլ աշխատանքով, չեն կարող նաեւ որեւէ հասարակական պաշտոն զբաղեցնել (ՍԴ օրենք, հոդված 11): Թուլատրվում է սակայն զբաղվել գիտական, ստեղծագործական, դասախոսական աշխատանքով: Դատավորը ոչ միայն չի կարող լինել քաղաքական կուսակցությունների անդամ, այլեւ չի կարող մասնակցել քաղաքական որեւէ միջոցառման: Դատավորը չի կարող հրապարակավ կարծիք հայտնել այնպիսի հարցերի վերաբերյալ, որոնք երբեւիցե կարող են դառնալ սահմանադրական դատարանի քննության առարկա:

Երկրի Նախագահի, Դաշնության խորհրդի, Պետդումայի, դրանց անդամների 1/5-ի, կառավարության, զերագույն դատարանի, բարձրագույն արբիտրաժային դատարանի, ՌԴ սուբյեկտների օրենսդիր ու գործադիր մարմինների դիմումով սահմանադրական դատարանը քննության է առնում հետեւյալ ակտերի սահմանադրականության հարցը.

ա) դաշնային օրենքներ, Նախագահի, Դաշնության խորհրդի, Պետդումայի, կառավարության նորմատիվ ակտեր,

բ) հանրապետությունների սահմանադրություններ, ինչպես նաեւ Դաշնության սուբյեկտների այլ նորմատիվ ակտեր, կանոնադրություններ, որոնք բովանդակում են Դաշնության իրավասությանն առնչվող հարցեր,

գ) Դաշնության պետական իշխանության ինստիտուտների եւ Դաշնության սուբյեկտների պետական իշխանության մարմինների միջեւ կնքված պայմանագրերը, ինչպես նաեւ սուբյեկտների իշխանությունների միջեւ կնքված պայմանագրերը,

դ) ուժի մեջ չմտած ՌԴ միջազգային պայմանագրերը:

Սահմանադրական դատարանը լուծում է վեճերը.

- պետական իշխանության դաշնային մարմինների միջեւ,

- Դաշնության եւ նրա սուբյեկտների պետական իշխանության մարմինների միջեւ,

-Դաշնության սուբյեկտների պետական իշխանության բարձրագույն մարմինների միջեւ:

Սահմանադրական դատարանը (125 հոդվածի 4 կետ) քաղաքացիների իրավունքների ու ազատությունների հարցերով դիմումների առնչությամբ եւ դատարանի հարցումով ստուգում է օրենքի սահմանադրականության հարցը, որը կիրառվել է կամ պետք է կիրառվի տվյալ գործով:

Սահմանադրական դատարանը Նախագահի, Դաշնության խորհրդի, Պետդումայի, կառավարության, Դաշնության սուբյեկտների օրենսդիր մարմինների հարցումով մեկնաբանում է Դաշնության Սահմանադրությունը (125, 5.կետ):

Սահմանադրական դատարանի իրավասության մեջ է մտնում նաև Դաշնության խորհրդի հարցումով եզրակացություն տալ Նախագահի նկատմամբ դավաճանության կամ այլ ծանր հանցագործության մեղադրանքի ներկայացման սահմանված կարգի պահպանման վերաբերյալ:

Որպես Դաշնային պետություն, Ռուսաստանի համար առանձնահատուկ կարեւորություն ունի Դաշնության տարբեր սուբյեկտների ու կենտրոնական իշխանությունների ներդաշնակ փոխհարաբերությունների ապահովումը: Այս հարցը, հատկապես ԽՍՀՄ փլուզումից հետո եւ աշխարհաքաղաքական ներկա իրավիճակում, դարձել է շատ զգայուն ու նաև առավել պատասխանատու հարց: Ահա թե ինչու նման հարցերով սահմանադրական դատարանի որոշումները խնդրին զգուշավոր ու հավասարակշիռ մոտեցման ընդգծված որակ ունեն: Այդ մասին կարող է վկայել թեկուզ 1997թ. հունվարի 24-ին ընդունած որոշումը՝ « Ուղմուրտիայի Հանրապետության պետական կառավարման մարմինների համակարգի մասին» 1996թ. ապրիլի 17-ին ընդունած Ուղմուրտիայի Հանրապետության օրենքի սահմանադրականության մասին գործով<sup>48</sup>:

Սահմանադրական դատարանի մասին սահմանադրական օրենքը (հոդվ. 3) նախատեսում է, որ ցանկացած հարց քննելիս սահմանադրական դատարանը ձեռնպահ պետք է մնա գործի կոնկրետ փաստական հանգամանքների ուսումնասիրումից, դրանք համարելով այլ մարմինների կամ ընդհանուր իրավասության դատարանների գործը:

Իրենց հերթին, բոլոր կարգի դատարանները, ցանկացած գործի քննության ժամանակ, եթե կասկածում են, որ կիրառվող օրենքը կամ իրավանորմը հակասում են սահմանադրությանը, դիմում են սահմանադրական դատարան: Մինչև սահմանադրական դատարանի կողմից որոշում ընդունելը տվյալ գործի քննությունը կասեցվում է:

Դատարանի գործունեությունը կազմակերպվում է իր կողմից հաստատված կանոնակարգի հիման վրա:

Դատարանը երկպալատ մարմին է: Գործերը քննում է ինչպես պլենար, այնպես էլ պալատների նիստերում: Պալատների անհատական կազմը որոշվում է վիճակահանությամբ:

Պլենար նիստերում կարող է քննարկվել ցանկացած հարց:

Միաժամանակ սահմանադրական դատարանի մասին օրենքի 22 հոդվածով նախատեսվում է, որ պալատների նիստերում նույնպես կարող են քննվել.

- Դաշնության օրենքների, Նախագահի նորմատիվ ակտերի, պառլամենտի պալատների, կառավարության կողմից ընդունված ակտերը,

- Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների իշխանության մարմինների նորմատիվ ակտերը,

- Դաշնության եւ նրա սուբյեկտների իշխանության մարմինների միջև կնքված պայմանագրերը,

- ուժի մեջ չմտած միջազգային պայմանագրերը:

Պալատների նիստերում կարող են լուծվել նաև դատարանի իրավասությանը վերաբերող վեճերը:

Քաղաքացիների դիմումների հիման վրա քննության առնված գործերը սովորաբար լսվում են պալատների նիստերում:

Գործերի քննությունը կազմակերպելու համար ժամանակը կանոնակարգված է, սակայն ժամկետներն այնպիսի խստություն չունեն, ինչպես Ֆրանսիայում կամ Հայաստանում: Գործը քննության ընդունելու (կամ չընդունելու) մասին որոշում պետք է կայացվի դիմումն ստանալուց հետո մեկամսյա ժամկետում: Այնուհետև մեկամսյա ժամկետում պետք է կազմակերպվի գործի քննությունը: Քննությունն անընդհատ է՝ մինչև գործի վերաբերյալ կամ դրա քննության հետաձգման մասին որոշում կայացնելը: Գործի քննությունը դատարանը կարող է հետաձգել, եթե գտնում է, որ այն բավարար նախապատրաստված չէ, կամ կարիք ունի լրացուցիչ ուսումնասիրման:

Ռուսաստանում կա այն առանձնահատկությունը, որ առանձին հարցերի քննության ժամանակ կարող է դատավորը մասնակից չդարձվել քննությանը եւ որոշում կայացնելուն, եթե նա նախկինում մասնակցել է այն ակտի ընդունմանը, որը դարձել է քննության օբյեկտ, ինչպես նաեւ այն դեպքերում, երբ դատավորի օբյեկտիվությունը տվյալ հարցով կասկածահարույց է՝ կապված կողմերի հետ նրա բարեկամական կամ անուսնական կապով: Նման դեպքերում դատավորը կարող է ինքնաբացարկ հայտնել:

Գործի քննության արդյունքներով, որոշման հետ համամիտ չլինելու դեպքում, դատավորը կարող է ներկայացնել գրավոր հատուկ կարծիք, որը հրապարակվում է որոշման հետ միասին:

Անկախ այն բանից, թե նորմատիվ ակտերի սահմանադրականության հարցով ով է դիմել դատարան, որոշումը նույն բնույթն ունի՝ համընդգրկուն է եւ սահմանադրությանը չհամապատասխանելու դեպքում կասեցվում է ակտի կամ նորմի գործողությունը:

Ընդհանրապես նորմատիվ ակտերի սահմանադրական վերահսկողությունն իր բնույթով հետագա վերահսկողություն է: Բացառություն են կազմում միայն միջազգային պայմանագրերը:

Թերեւս առանձնահատուկ ուշադրության է արժանի սահմանադրական դատարանի մասին օրենքի 96 հոդվածով սահմանված՝ քաղաքացիների սահմանադրական իրավունքների ու ազատությունների խախտման հարցերով անհատական ու կոլեկտիվ դիմումների հիման վրա օրենքի սահմանադրականության որոշման կարգը (ի տարբերություն շատ երկրների, Ռուսաստանում քաղաքացիներն այլ նորմատիվ ակտերի սահմանադրականության հարցով սահմանադրական դատարան դիմել չեն կարող):

Անհրաժեշտ է առանձնացնել հետեւյալ հանգամանքները.

- նախ՝ քաղաքացին, կամ նրանց խումբը, կարող են դիմել սահմանադրական դատարան, եթե նրանց սահմանադրական իրավունքը ոտնահարվում է կոնկրետ գործով տվյալ օրենքն իրենց նկատմամբ կիրառելու դեպքում (իրականացվում է կոնկրետ վերահսկողություն),

-երկրորդ՝ դատարանում քաղաքացին կարող է հանդես գալ իր ներկայացուցչի միջոցով,

-երրորդ՝ նման հարցերով դիմելու իրավունք ունեն նաեւ օտարերկրացիները,

չորրորդ՝ ընդհանուր առմամբ քաղաքացու դիմումը միայն առիթ է, որպեսզի սահմանադրական դատարանը քննության առարկա դարձնի տվյալ օրենքի սահմանադրականության հարցը: Այս առնչությամբ հաճախ արտահայտվում է այն մտավախությունը, որ կոնկրետ գործի հետ քաղաքացու դիմելու իրավունքը խիստ չկապելու դեպքում անուղղակի հնարավորություն է ստեղծվում, որ սահմանադրական դատարանն իր հայեցողությամբ նույնպես կազմակերպի գործերի քննություն:

Օրենքով հստակ սահմանված է (հոդված 79), որ սահմանադրական դատարանի որոշումներն ուժի մեջ են մտնում դատարանում հրապարակելուց անմիջապես հետո: Գործնականում ձեւավորվել է այնպիսի կարգ, երբ Ռուսաստանի սահմանադրական դատարանը հաճախ է իր որոշումներում սահմանում դրանց կատարման կարգ, կամ հանձնարարում է համապատասխան մարմիններին կատարել իրենց իրավասության շրջանակներում այս կամ այն գործողությունը: Հատկապես կան նման դրույթներ՝ ուղղված պաշտաներին՝ օրենքներում համապատասխան փոփոխություններ կատարելու կամ հարցին օրենսդրական լուծում տալու պահանջով: Նման մոտեցումը միարժեքորեն չի պաշտպանվում, քանի որ կան նաեւ կարծիքներ, որ դատարանը ստանձնում է օրենսդիրի ֆունկցիաներ:

## ՌԻԿՐԱԻՆԱ

1996թ. ընդունված Սահմանադրությամբ սահմանադրական դատարանը համարվում է սահմանադրական արդարադատության մարմին (հոդվ. 147): Այն լուծում է օրենքների եւ այլ

իրավական ակտերի սահմանադրականության հարցը, ինչպես նաև մեկնաբանում է Սահմանադրությունը եւ օրենքները:

Սահմանադրական դատարանի քննության առարկա են.

- պառլամենտի ընդունած իրավական ակտերը,
- Նախագահի ակտերը,
- նախարարների կաբինետի ակտերը,
- Ղրիմի Ինքնավար Հանրապետության պառլամենտի իրավական ակտերը:

Այս հարցերով, ըստ Սահմանադրության 150 հոդվածի, սահմանադրական դատարան դիմող սուբյեկտներ են. Նախագահը, ոչ պակաս, քան 45 ժողովրդական պատգամավորներ, գերագույն դատարանը, պառլամենտի մարդու իրավունքների գծով պաշտպանը, Ղրիմի Ինքնավար Հանրապետության պառլամենտը:

Սահմանադրական դատարանը Նախագահի կամ կառավարության դիմումով քննության է առնում նաև միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Ուկրաինայի Սահմանադրությանը համապատասխանության հարցը՝ մինչև այդ պայմանագրերը պառլամենտի վավերացմանը ներկայացնելը(հոդվ. 151), ինչպես նաև պաշտոնապես մեկնաբանում է Սահմանադրությունը եւ օրենքները:

Դատարանը պառլամենտի հարցումով կարծիք է հայտնում նաև Նախագահին պաշտոնանկ անելու առնչությամբ:

Ուկրաինայի սահմանադրական դատարանը կազմված է 18 անդամից: Նրանցից 6-ին նշանակում է Հանրապետության Նախագահը (իրամանագիրը պետք է ստորագրեն նաև վարչապետը եւ արդարադատության նախարարը), 6-ին՝ պառլամենտը եւ 6-ին՝ դատավորների համագումարը:

Սահմանադրական դատարանի դատավոր կարող են նշանակվել Ուկրաինայի այն քաղաքացիները, որոնց 40 տարին լրացել է, ունեն բարձրագույն իրավաբանական կրթություն, ոչ պակաս, քան 10 տարվա աշխատանքի ստաժ, վերջին 20 տարում բնակվում են Ուկրաինայում, տիրապետում են պետական լեզվին:

Դատավորները ոչ միայն չեն կարող զբաղվել քաղաքական գործունեությամբ, այլև չեն կարող լինել արհմիության անդամ:

Դատավորները նշանակվում են 9 տարի ժամկետով՝ առանց վերանշանակվելու իրավունքի:

Դատարանի նախագահն ընտրվում է սահմանադրական դատարանի հատուկ լիազումար նիստում՝ դատարանի անդամների թվից, գաղտնի քվեարկությամբ (հոդվ. 148):

Սահմանադրական դատարանի մասին օրենքն ընդունվել է 1996թ. հոկտեմբերի 16-ին: Այդ օրենքի հոդված 2-ում սահմանադրական դատարանի գլխավոր խնդիր է համարվում Սահմանադրության գերակայության ապահովումը: Դատարանին է իրավունք վերապահված հաստատել իր գործունեության կանոնակարգը:

Դատարանում համեմատաբար սահմանափակ են վերահսկման օբյեկտները: Դատարանի հետ չեն առնչվում նաև տեղական ինքնակառավարման մարմինները:

Ուկրաինայի սահմանադրական դատարանը մարդու իրավունքների սահմանադրական վերահսկման հարցերին անմիջական մասնակցություն չունի: Հստակ չէ նաև փոխհարաբերությունները դատական համակարգի այլ ինստիտուտների հետ: Երբ համեմատում ենք Հայաստանի հետ, ապա այս հարցերում վիճակը գրեթե նույնն է:

Այս երկրում սահմանադրական դատարանն իր կազմից ընտրում է մշտական գործող հանձնաժողովներ, որոնց վրա է դրվում նախապատրաստական աշխատանքների կազմակերպումը:

Տարբեր հարցերով կարող են ստեղծվել նաև ժամանակավոր հանձնաժողովներ: Գործերը քննության ընդունելու հարցերը քննարկելու համար յուրաքանչյուր տարի ձևավորվում են նաև դատավորների կոլեգիաներ:

Դատարանում գործերի քննության առավելագույն ժամկետը 3-6 ամիս է՝ կախված գործի բնույթից եւ դիմող սուբյեկտից: Ժամկետը հաշվվում է գործը քննության ընդունելու օրվանից: Դատավորը հատուկ կարծիք ներկայացնելու իրավունք ունի:

1997 թվականի մարտի 7-ին Վեներտիկի հանձնաժողովի օրակարգ էր մտցվել Ուկրաինայի սահմանադրական դատարանի մասին օրենքի փորձաքննության արդյունքները: Թե զեկուցողները եւ թե քննարկման մասնակիցները ընդգծում էին այն միտքը, որ օրենքն ունի էական թերություններ, որոնք դատարանի արդյունավետ աշխատանքի համար շոշափելի խոչընդոտ են: Մասնավորապես, դրանք վերաբերում են հետեւյալներին.

ա) օրենքում մանրամասն ներկայացվում են կանոնակարգային հարցեր, որոնք պետք է կարգավորի դատարանը, ուստի դատարանի համար օրենքով կաշկանդող վիճակ ստեղծելը ճիշտ չէ,

բ) հստակեցված չէ գործերի քննությանը կողմերի մասնակցության կարգը, նրանց իրավունքներն ու պարտականությունները,

գ) Դատարանը հեռու է մնացել մարդու իրավունքների խնդիրներից, մասնակցությունն այդ հարցին թույլ է,

դ) պետական իշխանության մարմինների լիազորությունների հարցով առաջացած վեճերի լուծման մեխանիզմ չի մշակված: Այսպիսի իրավասության հստակեցումն առավել կարելու է այն երկրների համար, որտեղ Նախագահը Սահմանադրությամբ մեծ լիազորություններ է ստացել,

ե) հետագա հստակեցման անհրաժեշտություն ունեն թե դիմող սուբյեկտները եւ թե տարբեր գործերի քննության առանձնահատկությունները:

Բացերից մեկն էլ համարվում է զեկուցողի նշանակման հարցի անորոշությունը եւ տարբեր խմբերի ձեւավորման խճճված կարգը:

Ուշադրության է արժանի հատկապես պրոֆեսոր Բարտոլեի դիտողություններն այն մասին, որ սխալ է այն մոտեցումը, երբ փորձ է արվում սահմանադրական դատարանի լիազորությունները կարգավորել նաև օրենքով: Ըստ նրա, այդ հարցն իր ավարտուն լուծումը պետք է ստանա Սահմանադրությամբ: Հակառակ պարագայում սահմանադրական դատարանի իրական անկախությունը վտանգվում է: Այս հարցադրումը հրատապ է ու կարելու ոչ միայն Ուկրաինայի առնչությամբ: Այն նաև շոշափում է հետեւյալ խնդիրը՝ թե սահմանադրական արդարադատության ո՞ր հարցերը պետք է կարգավորվեն օրենքով, եւ որո՞նք՝ դատարանի կողմից հաստատվող կանոնակարգերի հիման վրա: Տվյալ դեպքում նույնպես ճիշտ լուծումն այն է, երբ չի ոտնահարվում դատարանի ինքնուրույնությունն ու անկախությունը եւ ավելորդ կապանքներ չեն ստեղծվում նրա ակտիվ աշխատանքի համար:

Փորձաքննությունն ակնհայտ վկայում է, որ Ուկրաինայում սահմանադրական վերահսկողության համակարգը հետագա բարելավման լուրջ ճանապարհ պետք է անցնի:

## ՂԱԶԱԽՍՏԱՆ

Ղազախստանի Հանրապետության 1993թ. հունվարի 28 -ի Սահմանադրությամբ նախատեսվում էր օրենքների սահմանադրականության հարցերը լուծել սահմանադրական դատարանի միջոցով (հոդվ. 101): Հետագայում Ղազախստանը որդեգրեց ինստիտուցիոնալ այլ համակարգ՝ ձեւավորվեց սահմանադրական խորհուրդ:

Սահմանադրական խորհրդի մասին ամբողջական իրավական

փաստաթուղթ է Նախագահի 1995թ. դեկտեմբերի 29-ի հրամանագիրը, որը ներկայացվում է որպես սահմանադրական օրենքի ուժ ունեցող իրավական ակտ:

Ի դեպ, Ղազախստանի Նախագահը ստորագրում է նաև հրամանագրեր, որոնք ունեն օրենքի ուժ եւ որոնցով կարող են լրացումներ ու փոփոխություններ կատարվել պառլամենտի կողմից ընդունված որոշումներում:

Սահմանադրական խորհրդի մասին Նախագահի նշված հրամանագրով նախատեսված է, որ սահմանադրական խորհուրդն անկախ է, ենթարկվում է միայն Սահմանադրությանը:

Սահմանադրական խորհրդի իրավասության մեջ են մտնում.

- Նախագահի ընտրության, պատգամավորների ընտրության եւ հանրաքվեների անցկացման հետ կապված վեճերի լուծումը,
- պառլամենտի ընդունած օրենքների սահմանադրականության հարցի որոշումը՝ մինչեւ դրանք Նախագահի ստորագրմանը ներկայացնելը,
- մինչեւ միջազգային պայմանագրերի վավերացումը դրանց սահմանադրականության հարցի որոշումը,
- Սահմանադրության պաշտոնական մեկնաբանումը,
- պառլամենտի կողմից Նախագահին պաշտոնանկ անելու դեպքում մինչեւ որոշման ընդունումը եզրակացություն է տալիս սահմանադրական ընթացակարգի պահպանման վերաբերյալ,
- դատարանների դիմումների հիման վրա որոշում է իրավական ակտի սահմանադրականության հարցը եւ այն կարող է հայտարարել հակասահմանադրական,
- պառլամենտին տարեկան ուղերձ է հղում հանրապետությունում սահմանադրական օրինականության վերաբերյալ:

Սահմանադրական խորհրդին դիմող սուբյեկտների մեջ մտնում են.

- Նախագահը,
- Սենատի նախագահը,
- Մեջլիսի նախագահը,
- պառլամենտի պատգամավորների 1/5-ը,
- վարչապետը,
- դատավորները,
- պետական այն մարմինները եւ պաշտոնատար անձինք, որոնց ակտերի սահմանադրականության հարցը ստուգվում է:

Սահմանադրական խորհուրդը կազմված է 7 անդամներից՝ այդ թվում խորհրդի նախագահը: Բացի այդ, խորհրդի ցմահ անդամ է դառնում երկրի պաշտոնաթող Նախագահը:

Խորհրդի նախագահին նշանակում եւ պաշտոնից ազատում է երկրի Նախագահը: Անդամներից երկուսին նշանակում եւ ազատում է Հանրապետության Նախագահը, երկուսին՝ Սենատի նախագահը, երկուսին՝ Մեջլիսի նախագահը (մոտ է ֆրանսիական տարբերակին):

Խորհրդի անդամների կեսը երեք տարին մեկ նորացվում է:

Խորհրդի անդամ կարող են դառնալ երկրի այն քաղաքացիները, որոնց 30 տարին լրացել է, ունեն բարձրագույն իրավաբանական կրթություն, մասնագիտական աշխատանքի ոչ պակաս 5 տարվա ստաժ: Այս պահանջները չեն վերաբերում պաշտոնաթող Նախագահին:

խորհրդի նախագահի եւ անդամների գործունեության ժամկետը 6 տարի է:

Ապահովվում է խորհրդի անդամի անձեռնմխելիությունը: Խորհրդի անդամը կարող է զբաղվել միայն գիտամանկավարժական եւ ստեղծագործական աշխատանքով, չի կարող լինել պատգամավոր կամ կատարել այլ վճարովի աշխատանք:

Այն հարցերի վերաբերյալ, որոնք կարող են դառնալ սահմանադրական խորհրդի քննարկման առարկա, խորհրդի անդամներն իրավունք չունեն խորհրդատվությամբ զբաղվել, եւ ոչ մի պաշտոնատար կամ այլ անձ իրավունք չունի խորհրդի անդամներից կարծիք հարցնել:

Որոշում ընդունելիս ձայների հավասարության դեպքում նախագահի ձայնը վճռորոշ է:

Խորհրդի անդամն արձանագրությանը կարող է կցել իր գրավոր հատուկ կարծիքը:

Սահմանադրական խորհրդի որոշումները կարող են վերանայվել, եթե.

- խորհուրդը սեփական նախաձեռնությամբ գտնում է, որ փոփոխվել է սահմանադրական նորմը, որի հիման վրա որոշում էր ընդունվել, ինչպես նաեւ բացահայտվել են գործին առնչվող նոր եւ էական հանգամանքներ, որոնք նախապես, որոշումն ընդունելիս, հայտնի չեն եղել խորհրդին,

- որոշման վերաբերյալ առարկություն կարող է ներկայացնել Հանրապետության Նախագահը: Անդամների ձայների 2 / 3 -ով առարկությունը չհաղթահարելու դեպքում խորհրդի որոշումը համարվում է ուժը կորցրած:

Անհրաժեշտ է ընդգծել երեք հանգամանք.

1. խորհրդի անդամների լիազորությունների դադարեցման հարցում իրավունք է վերապահված նրանց նշանակող ինստիտուտներին,
2. խիստ սահմանափակված են հետագա վերացական վերահսկողության հնարավորությունները,
3. խորհուրդն իր որոշումների վերանայման հնարավորություն է ստացել:

Այս հարցերը սահմանադրական վերահսկողության պրակտիկայում վիճահարույց են:

## ՈՒՋՐԵԿՍՍԸ

Երկրի Սահմանադրությամբ (ընդունվել է պառլամենտի կողմից 1992թ. դեկտեմբերի 12-ին,) նախատեսվում է (107 հոդված), որ սահմանադրական դատարանը մտնում է դատական համակարգի մեջ,

համարվում է դատական համակարգի մարմին: Սահմանադրական դատարանի մասին օրենքն ընդունվել է 30.08.1995թ.: Օրենքի առաջին հոդվածով նախատեսվում է, որ դատարանը պառլամենտի (Օլի Մեջլիս), Նախագահի ու կառավարության ընդունած ակտերից բացի քննության է առնում նաեւ պետական իշխանության տեղական մարմինների ակտերի սահմանադրականության հարցը:

Ունի Սահմանադրության եւ օրենքների մեկնաբանման իրավասություն (ամրագրված է Սահմանադրության 109 հոդվածում):

Ընտրվում է պառլամենտի կողմից՝ Հանրապետության Նախագահի ներկայացմամբ, հետևյալ կազմով՝ նախագահ, տեղակալ, հինգ անդամ, այդ թվում Կարակալպակիայի Հանրապետության դատավորը:

Երկրի Սահմանադրության 97 հոդվածի հիման վրա Հանրապետության Նախագահը պաշտոնաթողությունից հետո ցմահ դառնում է սահմանադրական դատարանի անդամ:

Դատարանն ընտրվում է հինգ տարի ժամկետով:

Սահմանադրական դատարանն ունի օրենսդրական նախաձեռնության իրավունք (Սահմանադրության 82 հոդված եւ օրենքի 10 հոդված): Նման իրավասությունը հազվադեպ է հանդիպում սահմանադրական արդարադատության պրակտիկայում: Նորանկախ երկրների համար, մեր կարծիքով, նման իրավասություն պետական օգտակարության մեծ լիցք է բովանդակում: Ընդդիմախոսները պնդում են, որ դատարանի օրենսդրական նախաձեռնությամբ ընդունված օրենքը հետագայում կարող է դառնալ սահմանադրական վերահսկողության օբյեկտ եւ կստեղծվի փակուղային իրավիճակ: Գործնականում դա հաղթահարելի է՝ նման օրենքների նախնական պարտադիր վերահսկման ճանապարհով:

Սահմանադրական դատարանի անդամ կարող է լինել Ռեզերվատանի քաղաքացին՝ քաղաքականության եւ իրավունքի գծով մասնագետներից, որն ունի բարձր բարոյական հատկանիշներ եւ անհրաժեշտ որակավորում (օրենքի 12 հոդված): Սահմանադրության 108 հոդվածում նույնպես նշվում է, որ սահմանադրական դատարան ընտրվում են քաղաքականության եւ իրավունքի ոլորտի մասնագետներ:

Սահմանադրական դատարանի անդամները չեն կարող կատարել այլ վճարովի աշխատանք:

Սահմանադրական դատարանն ղեկավարում են Օլի Մեջլիսը, Հանրապետության Նախագահը, Մեջլիսի նախագահը, պատգամավորների 1/4-ը, Կարակալպակիայի Ժոկարգի Կենտրոնը (պառլամենտը), գերագույն դատարանի նախագահը, բարձրագույն տնտեսական դատարանի նախագահը, գլխավոր դատախազը (օրենքի 19 հոդված):

Գործով որոշումը պետք է կայացվի դիմումն ընդունելուց ոչ ուշ, քան երեք ամսվա ընթացքում (օրենքի 20 հոդված):

Դատարանը դիմումի հիման վրա իրավական ակտի կամ դրա որեւէ դրույթի սահմանադրականության հարցը քննելիս իրավասու է քննության առնել տվյալ դրույթի հետ առնչվող ցանկացած այլ իրավական ակտի կամ դրա համապատասխան դրույթի սահմանադրականության հարցը՝ անկախ նրանից, թե այդ մասին դիմումում նշված է, թե՛ ոչ (օրենքի 25 հոդված):

Նախագահի ձայնը, ձայների հավասարության դեպքում, վճռորոշ է:

Դատարանի անդամները (դատավորները) ունեն հատուկ կարծիքի իրավունք, որը կցվում է արձանագրությանը:

Որոշումները վերջնական են, սակայն կարող են վերանայվել, եթե.

- բացահայտվել են էական նոր հանգամանքներ, որոնք հայտնի չեն եղել սահմանադրական դատարանին որոշումն ընդունելու պահին,
- փոխվել է սահմանադրական նորմը, որի հիման վրա որոշում է կայացվել,
- սահմանադրական դատարանն ընդունում է, որ որոշումը կայացվել է կանոնակարգային խախտումներով (օրենքի 28 հոդված):

Համակարգի հիմնական թերությունը քաղաքացիների դիմումների հիման վրա մարդու իրավունքների պաշտպանության սահմանադրական վերահսկողության գործուն մեխանիզմների բացակայությունն է: Առանձնացվում է նաեւ այն հանգամանքը, որ նեղ են դատարանի լիազորություններն իշխանության մարմինների միջև առաջացած վեճերը լուծելու հարցում:



## ՎՐԱՍՏԱՆ

Սահմանադրությամբ (ընդունվել է 1995թ. օգոստոսի 24-ին) սահմանադրական դատարանը համարվում է դատական իշխանության մարմին (հոդված 82, 83): Սահմանադրական դատարանի լիազորությունները, ստեղծման եւ գործունեության կարգը որոշվում են Սահմանադրությամբ եւ օրգանական օրենքով:

Կազմված է 9 դատավոր անդամներից (հոդված 88), ընդ որում, 3-ին նշանակում է Հանրապետության Նախագահը, 3-ին՝ խորհրդարանը (ընտրում է ցուցակային կազմի առնվազն 3/5 -ով), 3- ին՝ գերագույն դատարանը:

Պաշտոնավարության ժամկետը 10 տարի է: Դատարանն իր կազմից 5 տարով ընտրում է նախագահ (թեկնածությունն առաջադրում է Հանրապետության Նախագահը՝ համաձայնեցնելով պառլամենտի եւ գերագույն դատարանի նախագահի հետ): Միեւնույն անձը մեկ անգամից ավելի նախագահ ընտրվել չի կարող: Դատարանի կազմում վերընտրվել չի թույլատրվում:

Անդամ կարող է դառնալ 35 տարին լրացած, բարձրագույն իրավաբանական կրթությամբ Վրաստանի քաղաքացին:

Դատարան կարող են դիմել. երկրի Նախագահը, պառլամենտի անդամների 1/5-ը, դատարանները, Աբխազիայի եւ Աջարիայի բարձրագույն ներկայացուցչական մարմինները, ժողովրդական պաշտպանը, քաղաքացիները:

Սահմանադրական դատարանը (Սահմանադրություն, հոդվ.89).

- որոշում է օրենքների, Նախագահի, Աբխազիայի եւ Աջարիայի իշխանության բարձրագույն մարմինների նորմատիվ ակտերի համապատասխանությունը Սահմանադրությանը,
- քննության է առնում պետական մարմինների միջեւ իրավասության տարանջատման վերաբերյալ վեճերը,
- քննության է առնում քաղաքացիների քաղաքական միավորումների ստեղծման եւ գործունեության սահմանադրականության հարցերը,
- քննության է առնում հանրաքվեի եւ ընտրությունների անցկացման սահմանադրականության հետ կապված վեճերը,
- քննարկում է միջազգային պայմանագրերի եւ համաձայնագրերի սահմանադրականության հարցերը,
- քաղաքացիների դիմումի հիման վրա քննության է առնում Վրաստանի Սահմանադրության երկրորդ գլխում նախատեսված հարցերը կարգավորող նորմատիվ ակտերի սահմանադրականության հարցը:

Օրգանական օրենքով սահմանվում է, որ սահմանադրական դատարանը քննության է առնում նաեւ.

- պառլամենտի անդամի լիազորությունների ճանաչման կամ ժամկետից շուտ դադարեցման հարցը,
- Նախագահի, գերագույն դատարանի նախագահի, կառավարության անդամի, գլխավոր դատախազի, վերահսկիչ պալատի նախագահի եւ ազգային բանկի խորհրդի անդամների կողմից Սահմանադրության խախտման հետ կապված հարցերը:

Սահմանադրության 63 եւ 75 հոդվածներով նախատեսված է, որ եթե երկրի Նախագահի պաշտոնանկության հարց է դրվում, ապա նրա գործունեության սահմանադրականության հարցով եզրակացությունը տալիս է սահմանադրական դատարանը (Սահմանադրության խախտումը հաստատում կամ մերժում է սահմանադրական դատարանը), իսկ պետական դավաճանության կամ այլ հանցագործությունների հատկանիշների առկայությունը հաստատում է գերագույն դատարանը:

Նման մոտեցումը եզակիներից է սահմանադրական արդարադատության պրակտիկայում, սակայն, մեր կարծիքով, տրամաբանական եւ ուսանելի լուծում է:

Սահմանադրական դատարանի մասին օրգանական օրենքով (ընդունվել է 1996թ. հունվարի 31-ին, փոփոխությունները կատարվել են 1996թ. մարտի 21 -ին) նախատեսվում է.

- սահմանադրական դատարանի նախագահն ունի երկու տեղակալ, որոնք ընտրվում են դատարանի կողմից,

- սահմանադրական դատարանը կազմված է պլենումից եւ երկու կոլեգիաներից (սահմանադրական դատարանի մասին օրենքի 11 հոդված):

Կոլեգիաների կազմի մեջ մտնում են 4 - ական անդամներ եւ դրանք ղեկավարվում են նախագահի տեղակալների կողմից: Կոլեգիաների կազմը ներկայացնում է նախագահը, հաստատում է պլենումը:

Պլենումը քննում է նորմատիվ ակտերի, միջազգային պայմանագրերի սահմանադրականության, հանրաքվեների ու ընտրությունների արդյունքների, պաշտոնատար անձանց կողմից Սահմանադրության խախտման հետ կապված հարցերը:

Կոլեգիալ կարգով լսվում է պետական իշխանության մարմինների իրավասության, կուսակցությունների հետ կապված վեճերի, քաղաքացիների դիմումների, պատգամավորների լիազորությունների հետ առնչվող վեճերը:

Եթե որոշումն ընդունելիս կողմ եւ դեմ ձայները հավասար են, ապա դիմումը համարվում է մերժված (օրենք, հոդվ. 21):

Սահմանադրական դատարանի որոշումների կամ եզրակացությունների տակ ստորագրում են գործի քննությանը մասնակցած բոլոր անդամները:

Ընդունվել է առանձին օրենք՝ սահմանադրական դատավարության մասին (21.03.1996թ.):

Այս մարմնի առաջին մեկ տարվա աշխատանքի փորձը վկայում է, որ Սահմանադրությամբ եւ օրգանական օրենքով նախատեսված բավականին լայն լիազորությունների արդյունավետ իրականացման համար, թերեւս, քաղաքացիների դիմումների հարցում որոշ գոյիչների համակարգի անհրաժեշտություն է առաջանում: Բացառված չէ ժամանակի ընթացքում այստեղ հունգարական ախտանիշի ի հայտ գալը:

Տրամաբանական չի թվում նաեւ այն պարագան, որ դատարանի նախագահը գործերի քննությանը համեմատաբար պասիվ մասնակցություն ունի եւ չի գլխավորում կոլեգիաներից որեւէ մեկը, որտեղ եւ առավելապես քննարկվում են դատարան մոտք եղած գործերը:

## ՂՐՂՁՍՏԱՆ

1993թ. մայիսին ընդունված Սահմանադրությամբ եւ 1993թ. դեկտեմբերի 18-ին ընդունված օրենքով ամրագրվել են այս երկրի սահմանադրական դատարանի գործունեությանը բնորոշ մի շարք առանձնահատկություններ.

- սահմանադրական դատարանը դատական համակարգի մարմին է,
- անդամներին Հանրապետության Նախագահի ներկայացմամբ ընտրում է պառլամենտը՝ 15 տարով,
- սահմանադրական դատարանը կազմված է նախագահից, տեղակալից եւ 7 անդամներից,
- եզրակացություն է տալիս ոչ միայն Հանրապետության Նախագահի եւ սահմանադրական դատարանի անդամների, այլեւ գերագույն դատարանի անդամներին ու բարձրագույն արբիտրաժային դատարանի անդամներին պաշտոնանկ անելու պարագայում,
- համաձայնություն է տալիս տեղական դատարանների դատավորներին քրեական պատասխանատվության ենթարկելու դեպքում,
- եզրակացություն է տալիս Սահմանադրության փոփոխությունների եւ լրացումների վերաբերյալ.
- ուժը կորցրած է ճանաչում տեղական ինքնակառավարման մարմինների այն որոշումները, որոնք հակասում են Սահմանադրությանը,
- սահմանված է այն կարգը, որ նախագահական ընտրություններից հետո 7 օրվա ընթացքում կենտրոնական ընտրական հանձնաժողովը, առանց որեւէ դիմումի, օրենքով սահմանված կարգով ընտրությունների արդյունքները ներկայացնում է սահմանադրական դատարան: Վերջինս հաստատում է արդյունքները եւ այն պաշտոնապես հրապարակում է սահմանադրական դատարանի նախագահը:

## ԱՂՐԲԵՋԱՆ

Աղրբեջանի Սահմանադրությամբ (ընդունվել է 1995թ դեկտեմբերին)

Նախատեսված է.

Սահմանադրական դատարանը դատական իշխանության մարմին է

(հոդված 125, կետ 2): Բոլոր կարգի դատավորներին, այդ թվում սահմանադրական դատարանի անդամներին, ներկայացվում են նույնատիպ պահանջներ՝ լինի 30 տարին լրացած, ունենա ընտրելու իրավունք, բարձրագույն իրավաբանական կրթություն եւ իրավաբանական աշխատանքի առնվազն 5 տարվա մասնագիտական ստաժ: Թույլատրվում է զբաղվել գիտական կամ գիտամանկավարժական գործունեությամբ:

Սահմանադրության 130 հոդվածի համաձայն սահմանադրական դատարանի անդամներին՝ Նախագահի ներկայացմամբ, նշանակում է Միլի Մեջլիսը:

Սահմանադրական դատարանը Հանրապետության Նախագահի, Միլի Մեջլիսի, կառավարության, գերագույն դատարանի, դատախազության, Նախիջեւանի

Ալի Մեջլիսի հարցումով որոշում է.

- օրենքների, Նախագահի ակտերի, պառլամենտի որոշումների, կառավարության ակտերի, գործադիր իշխանության կենտրոնական մարմինների նորմատիվ ակտերի համապատասխանությունը Սահմանադրությանը,

- Նախագահի, կառավարության, գործադիր իշխանության կենտրոնական մարմինների ակտերի համապատասխանությունը օրենքներին,
- կառավարության, գործադիր իշխանության կենտրոնական մարմինների ակտերի համապատասխանությունը Նախագահի հրամանագրերին,
- օրենքով նախատեսված դեպքերում՝ գերագույն դատարանի որոշումների համապատասխանությունը Սահմանադրությանը եւ օրենքներին,
- տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների համապատասխանությունը Սահմանադրությանը, օրենքներին, Նախագահի հրամանագրերին, կառավարության որոշումներին (Նախիջեւանում՝ նաեւ վերջինիս Սահմանադրությանը, օրենքներին, կառավարության որոշումներին),
- միջազգային պայմանագրերի համապատասխանությունը Սահմանադրությանը եւ միջկառավարական պայմանագրերի համապատասխանությունը՝ Սահմանադրությանը եւ օրենքներին,
- քաղաքական կուսակցությունների կամ այլ հասարակական միավորումների արգելման հարցը (կետ-7),
- Նախիջեւանի Սահմանադրության, օրենքների, Մեջլիսի եւ կառավարության որոշումների համապատասխանությունը Ադրբեջանի Սահմանադրությանը, Նախիջեւանի օրենքների, կառավարության որոշումների համապատասխանությունը Ադրբեջանի օրենքներին, Նախիջեւանի կառավարության որոշումների համապատասխանությունը Ադրբեջանի Նախագահի հրամանագրերին եւ կառավարության որոշումներին,
- որոշումներ է ընդունում նաեւ օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների միջեւ առաջացած վեճերի վերաբերյալ:

Նախատեսված է նաեւ (130- 4 մաս), որ Նախագահի, Մեջլիսի, կառավարության, գերագույն դատարանի, գլխավոր դատախազի եւ Նախիջեւանի Մեջլիսի հարցումով մեկնաբանում է Սահմանադրությունը եւ օրենքները:

## ՄՈՒՂՈՎԱ

Սահմանադրական դատարանը չի դիտվում որպես դատական համակարգի մարմին եւ այդ երկրի Սահմանադրության մեջ տրված է առանձին, ինքնուրույն բաժնով (բաժին 5 - «Սահմանադրական դատարան», 134- 140 հոդվածներ):

Լիազորությունները.

- նորմատիվ ակտերի եւ միջազգային պայմանագրերի սահմանադրականության որոշում,
- Սահմանադրության մեկնաբանում,
- կարծիքի հայտնում Սահմանադրության փոփոխությունների վերաբերյալ,
- հանրաքվեների արդյունքների վավերացում,
- պառլամենտի ցրման, Հանրապետության Նախագահի պաշտոնանկության վերաբերյալ հարցի հիմնավորվածության հաստատում,

- քննության է առնում այն հարցերը, որոնց առարկան կուսակցությունների գործունեության սահմանադրականությունն է:

Սահմանադրական դատարանը կազմված է 6 դատավորներից, որոնք նշանակվում են 6 տարի ժամկետով. 2-ը՝ Հանրապետության Նախագահի կողմից, 2-ը՝ պառլամենտի եւ 2-ը՝ մագիստրատուրայի բարձրագույն խորհրդի:

Անդամները գաղտնի քվեարկությամբ ընտրվում են նախագահ: Դատավորները պետք է ունենան բարձրագույն իրավաբանական կրթություն, ոչ պակաս 15 տարվա գիտական, մանկավարժական կամ իրավունքի բնագավառում գործնական աշխատանքի ստաժ:

## ԼիՏվա

Սահմանադրությամբ (ընդունված հանրաքվեով՝ 1992թ. հոկտեմբերի 25 -ին) սահմանադրական դատարանը չի համարվում որպես դատական իշխանության մարմին: Դրա վերաբերյալ դրույթներն ամրագրված են առանձին գլխում (գլուխ 8):

Սահմանադրական դատարանը գործում է 1993թվականից եւ որոշումներ է ընդունում Սեյմի ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանության եւ Հանրապետության Նախագահի ու կառավարության ակտերի՝ Սահմանադրությանն ու օրենքներին համապատասխանության հարցերով:

Կազմված է 9 անդամից, նշանակվում են 9 տարով, երեք տարին մեկ թարմացվում է մեկ երրորդով: Նշանակվում է Սեյմը՝ Հանրապետության Նախագահի (3), Սեյմի նախագահի (3), գերագույն դատարանի նախագահի (3) ներկայացմամբ:

Այդ կազմից Հանրապետության Նախագահի ներկայացմամբ Սեյմը նշանակում է սահմանադրական դատարանի նախագահ: Սահմանադրական դատարանի անդամ կարող են լինել բարձրագույն իրավաբանական կրթություն եւ մասնագիտական ստաժ (10 տարուց ոչ պակաս) ունեցող Լիտվիայի քաղաքացիները:

Սահմանադրական դատարանի անդամների առնչությամբ Սեյմը կարող է պաշտոնանկության արարողակարգ կիրառել:

Որոշումներ ընդունելիս ձայների հավասարության դեպքում դատարանի նախագահի ձայնը վճռական է:

Սահմանադրական դատարանը եզրակացություն է տալիս Նախագահի եւ Սեյմի անդամների ընտրությունների ընթացքում օրենքի խախտումների վերաբերյալ:

Սահմանադրական դատարանը որոշում է նաեւ միջազգային պայմանագրերի սահմանադրականության հարցը, ինչպես նաեւ Հանրապետության Նախագահի առողջական վիճակի համապատասխանությունն իր լիազորությունների կատարման պահանջին: Սահմանադրական դատարանը եզրակացություն է տալիս Սեյմի անդամների եւ պետական այլ անձանց գործողությունների սահմանադրականության վերաբերյալ, երբ դրված է նրանց իմպիչմենտի հարցը:

Դիմելու իրավունք ունեն կառավարությունը, Սեյմի 1/5-ը եւ դատավորները:

Կառավարության ակտերի սահմանադրականության հարցով կարող է դիմել նաեւ Նախագահը: Դիմումի դեպքում ակտի գործողությունը կասեցվում է:

Միջազգային պայմանագրերի հարցով դիմում է Նախագահը:

Օրենքով նախատեսված է, որ դիմումն ստանալու օրվանից 4 ամսվա ընթացքում դատարանը պարտավոր է գործը քննել եւ որոշում կայացնել: Սակայն միաժամանակ դատարանին իրավաունք է տրված որոշմամբ սահմանել այլ ժամկետ:

Լիտվիայում իրականացվում է միայն հետագա վերացական վերահսկողություն: Տարբերությունն այն է, որ դատավորները նույնպես նորմատիվ ակտերի սահմանադրականության հարցում հանդես են գալիս որպես վերացական վերահսկողության սուբյեկտ:

Կա նաեւ այն առանձնահատկությունը, որ Սեյմի կողմից բոլոր տիպի պաշտոնանկության հարցերը քննելիս սահմանադրական դատարանը եզրակացություն է տալիս նրանց գործողությունների սահմանադրականության վերաբերյալ:

Դատարանն իրավասու է ընդունել նաեւ ժամանակավոր որոշումներ, երբ գործը քննության կամ նախապատրաստման փուլում է: Սա ուշադրության արժանի հանգամանք է:

Լիտվայում նույնպես հիմնական թերություններից մեկը քաղաքացիների՝ սահմանադրական դատարան դիմելու հնարավորության սահմանափակումն է:

## ԷՍՏՈՆԻԱ

Էստոնիայի Սահմանադրությամբ (ընդունված 1992թ. հունիսի 28 -ին՝ հանրաքվեով) նախատեսված է ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՆՑԼԵՐԻ յուրահատուկ ինստիտուտ (հոդվածներ 139 - 145), որը պետք է հսկի նորմատիվ ակտերի համապատասխանությունը Սահմանադրությանը: Արդարադատության կանցլերը, առաջարկությունների ուսումնասիրման հիման վրա զեկուցագիր է ներկայացնում Պետական ժողովին:

Սահմանադրության 76, 85, 101, 138, 153 հոդվածներով նախատեսված դեպքերում առաջարկությամբ դիմում է պառլամենտին՝ դատական պատասխանատվության կանչելու Պետական ժողովի անդամին, Հանրապետության Նախագահին, կառավարության անդամին, պետական հսկիչին, Պետական դատարանի նախագահին կամ այդ դատարանի անդամին:

Նշանակվում է 7 տարով՝ Պետական ժողովի կողմից, Հանրապետության Նախագահի առաջարկով:

Կարող է վճռական ձայնի իրավունքով մասնակցել կառավարության կամ պառլամենտի նիստերին:

Եթե Արդարադատության կանցլերը գտնում է, որ օրենսդիր, գործադիր կամ տեղական ինքնակառավարման մարմնի նորմատիվ ակտը հակասում է Սահմանադրությանը, ապա տեղեկացնում է այն ընդունողին, որ 20 -օրյա ժամկետում վերացվի հակասությունը: Եթե դա չի արվում, ապա Կանցլերը դիմում է Ազգային դատարան՝ այդ ակտն անվավեր ճանաչելու հայցով: Էստոնիայում դատական եռաստիճան համակարգ գոյություն ունի: Ազգային դատարանը փաստորեն վճռաբեկ դատարանի իրավասություն ունի եւ միաժամանակ սահմանադրական վերահսկողություն է իրականացնում: Սահմանադրական դատավարության մասին օրենքն ընդունվել է 1993թ. մայիսի 5-ին, իսկ առաջին գործը լսվել է 1993թ. հունիսի

22 -ին: Ազգային դատարանը օրենքով նախատեսված կարգով բաժանված է պալատների: Սահմանադրական արդարադատության հարցերով զբաղվում է այդ նպատակով ստեղծված մասնագիտացված պալատը: Առանձին դեպքերում հարցը կարող է քննության առարկա դառնալ Ազգային դատարանի բոլոր դատավորների մասնակցությամբ: Ազգային դատարանի սահմանադրական պալատը կազմված է 5 դատավորից: Ազգային դատարանի նախագահը միաժամանակ այս պալատի նախագահն է: Դատավորներն ընտրվում են Էստոնիայի դատավորների ընդհանուր ժողովի կողմից՝ 5 տարի ժամկետով (եւս 5 տարով կարող են վերընտրվել): Թեկնածություններ առաջադրում է Ազգային դատարանի նախագահը: Վերջինիս նշանակում է պառլամենտը՝ Նախագահի առաջարկությամբ:

Սահմանադրական պալատի դատավորների համար օրենքը նախատեսում է 30 տարեկանից մեծ պետք է լինեն, ճանաչված լինեն որպես որակյալ իրավաբան, չեն կարող զբաղվել այլ վճարովի աշխատանքով (բացի դասախոսական եւ գիտական աշխատանքից), իրավունք չունեն զբաղվելու քաղաքական գործունեությամբ:

Գործերի քննությունը հիմնականում դռնբաց է: Քննությունը կարող է կազմակերպվել նվազագույնը 3 դատավորի մասնակցությամբ: Եթե դատավորներից թեկուզ մեկն ունի հատուկ կարծիք, ապա գործի քննությունը կարող է տեղափոխվել Ազգային դատարանի ընդհանուր նիստ:

Սահմանված են ժամկետային տարբեր մոտեցումներ: Այն դեպքում, երբ նորմատիվ ակտի սահմանադրականության հարցով դիմել է երկրի Նախագահը, ապա գործի քննության եւ որոշում կայացնելու համար մեկ ամիս ժամկետ է սահմանված:

Գործերի քննության ընթացքում կողմերի չներկայանալը որեւէ խոչընդոտ չի համարվում քննությունը շարունակելու եւ որոշում կայացնելու համար: Դատարանն իրավասու է նաեւ քննությունը հետաձգելու մասին որոշում կայացնել:

Օրենքով նախատեսված է նաեւ պառլամենտի կողմից ընդունված, սակայն դեռեւս Նախագահի կողմից չստորագրված օրենքների վերացական վերահսկման հնարավորությունը: Վերահսկողության օբյեկտ են նաեւ ուժի մեջ մտած բոլոր տեսակի նորմատիվ ակտերը, այդ թվում՝ գործադիր իշխանության կենտրոնական ու տեղական բոլոր մարմինների:

Արդարադատության կանցլերից բացի դիմող սուբյեկտ են հանդես գալիս նաեւ երկրի Նախագահը եւ դատարանները՝ իրենց կողմից քննվող կոնկրետ գործերով:

Արդարադատության կանցլերը տարեկան մեկ անգամ պառլամենտ տեղեկանք է ներկայացնում նորմատիվ ակտերի սահմանադրականության վերաբերյալ:

Նա իր աշխատակազմը ղեկավարում է նախարարի համար սահմանված կարգով:

Փաստորեն էստոնիայում սահմանադրական վերահսկողությունն իրականացվում է ընդհանուր իրավասության բարձրագույն դատարանի եւ Արդարադատության կանցլերի ինստիտուտի միջոցով:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

Սահմանադրության 6-րդ գլուխը նվիրված է դատական իշխանությանը, որի կազմում է դիտարկվում նաեւ սահմանադրական դատարանը:

Սահմանադրության 100 հոդվածով նախատեսվում է, որ սահմանադրական դատարանը օրենքով սահմանված կարգով.

1) որոշում է օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կարգադրությունների, կառավարության որոշումների համապատասխանությունը Սահմանադրությանը.

2) մինչեւ միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը.

3) լուծում է հանրաքվեների, Հանրապետության Նախագահի եւ պատգամավորների ընտրությունների արդյունքների հետ կապված վեճերը.

4) անհաղթահարելի կամ վերացած է ճանաչում Հանրապետության Նախագահի թեկնածուի համար առաջացած խոչընդոտները (նման իրավասություն ամրագրված է միայն Ֆրանսիայի Սահմանադրությամբ).

5) եզրակացություն է տալիս Հանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին.

6) եզրակացություն է տալիս Սահմանադրության 55 հոդվածի 13 եւ 14 կետերով նախատեսված միջոցառումների մասին (13 կետը Նախագահի այն իրավասությունն է, երբ նա որոշում է ընդունում զինված ուժերի օգտագործման մասին, հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ Ազգային ժողովի կողմից պատերազմ հայտարարելու դեպքում հայտարարում է ռազմական դրություն եւ կարող է հայտարարել ընդհանուր կամ մասնակի զորահավաք: 14 կետը այն իրավասությունն է, երբ Նախագահը սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգի դեպքում, խորհրդակցելով Ազգային ժողովի նախագահի եւ վարչապետի հետ, իրականացնում է իրավիճակից թելադրվող միջոցառումներ եւ այդ մասին ուղերձով դիմում ժողովրդին):

7) եզրակացություն է տալիս Հանրապետության Նախագահի՝ իր լիազորությունների կատարման անհնարինության մասին:

8) եզրակացություն է տալիս սահմանադրական դատարանի անդամի լիազորությունները դադարեցնելու, նրան կալանավորելու, դատական կարգով վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկելու մասին:

9) օրենքով նախատեսված դեպքերում որոշում է կայացնում կուսակցության գործունեությունը կասեցնելու կամ արգելելու մասին:

Սահմանադրության 101 հոդվածով սահմանված են սահմանադրական դատարան դիմող սուբյեկտները:

Սահմանադրական դատարան կարող են դիմել՝

- 1) Հանրապետության Նախագահը.
- 2) պատգամավորների առնվազն մեկ երրորդը.
- 3) Հանրապետության Նախագահի եւ պատգամավորության թեկնածուները՝ ընտրությունների արդյունքների հետ կապված վեճերով.
- 4) կառավարությունը՝ Սահմանադրության 59 հոդվածով նախատեսված դեպքում (59 հոդվածում նախատեսվում է. Հանրապետության Նախագահի ծանր հիվանդության կամ նրա լիազորությունների կատարման համար այլ անհաղթահարելի խոչընդոտների առկայության դեպքում Ազգային ժողովը կառավարության առաջարկով եւ սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա, պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով որոշում է ընդունում Հանրապետության Նախագահի՝ իր լիազորությունների կատարման անհնարինության մասին):

Սահմանադրության 57 հոդվածով նախատեսված է, որ Հանրապետության Նախագահը կարող է պաշտոնանկ արվել պետական դավաճանության կամ այլ ծանր հանցագործության համար:

Հանրապետության Նախագահի պաշտոնանկ անելու հարցի մասին եզրակացություն ստանալու համար Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունած որոշմամբ դիմում է սահմանադրական դատարան:

Հանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու մասին որոշումը սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա կայացնում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով:

Սահմանադրությունն ամրագրել է, որ սահմանադրական դատարանը գործեր քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Ի տարբերություն բազմաթիվ երկրների, Հայաստանի Սահմանադրությամբ ամրագրված է նաեւ (102 հոդված), որ սահմանադրական դատարանն ընդունում է որոշումներ եւ եզրակացություններ՝ դիմում ստանալուց ոչ ուշ, քան երեսուն օրվա ընթացքում:

Սահմանադրական դատարանի որոշումները վերջնական են, վերանայման ենթակա չեն եւ ուժի մեջ են մտնում հրապարակման պահից:



Սահմանադրական դատարանը Սահմանադրության 100 հոդվածի 1-4 կետերով նախատեսված հարցերը լսում է անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, իսկ 5 -9 կետերով նախատեսված հարցերը՝ առնվազն երկու երրորդով:

